

ISSN 1829-0531

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԵՍ
№ 2 (65)

ԵՐԵՎԱՆ 2024

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

№ 2 (65)

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ
JOURNAL FOR ARMENIAN STUDIES

Հիմնադիր՝ «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարան» հիմնադրամ

Խմբագրական խորհուրդ՝

Ս. Ռ. Գևորգյան (նախագահ),

Ա. Վ. Գալստյան (գլխավոր խմբագիր),

Ա. Հ. Հարությունյան (գլխավոր խմբագրի տեղակալ),

Ս. Ս. Իսախրյան, Է. Գ. Հովհաննիսյան, Ս. Դ. Դանիելյան,

Ա. Գ. Դոլուխանյան, Վ. Գ. Համբարձումյան,

Ա. Հ. Հակոբյան, Է. Ս. Մկրտչյան, Ս. Պ. Մուրադյան,

Ա. Տազեայան (Բեյրութ), Զ. Պողոսյան (Իտալիա),

Հ. Մարտիրոսյան (Նիդերլանդներ), Ա. Հ. Մանուկեան (Շվեյցարիա)

Գրանցման վկայական՝ 211.200.00182

Գրանցման տարեթիվը՝ 26.03.2003թ.

Պարբերականությունը՝ եռամսյա

Բոլոր նյութերն ուղարկվում են գրախոսության:

Արտատպության դեպքում հղումը «Հայագիտական հանդես»-ին պարտադիր է:

Մեր հասցեն՝ Երևան, Ալեք Մանուկյան փ. 13, հեռախոս՝ 55-60-30 (1-18)

Կայքէջ՝ <https://armenianstudies.aspu.am/>

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**ՆԱԴԻՆԵ ՄԱՐԿՈՍՅԱՆ**

Գոյականի քերականական կարգերի զուգադրական քննությունը Կարնո Բարբառի մի քանի խոսվածքներում ----- 12

ԹԱՄԱՐԱ ԱՐՇԱԿՅԱՆ

Համատեքստային հոմանիշների հարանշանակությունները տեքստի իմաստային կապակցելիության գործընթացում----- 31

ԼԱԼԱ ԳՐՔԻԿՅԱՆ

Ժամանակակից հայերենի չեզոք սեռի բայերի պարագաառությունը----- 48

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**ԱԼԲԵՐՏ ՄԱԿԱՐՅԱՆ**

Մեծ քաղաքի փոքր փողոցը՝ իբրև տարածաժամանակային խորհրդանիշ----- 64

ԵՎԱ ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ

«Շիլիոնի կալանավորը» պոեմի թարգմանությունը իբրև XIX դարավերջի իրադարձությունների հոգեբանական արձագանք----- 82

ԱՇԽԵՆ ԶՐԲԱՇՅԱՆ

Անկախության շրջանի հայ բանաստեղծության տաղաչափական ձևերն ու զարգացման միտումները----- 97

ԼԻԼԻԹ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ, ԱՐՈՒՍ ԱՅՎԱԶՅԱՆ

Հայ ժողովրդի՝ որպես քրիստոնեական արժեհամակարգի կրողի արտացոլումը հայ ժողովրդական էպոսի «Մեծ Մհեր» ճյուղում----- 116

ԱՆՆԱ ԵՐԿԱՆՅԱՆ

Գևորգ Դերիկյանի ստեղծագործական աշխարհը-----131

ԱՆԻ ՂԱԶԱՐՅԱՆ

Հ. Թումանյանի գյուղաշխարհի մարդիկ----- 146

ՏԱԹԵՎԻԿ ՄԵՐՋԱՆՅԱՆ

Հոգեբանական հանգույցների ռացիոնալիստական լուծումները Նար-Դոսի «Ճշմարիտ բարեկամը», «Քնքուշ լարեր», «Ջազունյան» երկերում (նվիրվում է Նար-Դոսի մահվան 90-ամյա տարելիցին)----- 161

ՀՈՒՓՄԻՄԵ ԶԱՔԱՐՅԱՆ

Պատկերանշանի գաղափարագեղագիտական գործառույթը Էդուարդ Հարենցի պոեզիայում----- 176

ԽՈՐԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» վեպի առաջին արձագանքները հայկական իրականության մեջ----- 190

ՔՐԻՍՏԻՆԵ ՄԵԼՔՈՒՍՅԱՆ

Աբգար Դպիր Թոխաթեցու տպագրական գործի կրթական արժեքը----- 204

ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

Կոլաժը՝ որպես միջտեքստայնության եղանակ (ըստ Գուրգեն Խանջյանի կոլաժների)----- 217

ԷՄՄԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Կրակի խորհրդապատկերը Վահագն Դավթյանի պոեզիայում----- 232

ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**ԱՐՏԱՇԵՍ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, ԺԵՆՅԱ ԱԲԳԱՐՅԱՆ**

Ապատեղեկատվության հիմնախնդիրն արդի հայաստանյան մեդիադաշտում- 249

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**ԷԴԳԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Ամերիկացի միսիոներ Հարիսոն Դուայթի հաղորդած տեղեկությունները Օսմանյան կայսրության հայության շրջանում բողոքականության տարածման վերաբերյալ----- 264

ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**ՏՐԴԱՏ ԱԻ. ՔԱՀԱՆԱՅ ՌԻԶՈՒՆԵԱՆ**

Մարգարեություններու տեսակները. նորարական մօտեցում մը----- 286

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ**ԳՐԵՏԱ ՀԱԿՈԲՅԱՆ, ՍՈՖՅԱ ՔԵՐՈԲՅԱՆ**

Նախագծային աշխատանքը՝ որպես սովորողների ճանաչողական կարողությունների զարգացման միջոց----- 297

ԱՄԱԼՅԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Սովորողների ընթերցողական կարողությունների ձևավորումը ոչ լեզվական ֆակուլտետներում----- 315

ՔՐԻՍՏԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ

Մարդկային կատարելության և հավերժական սիրո գաղափարը Հովհաննես Թումանյանի «Փարվանա» բալլադում----- 329

СОДЕРЖАНИЕЛИНГВИСТИКА**НАРИНЕ МАРКОСЯН**

Сравнительное исследование грамматических разрядов имени существительного в некоторых разновидностях диалекта Карно----- 12

ТАМАРА АРШАКЯН

Коннотации контекстных синонимов в текстовой связности----- 31

ЛАЛА ГРКИКЯН

Адвербиальная валентность непереходных глаголов современного армянского языка----- 48

ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ**АЛЬБЕРТ МАКАРЯН**

Маленькая улица большого города как пространственно-временной символ----- 64

ЕВА МНАЦАКАНЯН

Перевод поэмы «Шильонский узник» как психологическая реакция на события XIX века----- 82

АШХЕН ДЖРБАШЯН

Метрические формы и тенденции развития армянской поэзии периода независимости----- 97

ЛИЛИТ ТЕР-ГРИГОРЯН, АРУС АЙВАЗЯН

Отражение армянского народа как хранителя христианской системы ценностей во второй ветви армянского народного эпоса «Мец Мгер»----- 116

АННА ЕРКАНЯН

Творческий мир Геворга Деврикяна----- 131

АНИ КАЗАРЯН

Сельский мир О. Туманяна----- 146

ТАТЕВИК МЕРДЖАНЫ

Рациональные решения психологических проблем в сочинениях Нар-Доса «Верный друг», «Изысканные струны», «Зазуныя» (Посвящается 90-летию смерти Нар-Доса)----- 161

РИПСИМЕ ЗАКАРЯН

Идеологическая функция иконознака в поэзии Эдуарда Аренца----- 176

ХОРЕН ГРИГОРЯН

Первые реакции Романа Франца Верфеля «40 дней Муса-Дага»----- 190

КРИСТИНЕ МЕЛКУМЯ

Образовательное значение печатной деятельности Дпира Абгара Тохатеци (писца)----- 204

АСМИК АКОБЯН

Коллаж как способ интертекстуальности (по коллажам Гургена Ханджяна)----- 217

ЭММА ГРИГОРЯН

Символ огня в поэзии Ваагна Давтяна----- 232

ЖУРНАЛИСТИКА**АРТАШЕС МАРТИРОСЯН, ЖЕНЯ АБГАРЯН**

Проблема дезинформации в современном армянском медиа-пространстве----- 249

ИСТОРИЯ**ЭДГАР ОГАННИСЯН**

Сообщенные сведения американского миссионера Харрисона Дуайта о распространении протестантизма среди армян Османской империи----- 264

ТЕОЛОГИЯ**ПРОТОИЕРЕЙ ТРДАТ УЗУНЯН**

Виды Пророчеств: Инновационный подход----- 286

ПЕДАГОГИКА**ГРЕТА АКОПЯН, СОФЬЯ КЕРОПЯН**

Проектная работа как средство развития познавательных способностей
учащихся----- 297

АМАЛИЯ ПЕТРОСЯН

Формирование навыка чтения студентов неязыковых вузов----- 315

КРИСТИНЕ КАЗАРЯН

Тема человеческого совершенства и вечной любви в балладе Ованнеса
Туманяна----- 329

CONTENTSLINGUISTICS**NARINE MARKOSYAN**

A Comparative Study of Grammatical Categories of Noun in Several Branches of the Karin Dialect----- 12

TAMARA ARSHAKYAN

Connotations of contextual synonyms in textual coherence----- 31

LALA GRKIKYAN

Adverbial Valence of Intransitive Verbs in the Modern Armenian language----- 48

LITERARY STUDIES**ALBERT MAKARYAN**

Small Street of a Big City as a Chronotopic Symbol----- 64

YEVA MNATSAKANYAN

The Translation of the Poem "The Prisoner of Chilion" as a Psychological Reaction to the Events of the 19th Century----- 82

ASHKHEN JRBASHYAN

Metrical Forms and Trends in the Development of Armenian Poetry During the Period of Independence----- 97

LILIT TER-GRIGORYAN, ARUS AYVAZYAN

The expression of the armenian people as the carrier of the christian value system in the "Mets Mher" branch of the armenian folk epic----- 116

ANNA YERKANYAN

The Creative World of Gevorg Devrikyan----- 131

ANI GHAZARYAN

The rural world of H. Tumanyan----- 146

TATEVIK MERJANYAN

The Rationalist Solutions of Psychological Complexities in the Works "True Friend",
 "Dainty Strings", "Zazunyan" by Nar-Dos (Dedicated to the 90th Anniversary of the Death
 of Nar-Dos)----- 161

HRIPSIME ZAKARYAN

Ideological function of icon sign in the poetry of Eduard Harents-----176

KHOREN GRIGORYAN

First Reactions to Franz Werfel's novel "The 40 days of Musa dag" in Armenian
 reality----- 190

KRISTINE MELKUMYAN

The educational value of the printing work of Abgar Dpir (Scribe) Tokhatetsi----- 204

HASMIK HAKOBYAN

Collage as a way of intertextuality (according to Gurgen Khanjyan's collages)----- 217

EMMA GRIGORYAN

The symbol of fire in the poetry of Vahagn Davtyan----- 232

JOURNALISM**ARTASHES MARTIROSYAN, ZHENYA ABGARYAN**

The problem of disinformation in the Modern Armenian media space----- 249

HISTORY**EDGAR HOVHANNISYAN**

The reported information of the American missionary Harrison Dwight about the spread
 of Protestantism among the Armenians of the Ottoman Empire----- 264

THEOLOGY**ARCHPRIEST DRTAD UZUNYAN**

Types of Prophecies: An innovative approach----- 286

PEDAGOGY**GRETA HAKOBYAN, SOFYA QEROBYAN**

Projects as a way of developing learners' cognitive abilities----- 297

AMALYA PETROSYAN

Formation Students' Reading Skills at the Non Linguistic Faculty----- 315

CHRISTINE GHAZARYANThe ideology of human thoroughness and eternal love in the ballad “Parvana” by
Hovhannes Hovhannes Tumanyan----- 329

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՆԱԴԻՆԵ ՄԱՐԿՈՍՅԱՆ

ԳՈՅԱԿԱՆԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՆՈ
ԲԱՐԲԱՌԻ ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՎԱԾՔՆԵՐՈՒՄ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v2i65.99

ԱՍՓՈՓՈՒՄ

Հայերենի բարբառները զգալի յուրահատկություններ ունեն ձևաբանական համակարգում: Դրանք արտահայտվում են քերականական կարգերի դրսևորումներում, ինչպես նաև ներկայանում են իբրև բառային միավորների քերականական գործառության առանձնահատկություններ: Քերականական յուրահատկություններ դրսևորվում են թեքվող խոսքի մասերի՝ գոյականի, ածականի, դերանվան, բայի ոլորտներում, իսկ բառային միավորների գործառական յուրահատկություններ երևան են գալիս չթեքվող խոսքի մասերի շրջանակներում:

Սույն հոդվածում մեր նպատակն է անդրադառնալ Կարնո բարբառի մի քանի խոսվածքների գոյականի քերականական կարգերի զուգադրական քննությանը: Այդ նպատակով ընտրել ենք Վրաստանի կազմի մեջ մտնող երեք տարբեր շրջաններ՝ Ասպինձայի շրջանի միակ հայկական գյուղը՝ Դամալան, Ախալցխի շրջանի Ծիրա գյուղը, Ախալքալաքի շրջանի Վաչիան գյուղը: Ուսումնասիրության նյութ վերցնելով տարբեր շրջանների խոսվածքները՝ փորձել ենք վեր հանել այն բոլոր ընդհանրություններն ու տարբերությունները, որոնք առկա են նշյալ խոսվածքների և՛ հոգնակի թվի կազմության, և՛ հոլովման ժամանակ:

Բանալի բառեր և արտահայտություններ. Կարնո բարբառ, Կը ճյուղ, գոյականի քերականական կարգեր, հոգնակերտ մասնիկներ, հոլովում, հոլովների կազմությունը:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կարնո քարքառը Կը ճյուղի ամենատարածված քարքառներից է, որը, հազարամյակների խորքից գալով, կենդանի է մինչև այսօր: Նրա կենտրոնը Կարինն է (Էրզրումը), տարածվել է մինչև Խնուս, Երզնկա, Գյուլմուշխանե (**Աճառյան Հ., 1911**), հանդիսացել է Կարսի, Բասենի, Նարմանի, Խոտրջուրի, Բաբերդի, Սպերի խոսակցական լեզուն (**Աճառյան Հ., 1913**):

Ռուս-թուրքական պատերազմների ժամանակ (1828-ին հատկապես) հայերի՝ Արևմտյան Հայաստանից արտագաղթելու հետևանքով քարքառի սահմանները տարածվել են Ախալցխե, Ախալքալաքի, Թբիլիսի:

Կարնո քարքառը նաև Գյումրիի և մերձակա շրջանների՝ Արթիկի, Ախուրյանի, Աղինի մի սովոր մասի խոսակցական լեզուն է: Ինչպես նշեցինք, Կարնո քարքառով են խոսում Ախալքալաք, Ախալցխե, Նինոծմինդա քաղաքներում և հարակից հայախոս գյուղերում՝ բացառությամբ Հեշտիա, Թորիա, Ուճմանիա, Դիլիֆ և Փոկա գյուղերի, որոնց բնակիչները խոսում են Մշո քարքառով: Վրաստանի Ասպինձայի շրջանի միակ հայկական գյուղում ևս բնակիչները խոսում են Կարնո քարքառով: Նշենք, որ Ասպինձայի շրջանը մտնում է Սամցխե-Ջավախեթի երկրամասի կազմի մեջ, որի 21 բնակավայրերից միակ հայկական գյուղը Դամալան է:

Ըստ Գ. Ջահուկյանի բազմահատկանիշ վիճակագրական դասակարգման՝ Կարնո քարքառը ներառվում է Փոքր Ասիայի կամ արևմտյան քարքառախմբում (**Ջահուկյան Գ., 1972**): Ըստ Ա. Ղարիբյանի հայերենի քարքառների հնչյունական դասակարգման՝ նշյալ քարքառի բաղաձայնական համակարգը քառաստիճան է և ընդգրկվում է 2-րդ տեղաշարժի երրորդ ենթակետում (**Ղարիբյան Ա., 1953**), ըստ Հ. Աճառյանի ձևաբանական միահատկանիշ դասակարգման՝ Կարնո քարքառը ընդգրկվում է Կը ճյուղում (**Աճառյան Հ., 1911**):

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքը իրականացնելիս օգտվել ենք հայ լեզվաբանական գրականության մեջ ընդունված և ավելի հաճախ կիրառվող համադրական, վերլուծական և զուգադրական մեթոդներից:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Բարբառներում գոյականի դրսևորումների յուրահատկություններն արտահայտվում են ըստ թվի, հոլովի և առկայացման կարգերի:

Մեր կողմից դիտարկվող խոսվածքներում ևս գոյականի թվի կարգն ունի երկու եզր՝ եզակի և հոգնակի, հոլովի կարգն ունի առավելագույնը հարացուցային 6 հոլով՝ ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական, իսկ առկայացման կարգը դրսևորվում է հոդերի միջոցով: Գոյական անունը կամ գոյականաբար հանդես եկող բառերը պատասխանում են հետևյալ հարցերին՝ **վե՞ր** (**ո՞վ**), **ի՞նչ**, **ինչե՞ր**, **ո՞ւմ**, **ումե՞ն**, **ինչե՞ն**, **ինչօ՞վ**, **ինչո՞ւն** մեջ:

Թվի կարգը

Քննվող խոսվածքներում հիմնական հոգնակերտներն են՝ **էր**, **ներ**, **էստան**, **ստան**, **ք**, **իք**, **դիք**, **վրդիք**, **վի**, **վրներ**, **անք**, **դանք**, **աններ**, **էնք**, **օնք** (Մկրտչյան Հ., 1952) և նին՝ միայն Ծիրայի խոսվածքում:

Գոյականների մեծ մասը ստանում է **էր**, **ներ** հոգնակերտներ, որպես կանոն՝ միավանկ բառերը ստանում են **էր**, օրինակ՝ **շներ**, **խօզեր**, **սարեր**, **ծօրեր**, բազմավանկ բառերը՝ **ներ**՝ **բիկրներ**, **առզրներ** (ատամներ), **էղզրներ** (եղունգներ):

Բերենք օրինակներ՝ **Շները** հաչեն կը (Վաչիանի խոսվածք, այսուհետ՝ ՎԽ): **Բիկրներդ** հաստըցուցել էս (Ծիրայի խոսվածք, այսուհետ՝ ԾԽ): **Էղզրներդ** կըղդելու են (Դամալայի խոսվածք, այսուհետ՝ ԴԽ):

Գրաբարյան ն վերջնահնչյուն ունեցող միավանկ բառերը ստանում են **ներ**՝ **հարսներ**, **մրգներ**, **դրոներ**, **թօներ**, **մաղրներ** (հաճախակի է գործածվում **մաղըվիք** ձևը), բայց ունենք որոշ միավանկ բառեր, որոնք ստանում են **ներ**, օրինակ՝ **ծառներ**, **տառներ**: Ծառներ հոգնակիի ձև արձանագրվել է միջին հայերենում (**Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, 1972**), որ նշանակում է իրողության բավականին հնություն:

Մեկուկես վանկանի բառերը, որոնց գաղտնավանկը վերջում է, հոգնակին կազմում են **էր** մասնիկով՝ **սանդ՛ր-սանդ՛րներ**, **աստըդ-աստըդեր**, **լիդ՛ը-լիդ՛րներ**, իսկ **գամփըռ**, **արկըղ** բառերի հոգնակին կազմվում է **ներ-ով՝ գամփըռներ**, **արկըղներ**:

Գրաբարյան ք հոգնակերտ մասնիկը, թեև մեծ մասամբ կորցրել է հոգնակիության

իմաստը, սակայն մեր կողմից ուսումնասիրված բոլոր խոսվածքներում էլ այն պահպանվում է հիմնականում այն բառերում, որոնք վերջանում են **ա-ով, ի-ով, ինչպես՝ տղա-տղաք/տղեք, փարա-փարեք/փարանին/փարաներ, փարեստան պաչկա-պաչկեք/պաչկանին/պաչկաներ/ պաչկեստան.առգա-առգեք/առգաներ/առգըներ/առգընին/առգեստան, ծաղգընին/ծաղգըներ, օսկի-օսկեք/օսկիներ:**

Վերոնշյալ օրինակները փաստում են, որ միննույն բառը մեր կողմից ուսումնասիրվող խոսվածքներում գործածվում է մի քանի հոգնակերտներով՝ **ք, ներ, էստան** մասնիկներով: Դամալայի և Վաչիանի խոսվածքներում նշյալ բառերի հոգնակի կազմության համար գերակշռելի է **էստան** մասնիկը՝ **նասկէստան, փէսէստան, գինէստան, հարսընէստան, փարէստան, րախէստան, գարէստան, հայլէստան,** Վաչիանի խոսվածքում **էստան** մասնիկին զուգահեռ կիրառվում է **եք**, վերջինս Դամալայի և Ծիրայի խոսվածքներում հազվադեպ է հանդիպում, իսկ Ծիրայի խոսվածքում՝ **նին, ներ** հոգնակերտները՝ **անգըջնին, էղընքընին, աչկինին, բախչաներ, փէսաներ, օսկիներ, փարաներ:**

Նշեցինք, որ **նին** հոգնակերտ մասնիկը բնորոշ է միայն Ծիրայի խոսվածքին: Նկատենք, որ **էստան** հոգնակերտ մասնիկ ստանում են **ի, իք, ա** վերջավորությամբ գոյականները՝ **բախչա, փարա, հարսնիք, հայլի, քեռի** (ստան հոգնակերտը գոյություն ունի Արդվինի բարբառում, Արդվինի բարբառում բոլոր այն բառերը, որոնք վերջանում են ձայնավորով, ստանում են **ստան** հոգնակի վերջավորությունը: Այդ հոգնակին կա Շապին-Գարահիսարի բարբառում՝ **այգիներ-եքէստան** (Ղարիբյան Ա. 1953):

Որպես հոգնակերտներ՝ երեք խոսվածքներում էլ գործածվում են **իք, տիք/դիք, վըդիք** մասնիկները, ինչպես՝ **ամնիք, կընիգմարթիք, շէնիք** (ժողովուրդ) **կընքտիք, տեքըրդիք/տաքըրդիք, ախպըրդիք, էրգըդիք, քուրվըդիք, խնամդիք, կէսըրդիք, տալվըդիք:**

Վի, վըներ հոգնակի մասնիկ ստանում են մարմնի գույգայնություն ցույց տվող բառերը հիմնականում՝ **ձեռվի, օղըվի, աչըվի, ծընգ՝վի, մաղըվի:** Միննույն ժամանակ այս բառերին ավելանում է **ներ** հոգնակերտ մասնիկը՝ **օղ՝վըներ, աչվըներ, ծընգըվներ, մաղվըներ, լիզվըներ,** օրինակներ՝ Էնքան պըտտըցի օ, **օղվըներս** առաչ չէն էրթա (ԴԻ)

Անբան ման էգա օր, **օդը վրնէրս** ա առաջ չէն էրթա (ԾԽ): **Ծընգ՝ վրնէրս** ցավին կը (ՎԽ): **Էրգըղիքը** գարունը խոփան կ'երթան(ԴԽ): **Ամսիքը** մնաց լվալու (ԴԽ):

Դանք հոգնակերտը սակավ կիրառություն ունի նշյալ բոլոր խոսվածքներում՝ **կըղօրդ՝անք, ընգ՝երդ՝անք, անդերդ՝անք**, օրինակներ՝ **Ընգ՝երդ՝անքը** ամմեն ինչուն կայնած են (բոլոր խոսվածքներում նույնն է):

Որպես հոգնակերտ՝ գործածվում է նաև **ան** մասնիկը՝ **էշ-իշան, ձի-ձիան**: Դամալայի խոսվածքում գործածվում են նաև **էշշըկներ, էշշակներ** տարբերակները:

Հավաքական նշանակությամբ կիրառվում են **անք, էնք, օնք** հոգնակերտ մասնիկները, Դամալայի խոսվածքում՝ **հօքքուրէնք, հէրանք, դըրկըցէնք, կէսրանք, կընկարէնք, հըրքըշէնք (ուրիշները), պապէնք, Պօղօսէնք**, Վաչիանի խոսվածքում՝ **հօքքուրէնք, հէրանք, դըրկըցէնք, քավօրէնք, պապօնք/պապէնք**, Ծիրայի խոսվածքում՝ **հօքքուրանք, պապօնք, կնկարանք, դրկըցանք, Պօղօսանք, մարանք, հարանք**:

Վերոբերյալ օրինակները փաստում են, որ Դամալայի և Վաչիանի խոսվածքներում գերակշռում են **էնք**-ով, իսկ Ծիրայի խոսվածքում՝ **անք**-ով ձևերը:

Անք, էնք, օնք հոգնակերտ մասնիկներով կազմում են ազգատոհմ ներկայացնող ձևեր՝ **Տէրտէրէնք (ԴԽ), Տէրտէրանք (ԾԽ, ՎԽ), Խաչօյէնք, Մղդէսանք, Օվանէսէնք**: Սույն ձևերը առկա են քննվող երեք խոսվածքներում էլ:

Անք հոգնակերտը չի աղերսվում **ան** (իշան, ձիան) հոգնակերտին (**Ջահուկյան Գ., 1959**):

էնք մասնիկը, որ ազգատոհմ անվանող ամենագործուն հոգնակերտն է, առաջացել է հին **-էանք** (էան-ք) ձևից՝ Վասակէանք, Մամիկոնէանք, որը նույնպես արտահայտել է ինչպես տվյալ անձի կողմնակիցներ, այնպես էլ ազգատոհմ իմաստները (**Ջահուկյան Գ., 1972**):

Հոլովները և նրանց կազմությունը

Պատկանելով հայերենի բարբառների Կը ճյուղին՝ վերոնշյալ խոսվածքներին բնորոշ է վեց հոլով՝ ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական: Ներգոյական հոլովի իմաստն արտահայտվում է սեռական + մեջ կապով և հայցականով: Ուղղական հոլովը պատասխանում է՝ **վե՞վ (ո՞վ), ի՞նչ (ը), ինչե՞ք(ը)**

հարցերին: Ուղղական հոլովով օրինակներ՝ Առավօտը **նախըրը** արծելու կերթա (ԴԽ): Մէշան լիքը **փաղ** կա (ԾԽ): Մէրըս քեզի կանչէկը (ՎԽ):

Ուղղական հոլովը գործածվում է նաև իբրև կոչական, օրինակ՝ **քուրօ՛, ըխչի՛** (աղջի), **ծօ՛**: Նշյալ խոսվածքներին բնորոշ է որոշ հատուկ անունների՝ **օ**-ով կրճատ գրությունները՝ **Կարօ, Նարօ, Յերվօ, Մերգօ, Թէմօ, Վարսօ, Հերօ, Վանօ, Փիլօ** և այլն:

Սեռական հոլովը նշյալ բոլոր խոսվածքներում հիմնականում գործածվում է **ն** հոդով և նմանվում տրականին՝ **Հօթօլին դուռը**: Մանրամասն ուսումնասիրելով վերոնշյալ խոսվածքները՝ կարող ենք ընդգծել, որ մեծավ մասամբ սեռական հոլովը առանց որոշիչ հոդի չի կիրառվում՝ **կօվէրուն** դարմանը, **հօրը** տունը, **աթօռքին** վօթքը, **գէղին** մէջը, **սարին** ծէրը, **սէղնին** վօթքը, **փոին** մայլէն, **հարսընէստընուն** սաչուն (հարսանիքների նվերը), **օսկէստընուն** գըները: Որոշիչ հոդով է կիրառվում անձնանունների դեպքում՝ **Նօրսիգին** ախպուրը, **Աշօտին** գիրքը, **Աննային** տէտոագը, իսկ տեղանունների դեպքում առանց որոշիչ հոդի՝ **Ախըցխու** բագարը, **Դամալու** սարերը, **Ծալկու** կարմուշը, **Տօլօշու** խնձօրը: Պատասխանում է **ո՛ւմ, ինչո՛ւն, ինչի՞ն, ինչէրո՛ւն**:

Տրական հոլովը պատասխանում է **ո՛ւմ, ինչո՛ւն** (ԴԽ), **ինչի՞ն, (ԾԽ, ՎԽ), ինչէրո՛ւն** (ինչերի՞), **ինչիսօ՛** (ինչո՛ւ, ի՞նչ պատճառով), **յէ՛րբ, ուրթէ՛խ/ուրդէ՛խ** (որտե՞ղ) հարցերին: Նշենք, որ **ինչիսօ՛** ձևը կիրառվում է միայն Դամալայի խոսվածքում: Ծիրայի, Վաչիանի խոսվածքներում հանդիպում են **ինչիսօ՛ր, ինչի՞** (ինչո՛ւ) տարբերակները:

Հայցական հոլովը կարող է գործածվել ոչ միայն ուղևորման հայցականի, այլև ներգոյականի իմաստներով, օրինակ՝ Ամմէն առավօտ մեր **տուն** քուքար (ԴԽ): **Գէղը** քիչ տղամարթ էր մնացի (ԴԽ): **Գօմը** լիքը մալ կար(ԾԽ): **Խանութը** էնքան օչէո էր օր(ՎԽ):

Հայցական հոլովը իրի առման դեպքում նման է ուղղականին, անձի առման դեպքում՝ տրականին՝ Յէս հըզ կէնէմ (սիրում եմ) **հօրըս, մօրըս**: Ժամին դուռը **տէրտէրին** տէսսա(ՎԽ), Սաղ օրը **գիրք** կարթաց (ԾԽ): Անորոշ հայցականը անձի առման դեպքում կարող է լինել նաև ուղղականաձև, ինչպես՝ Քաղաքը էնքան ծանօթ **մարթ** տէսսա (ԴԽ): Հայցական հոլովը պատասխանում **ո՛ւմ, ի՞նչը, ինչէ՛րը** հարցերին:

Բացառականը կազմվում է **էն/վընէն, էցէն** մասնիկներով՝ **քուրօչէն, առավօտնէն** կամ **առավօտվընէն, էրկուշաբթըվընէն, մերէցէն, ընգերդանցէն**: Տնէն դուս չէր քա (ԴԽ):

Ձևերընեն իրեն լավ չէր ըզգա (ՎԽ): **Իրիզվրեն**ն անհանգիստ էր (ԴԽ): **Փէսէցէն** ա շատ գոհ էր (ԾԽ): Պատասխանում է **ինչէն, ումէն, ուրդէ՞ց** (որտեղի՞ց) **երբըվրենէն, վէ՞ր վախտըվրենէն** (երբվանի՞ց) հարցերին: Նշենք, որ **վրեն** մասնիկը հաճախակի գործածվում է Դամալայի խոսվածքում:

Մեր կողմից դիտարկվող խոսվածքներում գործիական հոլովը ձևավորվում է **օվ** վերջավորությամբ՝ **կրնկտացօվ, կրնկտօցօվ** (ԾԽ/ՎԽ) **տոցօվ, տոցմօվ, քիֆլաթօվ** (եղած-չեղածով), **ընգերդանցօվ, շափթօվ** կամ **շափթըներօվ, քուրօցօվ, էրկրդանցօվ**: Դամալայի և Վաչիանի խոսվածքներում հազվադեպ գործածվում են նաև **բ** վերջավորությամբ հոլովաձևերը՝ **ուրախությամբ, Ծիրայի խոսվածքում՝ ուրախութէնօվ, խաղաղութէնօվ**:

Ինչպես արդեն նշեցինք, Կարնո բարբառի նշյալ խոսվածքներում Կը ճյուղի մյուս բարբառների նման ներգոյական հոլովը բացակայում է. այն արտահայտվում է **սեռական+մեջ** կառույցով՝ **ձօրին մէջը**, և հիմնականում ոչ միայն սեռական հոլովով արտահայտված բառն է գործածվում ն որոշիչ հոդով՝ **տաշտին մէջը, գրքին մէջը, գէղին մէջը**, այլև **մեջ** կապը ևս: Ինչպես օրինակներն են փաստում, հաճախակի գործածվում է **ը** որոշիչ հոդով: Հայցական հոլովը, ինչպես նշեցինք, ևս կարող է արտահայտել ներգոյական հոլովի իմաստ՝ **Ըշկօլը** (դպրոցում) լիքը աշագերթ կա: **Խանութը** (խանութում) անքան լավ ապոանք կա օր (ԾԽ): **Տունը** անքան շէնիք (մարդ) կար օր (ԴԽ): **Գէղը** էնքան վիռուս կա օր (ՎԽ):

Հոլովում

Դիտարկվող խոսվածքներում իրենց զանազան դրսևորումներն ունեն **ի, ու, օջ, օ, վա, ա, ան, ց** հոլովիչները: Հոգնակի թվում գոյականների մեծագույն մասը ենթարկվում է **ու** հոլովման:

Ի հոլովումը Կարնո բարբառի ամենատարածված և ամենագործուն հոլովումն է: Ասվածը վերաբերում է միայն եզակի թվին:

Հոլովական վերջավորություններն են՝ սեռ. տր.՝ **ին**, հայցականը իրի առման դեպքում՝ ուղղականաձև, անձի առման դեպքում՝ տրականաձև, բաց.՝ **էն**, գործ.՝ **օվ**: Հոգն. սեռ. տր.՝ **օցը/էրուն**, բաց.՝ **օցէն/էրէն**, գործ.՝ **օցօվ/նէրօվ**: Այս հոլովման են

ենթարկվում բառերի մեծագույն մասը՝ արեքակ- **արեքրկին, չամուռ (ցեխ) - չամոին, ձուն>ձրնին, միտկ>մըտկին, թելէֆօն>թելէֆօնին, սուն>սընին, մըրզըղին կամ մըրզղին, (մըրզըղին ծերը** հանել-անարգանքի սյունին գամել, հետաքրքիր է, որ **մըրզըղ** ուղղականաձև տարբերակը ոչ մի խոսվածքում էլ չի կիրառվում), օտկ-**օտկին, խանութ>խանթին, գրաբարյան ն վերջնահինչուն ունեցող բառերը՝ թօռին, մատին, նոին, փախանվանաբար գործածված ածականները՝ մեծին, կարմըրին, թվականները՝ իրեք-իրեքին, հինկ-հընկին, տասսը-տասսին, օխտը-օխտին, էռսուն-էռսընին, քառսուն-քառսընին, իցցուն-իցցունին, հարուր-հարըրին, հարակատար՝ խըմածին, բերած- փերածին-բերածին, (ԴԽ), փերածին (ՎԽ, ԾԽ,) այած-այածին (ԴԽ), աշածին (ԾԽ, ՎԽ), ենթակայական՝ ըսող-ըսողին, քալօղ (եկող) -քալօղին դերբայները:**

Ստորև դիտարկենք տարբեր խոսվածքներով հոլովման օրինակներ:

ԴԽ/ՎԽ /ԾԽ		
Տղա		
Եզ. թիվ		Հոգն. թիվ
Ուղղ.	տղա/տղեն	տղեք(ը)/տղաք/ը
Սեռ.	տղին	տղօցը
Տր.	տղին	տղօցը
Հայց.	տղա, տղին	տղօցը
Բաց.	տղեցեն	տղօցեն
Գործ.	տղօվ	տղօցօվ/տղօցմօց

Հավելենք՝ **տղա** բառը երեք խոսվածքներում էլ նշանակում է երեխա, իսկ **տղաք** (հոգն. ուղղ. տարբերակը կիրառվում է միայն Ծիրայի խոսվածքում):

Վերոնշյալ օրինակը փաստում է, որ ուղղականում ա-ով վերջացող բառերը եզակի սեռականում կորցնում են ա-ն՝ **փարա-փարեն, փեսա-փեսեն:**

Այս հոլովման ենթարկվում են նաև ու-ով վերջացող բառերը՝ **կատվին, մեղվին. լիզվին, առվու (առու) -առվին** կամ **առվուին:** Օրինակ՝ Դամալայի խոսվածքում կա մի տեղանք, որ դամալացիները անվանում են **Առվուին տակը:**

Ու հոլովում

Այս հոլովման են պատկանում հիմնականում ուղղականում՝ ա) **ի**-ով վերջավորվող բառերը՝ **ձիու(ն), մերի-մերուն** (անտառ, ԴԽ), **մեշա-մեշուն** (անտառ, ՎԽ, ԾԽ), **տարի-տարուն, հայի-հայուն**, բ) **ացի, էցի, ցի** ածանցով կազմված բառերը՝ **քաղքըցի-քաղքըցու(ն), գեղացի-գեղացու(ն)**: Ի, **ացի, էցի, ցի** վերջավորությամբ կազմված բառերը հոգնակի թվում կարող են ստանալ **ք՝ գեղացիք, քաղքըցիք**, և հոլովվել կրկնաձև հոլովմամբ՝ սեռականում՝ **գեղացոց, քաղքըցոց**, բացառականում՝ **գեղացոցէն, քաղքըցոցէն**, գործիականում՝ **հայլեքով, քաղքըցոցով**: Նշենք, որ **ի**-ով վերջավորվող բառերի՝ հոգնակի թվում **ք**-ով ձևերի կիրառությունները բնորոշ չեն Դամալայի խոսվածքին, այսինքն գործածվում է ոչ թե **գինիք, հայլիք**, այլ **գինիներ/գինեստան, հայլիներ/ հայլեստան** տարբերակները: Իբրև ընդհանուր կանոն՝ բազմաձևանկ բառերի **ի**-ն հոլովման ժամանակ ընկնում է, գ) ուղղականում **ի** չունեցող մի քանի բառեր՝ **եշ- իշուն, մանչ-մանչուն, ճամփա-ճամփուն, գրլօխ-գրլխուն, Ասված (Աստված)-Ասծու(ն)**, սեռական հոլովում կիրառվում է նաև **Աստրծու** տարբերակով՝ **Աստրծու սիրուն**, որն էլ շատ տարածված արտահայտություն է բոլոր խոսվածքներում, դ) որոշ ժամանականիշ բառեր՝ **շափթուն, ամսուն**, ե) **ի** վերջավորությամբ արհեստ, զբաղմունք ցույց տվող **ճի/չի** ածանցով բառեր՝ **դամրոճի (դարբին)-դամրոճուն, փեթկրճի- փետկրճուն, փրորնճի- փրորնճուն, դավուլճի- դավրլճուն** (դիոլ նվագող), **բոստրնճի-բոստրնճուն**, զ) անորոշ դերբայը՝ **գալ>քալ-քալու(ն), խրնդրլուն, էրթրլու(ն)**: Ներկայացնենք հոլովման օրինակներ.

Անտառ					
	Մերի		Մեշա		
	ԴԽ (եզ. թիվ)	Հոգ. թիվ	ՎԽ/ԾԽ եզ. թիվ	ԾԽ Հոգ. թիվ	ՎԽ Հոգ. թիվ
Ուղղ.	մերի(ն)	մերեստան(ը)	մեշա(ն)	մեշաներ(ը)	մեշեստան(ը)
Սեռ.	մերուն	մերեստրնուն	Մեշուն	մեշաներուն	մեշեստրնուն
Տր.	մերուն	մերեստրնուն	մեշուն	մեշաներուն	մեշեստրնուն
Հայց.	մերի(ն)	մերեստան(ը)	մեշա(ն)	մեշաներ(ը)	մեշեստրնուն

Բաց.	մերեցեն	մերեստըներեն	մեշեցեն	մեշաներեն	մեշեստըներեն
Գործ.	մերով	մերեստընով	մեշով/	մեշաներով	մեշեստընով

Հավելենք, որ բոլոր երեք խոսվածքներում էլ գործիական հոլովով տարբերակները գրեթե չեն գործածվում:

Օչ հոլովում

Այս հոլովման են ենթարկվում ազգակցություն ցույց տվող բառերը՝ **քուրօշ, կէսուրօշ, կէսարօշ, տէքրօշ, տաքրօշ, տիքօշ**, բայց՝ տալ-տալին, կին-կրնկան: Օչ հոլովման պատկանող բառերը հոգնակի թվում, բացի **էր** հոգնակերտից, մեծ մասամբ գործածվում են **վրդիք, դիք** հոգնակերտ վերջավորությամբ՝ **քուրվրդիք, կէսրդիք, տէքրդիք, տաքրդիք**, օրինակ՝

	Կէսուր	
	Եզ. թիվ	Հոգն. թիվ
Ուղղ.	կէսուր(ը)	կէսրդանք(ը) կէսրդիք(ը)
Սեռ.	կէսուրօշը	կէսրդանցը
Տր.	կէսուրօշը	կէսրդանցը
Հայց.	կէսուր(ը), կէսուրօշը	Կէսրդանցը
Բաց.	կէսուրօշեն	Կէսրդանցեն
Գործ.	կէսերով, կէսուրօշով	Կէսրդանցով

Դամալայի և Վաչիանի խոսվածքում կիրառվում են **կէսրդիք, ախպրդիք, տէքրդիք**, Ծիրայի խոսվածքում՝ **կէսրդանք, ախպրդանք, տաքրդանք** տարբերակները:

Օ հոլովում

Այս հոլովմամբ հոլովվում է ազգակցություն արտահայտող սակավաթիվ բառեր: Դամալայի, Վաչիանի խոսվածքներում՝ **հէր, մէր, ախպէր**, հոգն.՝ **հէրէր, մէրէր, ախպէրներ**, Ծիրայի խոսվածքում՝ **հար, մար, ախպար**, հոգն.՝ **հարէր, մարէր**,

ախպարներ: Ներկայացնենք հոլովման օրինակ՝

Մեր		
Եզ. թիվ		Հոգն. թիվ
Ուղղ.	մեր(ը)/մար(ը)	մերեր(ը)/մարեր(ը)/ԾԽ
Սեռ.	մօրը	Մօրերուն
Տր.	մօրը	Մօրերուն
Հայց.	մօր(ը)մեր(ը)	մօրերուն, մերեր(ը)
Բաց.	մօրեն	Մօրերեն
Գործ.	մօրով	Մօրերով

Վա հոլովում

Վա հոլովման են պատկանում ժամանականիշ գրեթե բոլոր բառերը՝ **հերու-հերվա** (անցյալ տարի), **սըհաթ-սըհաթվա** (ժամ), **ըռօպալե-ըռօպալվա**, **շափաթ-շափթըվա**, **ցօրեկ-ցօրեկվա**, **իրիգուն-իրիգընթվա** կամ **իրգընթվա**, **աշընքվա**, **երեկվա**, **մինութվա**, **կիրակվա**, **տարվա**: Այս հոլովման հոգնակի թիվը կազմում է **եր**, **ներ** հոգնակերտներով, բացառություն է կազմում **տարի** բառը, որի հոգնակին շատ հաճախ **Դիս** և **Վիս** խոսվածքներում կազմվում է **էստան** հոգնակերտով՝ **տարէստան**: Հոլովման օրինակ՝

Ըռօպալե, շափաթ		
Եզ. թիվ		Հոգն. թիվ
Ուղղ.	ըռօպալե(ն), շափաթ(ը)	ըռօպալեներ(ը), շափաթներ(ը)
Սեռ..	ըռօպալվա շափթըվա/շափթուն	ըռօպալներու(ն), շափաթներու(ն)
Տր.	ըռօպալվա, շափթըվան, շափթուն	ըռօպալներու(ն), շափաթներու(ն)
Հայց.	ըռօպալե(ն), շափաթ(ը)	ըռօպալեներ(ը)շափաթներ(ը),
Բաց.	ըռօպալելընեն շափթըվընեն	ըռօպալեներեն, շափաթներեն
Գործ.	ըռօպալեով, շափթով,	ըռօպալեներով, շափթըներով

Վերոնշյալ հոլովման տարբերակները բնորոշ են երեք խոսվածքներին էլ: Քննարկվող խոսվածքներում հանդիպում ենք նաև **շափթըվանըմ, ոսպպեվանըմ, տարվանըմ, իրիգընթըվանըմ (շաբաթվա, րոպեի, տարվա, երեկոյի ընթացքում)** տարբերակները:

Ա հոլովում

Այս հոլովման են ենթարկվում շուն, տուն, ինչպես նաև -ությունն ածանցով բառերը՝ **ուրախություն, հիվընդություն (ԴԽ, ՎԽ), ուրախութեն, հիվընդութեն (ԾԽ):** Օրինակ

Ուրախություն, ուրախութեն			
Եզ. թիվ		Հոգն. թիվ	
ԴԽ, ՎԽ		ԾԽ	
Ուղղ.	ուրախություն(ը)/ուրախութեն(ը)	ուրախություններ(ը)/ուրախութեններ(ը)	
Սեռ.	ուրախության(ը)/ուրախութան(ը)	ուրախություններուն/ուրախութեններուն	
Տր.	ուրախության(ը) ուրախութան(ը)	ուրախություններուն/ուրախութեններուն	
Հայց.	ուրախություն(ը)/ ուրախութեն(ը)	ուրախություններ(ը)/ ուրախութեններ(ը)	
Բաց.	ուրախությունեն /ուրախութենեն	ուրախություններեն/ուրախութեններեն	
Գործ.	ուրախությունով /ուրախութենով	ուրախություններով/ ուրախութեններով	

Ան հոլովում

Այս հոլովման պատկանող բառերը սեռական, տրական հոլովներում ունեն **ան**, բացառականում՝ **են**, գործիականում՝ **ով** վերջավորությունները: Հոգնակի թիվը հանդես է գալիս հոլովման մի քանի տեսակներով՝ սեռ., տրական՝ **ուն** կամ **աց(ը)** կամ **օց(ը)**, բաց՝ **են** կամ **ցեն**, գործ.՝ **ով** կամ **ցով**: Ան հոլովման են ենթարկվում՝ **անուն, էրիկ, կընիկ, դուռ, ախճիկ** բառերը, օրինակ՝

Անուն, էրիկ		
Եզ. թիվ		Հոգն. թիվ
Ուղղ.	անունը(ը), էրիկ(ը)	անուններ(ը), էրկըղիք(ը)/ էրկըղանք(ը)

Սեռ.	անընամբ	երկանր	անուններուն, երկրդանցը
Տր.	անընամբ,	երկանր	անուններուն, երկրդանցը
Հայց.	անուն(ը)	երկ(ը), երկանր	անուններ(ը), երկրդանցը
Բաց.	անընանէն	երկընէն	անուններէն, երկրդանցէն
Գործ.	անընանօվ	երկընօվ	անուններօվ, երկրդանցօվ
	կամ անընօվ		

Սույն հարացույցը կիրառվում է երեք խոսվածքներում էլ, իսկ օրինակ՝ **կընիկ** բառի դեպքում Դամալայի խոսվածքում հոգնակի սեռ. տր.-ում գործածվում են **կընկըտացը**, իսկ Վաչիանի և Ծիրայի խոսվածքում՝ **կընկըտօցը** տարբերակները:

Ց հոլովում

Այս հոլովման են պատկանում **անք, էնք, օնք** ածանցներով կազմված անձնանիշ բառերը՝ **Պողօսէնք, Հօթօլէնք, Օվանէսէնք, Խաչօլէնք, հօրքուրէնք, հէրանք, կէսրանք, հօրքուրէնք**: Նշենք, որ Վաչիանի և Ծիրայի խոսվածքներում գործածվում են **հարանք, հօրքուրանք** տարբերակները: Հոլովման հարացույց՝

Հօրքուրէնք/հօրքուրանք, հէրանք/հարանք		
Հոգն. Թիվ		
Ուղղ.	հօրքուրէնք / հօրքուրանք(ը)	հէրանք(ը) / հարանք(ը)
Սեռ.	հօրքուրէնց/հօրքուրանց(ը)	հէրանցը/ հարանցը
Տր.	հօրքուրէնց/ հօրքուրանց(ը)	հէրանցը/ հարանցը
Հայց.	հօրքուրէնց(ը)/ հօրքուրանց(ը)	հէրանցը, հէրանք / հարանցը
Բաց.	հօրքուրէնցէն / հօրքուրանցէն	հէրանցէն/ հարանցէն
Գործ.	հօրքուրէնցօվ/ հօրքուրանցօվ	հէրանցօվ/ հարանցօվ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրության նյութ վերցնելով տարբեր շրջանների խոսվածքները՝ փորձեցինք վեր հանել այն բոլոր ընդհանրություններն ու տարբերությունները, որոնք

առկա են նշյալ խոսվածքների և՛ հոգնակի թվի կազմության, և՛ հոլովման ժամանակ: Հոգնակի թվի կազմության ժամանակ բառերը կարող են հանդես գալ մի քանի հոգնակերտ մասնիկներով՝ **էստան, էր, իք, էք, ներ՝ հայլէստան/հայլինէր/ հայլիք, գինէստան/ գինիք գինինէր, փարանէր/ փարէք/ փարէստան**: Նկատեցինք, որ **էստան** հոգնակերտ մասնիկը հաճախակի գործածություն ունի Դամալայի և Վաչիանի խոսվածքներում: Բոլոր խոսվածքներում սակավ գործածություն ունեն **ան՝ իշան, ձիան, դանք՝ կըղօրդանք, ախպըրդանք** հոգնակերտ մասնիկները: **Վի, Վըներ** հոգնակերտ վերջավորություններ ստանում են հիմնականում զույգայնություն արտահայտող մարմնի մասերը՝ **աչվի/աչվըներ, օղվի/օղվըներ, ձեռվի/ձեռվըներ, մադվի/մադվըներ**, որոնք բնորոշ են բոլոր խոսվածքներին:

Կարնո բարբառի՝ մեր կողմից ուսումնասիրվող խոսվածքներում հոլովման համակարգը աչքի է ընկնում ուրույն, կանոնավոր և բավականին կուռ հոլովման համակարգով: Գոյականներին կամ գոյականաբար գործածված բառերին բնորոշ է հիշատակված ութ հոլովումներից որևէ մեկը: Ամենատարածվածը եզակի թվում **ի** արտաքին հոլովումն է, իսկ հոգնակի թվում՝ **ու** հոլովումը: Նշենք, որ այլ հոլովման պատկանող բառերը ևս ենթարկվում են **ի** հոլովման: Ուսումնասիրվող խոսվածքներում սեռական հոլովը հիմնականում կիրառվում է որոշիչ հոդով, հազվադեպ՝ առանց հոդի:

Համառոտագրություններ

Դև - Դամալայի խոսվածք

Ծև - Ծիրայի խոսվածք

Վև - Վաչիանի խոսվածք

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության (1975), հ. Բ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
2. Աճառեան Հ. (1911), Հայ բարբառագիտություն - Ուրուագիծ և դասաւորութիւն հայ բարբառների, Մոսկուա-Նոր Նախիջեւան, հ. Ը, Լազարեան Ճեմարանի Արեւելեան Լեզուաց հրատ.:
3. Աճառեան Հ. (1913), Հայերէն գաւառական բառարան, Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Թ, Թիֆլիս, Լազարեան Ճեմարանի Արեւելեան Լեզուաց հրատ.:
4. Ղարիբջան Ա. (1953), Հայ բարբառագիտություն, Երևան, ՀՍՍՌ պետական հեռակա մանկավարժական ինստիտուտի հրատ.:
5. Մկրտչյան Հ. (1952), Կարևոր բարբառը, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
6. Ջահուկյան Գ. (1972), Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
7. Ջահուկյան Գ. (1959), Հին հայերենի հոլովման սխառներ և նրա ծագումը, Երևան, ԵՊՀ հրատ.:

REFERENCES

1. Aknarkner mijin grakan hayereni patmowt'yan /Hints of the History of Middle Literary Armenian/ (1975), vol. B, Yerevan, Publishing House of the USSR Academy of Sciences.
2. Acharyan H. (1911), Hay barbar'agitowt'iwn -Owrowagic' & dasaworowt'iwn hay barbar'neri /Armenian Dialectology, Outline and Arrangement of Armenian Dialects/, Moscow, New Nakhichevan, vol. H, Lazarian Seminary Publishing House of the Eastern Languages.
3. Acharyan H. (1913), Hayere'n gawar'akan bar'aran, E'minean azgagrakan jhoghovac'ow /Armenian Provincial Dictionary, Eminian Ethnographic Collection/, volume I, Tiflis, Lazarian Seminary Publishing House of the Eastern Languages.
4. Gharibyan A (1953), Hay barbar'agitowt'yown /Armenian Dialectology/, Yerevan, Publishing House of the State Distance Pedagogical institute of the USSR.

5. **Mkrtchyan H. (1952)**, Karno barbar'y' /Karin Dialect/, Yerevan, Publishing House of the USSR Academy of Sciences.
6. **Jahukyan G. (1972)**, Hay barbar'agitowt'yan nerac'owt'yown /Introduction to Armenian Dialectology/, Yerevan, Publishing House of the National Academy of Sciences of the USSR.
7. **Jahukyan G. (1959)**, Hin hayereni holovman sistemy' & nra c'agowmy' /The Declension System of Old Armenian and Its Origin/, Yerevan, Publishing House of YSU.

Нарине Маркосян

Сравнительное исследование грамматических разрядов имени существительного в некоторых разновидностях диалекта Карно

Заключение

***Ключевые слова и выражения:** диалект Карно, ветвь Чр, грамматические разряды существительных, частицы множественного числа, склонение, состав падежей.*

Диалект Карно – один из распространенных диалектов ветви Чр, пришедший из глубины веков и используемый по сей день.

В данной работе мы представили сравнительное изучение грамматических разрядов имени существительного в некоторых разновидностях диалекта Карно. С целью исследования были выбраны три области, входящие в состав Грузии: единственное армянское село Дамала области Аспиндза, село Цира Ахалцихского района, село Вачиан Ахалкалакского района. Взяв за основу исследования наречия разных областей, мы попытались определить наличествующие в них сходства и различия в формах образования множественного числа и в падежных формах.

При образовании множественного числа встречается несколько частиц множественного числа: էր, նէր, էստան, ք, իք, դիք, վրդիք, վի, վրնէր, անք, դանք, աննէր, էնք, օնք՝ հայլէստան/հայլինէր/ հայլիք, գինէստան/ գինիք գինինէր, փարանէր/ փարէք/ փարէստան. Было обнаружено, что частица էստան часто используется в наречиях сёл Дамала и Вачиан. Редко употребляются во всех говорах частицы ան (իշան, ձիան), դանք

(կրորորդանք, փսպրրորդանք). Окончания множественного числа վի, վրներ получают, в основном, слова, обозначающие парные части тела: աչվի/աչվրներ, օղվի/օղվրներ, ձեռվի/ձեռվրներ, մաղվի/մաղվրներ, что присуще всем разновидностям диалекта.

В изученных нами наречиях диалекта Карно система склонения своеобразна, упорядочена и довольно крепка. Существительные или слова, употребленные в качестве существительных, относятся к одному из восьми склонений.

Самым распространенным в единственном числе является склонение ի, а во множественном числе – склонение ու. Отметим, что слова, относящиеся к другим склонениям, тоже изменяются по типу склонения ի. В исследуемых наречиях родительный падеж используется, в основном с определенным артиклем, реже – без артикля.

Narine Markosyan

A Comparative Study of Grammatical Categories of Noun in Several Branches of the Karin Dialect

Conclusion

Key words and expressions: *Karin dialect, K branch, grammatical categories of noun, plural particles, declension, formation of cases.*

The Karin dialect is one of the most widespread dialects of the K branch, which, coming from the depths of thousands of years, is still alive today.

In the present article we have presented a comparative study of the grammatical categories of nouns in several branches of the Karin dialect. For this purpose we have chosen three different regions being part of Georgia: Damala, the only Armenian village of the Aspidza region, Tsira village of the Akhaltsikhe region, Vachian village of the Akhalkalaki region. By taking the branches of different regions as the study material, we have tried to highlight all the commonalities and differences that are present both in the formation of the plural and in the declension of the mentioned branches.

When forming the plural number, the words can appear with several plural particles: իր,

ներ, էստան, ստան, ք, իք, դիք, վրդիք, վի, վրներ, անք, դանք, աններ, էնք, օնք (er, ner, estan, stan, q, ik, dik, vedik, vi, vener, ank, dank, anner, enk, onk): **հայլէստան/հայլիներ/հայլիք**, (haylestan/hayliner/haylik), **գինէստան, գինիք գինիներ** (ginestan, ginik, gininer), **փարաներ/ փարեք/ փարէստան** (paraner,paerk,parestan). We have noticed that the plural particle **էստան** (estan) is frequently used in the branches of Damala and Vachian. The plural particles **ան` իշան, ձիան, դանք** (an, ishan, dzian, dank). **կրդորդանք, ախպրորդանք** (krdordank, akhpordank) are rarely used in all the branches. **Վի, Վրներ** (vi, vyner) plural endings are given to the parts of the body mainly expressing duality: **աչվի/աչվրներ** (achvi/achvner), **օդվի/օդվրներ** (odvi/odvner), **ձեովի/ձեովրներ** (dzervi/dzervner), **մադվի/մադվրներ** (madvi/madvner), which are characteristic to all the branches of dialects: **նին** (nin) is characteristic to only the Tsira branch.

Among the branches studied by us the declension system of the Karin dialect is distinguished by a unique, regular and rather thick declension system. Nouns or words used as nouns are characterized by any of the eight mentioned cases. The most common is the external declension **ի** (i) in the singular form, and declension **ու** (u) in the plural form. It should be noted that the words belonging to other declensions are also subjected to declension **ի** (i). In the studied branches of dialects genitive case is mostly used with a definite article, rarely it is used without an article.

Նարինե Մարկոսյան - ԵՊՀ հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու: ԲՊՀ հայագիտության ամբիոնի դոցենտ Գիտական հետաքրքրությունները՝ գրաբար, բարբառագիտություն, հայոց լեզվի պատմություն, ժամանակակից հայոց լեզու: Հեղինակ է շուրջ 10 հոդվածի: narine.markosyan1977@mail.ru

Narine Markosyan - An associate professor, a candidate of philological sciences, the Chair of Armenian Language History and General Linguistics of the YSU, an associate

professor of the Chair of Armenian Studies of the BSU Scientific interests: old Armenian, dialectology, the history of Armenian language, the modern Armenian language. She is an author of about 10 articles. narine.markosyan1977@mail.ru

Нарине Маркосян – Кафедра истории армянского языка и общего языкознания, к.ф.н. доцент. Доцент кафедры арменоведения Государственного университета им. В. Брюсова. Научные интересы: грабар, диалектология, история армянского языка, современный армянский язык. Автор более 10 научных статей. narine.markosyan1977@mail.ru

ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ՀՈՄԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՐԱՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՏԵՔՍՏԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԿԱՊԱԿՑԵԼԻՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v2i65.100

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում դիտարկվել են հարանշանակության դասակարգման տարաբնույթ մոտեցումները՝ որպես լեզվական միավորի իմաստաբանական բաղադրիչ (հաղորդակցական տիրույթում), ինչպես նաև դրանց դասակարգման վերլուծությունը՝ լեզվաբանության, ոճագիտության, տրամաբանության և փիլիսոփայության դիտանկյուններից: Հարանշանակությունը դիտարկվում է որպես խոսույթի իմաստաբանական կայացման կարևոր միջոց: Տիպաբանական քննության դիտանկյունից իմաստային կառուցվածքում առանձնացվել են հարանշանակության *արտահայտչական, զգացմունքային, գնահատողական, տևականության* և այլ իմաստային բաղադրիչներ:

Հարանշանակության և տեքստի մոդալականության արտահայտման մակարդակում քննության է առնվում նաև համատեքստային հոմանիշների կիրառության հարցը: Հոմանիշները դիտարկվել են որպես տեքստի կապակցելիության միջոցներ, իսկ դրանց կիրառությունը՝ կոնկրետ տեքստի շրջանակում: Միևնույն ժամանակ, իմաստաբանական հատկությունների արտահայտությունը քննարկվել է ըստ տեքստի ժանրային առանձնահատկությունների և հաղորդակցական իրավիճակի:

Դիտարկվել են նաև հոմանիշների՝ որպես տեքստակազմիչ միջոցների գործառական նշանակության առանձնահատկությունները տեքստի իմաստային կապակցելիության առանձնահատկության տեսանկյունից:

Հոմանիշները դիտարկվել են նաև որպես արտահայտության բովանդակային ճշգրտման և լեզվարտահայտչականության միջոցների ընտրության տեսանկյունից: Հոմանիշների լեզվական, ինչպես նաև տեքստային եղանակայնությունն

ուսումնասիրելիս նպատակահարմար է այն դիտարկել կառուցվածքային, իմաստաբանական և գործառության տեսանկյուններից: Ընդ որում, բոլոր այս տեսանկյուններից իրականացվող դիտարկումները պետք է ունենան անհրաժեշտ համատեքստային ներառվածություն, լեզվաոճական առանձնահատկությունների հաշվառում, ինչպես նաև խոսույթի գործաբանական «արժեքի» հստակեցում: Նման մոտեցումները ոչ միայն քննում են հետազոտության գործնական նյութը, այլ նաև նպաստում են առավել առարկայական ապացուցողական հիմքի ներկայացմանը:

***Բանալի բառեր և արտահայտություններ.** հարանշանակություն, հարանշանակության իմաստային կառուցվածք, համատեքստային հոմանիշներ, լեզվական հոմանիշներ, խոսքային, իրավիճակային, հեղինակային կամ իրադրային հոմանիշներ:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հարանշանակության վերլուծության հիմնական լեզվաբանական հարացույցը

Հարանշանակությունը ուսումնասիրվել է մի շարք գիտակարգերի լույսի ներքո, օրինակ՝ լեզվաբանության, ոճագիտության և տրամաբանության: Երբեմն նման եզրույթը մեկնաբանվում է որպես հաղորդակցական «դիտավորության» կամ «մտադրության» արտահայտման միջոց, որտեղ բուն իմաստը և հարանշանակությունները հաղորդակցական ծավալ և բովանդակություն են հաղորդում խոսքին: Այն սահմանվել է հատկապես մոսկովյան լեզվաբանական դպրոցի ներկայացուցիչ Յու. Ապրեսյանի (1974, 1995), Ն. Իորդանսկու, Լ. Ելմսլևի և Յու.Ն.Մարչուկի (1980, 1984, 2009) կողմից, որպես «գուգորդություն»: Լեզվաբանության մեջ՝ շատ ավելի նեղ՝ ոչ հաղորդակցական տիրույթում, հաճախ հանդիպող ևս մի սահմանման համաձայն՝ հարանշանակությունը բառային միավորների իմաստաբանական տարրորշման բաղադրիչներից մեկն է, հատկապես հոմանիշների վերլուծության հարցում: Նման տեսակետին են հարում հատկապես Հ. Ռոսսիպալը (1973), Պ.Բռազելմանը (1981), Ա.Լադիսովը (1983) և այլք:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հավաքագրված նյութը հնարավորինս ներառվել է հոդվածում զուգադրական-համեմատական մեթոդով՝ համաձայն կառուցվածքային, իմաստաբանական և շարահյուսական քննության սկզբունքների:

Հարանշանակությունը ուսումնասիրվել է ոչ բովանդակության տեսանկյունից, այլ որպես բառի լրացուցիչ, հարակից իմաստային բաղադրիչ, որը դիտարկվում է ի հավելում բառի հիմնական՝ ռեֆերենտ արժեքին՝ դենոտացիային:

Վերջին շրջանում լեզվաբանության մեջ ամրապնդվել է այն, ըստ մեզ՝ առավել լայն, համատեքստային կամ խոսութափոխ տեսակետը (Շմելն Դ., Եվգենևա Ա., Կոլշանսկիյ Գ., Լարին Բ., Նորման Բ.), որի համաձայն հարանշանակությունը լեզվում առկա իմաստային կառուցվածքների անբաժանելի մասն է, որը չի կարող սահմանափակվել միայն ոճական առանձնահատկությունների տիրություն:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Հարանշանակությունը լեզվական միավորի իմաստաբանական բաղադրիչ է, որը լրացնում է լեզվական միավորի բուն (դենոտատիվ)՝ առարկայահասկացական բովանդակությունը՝ ըստ հաղորդակցական իրավիճակի և խոսողի հաղորդակցական մտադրության:

Հարանշանակությունը մանրամասնում, ճշգրտում և ուղղորդում է խոսքում ներկայացվող տեղեկատվությունը, որը կարող է պայմանավորված լինել պատմամշակութային կամ լեզվամշակութային իրողությամբ, աշխարհայացքով, փորձառությամբ, ինչպես նաև հանրալեզվաբանական առանձնահատկություններով:

Լեզվաբանները հարանշանակության իմաստային կառուցվածքում տարբերակում են *արտահայտչական*, *զգացմունքային*, *գնահատողական*, *տևականության* և այլ իմաստային բաղադրիչներ: Նման տեսակների տիպաբանական քննությունը դեռևս ամբողջական և համակարգված չէ:

1. Արտահայտչականությունն ունի բավականին բարդ բնույթ, որը հետազոտություններում մեկնաբանվում է տարբեր կերպ (դիցուք՝ Ի. Առնոլդի, Լ.

Բլումֆիլդի, Ն. Կոմլի աշխատանքներում): Ամենաընդհանրական բնութագիրը համապատասխան իմաստի հագեցած (սաստկացած) արտահայտումն է՝ բառի իմաստաբանական կառուցվածքի սահմաններում, որն իր հերթին առանձնակի արժեք է ձեռք բերում հաղորդակցության կոնկրետ համատեքստում: Ընդ որում, ուշադրության են արժանի ինչպես հնարավոր հարանշանակությունը, այնպես էլ այն հաղորդակցական մտադրությունը կամ նպատակը (համոզել, գովաբանել կամ նսեմացնել, խրախուսել կամ վիրավորել և այլն), որի համաձայն խոսողն ընտրում է կոնկրետ բառը՝ կոնկրետ հարանշանակությամբ:

Արտահայտչականությունը բացահայտվում է երկու հակադիր ըմբռնումների լույսի ներքո՝ բառի ընդլայնված (հիմնականում՝ սաստկացած) և բուն իմաստները: Բառիմաստի ընդլայնված կիրառության դեպքում խոսքի արտահայտչականությունն ասելով՝ հասկանում ենք հաղորդակցական որոշակի ազդեցություն արտահայտող լեզվական միջոցները: Տվյալ դեպքում օբյեկտիվ իմաստը վերաճում է առավել սուբյեկտիվ, անձնավորված կամ անհատականացված իմաստի: Չեզոք իմաստ ասելով՝ նկատի ունենք ընդունված, ընդհանրական իմաստը: Ի տարբերություն չեզոք կամ օբյեկտիվ իմաստի՝ արտահայտչականությունը ընդհանուր բառապաշարի իմաստաբանական տիրույթից դուրս է: Այն ընդգրկում է խոսքում հանդիպող արտահայտչականության բոլոր հնարավոր միջոցները:

2. Զգացմունքայնությունը (զգացմունքային տարրորոշվածությունը)՝ որպես բաղադրիչ, հաղորդակցության մեջ հանդիպում է սուբյեկտիվ վերաբերմունք արտահայտելու նպատակով, որը հաճախ երանգավորում է ասվածը՝ երբեմն գերակա դիրք զբաղեցնելով բուն իմաստի նկատմամբ: Խոսքի օբյեկտիվ՝ հասկացական ձևավորումը տրամաբանական տիրույթում համադրվում է զգացմունքների հետ հարանշանակության միջոցով: Արդյունքում հաղորդակցության հիմնական նպատակներից մեկը ոչ միայն կամ նույնիսկ երբեմն ոչ այնքան տեղեկատվությունն է, այլ զգացմունքների արտահայտությունը *սուբյեկտիվ վերաբերմունքի* նշութավորմամբ:

3. Խոսողի վերաբերմունքի հետ սերտորեն կապված է «գնահատողական» բաղադրիչը: Այն առաջնային է վերաբերմունքի արտահայտման համար, քանի որ

այն բարձրաձայնվում է սեփական դիրքորոշումը հանրայնացնելու նպատակով: Զգացմունքները համապատասխանաբար կարող են դիտարկվել որպես «դրական» կամ «բացասական»՝ կախված երևույթին և/կամ պատճառահետևանքային կապերին տրվող սոցիալական գնահատականից: Լեզվական միավորները, բուն իմաստից բացի, կարող են հաղորդել լրացուցիչ իմաստային երանգ՝ *դրական* կամ *բացասական* գնահատականներով: Սրանք որոշակի ոլորտներում և պայմաններում սահմանափակում են լեզվական այդ միավորի գործածության հնարավորությունները:

Տարբերակվում են զգացմունքային-արտահայտչական (գնահատող) և գործառության-ոճական տիպի հարանշանակություններ (Կունին Ա., Շախովսի Վ., Տելիա Վ. և ուրիշներ):

Զգացմունքային-արտահայտչական հարանշանակությունը որոշակի վերաբերմունք է արտահայտում որևէ առարկայի, անձի, երևույթի հանդեպ: Նման հարանշանակությունը կարող է նշուրավորվել ինչպես ձևաբանական, այնպես էլ բառային մակարդակներով: Օրինակ՝ արեգակ, ձագուկ, շքեղ և այլն: Լեզվական միջոցները՝ ըստ հուզաարտահայտչական երանգավորման, բաժանվում են դրական (մեկիորատիվ), որը խոսքին հաղորդում է դրական վերաբերմունք (անբասիր, հիասքանչ), և բացասական (պեյորատիվ), որն արտահայտում է բացասական վերաբերմունք (պարագլուխ, հաշտվողականություն, բծախնդիր) (Արնոլդ Ի., Կոժինա Մ.): Ոճական-գործառական հարանշանակությունը պայմանավորված է հաղորդակցական որոշակի ոլորտում լեզվական միավորի առավել գործածությամբ:

Հարանշանակությունը՝ որպես իմաստաբանական լեզվաշխարհի բաղադրիչ, էական միջոց է խոսույթի կայացման համար. նկատի ունենք խոսքի առավել խորքային զարգացման համար, որտեղ գրուցակցից, ունկնդրից կամ ընթերցողից ակնկալում ենք առավել վերլուծական ըմբռնում: Ուստի, հարանշանակությունը հետազոտություններում չպետք է սահմանափակվի զուտ ոճական առանձնահատկության դուրսբերմամբ. անհրաժեշտ է այն ընկալել որպես լեզվական միավորի լրացուցիչ՝ հարակից իմաստային բաղադրիչ, որը կարող է նպաստել անհրաժեշտ *մանրամասնմանը*, *երանգավորմանը* կամ

տեղեկատվության հստակեցմանը:

Արդիական թեմաների շարքին է պատկանում տեղեկատվական-հաղորդակցական խոսույթին՝ որպես հանրային կարծիքի վրա ներազդելու միջոցների համակարգը: Տվյալ միջոցների վերլուծությունը պայմանավորված է լսարանով կամ թիրախային խմբերով, ինչպես նաև տեքստում տարաբույժ ոճական հնարների գույակցմամբ, որոնց շարքում առանձնահատուկ նշանակություն ունեն հոմանիշները: Ըստ Օ. Ս. Ախմանովի (*Ахманова О., 2004*)՝ հոմանիշները նպաստում են տեքստի բովանդակության բնութագրմանը նաև այլ՝ առավել ընդհանրական տեսանկյուններից: Հատկապես առանձնակի հայեցակարգերն են՝ *գաղափարախոսական, խուսափողական, համոզիչ-հորդորական* և *երկիմաստության հայեցակարգերը*: Միևնույն ժամանակ, խոսքում առներույթ չի խաթարվում ուղերձի բովանդակությունը: Խաթարման դեպքում այն կարող է դառնալ ակնհայտ խոսքի այլ՝ հետագա հատվածներում: Այս «խաթարումը» կարող է իր արտահայտությունը գտնել տեքստի կամ խոսույթի կապակցվածության մակարդակներում:

Հոմանիշները՝ որպես տեքստի իմաստաբանական կապակցելիության միջոցներ

Հոմանիշների՝ որպես տեքստի կապակցելիության միջոցների կիրառության ուսումնասիրությունը հատկապես արդյունավետ և առարկայական է կոնկրետ տեքստի շրջանակում: Նման համատեքստային վերլուծությունը հնարավորություն է տալիս ընդգրել բառիմաստն ամբողջությամբ՝ ներառելով հոմանիշների միջև առկա կապերը, առանձնացնելով և հակադրելով բառային նշանակությունը (հատկապես՝ բազմիմաստ բառերի դեպքում)՝ դրա փաստացի, համատեքստային իմաստին և տարբերակելով լեզվական և համատեքստային հոմանիշները:

Հոմանիշները պարզապես լեզվական երևույթ չեն, որ արտահայտվում են գուտ մակերեսային մակարդկում, այլ գիտակցության արտահայտման գործընթացի ստեղծագործական դրսևորումներ:

Ըստ որոշակի համակարգման տրամաբանության՝ գոյություն ունեն բառարանային (բուն լեզվաիմաստային) /die Haltung- դիրք, դիրքորոշում վարք,

վարքագիծ, das Verhalten - դիրք, դիրքորոշում վարմունք, վերաբերմունք/ և համատեքստային (իրավիճակային) հոմանիշներ /einen geliebten Menschen verloren haben կորցնել սիրած մարդուն, um einen geliebten Menschen trauern – սգալ, որդբալ սիրած մարդու համար/:

Հոմանիշները կարող են իմաստաբանական հատկություններն արտահայտել տարբեր կերպ՝ ըստ տեքստի ժանրային առանձնահատկությունների, հաղորդակցական իրավիճակի և այլն: Միևնույն իմաստաբանական դաշտի հոմանիշների և/կամ բառերի ակտիվ կիրառության շնորհիվ տեքստում՝ միմյանց հաջորդող նախադասությունների և տեքստային հատվածների միջև կարող է ձևավորվել շարադրանքի կապակցվածություն:

Օրինակ՝

1) Das beweisen uns die Ärztinnen, Ärzte und Pflegekräfte in Krankenhäusern, Pflegeheimen und anderen Einrichtungen.

Դա կհաստատեն բժիշկները, բժշկուհիները և հիվանդանոցների, խնամքի կենտրոնների բուժքույրերը և այլ կառույցները:

2) Das zeigt sich bei den Mitarbeitern der Gesundheitsämter, das medizinische Personal auf den Intensivstationen.

Դա նկատելի է հատկապես առողջապահական հաստատություններում ինտենսիվ թերապիայի բաժանմունքների բժշկական անձնակազմի խոսույթում:

3) Berufsgruppen – մասնագետների խումբ

Անգլիա Մերքել ամանորյա ուղերձ /2020թ./

Տվյալ դեպքում հոմանիշների հաջորդականությունը թույլ է տալիս ունկնդրին ընկալել փոխանցվող տեղեկատվությունը աստիճանաբար՝ ըստ տեղեկույթի հազեցածության: Միաժամանակ լեզվական միջոցների օգնությամբ ստեղծվում է ներքին իմաստաբանական կապակցվածություն, որը պայմանավորված է նաև առաջնային /ակտուալացված/ իմաստաբանական դաշտով:

Հոմանիշների կիրառությունը նպաստում է երևույթների բազմակողմանի մանրամասնմանը: Հոմանիշները ստեղծում են իրավիճակի ծավալուն պատկեր՝ թույլ տալով խոսողին հստակ սահմանել իր դիրքորոշումը, պարզաբանել իր

դիտանկյունը, տեսակետը կամ բարձրաձայնել իր կողմնորոշումը:

Օրինակ, խոսելով գլոբալ տաքացման հետևանքով առաջացած խնդիրների և դրանց դիմակայելու մասին, Անգելա Մերքելն իր ուղերձում այն բնութագրում է հետևյալ կերպ.

1) Also müssen wir auch alles Menschenmögliche unternehmen, um diese Menschheitsherausforderung zu bewältigen.

Հետևաբար, մենք նաև պետք է ամեն բան անենք /ձեռնարկենք/, որպեսզի հաղթահարենք մարդկությանը նետված այս մարտահրավերը:

2) Deutschland seinen Beitrag leistet - ökologisch, ökonomisch, sozial - den Klimawandel in den Griff zu bekommen.

Գերմանիան իր ներդրումն ունի բնապահպանական, տնտեսական, սոցիալական, կլիմայի փոփոխության դեմ պայքարում:

wir -Deutschland

unternehmen- seinen Beitrag leisten

bewältigen-in Begriff bekommen- ausgleichend einwirken

Երբեմն տարբերակում ենք համատեքստային հոմանիշներ, որոնք նաև բնորոշվում են որպես՝ խոսքային, իրավիճակային, հեղինակային կամ իրադրային հոմանիշներ (Լարին Բ., Լավիշ Մ., Պեշկովսկի Ա.): Դրանք իրենց փաստացի կիրառումն են գտնում որոշակի համատեքստում: Համատեքստային հոմանիշների տարանջատումը պայմանավորված է խոսողի աշխարհընկալմամբ և երևույթների արժևորմամբ:

Հարանշանակությունը օգնում է նշուրավորել խոսողի վերաբերմունքը երևույթների հանդեպ կամ վերջինիս անհատական աշխարհընկալումը: Համատեքստում կարող են հոմանիշ լինել գիտակցության մեջ որոշակի ասոցիացիաներ առաջացնող բառերը:

Այսպես, Անգելա Մերքելը, իր 2020թ. ամանորյա ուղերձում անդրադառնալով թագավարակին, այն բնութագրում է որպես «համաճարակ», «պատմական ճգնաժամ», «հիվանդություն», որը տվյալ դեպքում ասոցացվում է հիվանդության հետ:

1) Dieses Jahr **der Pandemie**, war ein Jahr des Lernens

Համաճարակի այս տարին ուսանելու տարի էր նաև:

2) **Die Coronavirus-Pandemie** war und ist eine politische, soziale, ökonomische Jahrhundertaufgabe. Sie ist eine **historische Krise**.

Թագավարակի համավարակը նաև քաղաքական, սոցիալ-տնտեսական հարյուրամյակի խնդիր է:

3) ... mit den Nachwirkungen einer **Erkrankung** sehr zu kämpfen haben...

...պայքարել հիվանդության հետևանքների վերացման դեմ...

Այսպես, հոմանիշների շարքը տվյալ դեպքում բաղկացած է հետևյալ բառերից՝
Coronavirus – historischwe Krise- Pandemie – Erkrankung:

Համատեքստային հոմանիշների ընտրության հիմնական չափանիշը բառերի իմաստային երանգավորումն է: Ի տարբերություն հոմանիշների կիրառման՝ բառային միավորի պարզ կրկնությունը ապահովում է տեքստի ներսում թեմատիկ պարզ անցումները, ընդ որում՝ առանց առանցքային թեմայից շեղվելու, և ապահովում է տեքստի ներքին կապակցվածությունը: Կրկնությունը նպաստում է ուշադրության կենտրոնացմանը և նպատակ ունի հավաստիանալ, որ ունկնդիրը/խոսակիցը ըմբռնել է կամ առնվազն հետևել է խոսքին:

Հոմանիշները՝ որպես հաղորդակցահեն միջոցներ, կրում են տեքստաստեղծ գործառույթ, նպաստում են տեքստի իմաստային կապակցելիությանը՝ հնարավորինս ամբողջացնելով թիրախային իմաստային դաշտը: Համապատասխանաբար ըստ իրենց հարանշանակության՝ հոմանիշները տեքստում կարող են իմաստային կապակցվածությունը ապահովել՝ *ճշգրտման և/կամ հստակեցման, վերաբերմունքային արտահայտչականության, ընդհանրացման և/կամ խուսափողական գործառույթներով:*

Օրինակ՝

1) **Der Generation** der heute jungen Menschen und **ihren Nachkommen** auf dieser Erde **gut leben zu können**.

Այսօրվա երիտասարդների սերունդը և նրանց հաջորդող սերունդները այս երկրագնդում կկարողանան լավ ապրել:

2) Es sind ja unsere **Kinder** und **Enkel** .

Նրանք մեր երեխաներն ու թոռներն են:

3) Alle **Menschen** Zugang zu der Bildung haben.

Բոլոր մարդիկ կրթվելու հնարավորություն ունենան:

Համատեքստային հոմանիշների վերլուծությունը հնարավորություն է տալիս դասակարգել դրանք կոնկրետ տեքստի տիրույթում: Հոմանիշների լեզվական, ինչպես նաև տեքստային եղանակայնությունն ուսումնասիրելիս նպատակահարմար է այն դիտարկել նաև կառուցվածքային, իմաստաբանական և գործառության տեսանկյուններից: Նմանատիպ դասակարգումը նպաստում է հոմանիշների հնարավորինս ամբողջական ընկալմանը: Ընդ որում, դրանց կիրառման հաջորդականությունը սերտորեն կախված է տեքստի ժանրային և ոճական առանձնահատկություններից: Կառուցվածքային դասակարգում ասելով՝ նկատի ունենք խոսքիմասային դասակարգումը՝ գոյականի, բայի, դերանվան և դրանց ձևաբանական հարացույցի ներառմամբ: Իմաստաբանական դասակարգումը կարող է դիտարկվել ըստ տրամաբանական-իմաստային կառուցվածքների բնութագրման, այսինքն դրանք կարող են բաղկացած լինել մի քանի բաղադրիչներից, որոնք տեքստում ունեն շղթայական հաջորդականություն:

Տեքստի իմաստաբանական կապակցվածության մեջ հոմանիշների դերակատարությունը առանձնապես հաճախակի և հազեցած է, քանի որ դրանք օժանդակում են տեղեկույթի ճշգրտությանը, խոսույթի նպատակայնությանը և ավարտուն տեքստի ձևավորմանը: Հոմանիշները թույլ են տալիս խուսափել նույնաբանություններից՝ հազեցնելով խոսույթը՝ ուշադրության կենտրոնացման, անհրաժեշտ շեշտադրումների, արտաքին գրավչության տեսանկյուններից:

Քաղաքական խոսույթում հոմանիշները՝ որպես տեքստաստեղծ միջոցներ, ունեն հուզական երանգավորում, իսկ հաճախ դրանք հանդես են գալիս ոճական հնարի կարգավիճակով: Անշուշտ, ոճական գործառույթը տվյալ դեպքում պետք է քննության առնվի քաղաքական դաշտի հաղորդակցական առանձնահատկությունների և նպատակների համատեքստում: Նմանատիպ առանձնահատկության շնորհիվ հնարավոր է դառնում հոմանիշ բառերը կիրառել

բնութագրումների, խոսույթում որոշակի դրական կամ բացասական տպավորություն հաղորդելու համար:

Համատեքստային հոմանիշները հաճախ դառնում են «կեղծ»/«շինծու»/«ենթադրելի» հոմանիշներ, որոնք առաջին հայացքից իմաստով բավականին մոտ են և իրենց բազմազանության շնորհիվ կարող են ազդել բառի բուն՝ դեմոտատիվ իմաստային բաղադրիչի վրա: [Համատեքստային հոմանիշների կիրառությունը խոսքում նպաստում է երևույթների ամբողջական և համապարփակ նկարագրությանը:](#)

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, հոմանիշներն ունեն տեքստում իմաստային կապեր ստեղծելու զգալի ներուժ. դրանք կարող են ապահովել տեքստի կապակցվածությունը, ինչպես նաև ունենալ ոչ միայն ոճական, այլ նաև գործառական լիցք: Միևնույն ժամանակ, դրանց կիրառությունը կարող է նշույթավորել մոդալականությունը տեքստի/խոսույթի մակարդակում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Арнольд И. (1986)**, Лексикология современного английского языка: учебник для ин-тов и фак-тов. иностр. яз. /на англ. яз, 3-е изд./, Москва, Высшая школа.
2. **Ахманова О. (2004)**, Словарь лингвистических терминов, 2-е изд., стер., Москва, УРСС, Едиториал УРСС.
3. **Bussmann H. (1990)**, Lexicon of Linguistics. Second, completely revised edition. Stuttgart (= Kröncrs Taschenausgabe).
4. **Gauger H. (1972)**, On the problem of synonyms. Avec un résumé en français: Apport au problème des synonymes. Tübingen (= Tübinger Beiträge zur Linguistik; 9).
5. **Fischer W. (1973)**, Equivalence and tolerance structures in linguistics. The theory of synonyms. München (= Linguistische Reihe; 15).
6. **Кожина М. (2008)**, Стилистика русского языка: учебник /М. Н. Кожина, Л. Р. Дускаева, В. А. Салимовский. 4-е изд., стереотип/, Москва, Флинта, Наука.

7. Кудрявцева Л. (2004), Роль языка средств массовой информации в развитии общенационального языка. Вестник МГУ. Серия 9 Филология, № 5.
8. Кунин А. (1996), Курс фразеологии современного английского языка, Москва, Высшая школа.
9. Мардиева Л. (2003), Лексико-стилистические средства ценностной характеристики мира. Казань: Изд-во Казан. Ун-та, Т.1.
10. Сапожникова О. (2003). К семантической систематизации коннотативных значений. Филологические науки, № 2.
11. Ullmann S. (1967), Basic features of semantics. The meaning from a linguistic point of view. German by S. Koopmann. Berlin.
12. Weiss D. (1984), The periphrase as a means of text reference. In Slavic Linguistics 1983. Presentations of the IX. Konstanz Slavic Working Meeting Munich, 27. with 29.9. 1983. Ed. v. P. Rehder. Munich (= Slavistic contributions; 181).
13. Weiss D. (1984), Soviet language Modelle. In the handbook of the Russian. Linguistics and related disciplines. Hrsg. v. H. Jachnow. Wiesbaden (=Slavic study books; New episode 2), S. 581-621.
14. https://publish.sutd.ru/docs/content/sb_filology_2022.pdf
15. Bettina Felicitas Birk https://edoc.ub.uni-muenchen.de/16001/1/Birk_Bettina.pdf, vgl. Ker-brat-Orecchioni 1977; Garza-Cuarón 1978, 1991; Rössler 1979; Traini 2001; Philip 2003, 2006, 2010,
16. [von Bundeskanzlerin Dr. Angela Merkel am 31. Dezember, <https://www.bundesregierung.de/bregde/service/bulletin/neujahrsansprache-2021-1834002/>
17. [von Bundeskanzlerin Dr. Angela Merkel am 31. Dezember 2019 über Hörfunk und Fernsehen:<https://www.bundesregierung.de/bregde/service/bulletin/neujahrsansprache-2020-1709738>]
18. [Von Bundeskanzlerin Dr. Angela Merkel am 31. Dezember <https://www.bundesregierung.de/breg-de/service/bulletin/neujahrsansprache-2020-1709738>

REFERENCES

1. **Arnold I. (1986)**, Leksikologiya sovremennogo angliyskogo yazyka /Lexicology of the modern English language: a textbook for in-tov and facts. foreign language /I. V. Arnold; in English – 3rd ed., Moscow: Higher School.
2. **Ахманова О. (2004)**, Slovar' lingvisticheskikh terminov /Словарь лингвистических терминов/, 2-е изд., стер., Москва, УРСС, Едиториал УРСС.
3. **Bussmann H. (1990)**, Lexicon of Linguistics. Second, completely revised edition. Stuttgart(= Kröncrs Taschenausgabe).
4. **Gauger H. (1972)**, On the problem of synonyms. Avec un résumé en français: Apport au problème des synonyms. Tübingen (= Tübinger Beiträge zur Linguistik; 9).
5. **Fischer W. (1973)**, Equivalence and tolerance structures in linguistics. The theory of synonyms. München (= Linguistische Reihe; 15).
6. **Kozhina M. (2008)**, Stilistika russkogo yazyka: uchebnik /Stylistics of the Russian language: textbook// M. N. Kozhina, L. R. Duskaeva, V. A. Salimovsky. 4th ed., stereotype. Moscow : Flint: Nauka.
7. **Kudryavtseva L. (2004)**, Rol' yazyka sredstv massovoy informatsii v razvitii obshchenatsional'nogo yazyka /The role of the language of mass media in the development of the national language/. Bulletin of the Moscow State University. Series 9 Philology, № 5.
8. **Kunin A. (1996)**, Kurs frazeologii sovremennogo angliyskogo yazyka /Course of phraseology of the modern English language//A.V. Kunin, Moscow, Higher School.
9. **Mardieva L. (2003)**, Leksiko-stilisticheskiye sredstva tsennostnoy kharakteristiki mira /Lexical and stylistic means of value characteristics of the world, Kazan: Kazan Publishing House. Unita, vol. 1.
10. **Sapozhnikova O. (2003)**, K semanticheskoy sistematizatsii konnotativnykh znacheniy /Towards semantic systematization of connotative meanings/. Philological sciences, № 2.
11. **Ullmann S. (1967)**, Basic features of semantics. The meaning from a linguistic point of view. German by S. Koopmann. Berlin.

12. Weiss D. (1984), The periphrase as a means of text reference. In Slavic Linguistics 1983. Presentations of the IX. Konstanz Slavic Working Meeting Munich, 27. with 29.9. 1983. Ed. v. P. Rehder. Munich (= Slavistic contributions; 181).
13. Weiss D. (1984), Soviet language Modcile. In the handbook of the Russian. Linguistics and related disciplines. Hrsg. v. H. Jachnów. Wiesbaden (=Slavic study books; New episode 2), S. 581-621.
14. https://publish.sutd.ru/docs/content/sb_filology_2022.pdf
15. Bettina Felicitas Birk https://edoc.ub.uni-muenchen.de/16001/1/Birk_Bettina.pdf, vgl. Ker-brat-Orecchioni 1977; Garza-Cuarón 1978, 1991; Rössler 1979; Traini 2001; Philip 2003, 2006, 2010,
16. [von Bundeskanzlerin Dr. Angela Merkel am 31. Dezember, <https://www.bundesregierung.de/bregde/service/bulletin/neujahrsansprache-2021-1834002/>
17. [von Bundeskanzlerin Dr. Angela Merkel am 31. Dezember 2019 über Hörfunk und Fernsehen:<https://www.bundesregierung.de/bregde/service/bulletin/neujahrsansprache-2020-1709738>]
18. [Von Bundeskanzlerin Dr. Angela Merkel am 31. Dezember <https://www.bundesregierung.de/breg-de/service/bulletin/neujahrsansprache-2020-1709738>

Тамара Аршакян

Коннотации контекстных синонимов в текстовой связности

Заклучение

Ключевые слова и выражения: коннотация, семантическая структура коннотации, контекстные синонимы, типы синонимов: дискурсивные, ситуационные, индивидуально-стилистические синонимы.

Статья рассматривает различные подходы к классификации коннотации – как семантического компонента языковых единиц в коммуникативной сфере. Также анализируется классификация коннотаций с точки зрения лингвистики, стилистики, логики

и философии. Коннотация рассматривается как значимый инструмент семантической конструкции дискурса. С типологической точки зрения исследование выделяет экспрессивные, эмоциональные, оценочные, временные и другие семантические компоненты в семантической структуре.

На уровне выражения коннотации и модальности в текстах также рассматривается вопрос контекстных синонимов. Синонимы рассматриваются как инструменты для текстовой связности, а их использование анализируется в рамках конкретных текстовых структур. Кроме того, обсуждается выражение семантических свойств в связи с жанровыми характеристиками текста и коммуникативной ситуацией.

Функциональная значимость синонимов как средств текстотворчества исследуется с точки зрения семантической связности. Более того, синонимы рассматриваются с точки зрения их роли в обеспечении точности содержания и выборе языковой выразительности. При изучении языковых и текстовых модальностей синонимов целесообразно анализировать их с структурной, семантической и функциональной точек зрения. Наблюдения с этих точек зрения должны включать необходимую контекстуальную инклюзивность, учитывать языковые, то есть стилистические особенности, а также уточнять прагматическую «ценность» дискурса. Такие подходы не только уточняют практический материал исследования, но и усиливают обоснованность представленных доказательств.

Tamara Arshakyan

Connotations of contextual synonyms in textual coherence

Conclusion

Keywords and expressions: *connotation, the semantic structure of connotation, contextual synonyms, types of synonyms: discourse, situational, individual-style-based synonyms.*

The article examines various approaches to the classification of connotation as a semantic component of linguistic units within the communicative domain. It also analyzes the classification of connotation from the perspectives of linguistics, stylistics, logic, and philosophy. Connotation is regarded as a significant means of semantic construction in discourse. From a typological standpoint, the study identifies expressive, emotional,

evaluative, duration, and other semantic components within the semantic structure.

At the level of connotation and modality expression in texts, the issue of contextual synonyms is also addressed. Synonyms are considered tools for text cohesion, and their usage is analyzed within specific textual frameworks. Additionally, the expression of semantic properties is discussed concerning the genre characteristics of the text and the communicative situation.

The functional significance of synonyms as textual creation tools is explored from the perspective of semantic cohesion. Furthermore, synonyms are examined in terms of their role in ensuring content accuracy and the selection of linguistic expressiveness. In studying the linguistic and textual modalities of synonyms, it is deemed appropriate to analyze them from structural, semantic, and functional perspectives. Observations from these perspectives should incorporate necessary contextual inclusivity, account for linguistic, i.e. stylistic features, and clarify the pragmatic “value” of discourse. Such approaches not only refine the practical material of the research but also enhance the robustness of the evidential basis presented.

Թամարա Արշակյան - ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե, ԲԿԳՔ վարչության միջազգային համագործակցության բաժնի գլխավոր մասնագետ, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս: t.arshakyan@hesc.am

Тамара Аршакян - Комитет по высшему образованию и науке МОНКС РА, главный специалист отдела международного сотрудничества управления КВОН, преподаватель кафедры романо-германских языков и методики их преподавания-Армянского государственного педагогического университета имени Хачатуря Абовяна:

t.arshakyan@hesc.am

Tamara Arshakyan - Higher Education and Science of Committee MESCS RA, Chief Specialist of Unite of International Cooperation Department of HECP, Lecturer at the Department of Romano-Germanic Languages and Methods of Teaching Them at Khachatur Abovyan Armenian State Pedagogical University:

t.arshakyan@hesc.am

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ՉԵԶՈՔ ՍԵՌԻ ԲԱՅԵՐԻ ՊԱՐԱԳԱԱՌՈՒԹՅՈՒՆԸ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v2i65.101

ԱՍՓՈՓՈՒՄ

Հոդվածում քննվում է ժամանակակից հայերենի չեզոք սեռի բայերի արժույթի դրսևորումներից մեկը՝ պարագաառությունը, որն առայսօր ուսումնասիրության առարկա չի դարձել: Դրանով էլ պայմանավորված է աշխատանքի արդիականությունը:

Չեզոք սեռի բայերի պարագաառական արժույթի ուսումնասիրությունը հնարավորություն կտա առավել ամբողջական պատկերացում կազմելու չեզոք սեռի ոչ միայն դիմավոր, այլև անդամ բայերի կապակցական հնարավորությունների մասին:

Ժամանակակից հայերենի չեզոք սեռի բայերից քննության են ենթարկվում միայն այն բայերը, որոնք կարող են պարագա լրացում կամ լրացումներ ենթադրել և պահանջել ուժեղ կառավարման եղանակի թե՛ անմիջական և թե՛ միջնորդական տեսակներով: Առդրության և թույլ կառավարման եղանակներով իրականացող *չեզոք սեռի բայ-պարագա լրացում* կապակցությունները պարագաառության ուսումնասիրության տեսանկյունից հետաքրքրություն չեն ներկայացնում:

Ժամանակակից հայերենի չեզոք սեռի բայերի պարագաառական արժույթի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ոչ բոլոր բայերն են պարագաառու: Ավելի շատ են այն չեզոք սեռի բայերը, որոնք զուրկ են պարագաառական արժույթից: Վերջիններիս մի մասն առանձնանում է խնդրառական արժույթով, իսկ մի մասն էլ ոչ խնդրառու է և ոչ էլ պարագաառու: Հոդվածի վերջում արել ենք շարադրանքի տեսական դրույթներից բխող մի շարք եզրակացություններ:

Բանալի բառեր և բառակապակցություններ. արժույթ, միարժույթ չեզոք սեռի բայեր, եռարժույթ չեզոք սեռի բայեր, կապակցելիություն, կառավարում,

անմիջական կառավարում, միջնորդական կառավարում, կապական կառույց:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Անդրադառնալով ժամանակակից հայերենի բայի պարագաառությանը՝ Գ. Ջահուկյանը նշում է, որ պարագաները ցույց են տալիս «ենթակայի գործողությունը այս կամ այն կողմից բնութագրող առարկաներ ու հանգամանքներ» (**Ջահուկյան Գ., 1974**): Լեզվաբանը պարագա է համարում այն լրացումները, որոնց «գործառությունը կարող է կատարել որևէ մակբայ (այն կարելի է փոխարինել մակբայով)» (**Ջահուկյան Գ., 1974**):

Հայտնի է, որ ժամանակակից հայերենում պարագաառությունն իրականանում է կառավարման և առդրության եղանակներով: Առդրության եղանակով պարագա լրացման և բայով արտահայտված լրացյալի կապակցությունը արժույթի տեսանկյունից հետաքրքրություն չի ներկայացնում, քանի որ տվյալ պարագա լրացումը լրացյալի կողմից պարտադիր կերպով չի ենթադրվում և հարկ եղած դեպքում չի կարող բառային արտահայտություն ունենալ: Նույն հիմնավորմամբ պարագաառական արժույթի տեսանկյունից կարևոր չեն նաև թույլ կառավարմամբ կապակցվող պարագաները:

Պայմանավորված բայիմաստով՝ չեզոք սեռի մի շարք բայեր առանձնանում են պարտադիր պարագաառությամբ, որն իրականանում է ուժեղ կառավարման եղանակով: Ժամանակակից հայերենում վերջինիս արտահայտման միջոցներն են հոլովաձևերը և/կամ նրանց հետ գործածվող կապերն ու կապական բառերը, որոնցով ձևավորվում են տարածական, ժամանակային, նպատակային, պատճառային, հիմունքի, զիջման, ձևի, չափի պարագայական հարաբերություններ (**Աբրահամյան Ս., Առաքելյան Վ., Քոսյան Վ., 1979**):

Ժամանակակից հայերենի չեզոք սեռի բայերի քննությունը մեզ բերում է այն հետևության, որ պարագաառական արժույթի դրսևորումներ են «*չեզոք սեռի բայ - տեղի պարագա*» կաղապարով արտահայտված այն կապակցությունները, որոնք իրականանում են ուժեղ կառավարման եղանակի թե՛ անմիջական և թե՛ միջնորդական տեսակներով:

Կախված ենթադրվող տեղի պարագա գործորդների /ակտանտների/ քանակից՝

ժամանակակից հայերենի չեզոք սեռի բայերը բաժանվում են երկու խմբի.

1. պարագաառու բայեր,
2. պարագաառությամբ արժույթագուրկ բայեր:

Երկու խմբի են բաժանվում նաև պարագաառու չեզոք սեռի բայերը.

- 1.1. պարագաառությամբ միարժույթ բայեր,
- 1.2. պարագաառությամբ եռարժույթ բայեր:

Սույն հոդվածում առանձին բաժիններով կներկայացնենք ժամանակակից հայերենի վերոնշյալ խմբերով առանձնացող դիմավոր և անդեմ բայերի կապակցելիական հնարավորությունները՝ ըստ կառավարման անմիջական և միջնորդական տեսակների:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքը կատարել ենք նկարագրական, վերլուծական, համադրական մեթոդներով:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ա. Պարագաառությամբ միարժույթ չեզոք սեռի բայեր: Պարագաառությամբ միարժույթ չեզոք սեռի բայերից են՝ *աշխատել, ապրել, բազմել, բնակվել, եմ, թառել, լինել, կանգնել, մնալ, նստել, նստոտել, չոքել, պառկել, քարանալ, քնել* և այլն: Օրինակ՝ Մի աղջիկ էր նա, *ապրում էր Իրանում* (http://eanc.net/EANC/search/?interface_language=am): Կանգնած էին զինվորներն ու քահանան, Գունատ ու լուռ *կանգնած էին նրա մոտ* (Տերյան Վ., 1973): և այլն:

Ինչպես վկայում են բերված օրինակները, պարագաառությամբ միարժույթ չեզոք սեռի բայերը գերազանցապես ցույց են տալիս դադար:

Միարժույթ պարագաառության դեպքում առկա է *«չեզոք սեռի բայ – բուն տեղի պարագա»* կադապարը, որն իրականանում է՝

1. անմիջական կառավարման եղանակով,
2. միջնորդական կառավարման եղանակով:

Ա.1. Անմիջական կառավարմամբ միարժույթ պարագաառություն:

Անմիջական կառավարման եղանակով պարագաառությամբ միարժույթ չեզոք սեռի բայերի պահանջած բուն տեղի պարագան կարող է արտահայտվել տրական,

հայցական կամ ներգոյական հոլովով, ինչպես՝ ա) տրական հոլովով՝ Ինքնամոռաց՝ վազ *են* տալիս Ու *նստոտում գետնին, քարին*

(http://eanc.net/EANC/search/?interface_language=am), բ) Հայցական հոլովով՝ Փքված հնդկահավի նման Բարխուդարը մոտեցավ աստյան քարին, *կանգնեց* մելիքների համար նշանակված *տեղը* (http://eanc.net/EANC/search/?interface_language=am), գ) Ներգոյական հոլովով՝ *Անտառում* ամպի ծվեններ *կային*, Կապույտ մշուշներ *կային անտառում* (Սահյան Հ., 1967):

Ա.2. Միջնորդական կառավարմամբ միարժույթ պարագաառություն: Դադար ցույց տվող վերոնշյալ չեզոք սեռի՝ պարագաառությամբ միարժույթ բայերը կարող են պահանջել նաև պարտադիր կերպով ենթադրվող, սակայն արդեն միջնորդական կառավարման եղանակով կապակցված բուն տեղի պարագաներ՝ արտահայտված կապվող բառերի և մի շարք կապերի կապակցությամբ, որոնցից են՝

Դեմ՝ Ահա նստած ես տան դեմ ու կանաչած թթենին Դեմքիդ ստվեր է գցել, մայր իմ անուշ ու անզին (Չարենց Ե., 1955): *Տակ՝ նա ժայռի տակ պառկեց* (http://eanc.net/EANC/search/?interface_language=am):

Բ. Պարագաառությամբ եռարժույթ չեզոք սեռի բայեր: Սովորաբար պարագաառությամբ եռարժույթ են ժամանակակից հայերենի՝ չեզոք սեռի՝ ընթացք ցույց տվող բայերը. Դրանցից են՝ *անցնել, արշավել, բարձրանալ, գալ, գահավիժել, գնալ, երթնեկել, ընկնել, թռչել, ժամանել, իջնել, վազել, վերադառնալ, ցատկել* և այլն: Որպես կանոն, այդ բայերը կարող են միաժամանակ ենթադրել և անհրաժեշտության դեպքում պահանջել սկզբնակետի¹ անցման և վերջնակետի² տեղի պարագաներ:

Մեր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հազվադեպ են այն նախադասությունները, որոնցում նշված պարագաները միաժամանակ ունեն բառային արտահայտություն և ներկայացնում են ուժեղ կառավարման միևնույն տեսակը: Բերենք միայն անմիջական կառավարման եղանակով սկզբնակետի,

¹ Կոչվում է նաև *ելման տեղի պարագա* (Առաքելյան Վ., 1958, Ասատրյան Մ., 1987, Գյուլբուդաղյան Ս. 1988):

² Կոչվում է նաև *ուղևորման տեղի պարագա* (Առաքելյան Վ., 1958, Ասատրյան Մ., 1987, Գյուլբուդաղյան Ս., 1988):

անցման և վերջնակետի տեղի պարագաների միաժամանակ կիրառության մեզ հանդիպած եզակի նախադասությունը՝ *Այդտեղից նրանք նեղ աստիճաններով բարձրացան երկրորդ հարկի երկար միջանցքը* (http://eanc.net/EANC/search/?interface_language=am):

Սակավաթիվ են նաև այն նախադասությունները, որոնցում նշված պարագաները միաժամանակ ունեն բառային արտահայտություն և ներկայացնում են ուժեղ կառավարման անմիջական և միջնորդական տեսակները: Օրինակ՝ *Լեռնանցքից* Պուշկինը կարճ *ճանապարհով իջնում է դեպի Ղշլաղ* (այժմ՝ Ժդանով) *գյուղը* (http://eanc.net/EANC/search/?interface_language=am): Քարե *արևի մոտից* ոլորապտույտ *արահետով բարձրանում ենք դեպի Ամբերդ* (http://eanc.net/EANC/search/?interface_language=am): Հետևաբար ստորև կներկայացնենք պարագաառությամբ եռարժույթ բայերի կապակցելիության առանձին դրսևորումները:

Ավելի հաճախադեպ են այն նախադասությունները, որոնցում վերոնշյալ և նրանց շարքը դասվող՝ պարագաառությամբ եռարժույթ չեզոք սեռի բայերը պարտադիր կերպով պահանջում են ենթադրվող պարագաներից մեկը՝ Օրինակ՝ *քաղաքի կողմից* մի կառք *եկավ*

(http://eanc.net/EANC/search/?interface_language=am): Գնում էինք երգելով, *անցնում էինք* Նիկոլ փեսայի *տան մոտով*

(http://eanc.net/EANC/search/?interface_language=am):

Ինչպես նկատելի է, եռարժույթ պարագաառության դեպքում առկա է «*չեզոք սեռի բայ – սկզբնակետի տեղի պարագա – անցման տեղի պարագա և վերջնակետի տեղի պարագա*» կաղապարը, որն իրականանում է՝

1. Անմիջական կառավարման եղանակով,
2. Միջնորդական կառավարման եղանակով:

Բ.1. Անմիջական կառավարմամբ եռարժույթ պարագաառություն:

Անմիջական կառավարման եղանակով պահահջվող սկզբնակետի, անցման և վերջնակետի տեղի պարագաները կարող են չհիշատակվել՝ պայմանավորված

տարբեր հանգամանքներով (չիմանալը, չկարևորելը, ինքնըստինքյան ենթադրվելը և այլն): Այդ է պատճառը, որ, նայած խոսքային իրավիճակին կամ հեղինակի հայեցողությանը, անմիջական կառավարմամբ եռարժույթ պարագաառությամբ բնութագրվող չեզոք սեռի բայերը պարտադիր կերպով ենթադրում և պահանջում են՝ կա՛մ սկզբնակետի տեղի պարագա՝ արտահայտված բացառականով, օրինակ՝ Նա մեկնեց քաղաքից (<http://eanc.net/EANC/search/?interface language=am>), կա՛մ վերջնակետի տեղի պարագա՝ արտահայտված՝ա) տրականով՝ նախիրն աննկատելի *մոտենում էր գետակին* (Զորյան Ս., 1977), բ) հայցականով՝ Բարձրացավ ու *քայլեց տուն* (<http://eanc.net/EANC/search/?interface language=am>):

Բ.2. Միջնորդական կառավարմամբ եռարժույթ պարագաառություն:

Ընթացք ցույց տվող չեզոք սեռի՝ վերոնշյալ բայերը կարող են պահանջել նաև պարտադիր կերպով ենթադրվող, սակայն արդեն միջնորդական կառավարման եղանակով կապակցված սկզբնակետի, անցման և վերջնակետի տեղի պարագաներ:

Նայած խոսքային իրադրությանը կամ հեղինակի հայեցողությանը՝ այս դեպքում ևս պարագաառությամբ եռարժույթ չեզոք սեռի նույն բայի (օրինակ՝ *իջնել*) հետ սովորաբար բառային արտահայտություն է ստանում նշված տեղի պարագաներից մեկը, որը տվյալ իրադրության մեջ կարևորվում է: Հմնտ. հետևյալ նախադասությունները՝ Աղջիկները լուսնի հետ երգելով *իջնում էին* կոլխոզի *հանդերից* (սկզբնակետի տեղի պարագա).... (Մաթևոսյան Հ., 1985) // Ասյան ցտեսություն ասեց Սաքանին, ձեռք տվավ և *իջավ ճանապարհով* (անցման տեղի պարագա) (Բակունց Ա., 1986) // Մեկ այլ խոսքային իրավիճակում կարող են կարևորվել պարագաառությամբ եռարժույթ չեզոք սեռի նույն բայի (օրինակ՝ *իջնել*) կողմից պահանջվող վերոնշյալ տեղի պարագաներից երկուսը: Հմնտ. հետևյալ նախադասությունները՝ Ալվառինջ գյուղի *սարից իջանք դաշտ* (սկզբնակետի և վերջնակետի տեղի պարագաներ) (<http://eanc.net/EANC/search/?interface language=am>) //.... չորսս էլ նեղ *արահետով իջանք դեպի ձորը* (անցման և վերջնակետի տեղի պարագաներ) (<http://eanc.net/EANC/search/?interface language=am>):

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ավելի հաճախ, պայմանավորված խոսքային տարբեր իրավիճակներով և խոսողի սուբյեկտիվ մոտեցմամբ, այս դեպքում ևս միևնույն նախադասության մեջ սկզբնակետի, անցման և վերջնակետի տեղի պարագաներից բառային արտահայտություն կարող է ստանալ միայն մեկը, որը տվյալ դեպքում կարևորվում է խոսողի կամ խոսքի հեղինակի կողմից:

Նշենք, որ խոսքային տարբեր իրավիճակներում նախընտրելի կարող է լինել նշված պարագա գործորդներից /ակտանտներից /ամեն մեկը:

Սկզբնակետի տեղի պարագան արտահայտվում է հետևյալ կապերի մասնակցությամբ. *Կողմից՝ Դպրոցի կողմից մեզ մոտեցավ Թեֆֆիկը* (http://eanc.net/EANC/search/?interface_language=am): *Հետևից՝* հոռոմները *տան հետևից*, ցածրիկ մի դռնից դուրս գալով, *վազում էին* (Զորյան Ս., 1983): *Տակից՝* նոր թխած լավաշ հացի բույր *է ելնում սրահի կամարների տակից* (http://eanc.net/EANC/search/?interface_language=am):

Նշենք, որ միջնորդական կառավարմամբ սկզբնակետի տեղի պարագան գերազանցապես կազմվում է բացառական հոլովաձև ունեցող կապերի միջոցով:

Անցման տեղի պարագան արտահայտվում է հետևյալ կապերի մասնակցությամբ. *մոտից՝* Տղամարդիկ մի քիչ զարմացան, *եկեղեցու մոտից անցնելիս* սկսեցին ոտները կախ զցել (http://eanc.net/EANC/search/?interface_language=am): *Վրայից՝* Ծերունի գիտնականը *ցատկեց* փոքրիկ *առվակի վրայից* (http://eanc.net/EANC/search/?interface_language=am): *Միջով՝ քայլում էին* նրանք ձյունախառն *ցեխերի միջով* (Զորյան Ս., 1980):

Միջնորդական կառավարմամբ անցման տեղի պարագան հիմնականում կազմվում է տեղանիշ կապերի գործիական հոլովով:

Վերջնակետի տեղի պարագան արտահայտվում է հետևյալ կապերի մասնակցությամբ. *Մեջ՝* Փայտը ուղիղ *ձեռքերիս մեջ ընկավ* (http://eanc.net/EANC/search/?interface_language=am): *Վրա՝* — Թշնամի՜ չգայիք մեր *տան վրա ...* -նրա ծղրտոցը թռավ մարդկանց գլխի վրայով

(<http://eanc.net/EANC/search/?interface language=am>) և այլն:

Ինչպես նշեցինք, մեկ այլ խոսքային իրադրության մեջ վերոնշյալ երեք պարագա գործորդներից միևնույն նախադասության կազմում կարող են կարևորվել երկուսը, մասնավորապես՝ ա) սկզբնակետի և վերջնակետի տեղի պարագաները: Օրինակ՝ Ասում է և ճարպիկ ուսուցիչը մի *քարից մյուսի վրա ցատկում* (Բակունց Ա., 1979), բ) Անցման և վերջնակետի տեղի պարագաները: Օրինակ՝ Յահին *աթոռների միջով քայլեց դեպի բեմ* (<http://eanc.net/EANC/search/?interface language=am>), գ) Սկզբնակետի և անցման տեղի պարագաները: Օրինակ՝գորավարը փայտե ճոճոան *աստիճաններով իջավ պատշգամբից*

(<http://eanc.net/EANC/search/?interface language=am>) և այլն:

Պայմանավորված տվյալ խոսքային իրավիճակով՝

1. չհիշատակված երկու տեղի պարագաները ավելի հաճախ ենթադրվում են, և դրանք կարելի է վերականգնել: Օրինակ՝ «Ես մեկնում եմ *գյուղ*» (<http://eanc.net/EANC/search/?interface language=am>) նախադասության հեղինակին հայտնի են և՛ սկզբնակետի, և՛ անցման տեղի պարագաները, սակայն խոսքի մեջ նա դրանք չի կարևորում և չի հիշատակում:

2. Մի շարք նախադասություններում չհիշատակված երկու տեղի պարագաներից մեկը ենթադրվում է, և կարելի է վերականգնել, իսկ մյուսը՝ ոչ: Այսպես՝ «Արևի տակ իրիկնային, իրիկնային հրով վառված՝ Այդ հին դաշտում կռվում էին ամբոխները խելագարված: *Քաղաքներից ու գյուղերից, ստեպներից հեռու ու մոտ՝ Եկել էին նրանք նորից՝ հուսավառված ու կրակոտ*» (Չաբենց Ե., 1955) բանաստեղծական տողերում կարևորվում է միայն սկզբնակետի ակտանտը, վերջնակետի ակտանտը ենթադրվում է, և անհրաժեշտության դեպքում կարելի է վերականգնել (*այդ հին դաշտը*), իսկ անցման պարագա ակտանտը չի կարևորվում և չի ենթադրվում:

3. Որոշ նախադասություններում չհիշատակված երկու տեղի պարագաները որոշակիորեն չեն ենթադրվում, և հնարավոր չէ վերականգնել: Այսպես՝ «Խոր սուզվեցին *ակն* աղբյուրի, Մըտան *կաղնին* հաստաբուն» (Թումանյան Հ., 1989)

նախադասության մեջ սկզբնական տեղի պարագան ենթադրվում է, քանի որ այն նախապես հիշատակվել է (Փերիները *սարի գրլիին* Հավաքվեցին գիշերով) (Թումանյան Հ., 1989), մինչդեռ անցման տեղի պարագան տվյալ իրադրության մեջ չի ենթադրվում:

Առանձին դեպքերում նույն բայը կարող է պահանջել տարբեր հոլովներով, բայց քերականական նույն իմաստն արտահայտող տեղի պարագա: Հմմտ. Ղեյլանի ծուխը թե *երկինք* ելներ, *Աստղերին հասներ*՝ այնպես լույս չկար (<http://eanc.net/EANC/search/?interface language=am>)//Առաջին խումբը՝ առանց ընդհանուր ջարդի, *հասավ Երզնկա* (<http://eanc.net/EANC/search/?interface language=am>):

Հատկանշական է, որ որոշ կապային կառույցներ, գործածվելով տարբեր բայերի պահանջով, արտահայտում են տարբեր տեղի պարագայական իմաստներ: Այս հարցում ևս էական դեր ունի այս կամ այն բայի բառիմաստը: Այսպես՝ *վրա* կապը դադար ցույց տվող, այսինքն՝ պարագաառությամբ միարժույթ բայերի պահանջով արտահայտում է բուն տեղի պարագայի քերականական իմաստ՝ այդ նույն *դեզի վրա պառկել է* Սոնան (Բակունց Ա., 1976), մինչդեռ ընթացք անվանող այսինքն՝ պարագաառությամբ եռարժույթ բայերի պահանջով՝ վերջնական տեղի պարագայի քերականական իմաստ՝ նա ցանկապատի արանքով ներս մտավ այգին, *բարձրացավ ծառի վրա* (<http://eanc.net/EANC/search/?interface language=am>):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քննությունից պարզվում է, որ չհաշված որոշ բացառություններ՝ ժամանակակից հայերենի չեզոք սեռի պարագաառու բայերը ենթադրում և պահանջում են տեղի պարագա կամ պարագաներ:

Չեզոք սեռի՝ տեղի պարագաառու բայերը բաժանվում են երկու խմբի՝ ա) պարագաառությամբ միարժույթ բայեր, բ) պարագաառությամբ եռարժույթ բայեր:

Պարագաառությամբ միարժույթ չեզոք սեռի բայերը գերազանցապես ցույց են տալիս դադար և պարտադիր կերպով ենթադրում ու պահանջում են անմիջական կամ միջնորդական կառավարման եղանակով կապակցված բուն

տեղի պարագա:

Պարագաառությամբ եռարժույթ բայերի դեպքում հաճախադեպ են այն կառույցները, որոնցում բառային արտահայտություն ունեն միայն սկզբնակետի կամ միայն վերջնակետի տեղի պարագաները: Համեմատաբար սակավ են հանդիպում միայն անցման տեղի պարագայով կառույցներ:

Վերոնշյալի համեմատությամբ առավել սակավադեպ են այն նախադասությունները, որոնցում չեզոք սեռի՝ պարագաառությամբ եռարժույթ բայը կարողանա պահանջել ենթադրվող երեք պարագա ակտանտներից երկուսը: Այս դեպքում էլ համեմատաբար հաճախադեպ են այն կառույցները, որոնցում բառային արտահայտություն ունեն սկզբնակետի և վերջնակետի տեղի պարագաները: Դրան հակառակ՝ անհամեմատ սակավաթիվ են սկզբնակետի ու անցման և անցման ու վերջնակետի տեղի պարագաներով կառույցները:

Միաժամանակ երկու տեղի պարագայով արտահայտված նախադասություններում բայի կապակցումը տվյալ պարագաներին կատարվում է տարբեր կերպ. սկզբնակետի տեղի պարագան առավելապես հանդիպում է անմիջական կառավարմամբ, իսկ անցման և վերջնակետի տեղի պարագաները՝ և՛ անմիջական, և՛ միջնորդական:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբրահամյան Ս., Առաքելյան Վ., Քոսյան Վ. (1979), Հայոց լեզու, 2-րդ մաս, Շարահյուսություն, Երևան, «Լույս» հրատ.:
2. Առաքելյան Վ. (1958), Հայերենի շարահյուսություն, հ. Ա, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ.:
3. Ասատրյան Մ. (1987), Ժամանակակից հայոց լեզու, Շարահյուսություն, Երևան, Երևանի համալսարանի հրատ.:
4. Գյուլբուդաղյան Ս. (1988), Ժամանակակից հայերենի շարահյուսություն. Պարզ նախադասություն, Երևան, Երևանի համալսարանի հրատ.:
5. Զահուկյան Գ. (1974), Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երևան:

6. **Քոսյան Վ. (1975)**, Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, Երևան, Հայկական ՄՍՀ ԳԱ հրատ.:

Բնագրային օրինակների սկզբնաղբյուրներ

1. **Բակունց Ա. (1986)**, Երկեր (ՀԴԳ), Երևան, «Սովետական գրող» հրատ.:
2. **Բակունց Ա. (1976)**, Երկեր չորս հատորով, հ. 1, Երևան, Հայկ. ՄՍՀ ԳԱ հրատ.:
3. **Բակունց Ա. (1979)**, Երկեր չորս հատորով, հ. 2, Երևան, Հայկ. ՄՍՀ ԳԱ հրատ.:
4. **Զորյան Ս. (1977)**, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, «Սովետական գրող» հրատ.:
5. **Զորյան Ս. (1980)**, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, «Սովետական գրող» հրատ.:
6. **Զորյան Ս. (1983)**, Երկերի ժողովածու, հ. 8, Երևան, «Սովետական գրող» հրատ.:
7. **Թումանյան Հ. (1989)**, Երկերի լիակատար ժողովածու 10 հատորով, հ. 3, Երևան, Հայաստանի ԳԱ հրատ.:
8. **Խեչոյան Լ. (2013)**, Պատմվածքներ, Երևան, Հեղինակային հրատ.:
9. **Մաթևոսյան Հ. (1985)**, Երկեր երկու հատորով, հ. 2, Երևան, «Սովետական գրող» հրատ.:
10. **Շիրվանզադե Ա. (1986)**, Երկեր հինգ հատորով, հ. 1, Երևան, «Սովետական գրող» հրատ.:
11. **Չաքենց Ե. (1955)**, Ընտիր երկեր, Երևան, Հայպետհրատ.:
12. **Սահյան Հ. (1976)**, Բանաստեղծություններ, հ. Ա, Երևան, «Հայաստան» հրատ.:
13. **Տերյան Վ. (1972)**, Երկերի ժողովածու չորս հատորով, հ. 1, Երևան, «Հայաստան» հրատ.:
14. **Տերյան Վ. (1973)**, Երկերի ժողովածու չորս հատորով, հ. 2, Երևան, «Հայաստան» հրատ.:

Բնագրային օրինակները ըստ

ԱՐԵՎԱԿ –ի (http://eanc.net/EANC/search/?interface_language=am)

REFERENCES

1. **Abrahamyan S., Arakelyan V., Kosyan V. (1979)**, Hayoc lezow, 2-rd mas, Sharahyowsowt'yown /The Armenian language, 2nd part, Syntax/, Yerevan, "Luys".
2. **Arakelyan V. (1958)**, Hayereni sharahyowsowt'yown /Syntax of the Armenian Language/, Vol. A, Yerevan, Armenian SSR SA.
3. **Asatryan M. (1987)**, Jhamanakakic hayoc lezow, Sharahyowsowt'yown /The Modern Armenian Language, Syntax/, Yerevan, Yerevan University Publishing House.
4. **Gyulbudaghyan S. (1988)**, Jhamanakakic hayereni sharahyowsowt'yown. Parz naxadasowt'yown /Syntax of Modern Armenian. Simple sentence/, Yerevan, Yerevan University Publishing House.
5. **Jahukyan G. (1974)**, Jhamanakakic hayereni sharahyowsowt'yown. Parz naxadasowt'yown /Basics of the Theory of Modern Armenian/, Yerevan, Armenian SSR GA Publishing House.
6. **Kosyan V. (1975)**, Jhamanakakic hayereni bar'akapakcowt'yownnery' /Phrases of Modern Armenian/, Yerevan, Armenian SSR SA Publishing House.

Sources of original examples

1. **Bakunts A. (1986)**, Erker (HDG) /Works (ACL)/, Yerevan, "Sovetakan Grogh" Publishing house.
2. **Bakunts A. (1976)**, Erker chors hatorov /Countries in four volumes/, volume 1, Yerevan, Armenian SSR SA Publishing House.
3. **Bakunts A. (1979)**, Erker chors hatorov /Countries in four volumes/, volume 1, Yerevan, Armenian SSR SA Publishing House.

4. **Zoryan S. (1977)**, Erkeri jhoghovac'ow /Collection of Works/, vol.1, Yerevan, "Sovetakan Grogh" Publishing House.
5. **Zoryan S. (1980)**, Erkeri jhoghovac'ow /Collection of Works/, vol.4, Yerevan, "Sovetakan Grogh" Publishing House.
6. **Zoryan S. (1983)**, Erkeri jhoghovac'ow /Collection of Works/, vol.8, Yerevan, "Sovetakan Grogh" Publishing House.
7. **Tumanyan H. (1989)**, Erkeri liakatar jhoghovac'ow 10 hatorov /The Complete Collection of Works in 10 volumes/, vol. 3, Yerevan, SA Publishing House of Armenia.
8. **Khechoyan L. (2013)**, Patmvac'qner /Stories/, Yerevan, Author's Edition.
9. **Matevosyan H. (1985)**, Erker erkow hatorov /Works in two volumes/, vol. 2, Yerevan, "Sovetakan Grogh" Publishing House.
10. **Shirvanzade A. (1986)**, Erker hing hatorov /Woorks in five volumes/, volume 1, Yerevan, "Sovetakan Grogh" Publishing house.
11. **Charents Y. (1955)**, Y'ntir erker /Selected works/, Yerevan, "Haypethrat".
12. **Sahyan H. (1967)**, Banasteghc'owt'yownner /Poems/, vol. A, Yerevan, Hayastan Publishing House.
13. **Teryan V. (1972)**, Erkeri jhoghovac'ow chors hatorov /Collection of Works in four volumes/, vol. 1, Yerevan, Hayastan Publishing House.
14. **Teryan V. (1973)**, Erkeri jhoghovac'ow chors hatorov /Collection of Works in four volumes/, vol. 2, Yerevan, Hayastan Publishing House.

Original copies according to:

of AREVAK http://eanc.net/EANC/search/?interface_language=am

Лала Гркиян

Адвербиальная валентность непереходных глаголов современного
армянского языка

Заключение

Ключевые слова и выражения: валентность, одновалентные непереходные глаголы, трехвалентные непереходные глаголы, сочетаемость, управление, прямое управление, обособованное управление, предложная конструкция.

В статье рассматривается одно из проявлений валентности непереходных глаголов в современном армянском языке – адвербиальная валентность (способность принимать обстоятельство), которая до сих пор не была предметом изучения. Именно это и определяет актуальность нашей работы. Изучение адвербиальной валентности непереходных глаголов позволит получить более полное представление о сочетаемости не только личных, но и безличных непереходных глаголов. Из всех непереходных глаголов современного армянского языка мы рассматриваем только те глаголы, которые могут подразумевать и требовать сочетания с обстоятельством или обстоятельствами путем сильного управления, как прямого, так и обособованного. Сочетаемость непереходных глаголов с обстоятельством путем примыкания или слабого управления не представляет интереса с точки зрения изучения адвербиальной валентности. Изучение адвербиальной валентности непереходных глаголов в современном армянском языке показывает, что не у всех глаголов есть способность сочетаться с обстоятельством. Среди непереходных глаголов преобладают те, у которых отсутствуют способность сочетаться с обстоятельством. Часть последних отличается объектной валентностью, в то время как другие не имеют ни объектной, ни адвербиальной валентности. В конце статьи мы сделали ряд выводов, которые вытекающих из теоретических положений работы.

Lala Grkikyan

Adverbial Valence of Intransitive Verbs in the Modern Armenian language

Conclusion

Key words and expressions: *valency, univalent intransitive verbs, thivalent intransitive verbs, compatibility, government, direct government, indirect government, prepositional construction.*

The article examines one of the manifestations of the valency of intransitive verbs in the Modern Armenian language - adverbial valency (the ability to accept an adverbial modifier), which has not been the subject of study so far. This is what determines the relevance of the study. Studying the adverbial valency of intransitive verbs will provide a more complete understanding of the compatibility of not only personal, but also impersonal intransitive verbs. Of all the intransitive verbs of the Modern Armenian language, only those verbs are considered that can imply and require combination with an adverbial modifier or an adverbial modifiers through strong government, both direct and indirect (mediated). Combination of intransitive verbs with an adverbial modifier by means of association or weak government is not of interest from the point of view of studying adverbial valency.

The study of the adverbial valency of intransitive verbs in the Modern Armenian language shows that not all verbs have the ability to be combined with an adverbial modifier. Among intransitive verbs, those that lack the ability to combine with adverbial modifiers prevail. Some of the latter are distinguished by objective valency, while others have neither objective nor adverbial valency. At the end of the article, we made a number of conclusions arising from the theoretical provisions of the work.

Լալա Գրիկյան – ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի հայցորդ, Գյումրիի թիվ 1 ավագ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի: Գիտական հետաքրքրությունը՝ ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն: Հեղինակ է 5 հոդվածի, grkikyan999@gmail.com

Լալա Գրիկյան – соискатель Ширакского центра арменоведческих исследований НАН РА, учитель армянского языка и литературы Гюмрийской старшей школы № 1. Научные- интересы: синтаксис современного армянского языка. Автор 5 статей.

grkikyan999@gmail.com

Lala Grkikyan – SCAS NAS RA Degree Competitor, Gyumri High School №1 Teacher of the Armenian Language and Literature Scientific interests: Syntax of Modern Armenian. Author of 5 articles. grkikyan999@gmail.com

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱԼԲԵՐՏ ՄԱԿԱՐՅԱՆ

ՄԵԾ ՔԱՂԱՔԻ ՓՈՔԻ ՓՈՂՈՑԸ՝ ԻԲՐԵՎ
ՏԱՐԱԾԱԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ¹*DOI: 10.24234/journalforarmenianstudies.v2i65.102*

ԱՍՓՈՓՈՒՄ

Ինչպես դասական, այնպես էլ ժամանակակից հայ արձակը համաշխարհային գրականության կարևոր բաղադրիչներից և հարստացնող գործոններից է: Որքան էլ թեականորեն նայենք մեր այսօրվա արձակին, այնուամենայնիվ այն զարգանում է՝ անցնելով բավական արգասավոր ճանապարհ: Ուրիշ խնդիր է, որ ժամանակի հրամայականով ու գեղագիտական ճաշակով պայմանավորված՝ այդ արձակը հասկանալիորեն փոխաձևվում է: Նկատելի է, որ դասական վեպի կողքին տեղ է գտնում փորձարարականը, նախկին դիպաշարային պատմվածքի հարևանությամբ բավական սահուն տեղավորվում է ապադիպաշարային պատմվածքը: Բացի այդ՝ իրապաշտական պատկերների կողքին երևում է վերացականը, կենդանի կյանքին հանկարծ միախառնվում է միֆականը... Թվարկումները կարելի է շարունակել: Սակայն ո՞րն է այդ ամենի պատճառը: «Այս բոլոր երևույթներն ունեն իրենց սոցիալական, փիլիսոփայական ու գեղագիտական հիմքերը, իրավացիորեն նկատում է Ժենյա Քալանթարյանը և շարունակում,- և եթե համատարած բնույթ են կրում, ուրեմն սոսկ անհատական նախասիրությամբ չեն պայմանավորված, ամբողջության մեջ արտահայտում են ժամանակի մտածողությունն ու ոճը, թելադրված են ոչ միայն մեր ազգային իրականությամբ, այլև այս կամ այն չափով արտահայտում են կամ անդրադարձնում են գրականության բնագավառում տեղի ունեցող համաշխարհային գործընթացները» (Քալանթարյան Ժ., 2015):

¹ Հետազոտությունն արվել է ԵՊՀ-ի դրամաշնորհի շրջանակում:

Ներկայացված հոդվածը նվիրված է ժամանակակից հայ արձակի ուշագրավ դեմքերից մեկի՝ *Դավիթ Սամվելյանի «4-րդ փողոց»* պատմվածաշարի (Սամվելյան Դ., 2022), ավելի ճիշտ՝ մեծ քաղաքի փոքր փողոցի՝ իբրև տարածաժամանակային խորհրդանիշի քննությանը:

Գեղարվեստական տեսանկյունից առանձնահատուկն այն է, որ շարքի տասնչորս պատմվածքները, կոմպոզիցիոն առումով արտաքուստ չունենալով ավանդական դիպաշարեր, ընդհանուրի մեջ «հանկարծ» կազմում են ինքնատիպ ամբողջություն: Այստեղ ամենափոքր շրջագիծը՝ փողոցը՝ իրեն բնորոշ բաղադրիչներով (շենք, եկեղեցի, հոտ, դրոշ, շքամուտք, պատշգամբ...), աստիճանաբար դառնում է մեծ քաղաքի յուրօրինակ խորհրդանիշ: Նկատելի է նաև, որ «տրոհվող միջուկների»՝ փողոց/քաղաք հարաբերակցության մեջ արձակագրի ասելիքը չի սպառվում. վերջնահաշվում ստեղծվում է մեր ոչ հեռավոր անցյալի Հայաստանի գեղարվեստական ինքնատիպ կենսապատումը՝ տարածաժամանակային լայն շառավղում ազգային ինքնության բացահայտումներով (1990-ականների ծանր սոցիում, պատերազմ, մարդկային բարդ կապեր ու հարաբերություններ):

Բանալի բառեր և արտահայտություններ. մեծ քաղաք, փողոց, Դավիթ Սամվելյան, «4-րդ փողոց», պատմվածաշար, ժանրային փոխաձևում, տարածաժամանակային խորհրդանիշ, հոտ, գույն, դրոշ, կենսապատում:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դավիթ Սամվելյանն ամեննին էլ նորահայտ անուն չէ ժամանակակից հայ արձակում. տակավին երիտասարդ՝ արդեն բազմաթիվ գրքերի հեղինակ է, որոնք արժանացել են ուշադրության, ավելին՝ դրվատալից անաչառ գնահատանքների: Այդ տեսակետից հետաքրքրական են, օրինակ, արձակագրի «Հայելապատում» վիպակի առթիվ արված նուրբ դիտարկումները (Աբրահամյան Ն., 2021, Տեր-Ղազարյան Վ., 2021) կամ «Ռոդենի ձմեռը» պատմվածքի փոքրիկ, բայց տպավորիչ վերլուծությունը (Նազլուխանյան Ս., 2022): Գրախոսները խղճի մտոք և ազնվորեն մատնանշել են հեղինակի անուրանալի ձիրքը, ինքնատիպ մտածողությունը,

ինտելեկտն ու գրական զարգացած ճաշակը:

Այդ ամենի մեջ, սակայն, առանձնանում է հատկապես *Նորայր Աղայանի* արժեքավոր գրախոսականը «*4-րդ փողոց*» պատմվածաշարի մասին: Նշանավոր գրող-գրականագետը խոր դիտողականությամբ միանգամից թափանցում է արձակագրի քաղաքագրության էության մեջ և մատնանշում «քաղաք» հասկացության նրա ինքնատիպ ըմբռնումը: «Գրողը փորձում է ընդհանրացում անել,- նկատում է Ն. Աղայանը.- Երևանը հազարավոր քաղաքներից մեկն է Երկիր մոլորակի վրա, շատերին նման և իր յուրահատկություններով նրանցից տարբեր: Կարծում եմ՝ նմանություն-տարբերության մեջ է նաև քաղաքի բովանդակությունը: ...«Երևան» բառը հիշատակվում է երկու-երեք անգամ, «քաղաք»-ը՝ բազմիցս, որով ամբողջ տեքստը դառնում է ավելի քաղաքային ու քաղաքաշունչ: Սա գիտակցաբա՞ր է արված, թե՞ ենթագիտակցորեն: Կարևոր չէ: Բավական է ասել, որ հեղինակը մտել է քաղաքի դժվար բացվող դարպասներից ներս» (**Աղայան Ն., 2023**):

Ահա այսպես մտնելով այդ «դարպասներից ներս»՝ Սամվելյանը բացահայտում է, որ *քաղաքն ամենից առաջ Մարդն է՝ քաղաքը պարունակողը և քաղաքի նշանակելին*: Նա երկու դարերի ու երկու հազարամյակների սահմանագծին կանգնած մարդ-քաղաքն է՝ նոր ժամանակների բերած խնդիրներից շփոթահար, փոքր-ինչ մարգինալ, շարունակ որոնող, անհանգիստ, երբեմն իրարամերժ զգացողություններով... Ի դեպ, գրականագիտության մեջ «քաղաք» հասկացությունը վաղուց ընկալվել և այսօր էլ շարունակվում է քննվել զանազան դիտանկյուններից. այն մի դեպքում «կույս քաղաքն» է կամ «անառակ քաղաքը» (**Топоров В., 1987**), մյուս դեպքում՝ «կին քաղաքը» կամ «կին ամրոցը» (**Համբարձումյան Հ., 2013**), մեկ այլ դեպքում մարդաբանական հեռանկար է (**Վասիլյան Վ., 2023**).

Խնդրո առարկա պատմվածաշարի մարդ-քաղաքը լիովին հասկանում է, թե որքան խորն է այն ջրափոսը, ուր իրեն նետել են կյանքն ու իրականության անհամաչափ հարաբերությունները: «Երևանը նմանվել է կողք կողքի քայլող, հարյուրհազարավոր միայնակ մարդկանց ամբոխի: Կարծես թե բոլորն իրար ճանաչում են, բոլորը՝ խոսում, ամեն ինչ քննարկվում է, վերլուծության ենթարկվում, բայց ընդհանրացումների ու անդադար կրկնությունների այս հոդմապտույտում

յուրաքանչյուր ոք մենակ է, և միայն Աստված գիտի՝ մեզնից յուրաքանչյուրին երբ և ինչպես պիտի ողորմի», - գրքի փոքրիկ առաջաբանում դիպուկ նկատում է Նշան Աբասյանը (**Սամվելյան Դ., 2022**): Հիրավի, մարդ-քաղաքն զգում է միայնության սարսափը՝ կործանվող հոգիների ողբերգությունը, բայց նա կարծես չի ըմբոստանում, ավելին՝ չի ապստամբում: Անցնելով հոգեբանական կեղեքումների, խոր դրամատիզմի բովով՝ նա իր անհամարձակ արտաքինի տակ, սակայն, պահում է մի անհուն բարություն, որով ասես սովորեցնում է Մարդ մնալու արվեստը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ելնելով ներկա հոդվածի խնդրո առարկայից, այն է՝ փոքրից դեպի ընդհանուրը գնացող կառույցի համապատկերում վեր հանել «քաղաք» հասկացության՝ իբրև տարածաժամանակային խորհրդանիշի էությունը, ընտրվել է *հոգեբանական-վերլուծական մեթոդը*՝ որպես այս ուսումնասիրության ամենահարմար եղանակ:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Այժմ ընտրողաբար անցնենք բուն պատմվածաշարի վերլուծությանը:

Սամվելյանի գիրքն ամենից առաջ ունի ինքնօրինակ կառուցվածք: Առաջին իսկ էջից նկատելի է գրական ավանդույթից լուրջ «շեղումը», այն է՝ Առաջաբանին փոխարինած Վերջաբանը, այնուհետև՝ Նախավերջը, հետո՝ Սկիզբը, ի վերջո՝ Նախագրությունը, ապա՝ բուն պատումը: Ի՞նչ է սա: Արդյոք գրական ապստամբություն՞ն, ուր հեղինակը, ինչպես ինքն է խոստովանում, «գրողական արվեստին հակառակ մի բան է անում. վերջաբան է գրում սկզբում»: Բնավ. ինչպես համաշխարհային, այնպես էլ հայ գրականության մեջ վաղուց առկա են երկի կոմպոզիցիայի խախտման նման բազմաթիվ վայրիվերումներ՝ դասականներից՝ Ջեյմս Ջոյս, Մարսել Պրուստ, Վիրջինիա Վուլֆ, Ղազարոս Աղայան, նորերից՝ Ադասի Այվազյան, Վարդան Գրիգորյան, Սաթենիկ Մկրտչյան և այլք: Հայ արձակագրի համար սա ավելի շատ *ինքնաորոնում-ներհայեցում* է, որի բանալին գտնվում է գրքի բնաբանում. «Երբեմն կիսատ պատմություններն են ամբողջական

լինում, քանի որ նրանց մեջ ամփոփվում է մի ողջ աշխարհ սեր»։ Այդ «կիսատ պատմությունները», ի դեպ, ամբողջանում են *հեղինակի կերպարի* միջոցով, կերպար, որը հենց հեղինակի *ներտեքստային ներկայացուցիչն է*։ Նա 21-րդ դարի անհանգիստ մարդն է՝ գրող-քաղաքացին, որն ընդհանուր դիպաշարը, ավելի ճիշտ՝ հատվածական (ֆրագմենտար) պատումն առաջ է տանում, այսպես կոչված, մտազննումների միջոցով և դրան աստիճանաբար հաղորդում շունչ ու կենդանություն։ Իսկ այդ «մտազննումները» ոչ սակավ դառնում են խոհագրական բանաձևումներ։ Ահա դրանցից մի քանիսը. «Երջանիկներին պատժում են նրանք, ումից հաջողությունը երես է թեթել երկար ժամանակ, ովքեր հոգնել են իրենց ունեցածից, դժգոհում են ամեն ինչից։ Պատժում են լուրջ, բայց տխմար դեմքով, ամեն ապտակի հետ իրենց վաղաժամ կորցրած երջանկությունը վերհիշելով ու որոճալով», «Կան շրթունքներ, որոնք կարել է պետք, կան մտքում ծնված բառեր, որոնք երբեք չպետք է արտաբերվեն։ Բառերը պետք է ներսում այնպես մնան, ինչպես ավազը՝ պատժված զինվորականի կարված գրպաններում՝ մանր, բայց ծանր», «Մարդիկ ու երկինքը մի տեսակ նման են... Որքան մոայլ են կամ տխուր, այնքան ավելի շատ բան են ենթադրում։ Ամպամած երկնքից անձրև է թափվում, իսկ թախծոտ ու դժբախտ մարդուց՝ արցունք» (Մամվելյան Դ., 2022)։

Հեղինակը պայմանական անուն կրող 4-րդ փողոցից է, մայրաքաղաքի ծայրամասային, որոշ ակնարկներից դատելով՝ գուցեև Հարավարևմտյան թաղամասի փողոցներից մեկից։ Էականը, սակայն, դա չէ, այլ այն, որ նա ծնվել ու հասակ է առել սովորական մի փողոցում, որն զգայնաչափի պես անմիջապես արձագանքել է 1990-ականների հայ հանրության կրած դժվարություններին։ Պատումը վարողը, սակայն, չի գնում սոսկ փաստերն արձանագրողի սովորական ճանապարհով. չի ստեղծում ավանդական սրտաճմլիկ դիպաշարեր ու զգայացունց տեսարաններ։ Նա ընտրում է գեղարվեստական տեքստը կազմակերպող ինքնատիպ միջոցներ, դրանցից է, օրինակ, «*կոլաժը*»՝ ամենազանազան տարրերի հանկարծական համակցումներով, որոնք դառնում են մերթ խորհրդանիշ, մերթ գեղարվեստական ազդեցիկ պատկերներ։

Այդպիսի խորհրդանիշ է *եկեղեցին «Չորրորդ փողոց»-ում*՝ համանուն շարքի

առաջին պատմվածքում: Պատերազմի տարիներին թաղամասի բնակիչները կրում էին նյութական և բարոյահոգեբանական անասելի զրկանքներ. անգամ պարսկական լուցկին շքեղություն էր: Փողոցի հետնամասի ամայի տաքածության վրա ինքնաբուխ տոնավաճառ է գոյանում. «Մարդիկ, կարիքից դրդված, տներից բերում ու գետնին էին փռում իրենց լավ պահպանված, տարիներով դարսած շորերն ու սպիտակեղենը, սպասքը, այն ամենը, ինչը հնարավոր էր տեղաշարժել: Բանասեր ու ֆիզիկոս, պատմաբան ու կենսաբան, գրեթե բոլորը դարձել էին վաճառական: *Ամեն ինչ վաճառվում էր՝ բացի պատվից*» (Սամվելյան Դ., 2022): Նախկին ճարտարագետգծագրող Վարդանն այդ տարիներին տոնավաճառում մոմեր, պատրույգներ ու լուցկի էր վաճառում, իսկ մի հասարակ, բայց ազնիվ ու միամիտ երիտասարդ՝ Աբուլը, պատահական անցորդներից ծխելիք էր խնդրում... Թաղամասը դեռևս եկեղեցի չուներ: Հետո գալիս են համեմատաբար բարվոք տարիներ, և սկսվում է եկեղեցու կառուցումը: Պարապությունից ձանձրացող Աբուլը դեռևս չօժված եկեղեցու քահանայից բանվորի աշխատանք է խնդրում, սակայն թափթփված տեսքի, հագած կարճ տաբատի պատճառով մերժվում է նրա կողմից: Հիասթափված տղան այլևս ոտք չի դնում Աստծո տուն: Չորս տարի հետո նորակառույց եկեղեցին մեծ հանդիսությամբ օծվում է. հնաբնակներից արարողությանը բացակայում էր միայն Աբուլը. նա տոպրակներում սնունդ տեղավորող էր աշխատում նորաբաց սուլերմարկետում: Միամիտ տղան ուներ իր ըմբռնումները եկեղեցու և կրոնի մասին. քահանայից մերժվածը կյանքի ամենահուսահատ պահերին՝ առավելապես գիշերը, գալիս ու չոքում էր եկեղեցու դռան դիմաց, խաչակնքում, աղոթում, բայց ներս չէր մտնում: Պատմվածքում եկեղեցին աստիճանաբար կարծես դառնում է փոփոխվող սոցիումի ցուցիչ. բացման ծիսակարգից ու պաշտոնական մասի ավարտից հետո կուշտերը հեռանում են՝ զանգակատան առջև գցված լեփ-լեցուն սեղանները թողնելով սովածների: Նրանք, իրար հրմշտելով, արագորեն դատարկում են երկար և առատ սեղանները: Երեկոյան փողոցը դատարկվում է, և մարդկանց փոխարինելու են գալիս մեծահարուստների՝ մզացված ապակիներով մեքենաները. «*Ամեն ինչ վաճառվում էր, արդեն՝ պատիվն էլ*» (Սամվելյան Դ., 2022): Աստիճանաբար շատ բան գլխիվայր շրջվում է: Եկեղեցու նախկին քահանան՝

արդեն կարգալուծ, սպորտային կոշիկներով ու ջինսով, Աբուլից լուցկի է խնդրում՝ սիգարետը վառելու համար: Դժբախտանում է պարսիկների ֆիրմայում աշխատող ճարտարագետ-գծագրող Վարդանը. չորս ամիս էլ չէր անցել նրա ամուսնությունից, երբ թարգմանչուհի կնոջը բռնեցնում է պարսիկ տնօրենի հետ աշխատասենյակում «սիրագործվելիս»: Շնորհալի երիտասարդն իրեն հարբեցողության է տալիս ու հազարավորների պես բռնում արտագաղթի ճամփաները...

Պատմվածքի «հատվածական դիպաշարը»՝ բնորոշ հեղինակի ինքնատիպ ու պատկերավոր մտածողությանը, հաճախ է ուղեկցվում անակնկալ «փիլիսոփայությամբ»: Երբ Աբուլն ընկերոջը հարցնում է, թե ինչ է սերը, Վարդանից ստանում է հետևյալ պատասխանը.

«- Դե՛, ո՞նց ասեմ, որ ավելի պատկերավոր հասկանա: Սերը սառնարանում դրված կարագի պես բան է: Պետք է հանել, թողնել մի քիչ հետ գա, հետո քսել հացին, ուտել, վայելել: Աստիճանաբար, ընթացքում պիտի զգաս համն ու օգտակարությունը» (Սամվելյան Դ., 2022):

Ինչպես նկատելի է, անցյալի գրականության մեջ հազիվ թե կարելի է հանդիպել սիրո զգացմունքի նման համեմատության: Անտարակույս, հեղինակը 21-րդ դարի զավակն է:

Շարքի հաջորդ՝ «Շքամուտք» պատմվածքը ևս ներառում է Մեծ քաղաքի ուշարժան բնութագրիչներ: Ի՞նչ է մեզ հիշեցնում քաղաքը. ըստ հեղինակի՝ «մոռացված անցյալ, վերջացած պատմություններ, ամեն հուշարձանի մոտ՝ չկայացած հանդիպումներ, ամեն անկյունում՝ կիսատ խոստովանություններ, գրեթե յուրաքանչյուր պատուհանից ներս՝ մեղադրանքներ ու արդարացումներ, կանգառներում՝ հրաժեշտ, պուրակներում՝ սառած համբույրներ...» (Սամվելյան Դ., 2022): Ինչ խոսք, սա բոլոր ժամանակներին բնորոշ կենդանի կյանքն է, ավելի որոշակի՝ քաղաքի առօրյա կենսագրությունը, որը, սակայն, հանկարծ գալիս ու ամփոփվում է ծայրամասային փողոցում ծվարած մի շենքի շատ սովորական շքամուտքում: Ընդհանուրից մասնավոր կամ հակառակ անցումներով աստիճանաբար ստեղծվում է մի շրջանակ, որը կենդանի լիցքեր է հաղորդում իրականությանը՝ սկսած առտոնին մանր-մունր պատկերներից մինչև սրտմաշուկ

արտագաղթ ու հուսալքություն: Իսկ տարածաժամանակային համապատկերում երևում է մեծ քաղաքը՝ իր անշքացած շքամուտքով, խողովակ հիշեցնող ձողի վրա փաթաթված 3/4 չափսի խեղճացած եռագույն դրոշով, միզահոտով լցված գետնանցումներից մեկում համբուրվող զույգով: Իսկ քաղաքի գունագրկված փողոցներից ու բակերից «ոչ մի հոտ այլևս չէր գալիս»: Ինչո՞ւ: «Քաղաքը հանձնվել էր, ավելի ճիշտ՝ այն հանձնել էին,- ցավով նկատում է գրողը և շարունակում,- իսկ հեռացողներն անցնում էին գետնանցումով: Հեռանում էին գիշերով ու ցերեկը, քայլում էին դանդաղ ու գլխիկոր, անսթափ, միացող մտքերով ու հրաժեշտի բառերը դեմքերից կախ, իսկ անցումի կեղտոտ պատերին, իրարից աննշան հեռավորությամբ ներկով առնվազն մի տասն անգամ գրված էր. «Ես կվերադառնամ»... Հավանաբար, կրկին հրաժեշտ տալու» (Սամվելյան Դ., 2022):

Շքամուտքն ընդհանրության մեջ դառնում է մի ամբողջ սերնդի կյանքի պատմություն: Արձակագիրը հակիրճ, բայց դիպուկ կերպավորումներով ստեղծում է 1990-ականներին զանազան զրկանքներ կրած մարդկանց մի ամբողջ պատկերասրահ: Խորհրդային ճարտարապետության միատեսակ ու տաղտկալի ոճով կառուցված բազմաթիվ շքամուտքերից մեկից ներս՝ հինգերորդ հարկում, տեղավորվել էր «հին Երևանը»՝ մի ծեր կնոջ՝ Նվարդի դեմքով: Պետական պարտադրանքով նա թողել էր քաղաքի կենտրոնի՝ գողտրիկ բակով ու փայտե աստիճաններով, նեղլիկ միջանցքներով իր հայրական տունը և այժմ բնակվում էր փոխհատուցման հետևանքով ստացած ծայրամասային անշուք շենքում: Նվարդ տատի պատշգամբից դեռևս կախված էր մնացել եռագույն ատլասե դրոշը, որով ժամանակին հպարտանում և իր վառ կարմիր շրթներկով պատված շուրթերով հավում էր շենքի ամենատարեց բնակչուհին: Այդ դրոշը, սակայն, «վաղուց դարձել էր արևից ու քամուց զգզված գունաթափ լաթ» և կարծես տխրությամբ նայում էր դեպի Հյուսիս հեռացող մարդկանց խմբերին, որոնց սրտերը ոչ միայն սառած են ու կոտրված, այլև դատարկված... Հեղինակ հերոսը *ներքին երկխոսություն* է սկսում Նվարդ տատի հետ և փորձում նրանից իմանալ նախորդների՝ «ապրել սովորեցնելու» արվեստի գաղտնիքը: Նոր սերնդի գոյաբանական հարցադրումներից շփոթահար կինը ջանում է ինչ-ինչ բացատրություններ տալ կյանքի

իմաստի մասին՝ հղումներ կատարելով իր ծնողներին: «Փորձել ենք որոշ բաներ հենց նրանց ասածով անել: Եղել է՝ հակառակվել ենք, բայց գցել-բռնել ենք այդ ասածները: Միայն թե կյանքն իր ուղին է գծում, և ամեն ինչ կախված է քեզնից. կոնկրետ պահերին քո կայացրած որոշումներից: Իսկ այդ պահերին ծնողներդ, ընկերներդ կողքիդ չեն լինում. դու ես ու պահը», - ասում է Նվարդ տատը: Նրա բացատրությունները կարծես այնքան էլ չեն գոհացնում նոր դարի զավակին. մի՞թե ամեն ինչ մարդուց է կախված ու բխտից: «Ուրեմն՝ ամեն ինչ կախված է դիմացինից կամ բխտից...», - փորձում է եզրակացնել ծեր կինը: Գոյաբանական խոհը նոր ընդհանրացման է բերում հեղինակ հերոսին. այն թեև ճշմարտանման է, բայց ոչ երբեք սպառնիչ. հայրենի եզերքը լքողները «դժգոհ են և՛ բխտից, և՛ դիմացիններից, բայց ոչ երբեք՝ *իրենցից...*»:

Երևանցի կինը շենքում շրջապատված էր երևանաբնակներով. նրանք երկրի տարբեր մարզերից եկած և ամենատարբեր մասնագիտությունների ու խառնվածքի տեր մարդիկ էին. ահա նրանք՝ ապարանցի ճանապարհային ուստիկանի՝ հավերժ անիծող ու փնթփնթացող տիկինն ու շտապօգնության հերթափոխի բժշկուհին, որը երբեք տանը չէր լինում, երբ շենքում ինչ-որ մեկն իրեն վատ էր զգում և փորձում էր նրա օգնությանը դիմել, շենքի հետնամուտքից ծածուկ տուն շտապող գող երիտասարդը և նախկին վերելակավարը, որը գուգահեռաբար նաև տրամվայի վարորդ էր: Հիմա նա, զգալիորեն կորացած, շախմատը թնի տակ պահած, օրվա մեծ մասն անցկացնում էր բակի տաղավար-գրուցարանում, քանի որ վերելակներին սկսել էին փոխարինել պատուհաններից իջեցվող ու հետ հավաքվող պարանները, իսկ տրամվայն ընդհանրապես վերացել էր: Ասել է թե՛ վերացել էր քաղաքին բնորոշ կոլորիտներից մեկը: Թալանի, համատարած ամենաթողության պատճառով «տրամվայները հավաքվել ու գնացել են հարևան Պարսկաստան՝ իրենց հետևից տանելով անգամ զծերը»:

Դժվար տարիներ էին. կանայք շարունակ ջրի հերթ էին կանգնում ցածր հարկերի բնակարանների առաջ, հերթ՝ խանութներում՝ պարտքի ցուցակների առջև շփոթահար... Ղարաբաղյան պատերազմում գոհվում էին շատերը, այդ թվում՝ Նվարդի ամուսինը հայրենիքի հանդեպ պարտքը կատարելիս: Մենակ մնացած կինը հաճախ

դուրս էր գալիս պատշգամբ, լուռ հետևում բակի անցուդարձին, հայացքն ուղղում զրուցարանում սովորական նարդին ու շախմատը բլոտով փոխարինած տղամարդկանց ու հառաչում: Չկար կարծես կյանքը գեղեցկացնող որևէ բան:

Բայց և այնպես՝ *լուսածերպեր նշմարվում էին*. «Աշխարհն այն ժամանակ մեծ էր. տեղավորվում էին բոլորը՝ և՛ ունևորները, և՛ չունևորները: Այն ժամանակ չկային շքամուտքերում ապրող անշուք մարդիկ: Անշուք, անլույս մուտքերը շքեղացնում, լուսավորում էին բնակիչները՝ իրենց ներսի լույսով ու միասնականությամբ»: Ծանր հիվանդացած Նվարդ տատին խնամում էր նրա կենվորուհին՝ Սոնան՝ մի ուսանողուհի, որը գյուղից վերջերս էր հայտնվել Երևանում: Դժվար տարիներին տարբեր երիտասարդների օտար լեզու էր սովորեցնում յոթերորդ հարկում բնակվող մի բարեկիրթ տիկին, որն իրեն չէր առանձնացնում մնացածներից: Իսկ նրանից երկու հարկ վերև ապրող դրացուհին հարևան պետության ջարդերից մազապուրծ փրկված գաղթական էր՝ բաքվեցի հայ, որն իր ռուսերենախառն հայերենով որոշակի կոլորիտ էր հաղորդում շրջապատին ու երբեք չէր կոտրվում...

Պատմվածքում ամենաուշաբժանը, թերևս, հին ու նոր սերունդների հայացքների հանդիպադրումն է: Ուսանողուհի Սոնան ուզում է հեռանալ քաղաքից և գնալ իրենց գյուղ: «Ուզում եմ վերադառնալ այն աշխարհ, որտեղ ապրում են ամեն վայրկյանը՝ ցերեկն աշխատելով, գիշերը՝ երազելով: Ցերեկը երազելուց հոգնել եմ», - ասում է աղջիկը Նվարդ տատին: Վերջինս նրան պատասխանում է, որ մարդիկ արդեն հաղթահարել են դժվարությունները, իսկ հիմա, երբ կյանքը դեպի լավն է գնում, նրանք միասնաբար հեռանում են: Այդժամ Սոնան վրա է բերում, թե հեռացողները գուցե հոգնել են պայքարելուց, հետևաբար ինչու իրենց ուժերը սպառեն: Դրան անմիջապես հաջորդում է ժողովրդի կենսափիլիսոփայությունը կրող ծեր կնոջ իմաստուն պատասխանը՝ «երկրի, ապագայի, հանուն ազատության»: Իսկ երբ սրտնեղած աղջիկը Նվարդ տատին առաջարկում է գոնե հին դրոշը փոխել և նորը գնել, չէ՞ որ «սա արդեն ամոթալի վիճակում է», հնչում է բազմիմաստ տեսակետ. «Ամոթալի... Երանի՛ ամոթալի լինել միայն դրոշի գունաթափ լինելը: Չէ՛, պետք չէ. այս նոր հաստատված դրոշն իմ սրտով չէ. դրա վրա արյան գույն չկա» (Սամվելյան Դ., 2022):

«4-րդ փողոց» գրքում սակավ չեն մարդ-քաղաքն ամբողջացնող այլ խորհրդանիշներ ևս: Այդպիսիք են «Ռոդենի ձմեռը» պատմվածքում Օգյուստ Ռոդենի «Ժյուլ Բաստիեն-Լըպաժ» արձանը մայրաքաղաքի Ֆրանսիայի հրապարակում կամ «ղիվանագիտական» անվանված «Դվին» կոնյակը «Մի քաժակ Չերչիլ» տպավորիչ պատմվածքում:

Դրանցից առաջինում անկախության շրջանի երիտասարդ արվեստագետին հուզող հարցադրումները՝ ո՞վ է հանձարը՝ նշանավոր նկարի՞չը, թե՞ նրա կերպարը մարմնավորած աշխարհահռչակ քանդակագործը, մնում են անորոշ: Արձակագիրը, հավատարիմ իր գրական սկզբունքին, շատ պատմվածքներում իր հարցադրումների պատասխաններն առհասարակ թողնում է անավարտ և անորոշ՝ ակնկալելով ընթերցողի ինքնուրույն վճիռն ու եզրահանգումները: Այստեղ հետաքրքրականն այն է, թե այդ արձան-խորհրդանիշն ինչ զգացողություններ է ծնում պատմվածքի հերոսի՝ Արեգի ներաշխարհում: Նկարչի և բանասերի ընտանիքում ծնված ու մեծացած զավակը, որը հորը հաճախ էր կշտամբում բուն մասնագիտությունը թողնելու և մոր հետ ծաղկավաճառությամբ զբաղվելու համար, ավտովթարից ծնողների զոհվելուց և սիրո մեջ էլ երջանկություն չգտնելուց հետո հայտնվում է հոգեմաշ տվայտանքների հորձանուտում. վարձավճարի պատճառով կիսատ է թողնում գեղարվեստի ակադեմիայում իր ուսումնառությունը և զգում միայնակ մնացած մարդու անեզրական տխրությունը: Երկրի անկախությունը չէր կարողացել երջանկացնել նրան. «Որոշել էր՝ հենց եղանակները բացվեն, սկսելու է ծաղիկ աճեցնել ու վաճառել, իսկ առաջին տեղերից մեկը, ուր տանելու է մի փունջ, Ժյուլ Բաստիեն-Լըպաժի արձանն էր լինելու: «Հանձա՛ր է», - մտքում մրմնջաց՝ չմանրամասնելով՝ Ռոդենը, թե՞ Բաստիենը» (Մամվելյան Դ., 2022): Էականն արդեն դա չէ, այլ այն, որ մարդ-քաղաքն իրեն հանկարծ ճանձ է զգում, որի կյանքն ամեն վայրկյան վտանգված է. «Ու սկսվում է անիմաստ թռիչքների սեզոնը՝ մի պատից դեպի մյուսը, փշրանքների ու թերմացքների համար անդադար մի պայքար, որն ամեն վայրկյան վտանգված է վերջանալու ինչ-որ ձեռքի թեթև շարժումով...» (Մամվելյան Դ., 2022):

Մարդ-քաղաքի գոյաբանական ներհայեցումները պատմվածաշարում մեկ էլ

ձգվում են դեպի Ղարաբաղյան վերջին պատերազմ և ամփոփվում «Մի բաժակ Չերչիլ»-ում: Համաշխարհային կարևորության պատմական բազմաթիվ իրադարձությունների ականատես և ուղեկից «Դվին» կոնյակը, որը 1940-ականներից ի վեր արտադրվում է անփոփոխ բաղադրատոմսով, հանկարծ ձեռք է բերում խորհրդանշի տպավորիչ ուժ: Չկա պատերազմի դաշտը, չկան բազմահազարանոց անմեղ զոհերը: 44-օրյա պատերազմն ամփոփվել է ապադիպաշարային պատմվածքի շինարարական հինգհոգանոց մի խմբում: Տղաներն ավագի՝ Սեթի գլխավորությամբ մինչպատերազմյան Ամանորի նախօրյակին «Չերչիլի նախընտրած կոնյակով պոնկեպոունկ լի հիսունգրամանոց սուրճի բաժակով» միմյանց բարեմաղթանքներ են անում և որոշում շշում մնացած կոնյակը միասին ըմպել հաջորդ Նոր տարուն: Մեկ տարի հետո, սակայն, Սեթը մենակ էր նստել Սուրբ ծննդյան կիսադատարկ աղքատ սեղանի շուրջ: Տղաները չկային: Մեկն արտագաղթել էր Եվրոպա, մյուսը՝ զոհվել, երրորդը՝ անհետ կորել: «Պատերազմը չսպասված հյուրի պես թակել էր բոլորի դռները՝ մեկը տուն էր կորցրել, մյուսը՝ հարազատ, իսկ բոլորը միասին՝ անցյալը...»,- զուսպ ոճով գրում է հեղինակը և նրբամտորեն շարունակում: Անցած Սուրբ ծննդյան տոնին հինգն էլ համաձայնել էին՝ ամեն տարի պետք է սովորույթ դարձնեն այդ հավաքը՝ որքան էլ յուրաքանչյուրը զբաղված լինի կամ ուրիշ աշխատանքի անցած: Սովորույթները պարտվում են հանգամանքներին. միշտ: Սովորույթները պարտվում են գումարին, հնարավորություններին, տրամադրությանը, կարգավիճակին, *բայց այս անգամ այն պարտվել էր պարտությանը...*» (Մամվելյան Դ., 2022): Նստել էր Սեթը սեղանի գլխին՝ դիմացը «դիվանագիտական» կոնյակի կիսադատարկ շիշը դրած: Հանկարծ գալիս է ընկերը՝ Կարոն, և նրանք լուռ լալիս են: Կարոն լավ լուր ուներ. հայտնաբերվել էր Գևորգը, բայց գերեվարված էր: Ավագ սերնդի մարդիկ գրեթե «ոչնչացնում են Չերչիլի սիրելիին» և սպասում բարի օրերին: Մոտ վեց ամսվա գերությունից վերադառնում է Գևորգը: Երեք ընկերները նորից հանդիպում են և ըմպում շշում մնացած հինգ բաժակ կոնյակը, կոնյակ, որն Ուիսթոն Չերչիլը մեկ շիշը մեկ օրում էր խմում և ասում, որ «պատմությունը հաղթողներն են գրում»:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դավիթ Սամվելյանի «4-րդ փողոց» պատմվածաշարի քննությունը պարզեց հետևյալը.

1. Պատմվածաշարում քաղաքն ամենից առաջ Մարդն է՝ քաղաքը պարունակողը և քաղաքի նշանակելին, իսկ փողոցը՝ նրա կարևորագույն բնութագրիչներից մեկը:

2. Տեքստի ամենափոքր շրջագիծը՝ փողոցը՝ իրեն բնորոշ բաղադրիչներով (եկեղեցի, հոտ, դրոշ, շքամուտք...), աստիճանաբար դառնում է մեծ քաղաքի յուրօրինակ խորհրդանիշ:

3. «Տրոհվող միջուկների»՝ փողոց/քաղաք հարաբերակցության մեջ արձակագրի ասելիքը չի սպառվում. վերջնահաշվում ստեղծվում է հայոց ոչ հեռավոր անցյալի գեղարվեստական ինքնատիպ կենսապատումը՝ տարածաժամանակային լայն համապատկերում ազգային ինքնության բացահայտումներով:

4. Դ. Սամվելյանի ոճին բնորոշ է կոլաժային պատկերների համակցումը երկի կառույցին:

5. Շարքի «կիսատ պատմություններն» ամբողջանում են հեղինակի կերպարի միջոցով: Նա հենց հեղինակի ներտեքստային ներկայացուցիչն է: Բոլոր գործերում պատմողն առանձնանում է իբրև գլխավոր կերպար:

6. Այդ կերպարը 21-րդ դարի անհանգիստ մարդն է՝ գրող-քաղաքացին, որն ընդհանուր դիպաշարին, ավելի ճիշտ՝ հատվածական (ֆրագմենտար) պատումին հաղորդում է շունչ ու կենդանություն:

7. Պատմվածքներում կարևորված է ոչ այնքան բուն դիպաշարը, որքան հեղինակային ներհայեցումներն ու մտազննումները՝ իբրև արտադիպաշարային ինքնատիպ դրսևորումներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբրահամյան Ն. (2021), Էմիգրանտի «ճախրը» Դավիթ Սամվելյանի «Հայելապատում» վիպակում, «Առավոտ» լրագիր, 14/08/2021:
2. Ադալյան Ն. (2023), «Ազգ» շաբաթաթերթ, 17/02/2023:

3. Նազլուխանյան Ս. (2022), «Ռոդենի ձմեռը», 01/08/2022, <http://ardi.am/erbemn-kisat-patmutyunner-el-yen-amboghjakan-linum-rodeni-dzmeriy/>
4. Համբարձումյան Հ. (2013), Կին-քաղաք, կին-ամրոց՝ աննվաճ ու նվաճված, «Գրանիշ» /3, էջ 6-10:
5. Սամվելյան Դ. (2022), 4-րդ փողոց. պատմվածքներ և էսսեներ, Երևան, «Էդիթ Պրինտ» հրատ.:
6. Վասիլյան Վ. (2023), Քաղաքի պատկերը Հայաստանում. մարդաբանական հեռանկար, № 1, Vol. 3, Urbis et orbis.
7. Տեր-Ղազարյան Վ. (2021), «Հայելապատում» ժամանակակից վեպի մասին, «Կայարան» ամսագիր, թիվ 3:
8. Քալանթարյան Ժ. (2015), Դիտանկյուն, Երևան, «Արմավ» հրատ.:
9. Топоров В. (1987), Текст города-девы и города-блудницы в мифологическом Аспекте / Исследования по структуре текста, Москва, “Наука”.

REFERENCES

1. Abrahamyan N. (2021), E'migranti «twaxry'» Davit' Samvelyani «Hayelapatowm» vipakowm /The "soaring" of the emigrant in Davit Samvelyan's novelett "Mirror's story"/, “Aravot” Iragir, 14/08/2021
2. Adalyan N. (2023), “Azg” shabat'at'ert' /”Azg” weekly press, 17/02/2023
3. Nazlukhanyan S. (2022), “R'odeni d'mer'y” /Roden's, winter/, 01/08/2022, <http://ardi.am/erbemn-kisat-patmutyunner-el-yen-amboghjakan-linum-rodeni-dzmeriy/>
4. Hambartsumyan H. (2013), Kin-qaghaq, kin-amroc` annvatw ow nvatwvac'/ Woman-city, woman-fortress - unconquered and conquered/, “Granish”, 3, pp. 6-10.
5. Samvelyan D. (2022), 4-rd p'oghoc. patmvac'qner ev e'ssener /4th avenue: short-stories and essays/, Yerevan, “Edit Print”.

6. **Vasilyan V. (2023)**, Qaghaqi patkery' Hayastanowm. mardabanakan her'ankar /The image of the city in Armenia. anthropological perspective/, Urbis et Orbis. Microhistory and Semiotics of the City, 3(1), 82–96. [https://doi.org/10.34680/urbis-2023-3\(1\)-82-96](https://doi.org/10.34680/urbis-2023-3(1)-82-96)
7. **Ter–Ghazaryan V. (2021)**, “Hayelapatowm” jhamanakakic vepi masin /On modern novel “Mirror’s story”/, “Kayaran” amsagir/magazine, tiv/number 3.
8. **Qalantaryan Zh. (2015)**, Ditankyown /Viewpoint/, Yerevan, “Armar”.
9. **Toporov V. (1987)**, Tekst goroda-devy i goroda-bludnitsy v mifologicheskome aspekte /Tekst goroda-devi i goroda bludnitsi v mifologicheskome aspekte /Iccledovaniya po structure teksta/, Moscow, “Nauk”/ Text of the city-maiden and city-harlot in mythological aspect /, Research on text structure, Moscow, “Science”.

Альберт Макарян

Маленькая улица большого города как пространственно-временной символ

Заключение

***Ключевые слова и выражения:** большой город, Давид Самвелян, «4-я улица», цикл рассказов, жанровая трансформация, пространственно-временной символ, запах, цвет, флаг, жизнеописание.*

Как классическая, так и современная проза являются важными обогащающими факторами мировой литературы. Как бы сомнительно не относиться к сегодняшней армянской прозе, тем не менее она развивается, проходя довольно плодотворный путь. Другое дело, что по велению времени и эстетическому вкусу проза понятным образом трансформируется – рядом с классическим романом сосуществует экспериментальный роман, по соседству с прежним сюжетным рассказом «комфортно» располагается так называемый новейший рассказ, основанный на компьютерном материале. Помимо этого, наряду с реализмом просматривается и абстрактное, рационализм плотно срастается с иррационализмом, реальная жизнь вдруг смешивается с мифической... И эти перечисления можно продолжить. Однако какова причина всего этого? Как объективно заметно, «все эти явления имеют

социальную, философскую и эстетическую основу, и если они носят всеобщий характер, значит, не обусловлены сугубо личными предпочтениями, а выражают мышление и стиль времени, продиктованы не только нашей национальной действительностью, а в той или иной степени выражают или отражают мировые процессы, имеющие место в области литературы».

Представленная статья посвящена анализу цикла рассказов «4-я улица» одного из видных современных армянских прозаиков, Давида Самвеляна, точнее – анализу маленькой улицы большого города как пространственно-временного символа. Художественной особенностью анализируемого произведения является то, что все все 14 входящих в цикл рассказов, в композиционном смысле не имея сюжетных линий, «вдруг» образуют своеобразный круг, где наименьшая окружность – маленькая улица с присущими ей составляющими (здание, церковь, запах, флаг, балкон...), постепенно вырастает в самобытный символ большого города. Заметим также, что в соотношении улица/город автор не ограничивается сказанным и в итоге воссоздает своеобразное художественное жизнеописание Армении нашего недалекого прошлого в широком пространственно-временном охвате с раскрытием национальной самобытности.

Albert Makaryan

Small Street of a Big City as a Chronotopic Symbol

Conclusion

Key words and expressions: *big city, street, Davit Samvelyan, "4th street", story series, genre transformation, chronotopic symbol, smell, color, flag, biography.*

Classical, as well as, modern Armenian prose is one of the important components and enriching factors of world literature. No matter how dubiously we consider today's Armenian prose, nonetheless, it is still developing taking a very fruitful path.

Another problem is that this prose transformed by the imperatives and aesthetic taste of the time: the experimental novel finds its place next to the classical novel, the so-called newest story written based on computer material sits comfortably next to the prior short story. Besides the abstract appears alongside with realism, rationalism is accreted by

irrationalism, real life is suddenly mixed with the mythical one...

The enumeration can still be continued. But what is the reason of all these? As is rightly noted, "all these phenomena have their social, philosophical and aesthetic foundations, and if they are widespread, then they are not just due to individual preference, they express the thinking and style of the time as a whole, they are dictated not only by our national reality, but to one degree or another they also express or reflect the global processes taking place in the field of literature."

And thus the presented article is devoted to the examination of the short story series "4th Street" by one of the noteworthy figures of modern Armenian prose Davit Samvelyan or rather to the study of a small street in a big city as a chronotopic symbol.

From the literary perspective it is notable that the fourteen short stories of the series, that have no external traditional patterns in terms of composition, "suddenly" form a peculiar framework. Here, the smallest circuit, i.e., the small street with its characteristic components (building, church, smell, flag, balcony...) gradually becomes a unique symbol of the big city.

It is also noticeable that the writer's narration is not limited to the street/city ratio: finally a peculiar literary biography of not so far away past life of our Armenia is created, that reveals national identity in a broad chronotopic scope (hard social conditions of 1990s, war, complex human ties and relationships).

Ալբերտ Մակարյան – Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Երևանի պետական համալսարանի՝ ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի վարիչ: Գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ 19-րդ դարի հայ գրականություն, երգիծաբանություն, գրական կապեր և գրականության տեսություն: Հեղինակ է գիտական շուրջ 100 հոդվածների և 9 գրքերի, այդ թվում՝ 5 մենագրության և գիտական 4 ուսումնասիրությունների: ORCID ID: 0000-0001-5111-5412 albert.makaryan@ysu.am

Альберт Макарян – Доктор филологических наук, профессор, заведующий кафедрой истории и теории литературы имени Г. Тамразяна Ереванского государственного университета. Круг научных интересов: армянская литература 19 века, сатира, литературные связи и теория литературы. Является автором около 100 статей и 9 книг, в том числе 5 монографий и четырех научных исследований.

ORCIDID: 0000-0001-5111-5412 albert.makaryan@ysu.am

Albert Makaryan – Doctor of philology, professor at Yerevan State University, Head of the Chair of History of Armenian Literature and Literary Theory named after Tamrazyan. The scope of scientific interests: Armenian literature of the 19th century, satire, literary ties and literary theory. He is the author of about 100 scientific articles and 9 books, including 5 monographs and 4 scientific studies. ORCID ID: 0000-0001-5111-5412 albert.makaryan@ysu.am

«ՇԻԼԻՈՆԻ ԿԱԼԱՆԱՎՈՐԸ» ՊՈԵՄԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԻԲՐԵՎ XIX
ԴԱՐԱՎԵՐՋԻ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆՔ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v2i65.103

ԱՍՓՈՓՈՒՄ

Հ. Թումանյանի կողմից Բայրոնի «Շիլիոնի կալանավորը» ստեղծագործության թարգմանությունը մինչ օրս հանդիսանում է սույն երկի հայերեն միակ թարգմանությունը: Հոդվածի նպատակն է բացահայտել պոեմի՝ իբրև թարգմանական երկի ընտրության դրդապատճառներն ու փաստական իրողությունները, որոնք տեղի են ունեցել ավելի քան 100 տարի առաջ և այսօր էլ շարունակում են հետապնդել հայ ժողովրդին՝ դարձյալ կանգնեցնելով նրան գոյաբանական աղետալի խնդրի առջև:

Հոդվածի նպատակին հասնելու համար առաջադրել ենք մի շարք խնդիրներ, այն է՝ ա. ուսումնասիրել թարգմանական արվեստին վերաբերող տեսական գրականություն, նաև Զ. Բայրոնի «Շիլիոնի կալանավորի» և Հ. Թումանյանի նույն ստեղծագործության թարգմանությանն ուղեկից գրաքննադատության արձագանքները, բ. բացահայտել թարգմանական երկի ընտրության հասարակական-քաղաքական դրդապատճառները, որոնց վրա խարսխվել են Թումանյանի գրական-ստեղծաբանական ընթացքի արժեքների ըմբռնման հայեցակետերը, գ. պատմահայաց քննությամբ համեմատել XIX և XXI դարերի մարդկային հասարակության նկարագիրը և ձևակերպել այն կարևոր հաղորդագրությունը, որ մեզ են թողնում երկու հանճարները՝ Բայրոնը և Թումանյանը:

Հոդվածը եզրակացնում է, որ այսօր էլ՝ 21-րդ դարի աշխարհաքաղաքական հակասությունների, բախումների ու բռնությունների անվերջանալի ֆոնին, թե՛ բնագիր պոեմը, թե՛ նրա հայերեն թարգմանությունը հաստատուն վկայությունն են

երկու մեծերի՝ Ջ. Բայրոնի և Հ. Թումանյանի՝ ինչպես մարդու ազգային արժանապատվության և ազատության բնական իրավունքի բարձր գիտակցության առկայության, այնպես և համամարդկային հումանիզմի, համաքրիստոնեական սիրո հաստատման: Մարդկությունը հետագա աղետից ու կործանումից փրկվելու համար պետք է վերադառնա իր նախաստեղծ անարատ կերպին:

***Բանալի բառեր և արտահայտություններ.** Ջ. Բայրոն, Հ. Թումանյան, թարգմանություն, «Շիլիոնի կալանավորը», աղետալի իրողությունների արձագանք, ազատության իրավունք, հումանիզմ*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Անգլիացի հանճարեղ բանաստեղծ Ջորջ Բայրոնի գրական ժառանգությունը վաղուց դարձել է համաշխարհային գրականության ուսումնասիրության առարկան ու հոգևոր սեփականությունը: Բազմաթիվ հայտնի գրողներ, այդ թվում նաև հայ մեծանուն բանաստեղծ Հովհաննես Թումանյանը իրենց վրա կրել են Բայրոնի ժամանակաշրջանի ազդեցությունը: Թումանյանի կողմից Բայրոնի «Շիլիոնի կալանավորը» պոեմի թարգմանությունը ցայսօր սույն երկի հայերեն միակ թարգմանությունն է: Հոգվածում ընդգծվում է այն իրողությունը, որ Բայրոնի երկը և նրա հայերեն թարգմանությունը ոչ միայն դիտարկվում են որպես միջմշակութային հաղորդակցության կարևորագույն գործիք, որի նպատակն է ոչ միայն ապահովել ազգամշակութային տարբեր տիրույթների մարդկանց փոխըմբռնումը, այլև առաջադրել խնդիր, թե մարդ արարածը իր աստվածապարզ կյանքը մինչև երբ պետք է անցկացնի՝ իր նմանին ճնշելով ու սպանելով: Հոգվածում վերահաստատվում է այն գաղափարը, որ մարդկային ազատության բնական ձգտումն ու բռնության դեմ պայքարի ոգին, ճեղքելով տարերային ու հոգեբանական բազմաթիվ աղետներ, մշտապես պարտադրում են իրենց արժանապատիվ գոյության իրավունքը: Եվ կարևոր չէ՝ ոգու կրողը մե՞ծ, թե՞ փոքր ազգի ներկայացուցիչ է:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն հոդվածի խնդիրների լուծման նպատակով պատմահայաց քննություն կատարելիս օգտվել ենք գրականագիտական մի քանի մեթոդներից: Ժամանակի ընթացիկ վիճակի առթած հարցադրումների, Թումանյանի թարգմանական արվեստի, «Շիլիոնի կալանավորը» երկի ընտրության դրդապատճառների քննությունը իրականացրել ենք կենսագրական, պատմահամեմատական, գուգադրական մեթոդներով: Պատմահամեմատական մեթոդով ուսումնասիրել ենք պատմաշրջանի քաղաքական շարժման ընթացքը և այն ընդհանրությունները, որոնք այսօր էլ դեռևս մնում են նշանակիր իրողություններ: Բնագիր և թարգմանված երկի խորքային շերտերի մեջ ներթափանցելու համար կիրառել ենք նաև գեղարվեստական ստեղծագործության քննության մեկնաբանական մեթոդը:

ՔՆՆԱԼՈՒԿՈՒՄ

Ինչպես վկայում են մշակույթի հուշարձանները, թարգմանության արմատները ձգվում են մինչև մարդկության քաղաքակրթության ձևավորման վաղ ժամանակները: Թարգմանությունը մարդկային հասարակության այն անհրաժեշտ գործիքներից է, որոնք ապահովել են առնչություններն ու շփումները բոլոր ժամանակներում և երկրագնդի բոլոր մասերում տարբեր լեզուներով խոսող ժողովուրդների միջև:

Հայ մեծանուն բանաստեղծ Հովհաննես Թումանյանը մշտապես բարձր է գնահատել թարգմանական գրականության դերը ազգերի մերձեցման, միմյանց ճանաչելու, հոգևոր ու բարոյական արժեքները հասկանալու և մշակութային շփումների տեսանկյունից. «Ազգերին լավ ճանաչելու և նրանց մեջ փոխադարձ սեր ու հարգանք արձարծելու ավելի ազնիվ հող ու ավելի մեծ կապ չի կարող լինել, քան գրականությունն է, որի մեջ հանդես են գալիս նրանց լավագույն զգացմունքները, նրանց ազգային հանճարն ու ոգին» (Թումանյան Հ., 1995):

19-րդ դարի Եվրոպայի բանաստեղծներից ոչ մեկն իր ժամանակակիցների վրա չի ունեցել այնպիսի մեծ ազդեցություն, ինչպես Ջ. Բայրոնը: «Лорд Байрон был идеалом», - գրում է կենսագրական մեթոդի հիմնադիր, ֆրանսիացի նշանավոր գրող,

քննադատ Սենտ Բյովը (**Сент-Бев III-О, 1970**): Նա համոզված պնդում է, որ ժամանակակից շատ հեղինակներ են ոգեշնչվել բանաստեղծի երկերով՝ Ալֆրեդ դը Մյուսե, Հայնրիխ Հայնե, Ալեքսանդր Պուշկին, Միխայիլ Լերմոնտով, Ադամ Միցկևիչ, Շանդոր Պետեֆի և ուրիշներ: Թեև հայ-անգլիական գրական առնչությունները ծավալվել են դեռևս 18-րդ դարի երկրորդ կեսից (հնդկահայ գաղթօջախում), սակայն Բայրոնի շնորհիվ դրանք 19-րդ դարասկզբից ստացել են նոր որակ: Բայրոնիզմը հայ գրականության մեջ ներթափանցել, տարածվել և զարգացել է անընդմեջ՝ տարիների, տասնամյակների ընթացքում՝ ընդգրկելով հայ բանաստեղծների նորանոր անուններ՝ Ղևոնդ Ալիշան, Միքայել Նալբանդյան, Ռուբեն Որբերյան, Հովհաննես Թումանյան, Ավետիք Իսահակյան, Վահան Տերյան, Սիամանթո, Դանիել Վարուժան, Ռուբեն Սևակ, Եղիշե Չարենց և ուրիշներ: Թվարկված անունների շարքում առանձնանում է հայ մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը, որի «Շիլիոնի կալանավորը» պոեմի թարգմանությունն էլ դարձել է այս ուսումնասիրության նյութը:

Տեսաբանների և թարգմանիչների այն դրույթը, թե թարգմանչի անհատականությունը դրսևորվում է նախևառաջ հեղինակների, թարգմանական տեքստի ընտրության մեջ, համոզիչ է թվում այս պարագային: «Շիլիոնի կալանավորի» թարգմանությունը կարևոր օղակն է բուռն հետաքրքրության, որ 90-ական թթ. հանդես է բերել Թումանյանը անգլիացի մեծ բանաստեղծի ստեղծագործության նկատմամբ¹: Թումանյանագիտության մեջ այդ երևույթը կոչվել է «բայրոնիզմի շրջան» (**Թումանյան Հ., 2020**): 2004 թվին Լոնդոնում և Նյու Յորքում տպված «Բայրոնի ընկալումը եվրոպացիների կողմից» աշխատության հեղինակ Ռիչարդ Քարդվելը անդրադառնում է Թումանյանի՝ Բայրոնի ստեղծագործությունների թարգմանությանը՝ այն համարելով ոչ պատահական իրողություն: «Կարելի է ասել, որ այս շրջանը՝ 1894-98 թթ., համարվում են Թումանյանի ստեղծագործության բայրոնյան շրջան, որը պայմանավորված է ոչ

¹ 1893-1896 թթ. Թումանյանը թարգմանում է նաև Բայրոնի «Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը» պոեմի առաջին գլխի մասեր կազմող «Չայլդ Հարոլդի երգը» (13-րդ տնից հետո) և «Ինեսին» (84-րդ տնից հետո) հատվածները:

միայն Թումանյանի անձնական խանդավառությամբ, այլ նաև «Բայրոնյան ֆենոմենի» համընդհանուր ազդեցությամբ» (**Gardwell, R., 2004**):

19-րդ դարի վերջերին անգլիացի բանաստեղծի՝ ժողովուրդների ազատության համար պայքարի անմիջական մասնակցի ռազմատենչ ոգին գրավել է երիտասարդ Թումանյանին, մի շարք հատկանիշներով համապատասխանել նրա հասարակական և անձնական տրամադրություններին²: Առհասարակ թարգմանվող երկի ընտրությունը ոչ միայն որոշակիորեն բացահայտում է հեղինակի և թարգմանչի ստեղծագործական ներքին կապի, հարազատության առկայությունը, այլև ուշադրության արժանացնում թարգմանչի ստեղծագործական կյանքի այն ժամանակահատվածը, որ նպաստել է թարգմանական այդ տողերի ծնվելուն: Այստեղ պետք է կարևորել դարաշրջանը, թարգմանչի կյանքի որոշ իրադարձություններ, անձնական ապրումներ, բնագրի հեղինակի տրամադրությունների, հոգեբանության, աշխարհայացքի նկատմամբ հետաքրքրության առկայությունը:

Դեռևս 19-րդ դարի սկզբին անգլիացի մեծ բանաստեղծը, երբ Միխիթարյանների մոտ ոգեշնչված ու հափշտակված ուսումնասիրում էր «հարստահարված և բարձրատոհմ ազգի»՝ հայերի հինավուրց ու հարուստ մշակույթը, ցավով ընդգծում է հայ ժողովրդի «դառը ճակատագիրը» և արձանագրում, որ թերևս դժվար լինի գտնել մի ազգի տարեգրություն, որն ավելի գերծ լինի արատավորող ոճիրներից, քան հայերինը, որոնց առաքինությունները խաղաղասիրության արգասիք են, իսկ արատները՝ բռնադատման հետևանք» (**Բեքարյան Ա., 2013**):

Անգլիացի բանաստեղծի՝ ժողովուրդների ազատության համար պայքարի ոգին խորապես թանկ է եղել ամենայն հայոց բանաստեղծի համար: 19-րդ դարավերջին հայ ժողովուրդը մեկ անգամ ևս ենթարկվեց հալածանքների: Արևմտահայերի ազատագրական շարժումը ճնշելու և Հայկական հարցին վերջ տալու նպատակով սուլթան Աբդուլ Համիդ II-ի կառավարությունը 1894-1896

² Թումանյանը 1902-ի հոկտեմբերի 27-ին Լեոյին ուղղված նամակում գրում է. «...Ես անգիտակցաբար ենթարկված եմ եղել ազդեցությունների, որոնց մասին, մինչև օրս հաշիվ չեմ տվել ինձ... ծանոթացել ու սիրել եմ Բայրոն, Գյոթե, Շեքսպիր: Մրանք, կարծում եմ, անպայման ազդել են իմ գրվածքների վրա, բայց այնպիսի գրվածքների, որ տակավին չեն տպված, [մինչև անգամ չեն վերջացած], և որոնց մասին հաշիվ չեմ կարող տալ: Սակայն զգում եմ նրանց անմերժելի ազդեցությունը» (**Հ. Թումանյան, 1997**):

կազմակերպել և իրականացրել է հայերի զանգվածային կոտորածներ: Պատմական փաստերը հիշեցնում են, որ 1894-ին Սասունի ապստամբության բարբարոսական ճնշումը առաջացրել էր համաշխարհային առաջադեմ հասարակայնության բողոքը: Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը մշակել ու 1895-ի մայիսի 11-ին սուլթանին են հանձնել հայկական բարենորոգումների ծրագիր («Մայիսյան բարենորոգումներ» 1895), որն առավել հետապնդում էր Թուրքիայի վրա ճնշում գործադրելու, քան արևմտահայերի դրությունը բարելավելու նպատակ: Օգտվելով մեծ տերությունների հակասություններից՝ Աբդուլ Համիդ II շարունակել է իր հայաջինջ քաղաքականությունը: 1895-ի սեպտեմբերի 18-ին հայ հնչակյան կուսակցության՝ Կոստանդնուպոլսում կազմակերպած խաղաղ ցույցի ժամանակ թուրքական ոստիկանության, զորքի և մահակներով զինված խուժանի ձեռքով այդ օրը կոտորվել է 2000 հայ: Կ.Պոլսի ջարդերն ազդանշան էին հայերի զանգվածային սպանդի:

Այսպիսով, Արևմտյան Հայաստանում սկսվել էին հայկական կոտորածները, իսկ Կովկասում ծայր էին առել հալածանքները հայ մշակութային գործիչների և ազգային-ազատագրական շարժման մասնակիցների նկատմամբ: Եվ միանգամայն բնական էր, որ «հայոց վշտի» երգչին հոգեհարազատ էր «համաշխարհային վշտի» երգչի թախիծը: Եվ Բայրոնի խռովահույզ և հպարտ կերպարի, ազատության մարտիկի, իտալական կարբոնարների և հույն ապստամբների ջոկատների անմիջական մասնակցի, ազատատենչ բանաստեղծի պոեզիայի մեջ Թումանյանը որոնում է հարազատ ժողովրդին³ սփոփելու, գուցե ուղղորդելու, պայքարի ոգին արթուն պահելու ուղին: Այս դեպքում տեղին է արձանագրել, որ որքան կարևոր է «գրողի հոգեկան խառնվածքի և անհատականության խնդիրը, որը դրսևորվում է նրա ստեղծած գրականության մեջ» (Геннекен Э., 1892), նույնքան կարևոր է այդ գրականության ներըմբռնողությունը թարգմանչի կողմից: Ռուս տեսաբան Գ. Կ. Կոսիկովը համոզված է, որ «ինչպես էլ դատես, կոնկրետ հեղինակից, նրա ներքին աշխարհից, գիտակցությունից ու կամքից անկախ ստեղծագործություն չի կարող

³ Ան. Աբովյանի վկայությամբ դեռևս 1886-1887 թվականներին բանաստեղծը հաճախում էր գաղտնի ժողովների: Կնոջ՝ Օլգա Մաճկալյանի հավաստմամբ Թումանյանը կապված էր հայ ազատագրական շարժման առաջին գործիչներից մեկի՝ Ալեքսանդր Գոլոշյանի հետ. 1888 թվականին նա ատրճանակ էր գնել վերջինիս հետ Արևմտյան Հայաստան մեկնելու համար, բայց հիվանդանալով էտ է մնացել: 1889 թվականի մայիսին ստացվում է Գոլոշյանի սպանության լուրը:

առաջանալ, և որ ստեղծագործության առաջացման ուղղակի և հիմնական ազդակը ոչ թե վերժամանակային ու անգիտակցական ուժերի ելք գտնելն է, այլ ժամանակի հարցերի և շրջապատող իրականության իմաստավորման հեղինակի գիտակցված մտադրությունը» (Косиков Г., 1987): Ասվածը կարելի է հաստատել Թումանյանի՝ թարգմանական երկի ընտրությամբ:

«Շիլիոնի կալանավորը» պոեմի թարգմանության գնահատումը

«Շիլիոնի կալանավորը» Բայրոնը գրել է 1816 թ. ժնևի (Լեմանի) լճի ափին գտնվող Շիլիոնի բանտ-ամրոցն այցելելուց հետո, որտեղ լսել է XVI դարի 30-ական թվականներին Սավոյայի դուքս Կարլ III-ի հրամանով ամրոց նետված Ֆրանսուա Բոնիվարի կրած տանջանքների և Բեռնի ապստամբների կողմից ազատվելու պատմությունը: Պոեմում Շվեյցարիայի անկախության մարտիկ և հանրապետական հերոս Բոնիվարի տառապալից «հոգու պատմությունն» է, որով և հերոսի կերպարը դառնում է ազատասիրության ոգու յուրօրինակ խորհրդանիշ:

«Շիլիոնի կալանավորը» ստեղծագործությանը Հ. Թումանյանը սկզբնապես ծանոթացել է Վ. Ա. Ժուկովսկու ռուսերեն հանրահայտ թարգմանության միջոցով, որի մասին ռուս քննադատ Բելինսկին գրել է. «Այստեղ - տարօրինակ բան - մեղմ թախծի և վիատ տանջանքի մեր ռուս երգիչը ամուր և հզոր խոսք է գտել իր հոգում՝ արտահայտելու համար հուսահատության սարսափելի, ստորգետնյա տանջանքները, որ գծագրել է Անգլիայի հսկա բանաստեղծի կայծակնային վրձինը» (Белинский В., 1955): Ի հակադրություն գիտնականների այն հաստատուն պնդմանը, թե թարգմանիչը պարտավոր է հրաշալի տիրապետել թարգմանվող երկի լեզվին ու նրա առանձնահատկություններին, Հո. Թումանյանը պոեմի թարգմանությունը⁴ կատարել է ոչ բնագրի, այլ միջնորդ լեզվից՝ ռուսերենից՝ դրանով իսկ ճշգրիտ օրինաչափությունների համակարգը և հաստատելով բացառությունների հնարավորությունը:

Ն. Լյուբիմովը «Թարգմանության արվեստը» գրքում զարգացնում է այն միտքը, թե թարգմանչի համար իդեալը հեղինակի հետ այն միաձուլումն է, որը «պահանջում

⁴ Ջորջ Բայրոնի «Շիլիոնի կալանավորը՝ պոեմի թումանյանական թարգմանությունը առանձին գրքույկով առաջին անգամ տպագրվել է 1896 թ. Թիֆլիսում (23 էջ):

է որոնումներ, նկրտումներ, հնարամտություն, պահանջում է բնագրի վերապրում, պահանջում է տեսողության, լսողության, հոտառության սրություն: Բացահայտելով հեղինակի ստեղծագործական անհատականությունը՝ թարգմանիչը բացահայտում է և իր անհատականությունը, բայց այնպես, որ այն չքողարկի հեղինակին» (Любимов Н., 1982):

Հետաքրքրական է, որ «Շիլիոնի կալանավորը» պոեմի թարգմանությանը Թումանյանը կրկին անդրադարձել է 1903 թ. իր «Բանաստեղծությունների» երրորդ ժողովածուն կազմելիս: Բանաստեղծը դիմում է անգլերենի լավ գիտակ, ինժեներ-քիմիկոս Մխիթար Տեր-Անդրեասյանին՝ խնդրելով իր թարգմանությունը համեմատել բնագրի հետ և անհրաժեշտության դեպքում մատնանշել թերությունները: 1903թ. մայիսի 9-ի մեծածավալ նամակում Մխիթար Տեր-Անդրեասյանը ներկայացնում է իր դիտարկումները: Նամակի առաջին տողերում նա արտահայտում է իր անթաքույց զարմացախառն հիացմունքը. ««Շիլիոնը» համեմատեցի բնագրի հետ: Ուղղակի զարմանալի է, թե ինչպե՞ս է հաջողվել քեզ անգլերեն չիմանալով մի այդպիսի հոյակապ թարգմանություն տալ մեզ: Համարյա բառացի... սակայն առանց խորթությունների, կանոնավոր հայերեն լեզվով, այնքան տողը բառացի, մոտիկ բնագրին, որ նույնիսկ կարճ ու երկարությունը, նույնիսկ հանգերը շատ տեղ նույն բառերիցն են» (Թումանյան Հ., 1998): Իրապես, թեև թարգմանությունը արված է միջնորդ լեզվից՝ ռուսերենից, այնուամենայնիվ Թումանյանը կատարել է ուղղահայաց և հորիզոնական համատեքստային խորքային վերլուծություն, լեզվական և արտալեզվական գործոնների ուսումնասիրություն՝ բացահայտելով Բայրոնի գեղագիտությունը, նպատակը, լեզուն և ոճը:

Թումանյանի «Շիլիոնի կալանավորի» հայերեն թարգմանությունը ժամանակի շատ քննադատների և հետագա ուսումնասիրողների կողմից ընդունվել է որպես հայ թարգմանական գրականության ընտիր էջ: Իհարկե, գեղարվեստական ստեղծագործության թարգմանության ընկալման և գնահատման հարցին անդրադառնալիս ընդունված է ասել, որ միանշանակ ընկալում, այսինքն՝ հեղինակի միտմանը բացարձակ համարժեք ընկալում, հնարավոր չէ: Չկա տեքստի

օբյեկտիվ ընթերցում, քանի որ ընթերցումն ու մեկնաբանությունը միանշանակորեն պայմանավորված են «ընթերցողի փորձառությամբ», կա «օբյեկտիվ տեքստ» և «սուբյեկտիվ ընկալում» (**Gadamer H., 1962**): Այնուամենայնիվ, ժամանակի հայտնի հայ գրաքննադատներից Արսեն Տերտերյանը, իր «Հայրենի եզերքի քնարերգուն» գրքում, քննելով Թումանյանի ստեղծագործական ուղիներն ու բանաստեղծական աշխարհի նրբերանգները, անդրադառնում է պոեմի թարգմանությանը՝ հոգեբանական նույնատիպ զգացողություններ տեսնելով Թումանյանի և Բայրոնի «Շիլլոնի կալանավորի» հերոսի միջև: «Շատ քիչ հայ բանաստեղծների է հաջողվում թարգմանել օտար գրականությունից այնպիսի երգեր, որոնք հարազատ լինեին նրանց ստեղծագործությանը, այսինքն՝ թարգմանական տողերը նրանց գրչի տակից դուրս ելնեին իբրև ինքնուրույն, ինքնաբուխ և սեփական ստեղծագործություն: Հովհաննես Թումանյանը պատկանում է այդ բախտավորների թվին: Այն բոլոր թարգմանությունները, որ նա արել է, մի զարմանալի զուգադիպությամբ թարգման են հանդիսանում նրա զգացումներին ու հույզերին (**Տերտերյան Ա., 1980**):

Թումանյանը նուրբ դիտողականությամբ կատարել է հարազատ, տեղ-տեղ նույնիսկ բառացի թարգմանություն՝ հայ ընթերցողին վարպետորեն փոխանցելով անգլիացի հեղինակի ստեղծագործությունը: Հարազատ թարգմանության համատեքստային հյուսվածքը բաց է և ընկալելի հայ ընթերցողին, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ բառացի թարգմանության մեջ հայերեն բառերը այնքան բազմիմաստ են և բազմաձայն, որ տեղայնացման կիրառությունը մի առանձին փայլ է հաղորդում հայերեն թարգմանությանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով կարող ենք եզրակացնել.

ա) Թումանյանը թարգմանվող նյութի ընտրությունը կատարել է ոչ պատահականորեն: XIX դարի վերջերին հայ ժողովրդի առաջ ծառացած գոյաբանական խնդիրը, 1894-1896 թթ. աղետալի կոտորածները պատճառ են դառնում հայ բանաստեղծի բայրոնյան տրամադրությունների շիկացման և «Շիլլոնի կալանավորի» թարգմանության:

բ) Բանաստեղծը զարմանալի խորաթափանցությամբ է զգացել թարգմանվելիք նյութի՝ «Շիլիոնի կալանավորի» թե՛ արտաքին, թե՛ ներքին շերտերը. նրա գրչի տակ միահյուսվել և բացվել է անգլիացի բանաստեղծի ոգուն ու լեզվամտածողությանը հարազատ կենսահայեցողությունը: Անգլիացի հանճարը, դատապարտելով համատարած բռնությունը, խիզախորեն բարձրացնում է ազատության դրոշմ՝ ազատությունն անվանելով հավերժական մտքի ոգի, որի վրա չկա իշխանություն, որը, թեև բանտում, բայց վառվում է ինչպես փայլուն աստղ:

գ) Թումանյանի թարգմանությունը, անցնելով հարյուրամյակի շեմը, շարունակում է մնալ հայ թարգմանական գրականության գոհարներից, և այսօր էլ արդիական են այն գնահատականները, որոնք տրվել են թարգմանությանը դեռևս հարյուր տարի առաջ: Եթե հաշվի առնենք նաև այն փաստը, որ «Շիլիոնի կալանավորի» հայերեն այլ թարգմանություն չկա, ապա Թումանյանի թարգմանությունը շատ ավելի է արժևորվում:

դ) Միջազգային համագործակցության ընդլայնման ներկայիս պայմաններում առավել կարևոր է դառնում միջմշակութային հաղորդակցման արդյունավետության բարձրացման խնդիրը, որի լուծման առաջնային գործիքներից է ազգային և թարգմանական գրականությունների անցած և առկա շփումների ու մշակութային արժեքների վերագնահատումը:

ե) 21-րդ դարի աշխարհաքաղաքական հակասությունների, բախումների ու բռնությունների անվերջանալի ֆոնին թե՛ բնագիր պոեմը, թե՛ նրա հայերեն թարգմանությունը հաստատում են այն գաղափարը, որ որևէ մեկին տրված չէ ոտնահարելու կամ սահմանափակելու մարդու ազատության բնական իրավունքն ու ազգային արժանապատվությունը: Մարդկությունը ֆիզիկական ու հոգևոր աղետից ու կործանումից կարող է փրկվել միայն համամարդկային հումանիզմի, համաքրիստոնեական սիրո ճանապարհով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Բեքարյան Ա. (2013)**, Բայրոնը և հայ իրականությունը [Հայերեն և անգլերեն], Երևան, ԵՊՀ հրատ.:
2. **Թումանյան Հ. (2020)**, Երկերի լիակատար ժողովածու, հ. 4 (Վերախմբագրված հրատարակություն), Երևան, «Անտարես» հրատ.:
3. **Թումանյան Հ. (1995)**, Երկերի լիակատար ժողովածու, հ. 7, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.:
4. **Թումանյան Հ. (1997)**, Երկերի լիակատար ժողովածու, հ. 9, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.:
5. **Թումանյան Հ. (1998)**. Ուսումնասիրություններ և հրապարակումներ, հտ. 5, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.:
6. **Տերտերյան Ա. (1980)**, Երկեր, Երևան, Երևանի համալսարանի հրատ.:
7. **Белинский В. (1955)**, Полное собрание сочинений, т. VII, Москва, изд. АН СССР.
8. **Геннекен Э. (1892)**, Опыт построения научной критики (Эстопсихология), СПб.
9. **Косиков Г. (1987)**, Зарубежное литературоведение и теоретические проблемы науки о литератур, Москва, Издательство Московского университета.
10. **Любимов Н. (1982)**, Перевод – искусство. Москва, «Советская Россия».
11. **Сент-Бев Ш-О. (1970)**, Литературные портреты. Критические очерки, Москва.
12. **Gadamer H. (1962)**, Truth and Method, New York.
13. **Gardwell R. (2004)**, The Reception of Byron in Europe, Volume I, II, New York.

REFERENCES

1. **Bekaryan A. (2013)**, Bayrony' ev hay irakanowt'yowny' [Hayeren ev anglaren] / Byron and the Armenian Reality [Armenian and English], Yerevan, YePH hrat.:
2. **Tumanyan H. (2020)**, Erkeri liakatar jhoghovac'ow, h. 4 (Verakhmbagrvats hratarakutyun) / Complete Collection of Works, Vol. 4 (Revised Edition), Yerevan, «Antares» hrat.:
3. **Tumanyan H. (1995)**, Erkeri liakatar jhoghovac'ow, h. 7 / Complete Collection of Works, Vol. 7, Yerevan, HH GAA «Gitutyun» hrat.:

4. **Tumanyan H. (1997)**, Erkeri liakatar jhoghovac'ow, h. 9 / Complete Collection of Works, Vol. 9, Yerevan, HH GAA «Gitutyun» hrat.:
5. **Tumanyan H. (1998)**. Owsowmnasirowt'yownner ev hraparakowmner, h. 9 / Tumanyan Studies and Publications, Vol. 5, Yerevan, HH GAA «Gitutyun» hrat.:
6. **Terteryan A. (1980)**, Erker / Works, Yerevan, Yerevani hamalsarani hrat.:
7. **Belinskiy V. (1955)**, Polnoye sobraniye sochineniy, t. VII / Complete Collection of Works, Vol. VII, Moscow, izd. AN SSSR.
8. **Genneken E. (1892)**, Opyt postroyeniya nauchnoy kritiki (Estopsikhologiya) / Experience of Construction of Scientific Criticism (Estopsychology), SPb.
9. **Kosikov G. (1987)**, Зарубежное литературоведение и теоретические проблемы науки о литератур / Foreign Literary Criticism and Theoretical Problems of Science about Literature, Moscow, Izdatel'stvo Moskovskogo universiteta.
10. **Lyubimov N. (1982)**, Perevod – iskusstvo / Translation is an Art., Moscow, «Sovetskaya Rossiya».
11. **Sent-Bev SH-O. (1970)**, Literaturnyye portrety. Kriticheskiye ocherki / Literary Portraits. Critical Essays, Moskva.
12. **Gadamer H. (1962)**, Truth and Method, New York.
13. **Gardwell R. (2004)**, The Reception of Byron in Europe, Volume I, II, New York.

Եվա Մնաճական

**Перевод поэмы «Шильонский узник» как психологическая реакция
на события XIX века**

Заключение

***Ключевые слова и выражения:** Дж. Байрон, О. Туманян, перевод, «Шильонский узник», реакция на трагические события, право на свободу, гуманизм.*

Перевод О. Туманяном «Шильонского узника» Байрона является единственным на сегодняшний день переводом данного произведения на армянский язык. Цель статьи – раскрыть мотивы и произошедшие более 100 лет назад события,

обусловившие выбор поэмы для перевода, которые и сегодня продолжают преследовать армянский народ, вновь ставя перед ним полную трагизма проблему выживания.

Для достижения целей статьи нами был выдвинут ряд задач, а именно: изучить теоретическую литературу, касающуюся переводческого искусства, а также литературно-критические отзывы о поэме Дж. Байрона «Шильонский узник» и переводе данного произведения О. Туманяном, выявить социально-политические мотивы выбора произведения для перевода, на которых основаны концепции понимания ценностей литературно-творческого процесса Туманяна, сформулировать важное послание, оставленное нам двумя гениями: Байроном и Туманяном.

В статье делается вывод о том, что и сегодня на нескончаемом фоне геополитических противоречий, конфликтов и насилия XXI в. как сама поэма, так и ее армянский перевод являются убедительным свидетельством высокого осознания национального достоинства и естественного права на свободу двух великих поэтов: Дж. Байрона и О. Туманяна, - а также утверждением общечеловеческого гуманизма и общехристианской любви. Чтобы спастись от грядущей катастрофы и гибели, человечество должно вернуться к своему первозданному непорочному облику.

Yeva Mnatsakanyan

The Translation of the Poem "The Prisoner of Chillon" as a Psychological Reaction to the Events of the 19th Century

Conclusion

Key words and expressions: J. Byron, H. Tumanyan, translation, "The Prisoner of Chillon", reaction to tragic events, the right to freedom, humanism.

H. Tumanyan's translation of J. Byron's "The Prisoner of Chillon" is the only translation of the given work into Armenian up today. The purpose of the article is to reveal the motives and events that occurred more than 100 years ago that determined the choice of the poem for translation, which continue haunting the Armenian people today, once again confronting them with the tragic problem of survival.

A number of tasks have been put forward in order to achieve the goals of the article, which are the following: to study the theoretical literature concerning the art of translation, as well as the literary and critical reviews of J. Byron's poem "The Prisoner of Chillon" and the translation of the given work by H. Tumanyan, to expose the socio-political motives for the choice of works for translation, on which the concepts of understanding the values of Tumanyan's literary and creative process are based, to formulate an important message left to us by two geniuses Byron and Tumanyan.

The article concludes that even today, on the endless background of geopolitical contradictions, conflicts and violence of the 21st century, both the poem itself and its Armenian translation are convincing evidence of the high awareness of national dignity and the natural right to freedom of two great poets J. Byron and H. Tumanyan, as well as the statement of universal humanism and universal Christian love. Humanity must return to its original, immaculate appearance in order to be saved from the coming catastrophe and death.

Եվա Մնացականյան – ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի Թումանյանագիտության խմբի ղեկավար, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսոր: Գիտական հետաքրքրությունները՝ հայ գրականության պատմություն և քննադատություն, Թումանյանագիտություն, ժամանակակից հայոց լեզու: Հեղինակ է 3 մենագրության, 3 ուսումնամեթոդական ձեռնարկների և ավելի քան 80 հոդվածի:
MnacakanyanEva@mail.ru

Ева Мнацакян – Руководитель Туманяноведческой группы института литературы им. М. Абегяна НАН РА, профессор кафедры родного языка и методов его преподавания Армянского государственного педагогического университета имени Х. Абовяна. Научные интересы: история армянской литературы и критика, туманяноведение, современный армянский язык. Автор 3 монографий, 3 учебных

пособий и более 80 статей. MnacakanyanEva@mail.ru

Yeva Mnatsakanyan – The Head of the Tumanyan Studies Group of the Institute of Literature after. M. Abeghyan of the RA NAS, associate professor of the Department of Native Language and Methods of its Teaching of the Armenian State Pedagogical University after Kh. Abovyan. Scientific interests: history of Armenian literature and criticism, Toumanyany studies contemporary Armenian. Author of 3 monographs, 3 methodological textbooks, and more than 80 articles. MnacakanyanEva@mail.ru

ԱՇԽԵՆ ԶՐԲԱՇՅԱՆ

ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՏԱՂԱՉԱՓԱԿԱՆ
ՁԵՎԵՐ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ*DOI: 10.24234/journalforarmenianstudies.v2i65.104*

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում քննության է առնված աննկախության շրջանի հայ պոեզիայի տաղաչափությունը, որն աչքի է ընկնում զարգացման հետաքրքիր միտումներով: Այդ շրջանում դեռևս շարունակում էր ստեղծագործել 1960-70-ական թթ. ասպարեզ իջած բանաստեղծների սերունդը (Հովհ. Գրիգորյան, Հ. Էդոյան, Ա. Հարությունյան, Ա. Մարտիրոսյան, Հ. Սարուխան և ուրիշներ), նրանց կողքին հանդես են գալիս նոր և տաղանդավոր դեմքեր՝ իրենց ուրույն ասելիքով ու բանաստեղծական ձևի կառուցման նոր եղանակներով:

Այդ շրջանի պոեզիայում հատկապես լայն տարածում է ստանում ազատ ոտանավորը (վեռլիբրը): Բանաստեղծական այդ ձևի մեջ իր ուրույն և ինքնատիպ խոսքն է ասել Հովհաննես Գրիգորյանը, որի ստեղծագործությունը ուղենիշ դարձավ գրական նոր սերնդի համար: Ազատ ոտանավորն սկսեցին կիրառել նաև վանկական ավանդական չափերին նախապատվություն տվող մի շարք բանաստեղծներ (Արտաշես Ղազարյան, Արմեն Մարտիրոսյան և ուրիշներ): Առհասարակ տպավորություն է ստեղծվում, որ ազատ ոտանավորի տարերքն իրեն էր ենթարկում նաև վանկական բանաստեղծությունը՝ ձևավորելով անցումային, միջանկյալ ձևեր: Այդպիսին է, օրինակ, Դավիթ Հովհաննեսի պոեզիան:

Վերջին տասնամյակներին հետաքրքիր տեղաշարժեր են տեղի ունենում նաև մաքուր վանկական ոտանավորի տիրույթում. աննախադեպ լայն կիրառություն են ստանում այնպիսի չափեր, տողերի այնպիսի զուգորդումներ, որոնք մեր նախորդ շրջանի պոեզիայում ընդունված չեն եղել կամ շատ հազվադեպ են կիրառվել: Սա կապված է վեռլիբրի լայնածավալ «ներխուժման» հետ, և բնական է, որ վանկական

ոտանավորը պետք է փորձեր ընդլայնել իր շրջանակները՝ հարմարվելով պոեզիայի համատարած «ազատականացմանը»: Բանաստեղծներից շատերը կարծես փորձում են ջնջել վանկական ոտանավորի և վեռլիբրի խիստ սահմանները՝ միաձուլելով դրանց հնարավորությունները:

Համաշեշտ ոտանավորը, որը մեր պոեզիա էր մուտք գործել 20-րդ դարասկզբին, նոր սերնդի բանաստեղծների մոտ շարունակում է մնալ քնարական արտահայտչաձևերից մեկը, սակայն 1990-2000-ական թվականներին գրեթե լիովին դուրս են մղվում վանաշեշտական չափերը: Այս կարևորագույն միտումները, որոնցով ներկայանում է արդի հայ պոեզիան, ձևավորում են նաև նրա հետագա զարգացման տեսլականը:

Բանալի բառեր և արտահայտություններ. անկախության շրջանի հայ պոեզիա, ազատ ոտանավոր, բանաստեղծական ռիթմ, անհանգ վեռլիբր, բառային կրկնություններ, բազմաշաղկապություն, վանկական ոտանավոր, պոեզիայի «ազատականացում», կարճ տողեր, համաշեշտ ոտանավոր:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայ պոեզիան իր բազմադարյան պատմության ընթացքում ունեցել է զարգացման ինքնատիպ դրսևորումներ, կրել տարաբնույթ ու բազմապիսի ազդեցություններ՝ միննույն ժամանակ պահպանելով իր ազգային ուրույն դիմագիծը: «Ստեղծագործել նշանակում է գտնվել ժամանակի բարձրության վրա, - գրում է Հենրիկ Էդոյանը: - Իսկ այդ ժամանակը պահանջում է, որ մենք, ունենալով պոետական հին և հարուստ ավանդույթներ, կարողանանք դիալոգի մեջ մտնել ժամանակակից մարդկության հետ: Պոեզիան այդ դիալոգի թերևս լավագույն միջոցն է: Ուստի մենք պետք է ձգտենք դուրս բերել մեր պոեզիան ավելի լայն ասպարեզ, որ մեր ձայնը կարողանա լսելի լինել նաև մյուսներին» (**«Սովետական գրականություն», 1971**):

Հայ նորագույն պոեզիայի զարգացման տարբեր փուլերում երևան են եկել բանաստեղծության կառուցման տարբեր ձևեր՝ կապված գեղարվեստական ճաշակի և պոետական խոսքի դրսևորման որոշակի միտումների հետ: Այս տեսանկյունից

հետաքրքիր նյութ է տալիս 1990-ականներին և դրանից հետո ստեղծված արևելահայ պոեզիան, որը մի կողմից զարգացնում էր 1960-ականների բանաստեղծական նոր սերնդի մշակած մի շարք սկզբունքներ, մյուս կողմից՝ փորձում գտնել իր ուրույն ասելիքը՝ նոր ժամանակների ոգուն և վերափոխումներին համահունչ:

Անկախության շրջանում դեռևս շարունակում էր ստեղծագործել բանաստեղծների այն սերունդը, որն ասպարեզ էր իջել 1960-70-ական թթ. (Հովհ. Գրիգորյան, Հ. Էդոյան, Ա. Հարությունյան, Ա. Մարտիրոսյան, Հ. Մարուխան և այլք), նրանց կողքին հանդես եկան նոր և տաղանդավոր դեմքեր (Վ. Գրիգորյան, Ա. Ղազարյան, Ա. Քոչինյան և այլք)՝ իրենց ուրույն ասելիքով ու բանաստեղծական ձևի կառուցման նոր եղանակներով: Եթե հին սերունդն իր պոետական նոր աորոնումներում ազդակներ էր ստացել XIX-XX դդ. անգլո-ամերիկյան պոեզիայից (Ուիթմեն, Էլիոթ, Փաունդ և ուրիշներ) և փորձում էր կտրուկ հակադրվել հայ դասկան ու խորհրդահայ պոեզիայի ավանդույթներին, ապա 90-ականներից ասպարեզ իջած նոր բանաստեղծներն արդեն ունեին ինչպես նախորդ սերնդի որոնումների փորձը, այնպես էլ նոր ժամանակների համաշխարհային գրականության գեղարվեստական միտումների յուրացման հնարավորությունը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն հոդվածի խնդրո առարկան 1990-2000-ականների հայ պոեզիայի տաղաչափական կառուցվածքի և առանձնահատկությունների քննությունն է, ուստի ընտրվել է *պոետիկական-կառուցվածքաբանական մեթոդը*՝ իբրև այս ուսումնասիրության ամենահարմար եղանակ:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ազատ ոտանավորը և նրա դրսևորման ձևերը: Ազատ ոտանավորը (վեռլիբրը), որը Միամանթոյից ավելի քան հինգ տասնամյակ անց նորից ուղիներ էր հարթել հայ պոեզիայում, անկախության շրջանում արդեն լանորեն կիրառվում էր՝ որոնելով նոր ու ինքնատիպ արտահայտչաձևեր:

Ազատ ոտանավորի ձևի մեջ իր ուրույն և ինքնատիպ խոսքն է ասել *Հովհաննես*

Գրիգորյանը, որի ստեղծագործությունը նաև ուղենիշ դարձավ բանաստեղծական նոր սերնդից շատերի համար: Գրիգորյանի վեռլիբրում առկա են ազատ ոտանավորին բնորոշ մի շարք ընդունված և ավանդական ձևեր՝ տողասկզբի կրկնություններ, բազմաշաղկապություն, որոնց միջոցով ձևավորվում է աշխարհի անձնակենտրոն ընկալման մի ինքնատիպ տեսադաշտ: Տարաբնույթ կրկնությունները ուժեղացնում են ռիթմը, ընդգծում տողի սահմանները, վերածվում տողասկզբի հանգի՝ փոխարինելով տողերի անհանգ վերջավորություններին:

Հաճախ ընդամենը մի քանի տողի մեջ ամբողջանում է քնարական ապրումը: Ահա «Հայաստան» բանաստեղծությունն ամբողջովին, որը հայրենասիրության մի յուրօրինակ պոռթկում է.

Մա իմ երկիրն է – չափսերով այնպիսին,

որ կարող եմ վերցնել հետս,

թե մի հեռու տեղ գնամ:

Փոքրիկ՝ ինչպես ծերացած մայր,

փոքրիկ՝ ինչպես նորածին զավակ,

իսկ քարտեզի վրա

ընդամենը մի արցունքի կաթիլ...

Մա իմ երկիրն է – չափսերով այնպիսին,

որ ազատորեն տեղավորել եմ սրտիս մեջ,

որ չկորցնեմ հանկարծ... («Նոր-Դար», 1999)

Վիոլետ Գրիգորյանի առաջին ժողովածուներից մեկում («Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում») ազատ ոտանավորի կառուցման սկզբունքը հիմնականում հետևյալն է. տողերն արտասանական և շարահյուսական համեմատաբար ինքնուրույն միավորներ են, և հաճախ դրանցից ամեն մեկը ձևավորում է մի ինքնուրույն առանձին պատկեր: Տողից տող ծավալվելով՝ դրանք ստեղծում են յուրօրինակ տող-պատկերաշարեր, որոնց միջոցով ձևավորվում է բանաստեղծության ռիթմը.

Այս կապույտ գմբեթի ներքո,

այս չարաբաստիկ, իլվլան աշխարհում,

երբ արևի ճառագայթները շրխկալով թափվում են վրաս,

և գույնզգուն փուչիկներ կան ձեռքիս,

երբ շրխկում են վզիցս առկախ ուլունքներն ապակե... (Գրիգորյան Վ., 1991)

Մի շարք բանաստեղծներ, որոնց պոեզիայում թեև գերակշռում են վանկական չափերը, տուրք տալով ժամանակի միտումներին, նույնպես կատարում են ազատ ոտանավորի փորձեր: Այսպես, *Արտաշես Ղազարյանի* (Արտաշես Արամի) «Գիշերվա ժամ» բանաստեղծական ժողովածուի մեջ տեղ-տեղ մուտք են գործում նաև վեռլիբրի նմուշներ: Ահա «Այստեղ տեղադրվելու էր Վահան Տերյանի հուշարձանը» բանաստեղծությունը. այն կառուցված է տողերի սկզբում *էթե* շաղկապի կրկնությամբ, որն ընդգծում է նպատակի իրագործման բազում պայմանների մի ամբողջ շարք.

Կտեղադրվի՛,

Եթե քաղաքապետարանը հիշի իր խոստումը,

Եթե ազգային բյուջեից հատկացումներ արվեն,

Եթե քաղաքական կրքերը հանդարտվեն,

Եթե (ծայրահեղ դեպքում) հանագնակություն արվի,

Եթե Ազգային Տուրքի հիմնադրամը վերանայի իր առաջիկա ծրագրերը,

Եթե գործարար մարդկանց ազգանվեր ջիղը թրթռա,

Եթե հեղաշրջում չլինի,

Եթե այս անգամ Տերյանի բախտը բանի...

Կտեղադրվի՛... (Ղազարյան Ա., 1998)

Այդ շրջանի մի շարք բանաստեղծների մոտ սկսում է կանոնիկ դառնալ ազատ (և ոչ միայն ազատ) ոտանավորի տողերը փոքրատառով սկսելու ավանադույթը, հաճախ տեսնում ենք անգամ հրաժարում ընդունված կետադրական նշաններից, և սրանով կարծես գիտակցության հոսքի տարրեր են մուտք գործում պոեզիա: Ջերմ մնալով ցանկացած պայմանականությունից և դեմ գնալով ընդունված հոսանքին՝ հեղինակը փորձում է հաստատել ստեղծագործական սեփական ազատության իրավունքը: Դեռևս 1970թ. «Գրական թերթում» գրված իր հոդվածում («Թե ինչպես «անհետացավ» բանաստեղծությունը») Հ. Գրիգորյանը վկայակոչում էր Ապոլիներին, որը 1912թ. հրաժարվել էր պոեզիայում կետադրական նշաններից,

քանի որ, ըստ նրա, բանաստեղծության մեջ իսկական կետադրությունը ռիթմն ու պաուզաներն են: «Ուրեմն, ճշմարիտ արվեստը հետզհետե պիտի ազատվի զարդարանքներից» (**«Գրական թերթ», 1970**),- գրում էր Հ. Գրիգորյանը: *Մարինե Պետրոսյանի* «Հայաստանի ծովափին» (2006) ժողովածուում, օրինակ, բանաստեղծությունների ն' վերնագրերը, ն' բոլոր տողերը գրված են փոքրատառերով. մի մասում չկա կետադրական որևէ նշան, անգամ վերջակետ:

Ինչպես արդեն նշեցինք, անկախության շրջանում իրենց նոր ժողովածուներով են հանդես գալիս նաև այն բանաստեղծները, որոնք ասպարեզ էին իջել 1960-70-ական թթ.: Ահա *Հենրիկ Էդոյանի* «Քայլեր և ստվերներ» ժողովածուն, որտեղ ավելի վաղ գրված բանաստեղծությունները հարևանություն են անում նոր գրվածների հետ: Էդոյանն այստեղ տեղադրել է նաև արձակ բանաստեղծություններ (թվով 29), որոնք իրենց ոճով և պատկերավորման սկզբունքներով էապես չեն տարբերվում ազատ ոտանավորներից: Տպավորություն է, որ դրանք պարզապես չտողատված բանաստեղծություններ են՝ գրված ազատ ոտանավորով: Այս գործերով Էդոյանը կարծես ազդարարում է չափածո և արձակ խոսքի տարբերությունների պայմանական բնույթը՝ միավորելով դրանք¹: Ահա դրանցից մեկը.

«Քո կորուստները գիշերն է տանում (տունը, ցանկապատը, այգին, փողոցը, դեմքերը, ձայները): Նրանք բացակա են, քանզի դու արթուն ես, իսկ երբ քնես՝ նրանք կհայտնվեն: Ահա մի աստղ, որ քեզ հետ գործ չունի, կուզես արթուն մնա, կուզես՝ քնիր» (Էդոյան Հ., 1996):

Իսկ «Կյանքի մասին» բանաստեղծությունն իրականում մտահղացված է հենց իբրև արձակի և չափածոյի խառնուրդ: Տողը հաճախ այնքան է երկարում, որ վերածվում է մի ամբողջ պարբերության: Ահա մի հատված այդ ստեղծագործությունից, որը կարելի է համարել էքսպերիմենտալ երկ.

¹ Ի դեպ, 20-րդ դարասկզբի ռուս գրականագիտության մեջ, մասնավորապես՝ *օրնամենտալ* (զարդանախշային) *արձակի* աշխուժացմանը զուգընթաց սկսում են հնչել ավանդական արձակ-չափածո հակադրությունից հրաժարվելու կոչեր: Ռուսական օրնամենտալ արձակի մի շարք առաջատար դեմքեր (Բելի, Ջամյատին, Բաբել, Պաստեռնակ, Մանդելշտամ և այլք) իրենց տեսական ելույթներում և ստեղծագործության մեջ ընդգծում են այն միտքը, որ գեղարվեստական խոսքի բաժանումն արձակի և չափածոյի արդեն հնացել է ու սպառել իրեն: Անդրել Բելու համոզմամբ՝ Գոգոլն արդեն «կոտրել էր արձակում արձակը»:

*Ես հիմա խոսում եմ կյանքի մասին,
 հիմա, երբ արդեն թվում է պետք է լռել,
 բայց ես խոսում եմ-*

*մարմինս լցրած թույնով, աղերով, անցած երազներով, մետաղով,
 տանջանքով, աղաղակով, գետերի բաբախյունով, քարերի համառ ցավով, սեղմված
 զայրույթով, քրքիջով, հուզմունքով, հիվանդություններով, էլեկտրալարերով,
 ավագով, փշով, արևածաղիկներով, տարածությունների սպասումներով,
 գրամեքենաների ողբով, խոսում եմ կյանքի մասին... (Էդոյան Հ., 1996)*

Միաժամանակ ձևավորվում է նաև նոր տիպի ազատ ոտանավոր, որտեղ միտումնավոր խախտվում են տողի շարահյուսական սահմանները, կիրառվում են տողանցներ, որոնք սովորաբար բնորոշ չեն ազատ ոտանավորին.

*Եվ այսպես, քեզ համար
 դու փախուստն ընտրեցիր, որպես քո
 ձեն ու ուղին: Քաղաքում մի տեղ մնաց
 քո մարմնի չափերով, մի դատարկ
 տարածություն, որտեղ դու բացակա ես... (Էդոյան Հ., 2006)*

Արմեն Մարտիրոսյանի՝ 2000-ականներին գրված մի շարք ժողովածուներում նույնպես գերիշխող է դառնում անհանգ վեռլիբրը, թեպետ նրա նախորդ շրջանի պոետական ժառանգությունը հիմնականում գրված էր վանկական չափերով: Իր ազատ ոտանավորներում Մարտիրոսյանը մյուս բանաստեղծների համեմատ ավելի քիչ է օգտագործում տողասկզբի կրկնություններ, սակայն բառային տարաբնույթ կրկնությունները բավական հաճախադեպ են.

*Ահա իմ նժույգը,
 փայտե իմ նժույգը ահա,
 չհագցնեք նրան ձեր գույնզգույն, լաթե երազները
 և ձեր տխրությունը չհանգցնեք.
 Թողեք, որ նժույգը մնա փայտե,
 մնա նժույգ... (ընդգծումները մերն են- Ա. Ջ.) (Մարտիրոսյան Ա., 2001)*

Իսկ տողասկզբում **և** շաղկապի հաճախակի կիրառությունը յուրօրինակ

աղերս է ստեղծում աստվածաշնչյան ոճի հետ.

*Եվ շարականը այս, որ հղացա,
քոնն է,
ինչպես քոնն են Սկիզբը և Վախճանը,
և արքայությունը ամենայնի,
և ոչինչ: (Մարտիրոսյան Ա., 2005)*

Դավիթ Հովհաննեսի «Քրոնիկոն» (1996) ժողովածուում թեպետ գերիշխում են վանկային չափերը (օրինակ՝ 10/5+5/), սակայն շատ բանաստեղծություններում հավասար անդամներն սկսում են երկարել կամ կարճանալ՝ «ազատականացնելով» ոտանավորը:

*Ախ, կյանքի ժամանակ – /քնքուշ մարդասպան 6+5
որ սպանում ես, /սակայն չես երևում 5+6
Քեզ կոչում ենք մեղմ՝ /լճացման շրջան», 5+5
բայց մեր ո՛ղջ կյանքն է /մի մեծ լճացո՛ւմ, 5+5
որից դուրս չենք գալիս /այս էլ քանի՛ տարի, 6+6
թեև քանի՛ տարի /ելել նավարկության 6+6
և դեգերում ենք/ բացերում - և անբարի 5+7
քամին չի՛ լցնում /մեր առազաստներն ունա՛յն: 5+7 (Հովհաննես Դ., 1996)*

Առհասարակ տպավորություն է ստեղծվում, որ ազատ ոտանավորի տարերքն իրեն է ենթարկել այդ շրջանի մեր վանկական բանաստեղծությունը՝ ձևավորելով անցումային, միջանկյալ ձևեր: Այսպիսով, վանկային ոտանավորի մեջ տեղի է ունենում ռիթմի հստակ տեղաշարժ դեպի ազատ ոտանավորը: Այս տեսանկյունից պետք է գնահատել նաև Վահագն Մուղնեցյանի ազատ ոտանավորը, որը տեղ-տեղ մոտենում է անդամավոր վանկային չափերին: Այդպիսին է, օրինակ, նրա «Մարդը պատի վրա» բանաստեղծությունը.

*...Ու փողեր են հնչում, անանձնական փողեր,
Մերովրեները հեռվում սպասում են հանգիստ,
Մպասում են վերջին, վերջին հրահանգին... («Նոր-Դար», 2000)
Երկինք, ապրիր իմ մեջ*

Կամ դռները բացիր իմ այս կոշտ ու փափուկ

Գիշերվա մեջ. («Նոր-Դար», 2001)

Փոփոխություններ վանկական ոտանավորում: Վերջին տասնամյակներին հետաքրքիր փոփոխություններ են տեղի ունենում նաև մաքուր վանկական ոտանավորի տիրույթում: Ճիշտ է, նախկինում լայն տարածում ունեցող տողաչափերը (ինչպես, օրինակ՝ 7, 8, 10, 12, 15-վանկանիները) շարունակում են կարևորագույն տեղ զբաղեցնել բանաստեղծական ժողովածուներում, սակայն աննախադեպ լայն կիրառություն են ստանում նաև այնպիսի չափեր, տողերի այնպիսի գուգորդումներ, որոնք մեր նախորդ շրջանի պոեզիայում ընդունված չեն եղել կամ շատ հազվադեպ են կիրառվել: Սա կապված էր վեռլիբրի լայնածավալ «ներխուժման» և պոետական մտածողության տարածքների «գրավման» հետ, ուստի բնական է, որ վանկական ոտանավորը պետք է փորձեր ընդլայնել իր շրջանակները՝ հարմարվելով պոեզիայի համատարած «ազատականացմանը»:

Եթե մեր դասական վանկական ոտանավորում գերակշիռ տեղ էին զբաղեցնում 3, 4 և 5-վանկանի անդամներով կառուցված տողերը, իսկ 6-վանկանի երկար անդամները հանդես էին գալիս ավելի հազվադեպ, ապա նոր ժամանակների վանկական պոեզիան մի աննախադեպ մղումով հակվում է դեպի երկար անդամներով տողերը՝ կարծես փորձելով է՛լ ավելի «ազատականացնել» բանաստեղծական խոսքը, որոշ առումով մերձեցնել այն ազատ ոտանավորին: Գրեթե բոլոր բանաստեղծների մոտ սկսում է լայն տարածում ստանալ 12/6+6/- վանկանի տողաչափը, որը հնարավորություն է ստեղծում ազատորեն շարադրելու մտքերը, հատածների բավականաչափ մեծ հեռավորությունը նաև որոշակիորեն «կոտրում է» ռիթմի արագությունը, հանդարտություն ու խոհականություն է հաղորդում խոսքին: Գրեթե հնարավոր չէ գտնել այդ տարիներին տպագրված բանաստեղծական որևէ ժողովածու, որտեղ երկարաշունչ անդամներով այդ չափը կիրառված չլինի, ավելին, շատ դեպքերում այն դառնում է գերիշխող՝ իբրև բանաստեղծական նոր մտածողության, չափածոյի «արձակայնացման» արատհայտություն:

Այսպես, Արտաշես Ղազարյանի «Կեսգիշերային սաղմոսներ» շարքում

բավական շատ են այս չափով գրված բանաստեղծությունները, որտեղ երկար անդամներով հատվածը, արտասանվելով մեկ շնչով, իրոք արտասանական աղերս է ստեղծում սաղմոսի, աղոթքի հետ: Ահա «Սաղմոս հսկող աստղի համար»-ը.

*Ինչ-որ աստղ է գալիս / ամեն աստծո գիշեր,
Գալիս է ու թառում / իմ պա՛ղ լուսամուտին,
Տրտում կայծո՛ւմ է, որ / կորուստները հիշե՛մ
Եվ սաղմոսն է ոգում / հավերժ լույս ու մութի: (Ղազարյան Ա., 1998)*

Արմեն Մարտիրոսյանի պոեզիայում նույնպես այս չափը լայն տարածում ունի.

*Մի թիավար արցունք / քանդել աչքի գոտին, 12/6+6/
հերկում է դեմքը քո / տխուր մանուշակով,
մանուշակով ներկված / ծովում առավոտի՝
դու հոգնաբեկ և մերկ / արցունքների թագով: (Մարտիրոսյան Ա., 2001)*

Ահա նմանատիպ օրինակ *Արշակ Քոչինյանից*.

*Ես վատնեցի կյանքս / երազների հանուն
Եվ հույսերի սնանկ / զգրոցներում գտա,
Ինձ ասացին սակայն՝ / դեպի վեր են տանում
Գնացքները նրանց, / ով իր կյանքը կտա: («Նոր-Դար», 1991)*

Ինչպես նկատում ենք, այս տողաչափը բանաստեղծությանը հաղորդում է արտասանական յուրահատուկ երանգ, հանդարտ-պատմողական ոճ, որով նաև տեսանելի նմանություն է ձևավորվում տարբեր հեղինակների բանաստեղծությունների միջև:

Վեցվանկանի անդամը՝ իբրև բանաստեղծական խոսքի ձևավորման միջոց, հանդես է գալիս տարբեր զուգորդումներով՝ միանդամ, երկանդամ, ոմանք նաև օգտագործում են ավելի երկար՝ եռանդամ կամ քառանդամ (18 կամ 24-վանկանի) տողեր: Կարծես ձևավորվում են վանկական ոտանավորի նոր տողաչափեր ու ռիթմական զուգորդումներ, որոնք խորթ էին նախորդ շրջանի և հատկապես XIX դարի մեր դասական պոեզիային: Այսպես, Արմեն Մարտիրոսյանի «Ներաշխարհի լուրջություն» ժողովածուում լայնորեն կիրառված է կամաչափ մի ձև, որը մինչ այդ չի

օգտագործվել մեր վանկային ոտանավորում. այդպիսին է «Ներշնչանքը» բանաստեղծությունը, որտեղ տողերը 18, 12, կամ 6-վանկանի են՝ պահպանելով վեցավանկ անդամի դոմինանտությունը և հետաքրքիր անցում կատարելով դեպի ոտանավորի անկաշկանդ ձևը: Այս տիպի վանկական ոտանավորն անփորձ ընթերցողը կարող է այն շփոթել ազատ ոտանավորի հետ:

Անորոշ անգույն էր, / չիմացա անունը, / թափանցեց իմ հյուղը,

ինչպես, / թափանցեց իմ հյուղը / անորոշ-անգույնը,

այնքան անաղարտ էր, / անդեմ մի կախարդ էր՝

ձեռքին պիրկ գավազան:

Խփեց գավազանը, / և հյուղ-ավազանը / լցվեց խնկահոտով... (Մարտիրոսյան Ա., 2008)

6-վանկանի անդամների հետ հաճախ զուգորդվում են նաև քառավանկերը՝ ավելի կարճ անդամով կարծես կոտրելով երկարաշունչ տողերի ռիթմական ներգործությունը: Ահա Հրաչյա Մարուխանից օրինակներ.

...Բա որ ճամփին լինեմ, / ու մութն ընկնի հանկարծ,

Օտար լինի ճամփեն / ու ամայի

Անքարավան լինեմ / ու արևս հանգած

Ու մեղմ դողանջի տեղ / սիրտս մայի... («Նոր-Դար», 2014)

Այսպիսի անդամների զուգորդությամբ ձևավորվում է տողի բոլորովին նոր մի կառուցվածք՝ 16/6+6+4/, որը հարստացնում է մեր վանկային ոտանավորի ներկայանակը: Առհասարակ վանկային ոտանավորի շրջանակներում կամաչափ ձևերը սկսում են գերիշխող դառնալ, և սա նույնպես բանաստեղծության «ազատականացման» համատեքստում էր: Ինքնատիպ օրինակ է Ա. Մարտիրոսյանի «Իմ մահվան ժամին...» բանաստեղծությունը, որտեղ բնաբան ընտրելով Չարենցի «Անվերնագիր»-ից, օգտագործելով նրա ոճական հնարքներն ու հնգավանկ անդամները՝ բանաստեղծը, այնուհանդերձ, նախընտրում է կամաչափ տողերը.

Մարդիկ չեն հիշի, / որ եղել էր, կար / այդպիսի պոետ,

լույսը կհիշի...

Չասեք, թե գնաց / ու չի դառնալու,

ես կգամ կրկին, / ինչպես նախկինում,

երեխայի պես / ինձ ու միամիտ... (Մարտիրոսյան Ա., 2008)

Վանկական ոտանավորում նկատելի է նաև մեկ այլ՝ հակադիր միտում, երբ մեկ անդամը կիսվում է երկու տողերի միջև: Իհարկե, հանուն արդարության պետք է նշել, որ այս հնարքը կիրառել է նաև Պարույր Սևակը, սակայն ոչ իբրև բանաստեղծության կառուցման հիմնական ձև: Այնինչ Ա. Ղազարյանը, օրինակ, դրա միջոցով ձևավորում է բանաստեղծության մի նոր տեսակ՝ «պրեստո»² (Հայրապետյան Ա., 2011) ժանրային անվանումով՝ փորձելով տողերի կտրատմամբ արագություն ու տեմպ հաղորդել բանաստեղծական խոսքին.

Եկանք,

Վիճեցինք,

Որ հետո

Լռենք,

Եվ ցավով

Թրծված

Լռությունը

Մեր

Երկու

Անհայտի

Միջև

Զետեղենք... (Ղազարյան Ա., 1998)

Առհասարակ, ինչպես արդեն նշել ենք, տպավորություն է ստեղծվում, որ բանաստեղծներից շատերը փորձում են ջնջել վանկական ոտանավորի և վերլիբրի անջրպետը, միաձուլել դրանց հնարավորությունները՝ մեծապես ընդլայնելով բանաստեղծական խոսքի արտահայտչաձևերը: Սա է նաև պատճառը, որ գերազանցապես ազատ ոտանավորով ստեղծագործող բանաստեղծները նույնպես սկսում են կիրառել վանկական կամաչափ ոտանավորի ինքնատիպ տեսակներ՝

² Այդպես են կոչվում արագ տեմպով կատարելու համար գրված երաժշտական գործիքային պիեսները:

հիմնականում երկար տողերով, երբեմն 10, 15, և 20-վանկանի տողերի զուգորդմամբ:

Համաշեշտ ոտանավորի ձևերը: Անկախության շրջանի հայ պոեզիան փորձում է յուրացնել բանաստեղծական տարաբնույթ ձևեր, տաղաչափական բազմազան հնարքներ: Համաշեշտ ոտանավորը, որը մեր պոեզիա էր մուտք գործել XX դարասկզբին և Չարենցի ստեղծագործության մեջ հասել իր բարձրակետին, նոր սերնդի բանաստեղծների մոտ շարունակում է մնալ քնարական արտահայտչաձևերից մեկը: Այն նույնպես կիրառվում է պոետական խոսքի «ազատականացման» համատեքստում՝ լիովին տեղավորվելով այն միտումների շրջանակներում, որոնք իշխում են XX դարավերջի պոեզիայում: Վանկերով անհավասար տողերում ռիթմն ստեղծվում է գերազանցապես նույն քանակով ուժեղ շեշտերի առկայությամբ, որոնք էլ դառնում են բանաստեղծության կառուցման հիմնական գործոնը: Ահա մեկ օրինակ *Ղևոնդից* (շեշտերի տեղադրումը մերն է).

*Քո հազի՛ն զգե՛ստը գիշերվա՛՛
 ծոցն ընկա՛ծ ճառագա՛յթն արևի,
 քո մի՛ տքը՝ օդի՛ պես կատարյա՛լ,
 քո սի՛րտը իմաստո՛ւն ջրերի՛ց... (Ղևոնդ, 2021)*

Ա. Ղազարյանի «Նարնջագույն արշիպելագ» ժողովածուում ամփոփված 8-տողանի գործերը, որոնք նա կոչել է «հայրեն», իրականում հայրեններ չեն, քանի որ բոլոր տողերն ունեն յոթ վանկ: Ըստ էության սրանք նույնպես համաշեշտ ոտանավորի տիրույթում են.

*Իմ ցավից լույս է ծորում,
 Իմ ցավից՝ մարջան ու լալ:
 Ես կերթամ՝ հեռու ձորում
 Մենանամ, փակվեմ ու լամ:
 Թող լացս դառնա պայիկ,
 Գա հասնի շեմին քո տան:
 Երբ դուրս գաս, երգով փայի,
 Միտի՛ի քեզ ու գթա: (Ղազարյան Ա., 2003)*

Այս ձևերն իրականում կարելի է համարել վանկական և վանկաշեշտական

համակարգերի արանքում միջանկյալ տեղ զբաղեցնող դոլնիկային չափեր: Մեկ կարևոր դիտարկում ևս. 1990-2000-ական թվականների հայ պոեզիայից գրեթե լիովին դուրս են մղված վանաշեշտական չափերը, ինչը մեկ անգամ ևս վկայում է, որ դրանք մեր բանաստեղծությանը բնորոշ և հոգեհարազատ ձևեր չեն:

Ամփոփելով կարելի է նշել հետևյալը. վերջին տասնամյակների հայ պոեզիան իր տաղաչափությամբ մի կողմից փորձում է հարազատ մնալ մեր ավանդական ձևերին, մյուս կողմից ձգտում է նաև դեպի նորարարություն՝ կոտրելով դասական ձևերն ու ստեղծելով նորերը: Այս կարևորագույն միտումները, որոնցով ներկայանում է արդի հայ պոեզիան, ձևավորում են նաև նրա հետագա զարգացման տեսլականը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Անկախության շրջանի հայ պոեզիայում կարևորագույն տեղ է զբաղեցնում ազատ ոտանավորը, որը լայնորեն կիրառվում էր դեռևս 1960-70-ական թթ.:
2. Օգտագործվում են ազատ ոտանավորի ռիթմի ստեղծման տարբեր ձևեր՝ տողասկզբի կամ բառային կրկնություններ, բազմաշաղկապություն, տողերի շարահյուսական-արտասանական ամբողջականություն և այլն:
3. Երևան են գալիս նաև ազատ ոտանավորի նոր ձևեր՝ անհանգ, առանց կետադրության, կարճ, հատու տողերով կամ անսպասելի տողանցներով, որոնք մինչ այդ ընդունված չէին:
4. Ավանդական վանկական ոտանավորը նույնպես կրում է լուրջ փոփոխություններ՝ ավելի հակվելով դեպի երկար անդամներով (մասնավորապես՝ 6-վանկանի) կամաչափ ոտանավորը:
5. Տպավորություն է ստեղծվում, որ արձակի և չափածոյի տարբերությունները որոշ առումով ջնջվում են, նաև արձակի և չափածոյի միահյուսման փորձեր են կատարվում:
6. Անկախության շրջանում լայնորեն կիրառվում է նաև տոնիկական ոտանավորը, իսկ վանկաշեշտական չափերը լիովին դուրս են մղվում պոեզիայից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Գրական թերթ» (1970), 6 նոյեմբերի:
2. «Սովետական գրականություն» (1971), թիվ 1:
3. «Նոր-Դար» (1999), ՀԳՄ գրական-գեղարվեստական ամսագիր, թիվ 2:
4. «Նոր-Դար» (2000), ՀԳՄ գրական-գեղարվեստական ամսագիր, թիվ 3:
5. «Նոր-Դար» (2001), ՀԳՄ գրական-գեղարվեստական ամսագիր, թիվ 2:
6. «Նոր-Դար» (2014), ՀԳՄ գրական-գեղարվեստական ամսագիր, թիվ 1-4:
7. Գրիգորյան Վ. (1991), Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում, Երևան, «Նաիրի»:
8. Էդոյան Հ. (2006), Փողոցի բաժանվող մասում, Երևան, «Ապոլոն»:
9. Էդոյան Հ. (1996), Քայլեր և ստվերներ, Պէյրուր, «Նոր կեանք»:
10. Հայրապետյան Ա. (2011), Օտար բառերի բառարան, Երևան, Հեղինակային հրատ.:
11. Հովհաննես Դ. (1996), Քրոնիկոն, Երևան, «Ապոլոն»:
12. Ղազարյան Ա. (1998), Գիշերվա ժամ, Երևան, «Նոր-Դար»:
13. Ղազարյան Ա. (2003), Նարնջագույն արշիպելագ, Երևան, «Նոր-Դար»:
14. Ղևոնդ (2021), Հեռացող մարգարեն, Երևան, Համահայկական գրողների միության հրատ.:
15. Մարտիրոսյան Ա. (2005), Արգելված պտուղը, Երևան, ՀԳՄ հրատ.:
16. Մարտիրոսյան Ա. (2001), Ժամերգություն, Երևան, «Նոր-Դար»:
17. Մարտիրոսյան Ա. (2008), Ներաշխարհի լռություն, Երևան, ՀԳՄ հրատ.:

REFERENCES

1. “Grakan t'ert” / “Grakan tert” / (1970), nov. 6.
2. “Sovetakan grakanowt'yown” / “Sovetakan grakanutyum” / (1971), vol. 1.
3. “Nor-Dar” (1999), HGM grakan-gegharvestakan amsagir, vol. 2.
4. “Nor-Dar” (2000), HGM grakan-gegharvestakan amsagir”, vol. 3.
5. “Nor-Dar” (2001), HGM grakan-gegharvestakan amsagir”, vol. 2.
6. “Nor-Dar” (2014), HGM grakan-gegharvestakan amsagir”, vol. 1-4.

7. **Grigoryan V. (1991)**, Twshmarit, twshmarit em asowm /I'm telling you the truth/, Yerevan, "Nayiri".
8. **Edoyan H. (2006)**, P'oghoci bajhanvogh masowm, /In the divided part of the street/, Yerevan, "Apolon".
9. **Edoyan H. (1996)**, Qayler ev stverner /Steps and shadows/, Beirut, "Nor keanq".
10. **Hayrapetyan A. (2011)**, O'tar bar'eri bar'aran /Dictionary of foreign words/, Yerevan, Heghinakayin hrat.
11. **Hovhannes D. (1996)**, Qronikon /Chronicon/, Yerevan, "Apolon".
12. **Ghazaryan A. (1998)**, Gisherva jham /The night time/, Yerevan, "Nor-Dar".
13. **Ghazaryan A. (2003)**, Narnjagujn arshipelag /Orange archipelago/, Yerevan, "Nor-Dar".
14. **Ghevond (2021)**, Heratsogh margaren /The departing prophet/, Yerevan, Hamahajkakan groghneri miutyan hrat..
15. **Martirosyan A. (2005)**, Argelvac' ptowghy' /The forbidden fruit/, Yerevan, "HGM hrat.".
16. **Martirosyan A. (2001)**, Jhamergowt'yown /Liturgy/, Yerevan, "Nor-Dar".
17. **Martirosyan A. (2008)**, Nerashxarhi lr'owt'yown /Inner world silence/, Yerevan, "HGM hrat.".

Ашхен Джрбашян

Метрические формы и тенденции развития армянской

поэзии периода независимости

Заключение

***Ключевые слова и выражения:** армянская поэзия периода независимости, свободный стих, поэтический ритм, нерифмованный верлибр, повторы слов, многосоюзие, силлабический стих, поэтическое «освобождение», короткие строки, тонический стих.*

В статье рассматриваются метрические особенности армянской поэзии последних десятилетий. В этот период продолжал творить поколение поэтов 1960-70-

х годов (Ов. Григорян, Г. Эдоян, А. Арутюнян, А. Мартиросян, Г. Сарухан и др.), рядом с ними появились новые талантливые лица со своими уникальными высказываниями и новыми способами построения поэтической речи.

В поэзии этого периода особенно распространяется свободный стих (verlibre). Ованес Григорян создал свой уникальный и оригинальный верлибр, ставший знаковым для нового поколения писателей. Ряд поэтов, отдававших предпочтение армянскому традиционному силлабическим метрам (Артасес Казарян, Армен Мартиросян и др.), также стали использовать свободный стих. В целом складывается впечатление, что стихия верлибра повлияла и на силлабическую поэзию этого периода, образовав переходные, промежуточные формы. Такова, например, поэзия Давида Ованеса.

Интересные сдвиги произошли в последние десятилетия и в области чистого силлабического стиха: очень широко стали употребляться такие формы, такие сочетания строк, которые не были приняты или же употреблялись очень редко в армянской поэзии предыдущего периода. Это связано с масштабным «вторжением» верлибра, и не удивительно, что силлабический стих расширил свою сферу применения, приспособиваясь к повсеместному «освобождению» стиха. Большинство поэтов словно пытались стереть строгие границы силлабического стиха и верлибра, некоторым образом объединяя их возможности.

Тонический стих, вошедший в нашу поэзию в начале XX века, продолжает оставаться одним из средств лирического выражения поэтов нового поколения в контексте «раскрепощения» поэтической речи, однако силлабо-тонический стих практически полностью удаляется из армянской поэзии 1990-2000-х годов. Эти важнейшие тенденции формируют и видение дальнейшего развития современной армянской поэзии.

Ashkhen Jrbashyan

Metrical Forms and Trends in the Development of Armenian Poetry During the Period of Independence

Conclusion

Key words and expressions: *Armenian poetry of the period of independence, free verse, poetic rhythm, unrhymed free verse, word repetitions, polysyndeton, syllabic verse, poetic “liberation”, short lines, tonic verse.*

The article examines the metrical features of Armenian poetry of recent decades. During this period, the generation of poets of the 1960-70s continued to create (Hov. Grigoryan, H. Edoyan, A. Harutyunyan, A. Martirosyan, Hr. Sarukhan, etc.), new talented poets appeared next to them with their own unique statements and new ways of verse constructing. In the poetry of this period, free verse (verlibre) was especially widespread. Hovhannes Grigoryan created his own unique and original free verse, which has become iconic for a new generation of writers. A number of poets who gave preference to the Armenian traditional syllabic meters (Artashes Khazaryan, Armen Martirosyan, etc.) also began to use free verse. In general, one gets the impression that the element of free verse also influenced the syllabic poetry of this period, forming transitional, intermediate forms. For example, the poetry of David Hovhannes is like that.

Interesting changes have occurred in recent decades in the field of pure syllabic verse: forms and combinations of lines that were not accepted or were used very rarely in Armenian poetry of the previous period began to be used very widely. This is due to the large-scale “invasion” of free verse, and it is not surprising that syllabic verse expanded its scope, adapting to the widespread “liberation” of verse. Most poets seemed to be trying to erase the strict boundaries of syllabic verse and free verse, in some way combining their capabilities.

Tonic verse, which entered our poetry at the beginning of the 20th century, continues to be one of the means of lyrical expression of poets of the new generation in the context of the “emancipation” of poetic speech, however, syllabic-tonic verse is almost completely removed from Armenian poetry of the 1990-2000s. These most important trends also form

the vision for the further development of modern Armenian poetry.

Աշխեն Զրբաշյան - Բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի դոցենտ: Գիտական հետաքրքրությունները՝ գրականության տեսություն և գեղագիտություն, գրական ժանրերի և սեռերի տեսություն, տաղագիտություն: Հեղինակ է վեց գրքի (մենագրություն, բուհական և դպրոցական դասագրքեր, բուհական ձեռնարկներ) և շուրջ 50 հոդվածի: ashjrbashyan@gmail.com

Ашхен Джрбашян – Доцент кафедры истории и теории литературы ЕГУ, кандидат филологических наук. Научные интересы: теория литературы и эстетика, теория литературных жанров и родов, метрика. Является автором шести книг (монографии, вузовых и школьных учебников, вузовых учебных пособий) и около 50 статей. ashjrbashyan@gmail.com

Ashkhen Jrbashyan - Candidate of philological sciences, associate professor of the department of history and theory of literature in YSU. Scientific interests: theory of literature and aesthetics, theory of literary genres, metrics. She is the author of six books (monographs, university textbooks and school textbook) and about 50 articles. ashjrbashyan@gmail.com

ԼԻԼԻԹ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՐՈՒՍ ԱՅՎԱԶՅԱՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ՝ ՈՐՊԵՍ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ԿՐՈՂԻ
ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԷՊՈՍԻ «ՄԵԾ ՄՀԵՐ» ՃՅՈՒՂՈՒՄ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v2i65.105

ԱՍՓՈՓՈՒՄ

Հայկական էպոսը ժողովրդի ընդհանրական մտածողության ու արժեքային համակարգի համահավաք ամբողջությունն է, որը, անցնելով տարածության ու ժամանակի մեջ, գտվել է այն ամենից, ինչը խորթ է եղել ժողովրդի հոգուն ու մտածողությանը՝ պահպանելով միայն այն, ինչը ճշմարիտ, արժեքավոր ու հարազատ է եղել նրան, ինչը հավիտենական արժեք է այլևս: Հայ ժողովրդի համար կարևոր բարոյական այդ սկզբունքների հիմքում քրիստոնեական արժեքներն են, որոնք, դարերի ընթացքում բյուրեղանալով, մեզ են հասել որպես կայուն ու կոռ մի համակարգ: Քրիստոնեական արժեհամակարգի այդ տարրերը դրսևորվել են հայկական ամբողջ դյուցազնավեպի բովանդակային կտավում, այդ թվում՝ «Մեծ Մհեր» ճյուղում՝ բացահայտելով, որ հայ ժողովուրդը, լինելով քրիստոնեությունն առաջինը որպես պետական կրոն ընդունած ժողովուրդ, նախևառաջ կրողն է եղել քրիստոնեական հավատքի և արժեհամակարգի:

Բանալի բառեր և արտահայտություններ. հայկական էպոս, քրիստոնեական արժեհամակարգ, հայի քրիստոնեական ինքնություն, հավատացյալ ժողովուրդ, հայ դյուցազունների պետականամետ մտածողություն, ինքնութենական հարցերի մանրակրկիտ քննություն դպրոցում:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ստեղծված լինելով 8–10–րդ դարերում՝ հայկական էպոսի արմատները հասնում են հազարամյակների խորքը՝ իրենց մեջ խտացնելով տարբեր

Ժամանակահատվածներ և մշակութային շերտեր: Էպոսը տեղեկությունների անսպառ աղբյուր է ժողովրդի ապրելակերպի, ընտանիքի, ընտանեկան փոխհարաբերությունների, կրոնի, ծիսակարգերի և հավատալիքների մասին: Դա գուցե տարերայնորեն ծագած, բայց դարերի ընթացքում մշակված որոշակի համակարգ է, որն ապահովում է այդ իսկ հանրության ինքնության, պատմական նկարագրի, հիշողության ու բարոյական կերպարի պահպանումը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Կիրառված են պրոբլեմային-վերլուծական և համեմատական-գուգադրական մեթոդները:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

«Հայկական էպոսը հայ ցեղի ապրած կյանքի և հոգեկան կարողությունների հոյակապ գանձարանն է ու իր մեծության անհերքելի վկայությունն աշխարհի առջև»:

Հ. Թումանյան

Հայ ժողովրդի՝ դարերի ընթացքում ստեղծած «գանձերն անգին» (Թումանյան Հ., 1995) մեր մշակույթի անկապտելի մասն են կազմում: Խոսքն առաջին հերթին մեր դուրսագնեցությանն է վերաբերում, որ կոչվում է «Սասնա ծռեր», «Սասնա տուն», «Ջոջանց տուն», «Սասունցի Դավիթ»... Ստեղծված լինելով 8–10–րդ դարերում՝ հայկական էպոսի արմատները հասնում են հազարամյակների խորքը՝ իրենց մեջ խտացնելով տարբեր ժամանակահատվածներ և մշակութային շերտեր: Էպոսը տեղեկությունների անսպառ աղբյուր է ժողովրդի ապրելակերպի, ընտանիքի, ներընտանեկան և հասարակական փոխհարաբերությունների, կրոնի, ծիսակարգերի և հավատալիքների մասին: Ազգային դուրսագնեցության մեջ արտացոլված են տվյալ ազգի հանրության բարու և չարի պատկերացումները, գովելի և պարսավելի վարքագիծը: Դա գուցե տարերայնորեն ծագած, բայց դարերի ընթացքում մշակված որոշակի համակարգ է, որն ապահովում է այդ իսկ հանրության ինքնության, պատմական նկարագրի, հիշողության ու բարոյական

կերպարի պահպանումը:

Հ. Թումանյանը գրում է. «Ահա հայ ժողովուրդը՝ խտացված իր ազգային էպոսում՝ «Սասունցի Դավիթում» (Թումանյան Հ., 1995): Թումանյանը էպոսը դիտում է որպես հնագույն ժամանակներից՝ Հայկ Նահապետից սկսած՝ ժողովրդի մտածումների, ձգտումների, երազանքների արտահայտություն: Երկար դարեր բանահյուսությունն է եղել ժողովրդական մտքի միակ ասպարեզը: Հազարամյակների ընթացքում ժողովուրդն է սերնդից սերունդ մշակել Դավթի կերպարը, նրա մեջ դրել իր լավագույն զգացումները, ձգտումները, իդեերն ու նպատակները: Այս տեսանկյունից ազգային էպոսը կամ դյուցազնավեպը ժողովրդի մտածողության զարմանալի բյուրեղացում է: Անշուշտ, էպոսը ունեցել է իր բանավոր տարբերակները, որոնցում բնականաբար, կան որոշակի տարբերություններ, սակայն հստակ է, որ այն ժողովրդի ընդհանրական մտածողության ու արժեքային համակարգի համահավաք ամբողջությունն է, որը, բերնեբերան անցնելով տարածության ու ժամանակի մեջ, գտվել է այն ամենից, ինչը խորթ է եղել ժողովրդի հոգուն ու մտածողությանը՝ պահպանելով միայն այն, ինչը ճշմարիտ, արժեքավոր ու հարազատ է եղել նրան, և ինչը հավիտենական արժեք է այլևս:

Հայ ժողովրդի համար կարևոր բարոյական այդ սկզբունքների հիմքում քրիստոնեական արժեքներն են, որոնք, դարերի ընթացքում բյուրեղանալով, մեզ են հասել՝ որպես կայուն ու կուռ մի համակարգ: Սույն աշխատանքում փորձ է արվելու անդրադառնալ քրիստոնեական արժեհամակարգի այդ տարրերի արտահայտմանը հայկական դյուցազնավեպի «Մեծ Մհեր» ճյուղում:

«Ընդհանրապես «Սասնա ծռեր» էպոսի գրեթե բոլոր պատումներում կարելի է հանդիպել էպոսի տարածման ու շրջանառության ժողովրդական միջավայրի քրիստոնեական աշխարհայացքին բնորոշ հավատալիքների, պաշտամունքային տարրերի: Քրիստոնեական հավատալիքներն էպոսում արտահայտվում են աստվածաշնչային, պարականոն գրքերի կերպարների, դրանց հետ կապված մոտիվների ու սյուժեների առկայությամբ, եկեղեցական տարբեր տոների ու ծեսերի հիշատակությամբ, քրիստոնեական աղոթքների ուղղակի կամ ժողովրդական

մշակման ենթարկված հատվածների կիրառումներով» (Համբարձումյան Հ., 2018):

Մ.Աբեղյանը նկատել է, որ մասնավորապես Դավթի՝ կրակով փորձության մոտիվը զուգահեռվում է Մովսես Մարգարեի մանկական արարքների մոտիվներին: Դավթի կամ Փոքր Մհերի գայթակղության մոտիվը նմանեցվում է Հովսեփ Գեղեցիկի մասին համապատասխան հատվածին, իսկ Դավթի և Մըսրա Մելիքի մենամարտը Դավթի և Գողիարի մոտիվն է (Աբեղյան Մ., 1966):

Եթե էպոսի առաջին ճյուղում, ըստ մասնագետների, ժողովրդի գիտակցության մեջ անցում է կատարվում տոտեմական-դիցաբանական-հեթանոսականից դեպի մենաստվածություն և քրիստոնեություն, ապա «Մեծ Մհեր» ճյուղում քրիստոնեական արժեքները միահյուսված են հերոսների և ժողովրդի կյանքին, ընդգրկված են ժողովրդի ու երկրի համար շրջադարձային դեպքերի լուծմանն ուղղված որոշումներում, որոնք կայացվում են հենց այդ արժեքների հիման վրա:

Այսպես, հեթանոսությունն ու քրիստոնեությունը միահյուսված են հանդես գալիս արդեն դյուցազունների «ծննդյան-դյուցազնացման» դրվագում. ջրում՝ Ծովի հատակին, Սանասարը տեսնում է մի եկեղեցի, ներս է մտնում ու քնում այնտեղ: Երագում նրան հայտնվում է Մարիամ Աստվածածինը.

Մայր Աստվածածին էկավ էրագ ասաց.

Հե՛յ, Սանասար, էլի վե՛ր:

Խաչ Պատերազմին կո՛ւ էստեղ է.

Էլի՛, յոթ ծունր, աղոթք առջև արա.

Արժան ըլնիս, քեզ կը հասնի,

Դնես վեր քո աջ թևին, որ դարբ չառնի:

Ծովային ձին, Քուռկիկ Ջալալին,

Էնտեղ թամքած, սանձըն բերան զարկած,

Էրկնուց իջած Թուր Կեծակին վերան կախած.

Թե արժան ես, կ'առնես, կը հեծնես (Մասունցի Դավիթ, 1961):

Աստվածածինն է դյուցազունին հայտնում բոլոր զենքերի ու զրահների մասին՝ ոտքից մինչև գլուխ, որոնք Երկնքից նրան պիտի տրվեն, այն ուժի ու քաջության մասին, որ նրան պիտի շնորհվեն, եթե արժանի դառնա: Իսկ արժանի

դարձավ՝ «յոթ ծունր աղոթք անելով», այսինքն՝ Աստծուն երկրպագելուց, իր հավատարմությունն ու հնազանդությունը նրան խոստովանելուց հետո:

Հրեշտակները ըզխաջ Պատերազմին

Դրին վեր աջ թևին,

Որ դարբ չառնի Սանասարին (Սասունցի Դավիթ, 1961):

Սանասարին են հանձնվում նաև հրեղեն ձին՝ Քուռկիկ Ջալալին, Կեծական Թուրը, իր հաղթության ասպագենը, որի հիմքում դրված է արժանի լինելու դեպքում Աստծո հովանավորությունն ու պաշտպանությունը: Ու գնաց՝ «հասնի իր մուրազին». Սասնա դյուցազունների ձեռքով և, փաստորեն, Աստծո օրհնությամբ կառուցվեց հայի երազանքի երկիրը, որտեղ թագավորեցին արդարության ու ճշմարտության օրենքները. եղբայրները հավատարիմ մնացին Աստծուն, նրա աշխարհակարգին ու օրենքներին և արժանիորեն կրեցին իրենց հաղթության ասպագենը:

Քրիստոնեական հավատքի ցայտուն դրսևորումն է Սասնա դյուցազունների թևի վրայի եղած խաչը, որը, նայած հանգամանքների, գունափոխվում է: Անշուշտ, այս առհավատյաները սերնդեսերունդ փոխանցվում են հերոսներին: Սանասարից հետո դրանց պատվով կրողն է դառնում Մեծ Մհերը:

Սանասարի որդին մեծանում և ուժեղանում էր ժամ առ ժամ: Ուսանելու համար «Էնոր վանք-վարժարան դրին»: Այս փոքրիկ թվացող մանրամասնը խոսում է Մհերի դաստիարակության բովանդակության մասին: Դյուցազնական ուժից բացի, հայ դյուցազունը պիտի ունենար նաև կրթություն և հավատք՝ աստվածճանաչողություն: Այս տեսանկյունից էլ Մհերը եղավ իր հավատավոր նախնիների՝ Գագիկ թագավորի, Ծովինարի, Սանասարի ու Բաղդասարի արժանի ժառանգը:

Մհերն ապրում էր իր ժողովրդի հոգսերով, հոգ տանում իր երկրի և ժողովրդի մասին: Դյուցազնական ուժը, հայրենասիրությունը, ազատասիրությունը Մեծ Մհերին բերեցին անհաղթ հերոսի համբավ:

Հայկական էպոսի հետաքրքրական առանձնահատկություններից մեկն այն է, որ նրա դյուցազունները թշնամու դեմ մենակ են դուրս գալիս: Մյուս ժողովուրդների

Էպոսների հերոսները, որպես կանոն, զորախմբով են կռվի գնում: Մեծ Մհերի կերպարը ներկայացնելու համար խիստ բնութագրական է առյուծին պատռելու-
 ձևելու տեսարանը: Նախ՝ բացահայտվում է Մհերի հոգատարությունն ու
 պատասխանատվությունը սեփական ժողովրդի նկատմամբ, և երկրորդ՝ Մեծ
 Մհերը՝ որպես խիզախ առաջնորդ, ինքն է լուծում իր երկիրը առյուծից ազատելու
 խնդիրը: Նա անմիջապես շտապում է Հալեպից եկող ցորենի ճամփան փակած
 առյուծին սպանելու՝ փրկելու սասունցիներին վերահաս սովից: Սակայն Մհերն
 ազնիվ է իր ախոյանի հետ և որոշում է կռվել հավասարը հավասարին սկզբունքով՝
 առանց ասպազենի և մենակ, ինչպես առյուծորդին առյուծորդու դեմ:

Դարձավ, ասաց.- Առյուծի մեր

Աստված կանչեց՝ ծնավ էնոր.

Իմ մե՛րն էլ ինձ, աստված կանչեց, էնպե՛ս ծնավ.

Ես իմ ասպապը տի հանեմ,

Կուշտի՛ կպնեմ առյուծի հետ (Սասունցի Դավիթ, 1961):

.....

Մհեր մենակ գնաց:

Գնաց, ինք ու առյուծ առան իրար:

Մհեր կանչեց.— Հացն ու գինին, տեր կենդանին:

Կանչեց, մի ձեռ թալեց էդ առյուծի վերի՛ ծնոտ,

Մյուս ձեռ թալեց ներքի՛ ծնոտ,

Ճղեց էդ առյուծ մեջտեղեն,

Արե՛ց էնոր էրկու կտոր:

Մեկ դրեց ճամփու էս դին, մեկ էլ՝ էն դին (Սասունցի Դավիթ,

1961):

Այս ազնվական հատկանիշների դրսևորումից բացի, քրիստոնեական ևս մի
 դրոշմ կարելի է առանձնցնել այս դրվագում: Թեև «*հաց ու գինի*» արտահայտությունն
 ունի դեռևս նախաքրիստոնեական խորհուրդ, և հացն ու գինին համարվում էին
 ֆիզիկական գոյությունը պահպանելու լավագույն միջոցը, այնուամենայնիվ, այս
 բնագրում «Հացն ու գինին՝ Տեր կենդանին» արտահայտությունն արդեն

առավելապես քրիստոնեական արժեք ունի՝ որպես Քրիստոսի մարմին և արյուն, որպես նոր ուխտի նշան, որը Քրիստոս հաստատեց խորհրդավոր ընթրիքի ժամանակ: Ընդ որում՝ այդ արտահայտությանը էպոսում հանդիպում ենք բազմաթիվ տեղերում և տարբեր ճյուղերում. դյուցազուններն այն ասում են, երբ, օրինակ, կռվի գնալիս Տիրոջ օգնությանն են դիմում:

Սակայն դյուցազուններն էլ մարդիկ են, և նրանց բնորոշ է նաև սովորական մարդկանց պես սխալվելը՝ հային բնորոշ իրենց շիտակության ու պարզության պատճառով խաբվելով և ոչ հեռատես քայլեր կատարելով՝ ճշմարիտ ճանապարհից շեղվելը և դրանով ընտանիքն ու երկիրը կործանման վտանգի առաջ կանգնեցնելը: Ահա այսպես Միերը խոտորվում է ճշմարիտ ճանապարհից՝ խաբվելով նախ՝ խորամանկ ու հեռատես Մելիքից՝ եղբայրանալով նրա հետ և խոստանալով մենակ չթողնել նրա կնոջը, ապա նաև Իսմիլ Խաթունից: Իհարկե, Միերը մի կողմից գիտակցում էր, որ Մելիքին տված երդումը խախտելով՝ պատիժ պիտի կրի, սակայն մյուս կողմից՝ թերևս նաև հպարտության ու եսասիրության պատճառով հրաժարվում է ունկն դնել իր կնոջը՝ Արմաղանին, այլև եղբորը՝ Ձենով Հովանին, որոնք ամեն կերպ փորձում էին բացել նրա աչքերը և հետ պահել ընտանիքի և հայրենիքի նկատմամբ դավաճանություն հանդիսացող ուխտն ի կատար ածելուց:

- *Ինչի՞նչ էրթաս,*

Մելքի կնիկ խորամանկ է,

Էն մեր դուշմանի կնիկն է,

Քեզի կը խաբե:

Մ'երթա,

Քեզի տղա չկա - դու կաց քո տուն,

Աստված բալքի քեզ տըղա մի տա (Սասունցի Դավիթ, 1961), -

ասում է Ձենով Հովանը:

Գուցե դեռևս այդ պահին հանուն ընտանիքի սրբության և հայրենիքի գոյատևման արված երդման դրժումը չպատժվե՞ր Տիրոջ կողմից: Բայց Միերը չի լսում կնոջը, ինչպես նաև գուրգով հարվածում է եղբորը և գնում՝ պարզապես անհեռատես քայլը խորացնելով ընտանիքի և հայրենիքի դեմ դավաճանությամբ:

- Հովա՛ն, իմ մե՛ծ ախպեր, վե՛ր էլի, վե՛ր,

Ես հետ աստծու ուխտ եմ արեր:

Թե որ չ'երթամ՝ էդ իմ ուխտի տակ տի մեռնեմ (Սասունցի Դավիթ, 1961):

Եվ որքա՛ն քրիստոնեական է եղբորը ներած Հովանի օրհնանքը. նա տեսնում էր ապագան, գիտակցում վտանգը, բայց օրհնում է, որ եղբայրն անփորձանք լինի:

- Հոյ, հո՛յ, Մհեր, դու որ տ'երթաս՝

Չոր ճամփաներ թող քո առաջ կանաչ դառնան,

Քո թշնամու ձեռք վեր քեզի չբարձրանա (Սասունցի Դավիթ, 1961):

Այսպես է խրատում Ավետարանը. <<Այդժամ Պետրոսը, մոտենալով նրան ասաց. «Տե՛ր, եթե եղբայրս իմ դեմ մեղանչի, քանի՞ անգամ նրան ներեմ՝ մինչև յո՞թ անգամ»: Հիսուս նրան ասաց. «Քեզ չեմ ասում՝ մինչև յոթ անգամ, այլ մինչև յոթանասուն անգամ յոթ»>> (Աստվածաշունչ մատյան , 2018) :

Յոթ տարի Մըսրում մնալուց և Իսմիլ խաթունին ու Մըսրին ժառանգ պարզեցուց, ապա նոր Իսմիլի քաղաքական հեռահար նպատակներն ու նենգությունը հասկանալուց հետո միայն նա վերադառնում է Սասուն:

Եվ այնուամենայնիվ, պետք է կարևորել թեկուզ ուշացումով, բայց Մհերի պետականամետ մտածողություն ունենալու և երկրի համար պատասխանատվություն կրելու հանգամանքը. երբ Մհերը լսում է, թե ինչպե՛ս է Իսմիլ Խաթունը դեռ օրորոցում թշնամանք սերմանում իր որդու մեջ հայի նկատմամբ, հանկարծ հասկանում է, որ իր ժողովրդին ու երկրին վտանգ է սպառնում, և վերադառնում է Սասուն:

Մհերի կինը՝ Արմաղանը, ուխտ էր արել քառասուն տարի հեռու մնալ ամուսնուց: Բայց այստեղ կարևոր դեր են կատարում Ձենով Հովանը, որ իշխաններին ու վարդապետներին կանչում է խորհրդի. նրանք են համոզում Արմաղանին «երթմնակոտոր» լինել, այսինքն՝ Աստծուն տված երդումը դրժել: Նրանք առաջնորդվում են քաղաքական և ազգային առաջնահերթ շահով. Մհերից հետո Սասունը պետք է ունենար ժառանգ և պաշտպան, այլապես երկիրը՝ մեր այսօրվա ընկալմամբ՝ պետությունը, կկործանվեր: Ե՛վ Մհերը, և՛ Արմաղանը գիտակցում են, որ ուխտի խախտման համար թանկ պիտի վճարեն, և իրենք պետք

է կյանքով հատուցեն: Եվ, այնուամենայնիվ, գիտակցաբար գնում են այդ ինքնագոհաբերությանը: *«Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ. եթե ցորենի հատիկը հողի մեջ ընկնի ու չմեռնի, միայն հատիկն ինքը կմնա, իսկ եթե մեռնի, շատ արդյունք կտա: Ով սիրում է իր անձը, կորցնելու է այն, իսկ ով այս աշխարհում իր անձն ատում է, հավիտենական կյանքի համար է պահելու այն»* (Աստվածաշունչ մատյան, 2018):

Այս հանգամանքը նաև փաստում է եկեղեցու՝ երկիրը, պետությունը պահելու հայրենասիրական կարևոր դիրքորոշումը և այն հանգամանքը, որ հայ ժողովուրդը իր պատմության խորքից իր սերունդներին հորդորում է պետությունն ու եկեղեցին միասնական պահել:

Վարդապետներ ու իշխաններ ասին.

-Օրհնա՛ճ, օրենքն ի ձեռ վարդապետաց.

Քառսուն տարին բերենք անենք քառսուն ամիս,

Քառսուն ամիս բերենք անենք քառսուն շաբաթ,

Քառսուն շաբաթ բերենք անենք քառսուն օր,

Քառսուն օր էլ բերենք անենք քառսուն սհաթ:

Ծուռ տերտեր մ' էլ կար՝ ասաց.

- Քառսուն սհաթ բերենք անենք մրկա:

Վարդապետ մ' էլ պահպանի՜ մի ասաց.

Ասաց. - Աստված ձեզ թողություն շնորհե:

Էլեք, գացեք, Էդեք Էրիկ-կընկկ (Մասունցի Դավիթ, 1961):

Եվ այսպես, 40 տարին դարձրին էս սհաթ, որպեսզի *«Չը հանգչի հայու ճրագ»:* Ժողովուրդը կարևորել է նաև հայ կնոջ՝ որպես քրիստոնեական բարոյականությունը պահող, ընտանեկան արժեքները հարգող կերպարը: Արմաղանը նախազգուշացնում է, որ Միերը չգնա, որ դա հղի է վտանգներով, և Միերը խաբվելու է, բայց Միերն իր պարզամտությամբ չի լսում նրան: Միայն հետո, հասկանալով, ասում է. *«Տեսա՞ ը, իմ կընկա խոսք էլավ»* (Մասունցի Դավիթ, 1961): Սակայն երդումը դրժելու համար նրանք պետք է պատժվեին:

Միեր ասաց.—Աստված թող մեկ տըղա տա մեզ,

Էրթա Մելիքի օձիք բռնի,

Թող չը հանգչի Սասնա ճրագ,

Աստըծու գառ, գել չի՛ ուտի (Սասունցի Դավիթ, 1961):

«Սա է իմ պատվիրանը, որ սիրեք միմյանց, ինչպես ես ձեզ սիրեցի: Ոչ ոք ավելի մեծ սեր չունի, քան նա, ով իր կյանքն է տալիս իր բարեկամների համար» (Աստվածաշունչ մատյան, (2018): Կարծում եմ, որ քրիստոնեական այս հորդորի ճշմարիտ դրսևորումն է Արմաղանի խոնարհությունը՝ սեփական անձը ժողովրդի և հայրենիքի համար զոհաբերելու որոշումը: Այո, մարդը պետք է պատասխան տա իր արարքների համար՝ իր սխալների և Աստծուն տված խոստումների՝ երդումի դրժման համար, սակայն դա «ընդունելի» է, եթե կատարվում է հանուն հայրենիքի փրկության, եթե դա անձնագոհություն է, ինքնագոհաբերություն: Արմաղանը և Միերը պատժվում են երդմնազանց լինելու համար: Այն է՝ տղա ունենալուց հետո մահանում են, սակայն իրենց կյանքերով փրկագնում են հայրենիքը:

Մինչ Դավթի ծնվելը, Առյուծաձև Միերը Սասնա սարերում այգիներ է տնկում, ապա՝ *«Աստծու ստեղծած ամեն անասուններ, հավքեր մեջ էն բախչի դրեց, շուրջը պարիսպ քաշեց: Էդ տեղի անուն դրեց Ծովասար» (Սասունցի Դավիթ, 1961):*

Մեծ Միերը կառուցում է նաև եկեղեցի՝ ի նշան երախտագիտության՝ շնորհակալություն հայտնելով Աստծուն ողորմածության՝ իրեն որդի պարգևելու և Սասունը փրկելու համար:

Ծովասարեն էրկու սհաթի չափ գատն

Գնաց խորոտ վանք մի շինեց,

Վանքի անուն դրեց Մարութա բարձր Աստվածածին:

Էլավ, էտա վանքում շատ անգյալներ բերեց.

Էլավ բերեց կուրեր, էլավ բերեց կաղեր,

Կանչեց բերեց տերտեր, վարդապետներ,

Թողեց էդտեղ, էդ բան պրծավ,

Իջավ Սասնա քաղաք (Սասունցի Դավիթ, 1961):

Էական մի հանգամանք էլ նկատվում է այս հատվածում, որ քրիստոնյայի հավատքի կարևոր դրսևորումներից է՝ Միերի աստվածահաճո վարքը՝ մի կողմից՝

«տերտերներ և վարդապետներ» եկեղեցի բերելը, որպեսզի հավատքը ժողովրդի մեջ ապրի գործող եկեղեցու շնորհիվ՝ ժողովրդի փրկության առհավտյան դառնալով, մյուս կողմից՝ կույրերին ու կաղերին՝ անկյալ մարդկանց օգնելը՝ ողորմություն անելը: Սրանք ոչ միայն երախտագիտության, այլև ապաշխարության ձգտումներ են:

Աստծո ներկայությունը հայ ժողովրդի կյանքում շատ աննկատ ամենուր է դրսևորվում էպոսում, և ժողովրդի հավատքի վկայությունները բնականորեն հյուսված են ոչ միայն դուցազունների, այլև մյուս կերպարների ու ժողովրդի կյանքի իրադարձություններին, խոսքին, վարքագծին, դրանց մեկնաբանություններին...

Մեր էպոսը մարդկության ստեղծած ամենահանճարեղ գեղարվեստական գործերից է: Նրա մեջ ամփոփված գաղափարները կենսունակ են հավիտյան և բացահայտում են հայի ինքնությունը, այդ թվում՝ քրիստոնեական ինքնությունը. հայը այն ազգը չէ սոսկ, որն առաջինն է ընդունել քրիստոնեությունը, այլ այն ազգը, որ կրողն է եղել այդ արժեհամակարգի՝ քրիստոնեական բարոյականության ու գաղափարախոսության. հավատքը շաղախված է եղել ժողովրդի մտածողությանն ու կյանքին: Ահա թե ինչո՞ւ հայկական էպոսը ինքնութենական հարցերի ուսումնասիրման ավելի լայն ու խորը ուսուցման կարիք ունի արդի դպրոցում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայկական ժողովրդական էպոսը մարդկության ստեղծած ամենահանճարեղ գեղարվեստական գործերից է: Նրա մեջ ամփոփված գաղափարները կենսունակ են հավիտյան և բացահայտում են հայի ինքնությունը, այդ թվում՝ քրիստոնեական ինքնությունը. հայ ժողովուրդը կրողն է եղել քրիստոնեական բարոյականության ու գաղափարախոսության. հավատքը շաղախված է եղել ժողովրդի մտածողությանն ու կյանքին: Ուստի գոյաբանական խնդիրների լուծման հեռահար ծրագիր պետք է մշակել հայկական էպոսի ինքնութենական գաղափարների ուսումնասիրման ավելի լայն ու խոր հնարավորություն ստեղծելու համար արդի հայ դպրոցում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբեղյան Մ. (1966), Երկեր, հատ.Ա, Երևան, ԳԱ հրատ.:

2. Աստվածաշունչ մատյան (2018), թարգմ.՝ Նոր Արարատ, Երևան, ՀԱԸ:
3. Թումանյան Հ. (1995), Երկերի լիակատար ժողովածու, հատ. 7, Երևան:
4. Համբարձումյան Հ. (2018), Սասնա ծռեր. պատում, մոտիվ, գրքային ավանդույթ, Երևան, ԵՊՀ հրատ.:
5. Սասունցի Դավիթ (1961), հայկական ժող. էպոս, Երևան, Հայպետհրատ:

REFERENCES

1. Abeghyan M. (1966), Yerker, vol. A, Yerevan, GA ed.
2. Bible (2018), Nor Ararat translation, Yerevan, JSC.
3. Tumanyan H. (1995), The Complete Collection of works, Vol. 7, Yerevan.
4. Hambardzumyan H. (2018), Daredevils of Sassoun. Covering, motif, book tradition, Yerevan, YSU ed.
5. Davit of Sassoun (1961), Armenian folk epic, Yerevan, Haypethrat.

Лилит Тер-Григорян, Арус Айвазян

Отражение армянского народа как хранителя христианской системы ценностей во второй ветви армянского народного эпоса «Мец Мгер»

Заключение

Ключевые слова и выражения: армянский эпос, система христианских ценностей, христианская сущность, верующий народ, государственное мышление армянских богатырей, скрупулезное изучение сущностных черт армянского народа в школе.

Армянский эпос воплощает коллективное сознание и ценности народа, которые, преодолевая пространство и время, были очищены, чтобы сохранить только то, что истинно, ценно и присуще его идентичности. В основе этих моральных принципов лежит христианская система ценностей, которая развивалась на протяжении веков и сформировала стабильную и прочную основу. Эта система заметно отражена во всем армянском эпосе, включая его ветвь «Мец Мгер», показывая, что армянский народ, первым принявший христианство как государственную религию, был основным хранителем этих христианских верований и ценностей.

Бог в эпосе незаметно присутствует во всех областях жизни армянского народа, и свидетельства веры народа вплетены не только в канву событий жизни богатырей и различных героев и всего народа вообще, но появляются так же в их речи, в поведении и толкованиях разных событий.

Армянский эпос один из гениальнейших художественных произведений, созданных человечеством. Обобщенные в нем идеи раскрывают сущностные черты армянского народа: христианская вера была неотделимой частью его мировоззрения и миропонимания. Вот по этому для решения проблем, связанных с воспитанием национального самосознания молодого поколения, необходимо разработать специальную программу для более глубокого и разностороннего изучения армянского эпоса в современной школе.

Lilit Ter-Grigoryan, Arus Ayyvazyan

**The expression of the armenian people as the carrier of the christian value system in the
"Mets Mher" branch of the armenian folk epic**

Conclusion

Key words and expressions: *Armenian epic, Christian value system, Christian identity of Armenians, religious people, pro-state thinking of Armenian heroes, thorough examination of identity issues in school.*

The Armenian epic embodies the collective consciousness and values of the people, which, transcending space and time, have been distilled to retain only what is true, valuable, and intrinsic to their identity. At the core of these moral principles lies the Christian value system, which has evolved over centuries to form a stable and enduring foundation. This system is prominently reflected throughout the Armenian epic, including its "Mets Mher" branch, illustrating that the Armenian People, as the earliest adopters of Christianity as a state religion, were the primary custodians of these Christian beliefs and values.

In the Armenian epic, God is subtly present in all aspects of the Armenian people's lives. Their deep faith is reflected not only in the actions and events involving the heroes

and the nation as a whole but also in their speech, behavior, and interpretations of various occurrences. The Armenian epic stands as one of humanity's most brilliant artistic creations, highlighting the essential characteristics of the Armenian people. Their Christian faith is an inseparable part of their worldview and understanding of life. Therefore, to foster national self-awareness in the younger generation, it is important to develop a special program for a deeper and more comprehensive study of the Armenian epic in modern schools.

Լիլիթ Տեր-Գրիգորյան – Բանասիրական գիտ. թեկնածու, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Ա.Տեր-Գրիգորյանի անվան մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ: Գիտական հետաքրքրությունները՝ հայոց լեզու, հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, քրիստոնեական դաստիարակության հարցեր: Հեղինակ է 50 գրքերի՝ դասագրքերի, ընթերցանության գրքերի, ուսումնաօժանդակ ձեռնարկների (նախադպրոցական, դպրոցական և բուհական) և 25 հոդվածի:

tergrigoryanl@yahoo.com

Արուս Այվազյան - Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Սկզբնական կրթության ֆակուլտետի տարրական մանկավարժություն և մեթոդիկա բաժնի 4-րդ կուրսի ուսանող:

ayvazyanarus-8@aspu.am

Лилит Тер-Григорян- Доцент кафедры армянского языка и начального обучения им. Ашота Тер-Григоряна Армянского государственного педагогического университета имени Х. Абовяна, кандидат филологических наук. Научные интересы: армянский язык, начальное обучение родному языку, преподавание армянского языка в вузах, вопросы христианского обучения. Автор 50-и книг: учебников, пособий (для дошкольных учреждений, школ и вузов) и 25 статей. tergrigoryanl@yahoo.com

Արս Այվազյան - Студентка 3 курса факультета начального образования по специальности начальная педагогика и методика Армянского государственного педагогического университета имени Х. Абовяна.

ayvazyanarus-8@aspu.am

Lilit Ter-Grigoryan- candidate of philological sciences, associate professor of the chair of mother tongue and its teaching methodology named after A. Ter-Grigoryan of the Armenian State Pedagogical University named after Kh. Abovyan. Scientific interests: Armenian language, Armenian language teaching methodology, issues of Christian education. She is the author of 50 books: textbooks, reading books, educational manuals (preschool, school, and university) and 25 articles. tergrigoryanl@yahoo.com

Arus Ayvazyan - 4rd year student of the Department of Primary Pedagogy and Methodology, Faculty of Primary Education, Armenian State Pedagogical University named after Kh. Abovyan. ayvazyanarus-8@aspu.am

ԳԵՎՈՐԳ ԴԵՎՐԻԿՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v2i65.106

ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն հոդվածում քննվում է 20-րդ դարի հայ արձակի նոր շրջանի ինքնատիպ դեմքերից մեկի՝ Գևորգ Դևրիկյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը: Ակնարկային ձևով նշվում է 1960-80-ական թթ. գրողների ստեղծագործությունները՝ կարևորելով նրանց տեղն ու դերը հայ գրականության մեջ, ինչպես նաև նրանց կողքին առանձնացնելով Գևորգ Դևրիկյանի ստեղծագործության նշանակությունը: Ընդգծվում է Գ. Դևրիկյանի ստեղծագործությունների կապը հայ մշակույթի նշանավոր գործիչների հետ, ինչպես նաև պատմության գեղարվեստականացումը: Թվարկված են առաջին շրջանի ստեղծագործությունները, ակնարկներն ու վիպակները, վեպերն ու պատմավեպերը, պատմական ու երգիծական թեմաներով պատմվածքների ժողովածուները՝ նշելով նրանց տեղն ու դերը խորհրդահայ արձակի կողքին: Առանձնացված են նաև Գևորգ Դևրիկյանի պատմավեպերը, որոնք իրենց ուրույն տեղն ունեն խորհրդահայ պատմավեպերի շարքում: Այս պատմավեպերում արծարծված խնդիրներն ու հարցադրումներն ունեն այժմեական հնչեղություն ու պատկերում են մերօրյա կյանքը: Շեշտադրված է Գ. Դևրիկյանի պատմավեպերի կարևորությունը, դիդակտիկ-ուսուցողական լինելը, ինչպես նաև հայրենասիրական վառ դրսևորումները: Հոդվածում նշվում են նաև գիտահանրամատչելի ստեղծագործությունները՝ կարևորելով հեղինակի մեծ ներդրումն այս ոլորտում: Գիտահանրամատչելի ուսումնասիրություններում ու հոդվածներում նկատելի է, որ դրանք գրված են գրողի գրչով, որ ցանկացած հարցի ու երևույթի քննարկումը բուն եզրահանգումից բացի ներկայացված է գեղարվեստական ընդհանրացվածությամբ, հայոց պատմության ու մշակույթի մեծերին նվիրված դիմանկարները դառնում են գեղարվեստական գրական

կերպարներ: Կարևոր տեղ է հատկացված «Հայոց մեծերը» աշխատությանը, որը նախատեսված է հայոց պատմությամբ, գրականությամբ և մշակույթով հետաքրքրվող ընթերցողների համար: Հոդվածից անմասն չեն մնացել պատմվածքների ժողովածուները, որոնք գրված են միջնադարյան վկայությունների հիման վրա: Իր գրեթե բոլոր ստեղծագործություններում պատկերելով միջնադարյան գրիչ-ծաղկողներին՝ Գ. Դևրիկյանը նշում է, թե ինչ պայմաններում են ընդօրինակվել ու ստեղծվել միջնադարյան մագաղաթե գիրը, տալիս ու անտունին:

Բանալի բառեր և արտահայտություններ. պատմավեպ, գեղարվեստականացում, դիդակտիկ-ուսուցողական, գրիչ-ծաղկողներ, հոգևոր արժեքներ, գիտահանրամատչելի, հայոց պատմություն, միջնադար, պատմվածք, մշակույթ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն հոդվածում կիրառել ենք համակարգային, վերլուծական ու համեմատական մեթոդները:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1960-80-ական թվականներին հայ գրականությունը և մշակութային կյանքը նշանավորվում է ստեղծագործական նորանոր ձեռքբերումներով: Այս շրջանի գրական սերնդի ներկայացուցիչները հանդես եկան թեմատիկ և ժանրային նոր որոնումներով: Նրանք հեռավոր անցյալի լավագույն ավանդները կապում էին ներկայի հետ՝ ժողովրդի սոցիալական ու քաղաքական պայքարի պայծառ էջերն ի տես դարձնելու սերունդներին: Կարևորվում է հայ ժողովրդի անցյալի, կրոնական հավատալիքների, հերոսական դրվագների գեղարվեստական կերպավորումը:

«Ազգային արմատների ու նախահիմքերի գեղարվեստական մշակումները՝ ժամանակակից պատմագրության և գիտական-հետազոտական այլ ոլորտների ընձեռած նոր տվյալների ու հայտնությունների լուսարձակով, շատ բան կարող են տալ ոչ միայն ազգային կերտվածքի, ազգային հոգեբանության տիպական

հատկանիշները վերակենդանացնելու, ոչ միայն մեր հազարամյա պատմության փորձն ու դասերը ընդհանրացնելու, այլև ժողովրդյան կյանքի այսօրվա դինամիկան առավել ամբողջական գնահատելու դիտանկյունից» (Արզումանյան Ս., 1990):

Հայ ժողովրդի փառահեղ անցյալը նկարագրվում է Հայկ Խաչատրյանի ստեղծագործություններում՝ «Էրեբունի» (1968), «Տիգրան Մեծ» (1972), «Արտավազդ» (1975), «Արտաշես» (1980) պատմավեպերում, որոնցում հեղինակը մեծ տեղ է հատկացնում հայ հեթանոսական ժամանակների առասպելաբանությանը: Հայ հեթանոսական դարերի պատկերման միջոցով Հայկ Խաչատրյանին հաջողվեց կերտել հայ ժողովրդի մաքառման և գոյապայքարի փայլուն էջեր: 60-ականների գրական սերնդի ներկայացուցիչներից էր նաև Պերճ Զեյթունցյանը, որի «Արշակ Երկրորդ» վեպը (1977) նոր ձեռքբերում էր հայ պատմավիպասանության համար: Զորայր Խալափյանի «Մեռնող հառնող» վեպում (1975) ևս մեծ տեղ է հատկացվում ժողովրդական խաղերին, ավանդույթներին և ծեսերին: Վ. Գրիգորյանի համար էլ «Աղամամուր» (1984) վեպն է դառնում անցյալն արժևորելու և հայոց պատմության լավագույն էջերը ներկայացնելու միջոց: Գրեթե նույն անցյալի վերարժեքավորման գաղափարներն ենք նկատում Հովհաննես Մելքոնյանի «Քարավանը» և «Իմ Մելքոն պապը» վեպերում (1971), որոնցում հեղինակը պատկերում է եղեռնից հետո գաղթականների ճակատագիրը և համառ հայի գոյատևումն ու պայքարը: Վերոնշյալ գրողների գրեթե բոլորի ստեղծագործություններում վերարժևորվում է հայոց պատմությունը, ժողովրդական, ավանդական ծեսերն ու ավանդույթները, կրոնական հավատալիքներն ու հայոց պատմության լավագույն էջերը:

60-ականների պատմագեղարվեստական փորձը նպաստեց նաև երիտասարդ գրողների կայացմանը: Արդեն Վարդան Գրիգորյանի «Հավերժական վերադարձ» (1981), «Դար կորստյան» (1985) և Արմեն Մարտիրոսյանի «Մազե կամուրջ» (1986) վեպերը հաստատեցին անցյալի նոր մեկնաբանման և վերարժեքավորման կարևորությունն ու կապը այսօրվա իրականության հետ: Այս շրջանի գրողների հիմնախնդիրը դարձավ նորովի ներկայացնել պատմությունն ու վերարժեքավորել անցյալի փորձն ու դասերը, պատմության առեղծվածներում փնտրել այժմեական լուծումներ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նույն այս ժամանակահատվածում հանդես եկավ հայ արձակի նոր շրջանի ինքնատիպ դեմքերից մեկը՝ Գևորգ Դերիկյանը:

1969 թ. Գ. Դերիկյանը կազմում և խմբագրում է մեծ երգահանին՝ Կոմիտասին, նվիրված «Գարուն ա..» (**Դերիկյան Գ., 1969**) և «Ձոներ Թումանյանին» (**Դերիկյան Գ., 1969**) բանաստեղծությունների ժողովածուները:

Գնահատելով Գ. Դերիկյանի ստեղծագործության առանձնահատկությունները՝ արվեստաբան-քննադատ Լ. Մուրաֆյանը գրում է. «Գևորգ Դերիկյանը գրականություն չեկավ մեծ հավակնություններով, գեղարվեստական հեղափոխություններ իրականացնելու բուռն կրքով: Նա եկավ համեստ ու անաղմուկ, սակայն աստիճանաբար տեղ գրավեց մեր գրականության անվանիների շարքում և հատկապես կարևոր ձեռքբերումներ ունեցավ պատմական թեմայի արտացոլման ասպարեզում: Ու սա պատահական չէր» (**Մուրաֆյան Լ., 2002**):

Գևորգ Դերիկյանը, քաջատեղյակ լինելով միջնադարյան գրականությանը, հայ բանահյուսությանը, հայ ժողովրդի պատմությանը, դառնում է հայոց պատմության տարբեր դրվագների գեղարվեստական կերպավորողը: Պատմության խորհուրդն ընկալում է յուրովի, անցյալի հերոսական էջերում գտնում է արդիական խնդիրներ և լուծումներ: Միջնադարյան հիշատակարանների և վիմական արձանագրությունների տողերից Վիգեն Խեչումյանի նման տարբեր պատմվածքներ է գրում՝ որպես փոքր կտավի գործեր: Նաև իր երեք պատմավեպերով՝ գեղարվեստորեն մարմնավորում է պատմական երկու կարևոր դարաշրջաններ՝ հայ ժողովրդի պատմության հարյուրամյա խաղաղության 10-11-րդ դարերի միջև ընկած շրջանը և 17-րդ դարի երկրորդ կեսի ազատագրական ոգորումների տասնամյակները:

Գ. Դերիկյանի ստեղծագործությունները նվիրված են հայ ժողովրդի պատմությանն ու հայ մշակույթի նշանավոր գործիչներին, հայ բանահյուսությանն ու միջնադարյան գրականությանը և արժարժում են արդիական հնչեղություն ունեցող խնդիրներ ու տարբեր հարցեր: Հայրենասիրությամբ է ներծծված նրա ստեղծագործության ամեն դրվագ, իսկ թեմատիկան արդիականությունն է՝ անցյալի

պատմության ու ներկայի հետ տարված զուգահեռով և մերօրյա կյանքի մտահոգություններով:

1972 թվականին հրատարակում է իր առաջին գրքույկը՝ «Կոչմանը հավատարիմ» (Դերիկյան Գ., 1972) վերնագրով, ապա նույն թվականին լույս է տեսնում «Անխախտ միություն» (Դերիկյան Գ., 1972) ընդարձակ ակնարկը:

1975 թվականին լույս է տեսնում «Սրբացած հուշարձան» աշխատությունը, որտեղ հեղինակն անդրադառնում է ռուս-պարսկական պատերազմի իրադարձություններին, մայր Մոնտրեգորի և նրա ջոկատի սխրանքին, 1826-1828 թթ. դեպքերին, Օշականի ճակատամարտին, Երևանի բերդի գրավմանը: Առավել շեշտադրված է հայ կամավորականների ռուսական բանակի հետ մարտնչելը:

1977 թվականին Գ. Դերիկյանը «Ավանգարդ» թերթում Հ. Աբրահամյանի հետ հրատարակում է «Ճակատագրի ճանապարհներ» ակնարկաշարը, որն (առանձին գրքով՝ 1978 թ.) արժանանում է Հայաստանի ժուռնալիստների միության մրցանակին: Առաջին ծավալուն աշխատանքը «Վիրավոր կռունկ» վեպն է (1973), որի երկրորդ (վերամշակված) տարբերակը լույս է տեսնում 1977 թվականին: «Վիրավոր կռունկ» (1977) վեպն իր արդիական հարցադրումներով, հայկական գաղթաշխարհի փայլուն նկարագրություններով, ազգային-ազատագրական պայքարի յուրօրինակ գաղափարով, պանդուխտ հայից ազգապահպանման քարոզիչ դարձած հայի կերպարով՝ համոզվեցինք, որ այն առանձնահատուկ տեղ է զբաղեցնում խորհրդահայ վեպերի շարքում:

1980 թվականին հրատարակված «Մաքառումը» պատմական և երգիծական թեմաներով պատմվածքների ժողովածու է:

Անվիճելի է նաև Գ. Դերիկյանի ներդրումը ոչ միայն փոքր արձակի զարգացման գործում, այլև մանկական գրականության ասպարեզում: Այս ամենի վկայությունը «Մանկության տունը» (1989) պատմվածքների ժողովածուն է:

1983 թվականին Գ. Դերիկյանը հրատարակում է Անիին նվիրված եռերգության առաջին պատմավեպը՝ «Տրդատ ճարտարապետը», իսկ 1986 թ.՝ «Գոյամարտը», երրորդ վեպը՝ «Խորհուրդը մաքառմանը», դեռևս անտիպ է: Գրողի գաղափարների գեղարվեստական մարմնավորումը գտնում ենք վերոնշյալ

պատմավեպերում, որտեղ հստակ երևում է դերիկյանական ձեռագիրը:

Հայ ժողովրդի պատմության բովանդակությունն իր հարստությամբ ընկալելու տեսանկյունից կարևորվում են նաև Գևորգ Դերիկյանի ստեղծագործությունները: Շարունակելով հայ դասական պատմավեպի ավանդները՝ «Տրդատ ճարտարապետ» (1983) և «Գոյամարտ» (1986) պատմավեպերում Գ. Դերիկյանը գեղարվեստականացնում է պատմությունը՝ հավատարիմ մնալով պատմական փաստերին:

Հեղինակը կանխագգում էր սկսվող Արցախյան հերոսամարտը և իր վեպերով զգաստացման կոչ հղում սերունդներին: Գ. Դերիկյանի պատմավեպերն իրենց արդիականությունն ու հնչեղությունն ունեն իրենց հայրենասիրական բարձր ոգով, լինելության համար մղած մարտերով, ազատատենչ մղումներով ու ազգային պետական մտածելակերպի կերտման գործընթացով կարող են ճիշտ կողմնորոշել և օգնել ապագա սերունդներին՝ քարոզելով չընկրկել, պայքարել ու ստեղծել հզոր պետականություն:

«Դերիկյանը ակտիվ խառնվածք է, հաճախակի հանդես է գալիս նաև ակնարկներով, պատմվածքներով, հրապարակախոսական հոդվածներով և այլն, ցայսօր նրա հրապարակած գործերը, այնուամենայնիվ, հաստատում են վիպական ժանրերի հանդեպ գրողի առավել հակումը» (Արզումանյան Ս., 1990), - նշում է Ս. Արզումանյանը:

Գևորգ Դերիկյանի գրական ժառանգության մասն են կազմում նաև երգիծական պատմվածքները և Հայրենական մեծ պատերազմի տարիների սերնդի մանկությունը պատկերող «Երկրագունդը կլոր է» վիպակը (Դերիկյան Գ., 1985):

Մեծ է նաև Գ. Դերիկյանի ներդրումը գիտահանրամատչելի ստեղծագործություններում: Գիտահանրամատչելի ուսումնասիրություններում և հոդվածներում բուն հետազոտական աշխատանքի կողքին նկատելի է, որ դրանք գրված են գրողի գրչով, որ ցանկացած հարցի ու երևույթի քննարկումը բուն եզրահանգումից բացի ներկայացվում է գեղարվեստական ընդհանրացվածությամբ, հայոց պատմության ու մշակույթի մեծերին նվիրված դիմանկարները դառնում են գեղարվեստական գրական կերպարներ:

Գ. Դերիկյանի գիտահանրամատչելի ստեղծագործություններից տարածա-
ժամանակային և թեմատիկ ընդգրկմամբ առանձնանում է «Հայոց մեծերը» (2012)
աշխատությունը: Գիրքը նախատեսված է հայոց պատմությամբ, գրականությամբ և
մշակույթով հետաքրքրվող ընթերցողների լայն շրջանակի համար:

Պատմությունը գեղարվեստորեն ներկայացնելը Գ. Դերիկյանի
ստեղծագործության հենքն է: Նա չհասցրեց տպագրված տեսնել գիրքը, որի Ա
հատորը լույս է տեսնում մահից հետո՝ 2012 թվականին: Գրքի՝ «Հայոց մեծերը և
հայրս» նախաբանի հեղինակ Վարդան Դերիկյանը գրում է. «Գրքեր կան, որոնք
լինելով այս կամ այն հեղինակի վերջին գիրքը՝ միաժամանակ նրա անցած
ստեղծագործական կյանքի յուրօրինակ հանրագումարն են դառնում: Այդպիսին
եղավ և հորս «Հայոց մեծերը» շարքը, որն սկսելով մեր ժողովրդի հերոսական
նախահայր Հայկ Նահապետից՝ հասնում է մինչև երջանկահիշատակ Վազգեն
Առաջին՝ ընդգրկելով հայոց պատմության, մշակույթի և գրականության նշանավոր
գործիչներին և այս բնագավառի մի շարք հավաքական հասկացությունների
նվիրված 147 դիմանկար-էսսեներ» (Դերիկյան Գ., 2012):

Գրքում գետեղված գեղարվեստական ակնարկ-էսսեները նվիրված են մեր
մշակույթի առանցքը կազմող հայոց մեծերին՝ արքաներին, պատմիչներին,
հասարակական-քաղաքական գործիչներին, գրիչ-ծաղկողներին, տպագրիչներին,
անվանի ճարտարապետներին, տաղերգուներին ու բանաստեղծներին,
ուսուցչապետներին ու գրողներին, որոնց թողած հարուստ ժառանգությունը դարեր
շարունակ կրթել ու դաստիարակել է սերունդներին:

«Հայոց մեծերը» գրքում հեղինակը, վկայակոչելով հայոց պատմության
հիշարժան էջերը և հիշատակությունները, այնտեղից պեղելով բարոյականն ու
մարդկային որակները՝ հայրենասիրություն, քաջություն, անձնասիրություն և
աշխատասիրություն, գիրքը դարձնում է դաստիարակության համար կարևոր
աղբյուր: Հակադրելով օրինակելին ու խոտելին, բարին ու չարը՝ նա վեր է հանում և
մատաղ սերնդին փոխանցում հայոց պատմության ուսանելի դասերը: Գրքի
ընդհանուր գաղափարը խթանում է ազգային դաստիարակությունը,
ազատասիրության և հայրենասիրության քարոզումը:

Հայոց փառահեղ անցյալի, արքաների, նշանավոր հայ գործիչների մասին այս պատմությունները նպաստում են մեր ժողովրդի անցյալն առավել ճանաչելի դարձնելուն: Գիրքը կազմված է երկու հատորից: Արդեն տպագրված առաջին հատորը սկսվում է Հայկ Նահապետով և ավարտվում Բաֆֆիով, իսկ տպագրվելիք երկրորդ հատորի առաջին դիմանկարը նվիրված է Ղևոնդ Ալիշանին, և հատորը եզրափակվում է Վազգեն Առաջինի մասին շարադրանքով: Երկու հատորները միասին ընդգրկում են 147 դիմանկար՝ գրված գիտական վերլուծական խորքով և գեղարվեստական շնչով:

«Գևորգ Դերիկյանի «Հայոց մեծերը» գրքի Ա հատորը» հոդվածում մանրամասն վերլուծելով գրողի վերոնշյալ աշխատանքը՝ Աելիտա Դոլուխանյանը գրում է. «Հայ միջնադարի մեծերի նման Գևորգ Դերիկյանն էլ իր ժամանակակիցներին և գալիք հայ սերունդներին դեռ դպրոցական հասակից կապում է հայրենիքի հետ՝ հայրենասիրությունը համարելով մարդու գերագույն զգացմունքը» (Դոլուխանյան Ա., 2017):

Հանրամատչելի էսսե-ակնարկներին Գ. Դերիկյանն ավելացնում է գիտական հիմնավորումներ ու փաստեր՝ պատանիներին ու երիտասարդներին ներարկելով հայրենասիրական վեհ գաղափարներ, անցյալի հոգևոր բարձր արժեքներ, որոնք հացի նման անհրաժեշտ են այսօրվա երիտասարդությանը: Իրենց հերթին են սպասում գրողի թե՛ այս շարքի երկրորդ հատորը և թե՛ մի շարք այլ անտիպ գործեր:

Գևորգ Դերիկյանի տարբեր ստեղծագործություններից և հրապարակագրությունից եկող «Հայոց մեծեր» գրքում ի մի են հավաքվել մի շարք կերպարներ, արդեն որպես պատմավավերագրական շարադրանքով գրական դիմանկարներ: Գևորգ Դերիկյանի «Հայոց մեծերը» գիրքը ընդգծում է բարոյական և հոգևոր դաստիարակության անհրաժեշտությունը մարդու կյանքում, առաջադրում ազգային պատմությունն ու մշակույթը սեփական հոգում կրելու վեհ գաղափարը: Հեղինակն առաջադրում է ազգապահպանման խնդիրներ, որն այսօր ավելի քան պահանջված է և խիստ անհրաժեշտ:

Արժեքավոր է նաև Գ. Դերիկյանի «Ճակատագրի ճանապարհներ» (1978) ակնարկաշարը և «Հարգանք» (1987) գրական-հրապարակախոսական երկը: Խորհրդանշական է «Հարգանք» գրքի վերնագիրը: Գրքում տեղ գտած

հրապարակախոսական տարբեր հոդվածներով Գ. Դերիկյանն ուսուցանում է հարգել անցյալի ավանդները, ժողովրդական բոլոր այն սովորույթները, որոնք կենսունակ են, հասարակական չգրված բարոյական նորմերը և ընդհանրապես այն ամենը, ինչն ունի դաստիարակչական նշանակություն և նպաստում է սերնդեսերունդ բարոյական ավանդների փոխանցականությանը: Լայն է նաև «Հարգանքի» թեմատիկ ընդգրկումը. հայրենասիրական թեմաներից մինչև ամենօրյա կենցաղի, մարդկային բարության և ազգային սովորույթների հարցերը: Տարածաժամանակային համապատկերում գրողը պահպանում է առօրյա կյանքի բնորոշ կողմերը: Ժողովածուն սկսվում է «Հայրենասիրություն» հոդվածով, ապա շարունակվում արտաքուստ կենցաղային թվացող հարցերի արծարծմամբ, որը հատուկ խորհուրդ ունի:

«Հայրենասիրություն» հոդվածում Գ. Դերիկյանը վեր է հանում այն վեհացնող և անփոխարինելի զգացումը, որը կոչվում է հայրենիք: Ինչպես գրում է հեղինակը. «Հայրենասիրություն. սա նվիրվածությունն է հողին, լեզվին, մշակույթին, նախնիների ստեղծած-ավանդածին: Եվ այդ խորունկ ու սրբազան զգացմունքը ձգվել է դարերի միջով՝ հարստանալով մեծ սխրանքների պատմությամբ: Հայրենասիրությունը միշտ ու մշտապես եղել է մարդկային ամենաուժեղ ու ամենավսեմ զգացմունքը, որը հարստացնում է հոգին, ուժ տալիս ապրելու և պայքարելու, մարդ անհատին դարձնում քաղաքացի, խորհող ու մտածող, դարձնում հոգատար ու անհանգիստ: Եվ անհատն իր կյանքի իմաստն արդեն տեսնում է հայրենի երկրին օգտակարության մեջ» (Դերիկյան Գ., 1987):

Մեջբերելով հայրենասիրության օրինակներ Մովսես Խորենացու, Եղիշեի, Խ. Աբովյանի, Ռ. Պատկանյանի, Մ. Նալբանդյանի, Պ. Դուրյանի, Վ. Տերյանի, Հ. Պարոնյանի և այլոց ստեղծագործություններից՝ հեղինակը հավաստում է, որ հայրենասիրությունը «հպարտություն է ու սփոփանք, մե՛րթ անձնագոհության կոչ, մե՛րթ ցասումնալից ահագանգ»:

Հոդվածների սույն ժողովածուն կարևորում է նոր սերնդի հայեցի դաստիարակությունը, նպաստում է կյանքն արժևորելու և բովանդակալից դարձնելու մղմանը: Այն նաև ուսանելի օրինակ է, թե ինչպես պետք է սերնդեսերունդ փոխանցել

անցյալի ավանդները:

Գևորգ Դերիկյանի բոլոր ստեղծագործությունները՝ «Սրբացած հուշարձան» (1975), «Վիրավոր կռունկ» (1977), «Ճակատագրի ճանապարհներ» (1978) ակնարկաշարը, «Մաքառում» (1980), «Տրդատ ճարտարապետ» (1983), «Երկրագունդը կլոր է» (1985), «Գոյամարտ» (1986), «Հարգանք» (1987) (հրապարակախոսական հոդվածների ժողովածու), «Մանկության տունը» (1989), «Հայոց մեծերը» (2012) և այլն, գրված են ժամանակի հարցադրումներին համահունչ, արժարժու էն այժմեական խնդիրներ: Նրա գրեթե բոլոր և՛ գեղարվեստական ստեղծագործությունները, և՛ հրապարակախոսական հոդվածները, և՛ գիտահանրամատչելի աշխատությունները ներծծված են հայրենասիրությամբ և քարոզում են սիրել հայրենիքը անձից առավել, դառնալ օրինակելի քաղաքացի, պահել ազգային ու մայրենին, ինչպես նաև գնահատել հոգևորն ու մշակութային արժեքները:

Գևորգ Դերիկյանը հեղինակ է նաև մի պատմական պիեսի՝ «Մաքառում», որը հեռուստատեսային բեմականացման ենթարկվեց 1990 թ. և ցուցադրվեց Մոսկովյան կենտրոնական հեռուստատեսությամբ: Այն պատմում է Գլաձորի համալսարանի ուսուցչապետ և միջնադարյան ճանաչված մատենագիր Եսայի Նչեցու և նրա սաների ազգապահպան գործունեության մասին: Ահա թե ինչ է գրում Ղևոնդ Ալիշանը «Միսական» աշխատության մեջ Եսայի Նչեցու և նրա սաների մասին՝ վկայակոչելով նշանավոր ուսուցչապետին բնութագրող մի հիշատակարան՝ գրված 1318 թվականին. «... ի հրեշտակաբնակ մենաստանիս, որ կոչի Գլաձոր, զոր համարձակիմ զսա կոչել Երկրորդ Աթենք և մայրաքաղաք ամենայն իմաստից...ի վարժապետութեանս քաջ հռետորի և ամենիմաստ ֆիլիսաֆայի Եռամեծին Եսայեայ՝ ճշմարիտ պատկերի Աստուծոյ և Հոգւոյն ընդունողի, խոհեմ, հեզ և արի հոգոյն, յորում կամք դեգերեալ ի դրունս իմաստից սորա՝ բազումք աշակերտեալ բանին ճշմարտութեան» (Ալիշան Ղ. 2009):

Այն միտքն է ընդգծվում, որ միջնադարյան Հայաստանի վարդապետարանները աստվածաբանական կրթություն տալուց բացի մեծ դեր են խաղացել ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման

գործում: Ինչպես «Տրդատ ճարտարապետ» պատմավեպը, այնպես էլ այս պիեսը կառուցված է համալսարանի սաներից մեկի հոգեբանական դրամայի վրա՝ սեր և կուսակրոնության ուխտ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով՝ Գ. Դերիկյանի ստեղծագործության հիմքը դիդակտիկ արձակն է. դիդակտիկ-ուսուցողական գրականությամբ հեղինակը ընթերցողին մղում է սիրել հայրենիքը, ճանաչել ու իմաստավորել անցյալի հոգևոր արժեքները և վառ պահել մայրենին: Հայրենասիրական գաղափարները կազմում են նրա ստեղծագործության առանցքը:

Գևորգ Դերիկյանն ընթանում է պատմության քառուղիներով և որպես գրող ընտրում արդիական հնչեղություն և կյանքի հուզիչ պատկերներ ունեցող դրվագներ: Ներկայացնելով Գ. Դերիկյանի ստեղծագործության ընդհանուր պատկերը՝ անհրաժեշտ է հավելել, որ մի շարք ստեղծագործություններ, հրապարակախոսական երկեր, ինչպես նաև գիտահանրամատչելի աշխատություններ լույս են տեսել և շարունակում են լույս տեսնել գրողի անժամանակ մահվանից հետո:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ալիշան Ղ. (2009), Միսական, Երևան, «Հայագիտակ» հրատ.:
2. Արզումանյան Ս. (1990), Խորհրդահայ վեպը, գիրք 4, Երևան, Խորհրդահայ գրող հրատ.:
3. Դուլիսանյան Ա. (2017), Գևորգ Դերիկյանի <<Հայոց մեծերը>> գրքի Ա հատորը, Հայրենասիրության պատգամաբերը (հոդվածների ժողովածու), Երևան, <<Լուսակն>> հրատ., էջ 9-22:
4. Դերիկյան Գ. (1969), Գարուն ա., Երևան, Հայաստան հրատ.:
5. Դերիկյան Գ. (1969), Ձոներ Թումանյանին, Երևան, Հայաստան հրատ.:
6. Դերիկյան Գ. (1972), Կոչմանը հավատարիմ, Երևան, Հայաստան հրատ.:
7. Դերիկյան Գ. (1972), Անխախտ միություն, Երևան, Հայաստան հրատ.:

8. Դևրիկյան Գ. (1985), Երկրագունդը կլոր է, Երևան, Սովետական գրող հրատ.:
9. Դևրիկյան Գ. (2012), Հայոց մեծերը, գիրք Ա, Երևան, Գասպրինտ հրատ.:
10. Դևրիկյան Գ. (1987), Հարգանք, Երևան, Սովետական գրող հրատ.:
11. Մութաֆյան Լ. (2002), Գեղարվեստական պատմագրության մեծ նվիրյալը, «Հայաստան», ուրբաթ, հոկտեմբերի 4:

REFERENCES

1. Alishan Gh. (2009), Sisakan / Sisakan/, Yerevan, Hayagitak ed., p. 133.
2. Arzumanyan S. (1990), Xorhrdahay vepy' /The Soviet Armenian novel/, volume 4, Yerevan, Soviet Armenian writer ed., , pp. 474-475.
3. Dolukhanyan A. (2017), Gevorg Devrikyani <<Hayoc mec'ery'>> grqi A hatory', Hayrenasirowt'yan patgamabery' /The firs volume of Gevorg Devrokyan's "Great people of Armenia" book/. "A messenger of patriotism "(article journal), Yerevan, «Lusakn»., p. 9-22.
4. Devrikyan G. (1969), Garown a.Garun a., Yerevan, Armenia ed.
5. Devrikyan G. (1969), D'oner T'owmanyandin /Devotions to Tumanyan/, Yerevan, Armenia ed.
6. Devrikyan G. (1972), Kochmany' havatarim /The Power of Belief/, Yerevan, Armenia ed.
7. Devrikyan G.(1972), Anxaxt miowt'yown /Unbroken Union/, Yerevan, Armenia ed.
8. Devrikyan G. (1985), Erkragowndy' klor e' /The Earth is Round/, Yerevan, Soviet writer ed. .
9. Devrikyan G.(2012), Hayoc mec'ery' /The Great Armenian Figures/, volume A, Yerevan, Gasprint ed. p. 3.
10. Devrikyan G.(1987), Harganq /Respect/, Yerevan, Soviet writer ed. pp. 5-7.
11. Mutafyan L. (2002), Gegharvestakan patmagrowth'yan mec' nviryaly'/ The Great Devotee of Artistic Historiography/, "Armenia", Friday, October 4, p. 3.

Анна Еркянян

Творческий мир Геворга Девриkyяна

Заклyчение

Ключевые слова и выражения: исторический роман, эстетизация, обучающе-дидактический, переписчики-иллюстраторы рукописей, духовные ценности, научно-популярный, история Армении, средневековье, рассказ, культура.

В настоящей статье представлена общая характеристика творчества Геворга Девриkyяна, одной из самобытных фигур нового периода армянской прозы XX века. В статье дается обзор произведений писателей 1960-80-ых гг., указывается их место и роль в армянской литературе и выделяется значение творчества Геворга Девриkyяна. Подчеркивается связь произведений Г. Девриkyяна с выдающимися деятелями армянской культуры, а также представлена проблема эстетизации истории. Перечислены произведения первого периода творчества писателя, очерки и повести, романы и исторические романы, сборники рассказов исторической и сатирической тематики с указанием их места и роли в армянской советской прозе. Выделены также исторические романы Геворга Девриkyяна, которые занимают особое место в ряду армянских советских исторических романов. Выдвинутые в этих исторических романах проблемы имеют актуальное звучание и изображают современную жизнь. Подчеркивается важность исторических романов Г.Девриkyяна, их обучающий и дидактический характер, а также яркое проявление в них патриотизма.

В статье также рассматриваются научно-популярные произведения писателя, подчеркивая большой вклад автора в этой области. При прочтении научно-популярных произведений и статей сразу заметно, что они вышли из-под пера писателя: при рассмотрении любого вопроса и явления помимо собственно заключения здесь представлены художественные обобщения, а портреты великих деятелей армянской истории и культуры перерастают в художественные образы. Важное место отведено произведению «Великие армяне», предназначенному для читателей, интересующихся армянской историей, литературой и культурой.

В статье также рассмотрены сборники рассказов, в основу которых легли

средневековые свидетельства. Изображая почти во всех своих произведениях средневековых переписчиков и иллюстраторов рукописей, Г. Деврикян описывает условия, в которых копировались и создавались средневековые пергаментные свитки, таги (распевы) и антуни (песни бездомного).

Anna Yerkanyan

The Creative World of Gevorg Devrikyan

Conclusion

Key words and expressions: historical novel, aestheticization, educational and didactic, copyists-illustrators of manuscripts, spiritual values, popular science, the history of Armenia, the Middle Ages, story, culture.

The present article presents the general description of the creative work of Gevorg Devrikyan, one of the original figures of the new period of Armenian prose of the 20th century. The article provides an overview of the works of writers of the 1960-80s, indicates their place and role in the Armenian literature, as well as highlights the significance of the creative work of Gevorg Devrikyan. The connection between G. Devrikyan's works and outstanding figures of the Armenian culture is emphasized, and the problem of aestheticization of history is also presented. The works of the first period of the creative work of the writer, essays and stories, novels and historical novels, the collections of stories on historical and satirical themes are listed, indicating their place and role in the Armenian Soviet prose.

Gevorg Devrikyan's historical novels, which occupy a special place among the Armenian Soviet historical novels, have been also emphasized. The issues raised in these historical novels are relevant and portray the contemporary life. The importance of G. Devrikyan's historical novels, their educational and didactic nature, as well as the vivid manifestation of patriotism in them are emphasized.

The article also examines the writer's popular and scientific works, stressing the author's great contribution to this area. When reading popular and scientific works and articles, it is immediately noticeable that they came from the writer's pen: when

considering any issue or phenomenon, in addition to the conclusion itself, artistic summaries are presented here, and the portraits of great figures of the Armenian history and culture develop into artistic images. An important place is given to the work “The Great Armenian Figures”, intended for the readers being interested in the Armenian history, literature and culture.

The article also examines the collections of stories based on the medieval evidences. Depicting medieval copyists and manuscript illustrators in almost all of his works, G. Devrikian describes the conditions under which medieval parchment scrolls, tags (chants) and antunis (songs of homeless) were copied and created.

Աննա Երկանյան - Բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՊՏՀ ավագ դասախոս: Գիտական հետաքրքրությունները՝ նորագույն շրջանի հայ գրականություն: Հեղինակ է 8 գիտական հոդվածի և 1 մենագրության: annajanyerkanyan@mail.ru

Анна Ерканян – Кандидат филологических наук, старший преподаватель АГЭУ
Научные интересы: новейшая армянская литература. Автор 8 научных статей и 1 монографии. annajanyerkanyan@mail.ru

Anna Yerkanyan – PhD in Philology, senior lecturer at ASUE Scientific interests: Contemporary Armenian Literature. Author of 8 scientific papers and 1 monography. annajanyerkanyan@mail.ru

Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԳՅՈՒՂԱՇԽԱՐՀԻ ՄԱՐԴԻԿ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v2i65.107

ԱՍՓՈՓՈՒՄ

Հ. Թումանյանի ստեղծագործական ժառանգությունը հայ գրականության բացառիկ և անգնահատելի գանձերից է, որն իր մեջ ներառում է հայրենիքի անցյալի ու ներկայի գեղարվեստական ավանդույթները: Ճակատագրի հեզնանքով մեծ քնարերգուի կյանքը համընկավ հայրենիքում կատարվող հասարակական և քաղաքական չափազանց մեծ հնչեղություն ունեցող հեղափոխումների հետ, որոնք իրենց հետքը թողեցին նրա կյանքի ընթացքի վրա՝ անավարտ թողելով բանաստեղծի բազմաթիվ երազանքներ և իդեեր, սակայն նրբանկատ գրողը չընկրկեց, խոսք ու գրույցի նստեց հարազատ ժողովրդի հետ՝ դառնալով նրա վշտերի, երազանքների ու հույսերի բացառիկ թարգմանը: Նա հավատացած էր, որ ազգային բանաստեղծը կյանքը պիտի լիովին ճանաչի ու ընկալի, որպեսզի կարողանա լիովին վեր հանել ժողովրդի սրտի թրթիռները, ներկայացնել նրա փոթորկոտ հոգու ալեկոծումներն ու ելևէջները՝ հրնթացս բացահայտելով մարդկանց հոգեբանությունը: Ահա այս երեք գլխավոր խնդիրն էր նա իր առաջ դրել, որոնց հանգամանորեն անդրադարձել է նաև իր մեծածավալ բոլոր ստեղծագործություններում՝ համոզված, որ գրականությունը սոսկ կյանքը պատկերող հայելի չպետք է լինի, ժամանակը և դեպքերն ու դեմքերը արտացոլելու հետ մեկտեղ պետք է «կյանքում ստեղծել մարդու վեհ ու վսեմ, էն մաքուր ու անարատ պատկերը, որ նրան տվել է աստված, կազմված բնության ամենամաքուր տարրերից» (Թումանյան Հ., 1995): Ահա այսպիսին է կյանք-գրականություն հարաբերության թումանյանական նմբոնումը:

Հ. Թումանյանի պատկերածն ավանդույթներով հարուստ գյուղն էր, որն ինքնին դեմ էր քաղաքակրթությանը, բայց նաև դժգոհ էր մարդկանց համար ինքնատիպ ու անտես կապանքներ դարձած և իրենց դարն ապրած բարքերից ու սովորույթներից: Միանգամայն հասկանալի է բանաստեղծի մեղմ հեզնանքը, որը

շատ լավ գիտեր, որ անցյալի մասին հուշերից են ծնվում հնի ու նորի հակադրությունը, ինչն անգեն աչքով նկատելի է գյուղաշխարհին նվիրված նրա գրեթե բոլոր ստեղծագործություններում, ուր ոչ թե իդեալականացնում է իր հերոսներին, այլ հովվերգական երանգներով է ներկայացնում նրանց: Նա իր առջև խնդիր է դնում ավանդական համակարգի ու քաղաքակրթության անխուսափելի բախման մասին բարձրաձայնել, որոնք ավելի կարևոր և կենսական էին, քան՝ հնի ու հետամնացության քննադատությունը:

Բարոյական արժեքների վրա ուշադրությունը կենտրոնացնելով՝ բանաստեղծն իր ձայնը բարձրացնում էր գյուղաշխարհ ներթափանցող քաղաքակրթության ավերիչ նկրտումների դեմ, որովհետև ժամանակի ավերիչ մեքենայի արագացող ընթացքը վերացնում էր ոչ միայն իր դարն ապրածը, այլև հարվածի տակ էր դնում ավանդույթները, որն էլ ավանդական համակարգի ու քաղաքակրթության բախման դրդապատճառ էր դառնալու:

Թումանյանի հերոսների ողբերգական ճակատագրի պատճառը սոցիալական վիճակով պայմանավորված տգիտությունն է, որը բանաստեղծն արվեստի ուժով երկրորդական պլան է մղում, որովհետև նա գիտակցաբար առաջին պլան է մղում այն պայմանները, որոնք մարդկանց կործանման պատճառ են դառնում: Ինքն իրեն և մարդկանց գերազանց ճանաչող գրողը բարձր էր գնահատում մարդասիրականը՝ մնալով ընթերցողի սրտի և հոգու հետ խոսող, որը նրանից աննկատ փոխանցվում է ընթերցողին: Անկասկած, սա թումանյանական արվեստի բացառիկ ուժի վկայությունն է: Հենց այս արժանահավատ փաստն է նկատի ունեցել գրականագետ Ժ. Քալանթարյանը գրելով՝ «Թումանյանը խորապես ուսումնասիրել էր նոր գրականությունը, հայտնաբերել որոշակի օրինաչափություններ, ինչը նրան թույլ էր տալիս գիտական մոտեցում ունենալ գրական երևույթների նկատմամբ, ինչպես նաև երևույթները գնահատել ժամանակի և պատմության համատեքստում» (Քալանթարյան Ժ., 2021):

Բանալի բառեր և արտահայտություններ. բարոյական արժեքներ, գրական հերոս, խորունկ ժայռեր, սնոտիապաշտ հավատալիքներ, հարազատ լեռնաշխարհ, գիշեր, երկյուղ, բանաստեղծ, բնաշխարհ, գյուղ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեծ մարդասեր Հ. Թումանյանը գրականության զարգացման գլխավոր ակունքը համարում էր ժողովրդական ստեղծագործությունը՝ համոզված, որ գրականությունը ճշմարտացիորեն է արտացոլում ժողովրդի կյանքը, որի հոգուց էր ծնվում ու սնվում: Հենց այդ նկատառումով մարդկային ցավերի երգիչը ժողովրդի խոսքը հղկել, վերամշակել և նրան է վերադարձրել գեղարվեստական տեսքով: Բանաստեղծի համար հայրենի գյուղաշխարհը ներշնչանքի անսպառ աղբյուր էր, պատանի հասակից այնտեղ էին ձևավորվել նրա գեղագիտական սկզբունքներն ու իդեալները, այդ իսկ պատճառով հոգով և սրտով ձուլված մնաց հարազատ Լոռվա աշխարհին, որտեղից իդեալներ էր փնտրում, հերոսներ ընտրում ու անկրկնելի գեղարվեստական կերպարներ կերտում:

Ամեն ժամանակ ունի իր պատմական օրինաչափությունները, որոնք լիովին բացահայտում են ժողովրդի կյանքում և կենցաղում տեղի ունեցողը: Գրականություն մուտք գործելուն զուգահեռ՝ Թումանյանը հայ քնարերգության մեջ ու արձակում ստեղծեց իր բազմախորհուրդ աշխարհը՝ թաքնված գեղեցկությունների և շուրջբոլորը կատարվող դարակազմիկ ողբերգությունների ականա վկան ու բացահայտողը դառնալով: Բանաստեղծի խոսքի պարզությունը, մարդկանց, դեպքերի և երևույթների բնորոշումների սեղմությունն ու բացառիկ ոճը, հերոսներին և բնաշխարհը գեղարվեստորեն ներկայացնելու սկզբունքները հետագայում ուղեցույց դարձան գրողներից շատերի համար: Թումանյանական ինքնատիպ աշխարհն իր պարզ, բայց իմաստուն մարդկանցով անտեսանելի բազում թելերով կապված էր պատմությանն ու անողոք ժամանակին: Ժողովրդի ցավերով ապրող գրողին իրապես վշտացնում ու ցավ էր պատճառում այն միտքը, որ բազում խնդիրների ու հոգսերի տակ կքա՞ծ հոգնատանջ գյուղացու ցավերը ոչ թե պակասում, այլ օրեցօր ավելանում էին, որոնց մասին բարձրաձայնեց նրանց նվիրված իր ստեղծագործություններում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հոդվածը գրելիս օգտվել ենք գեղարվեստական գրականության արժևորման

քննական, համեմատական և վերլուծական մեթոդներից:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Բնաշխարհը և նրա մարդիկ

Անառարկելի է, որ Թումանյանի գրական վարպետության շնորհիվ Լոռվա անկրկնելի աշխարհը հայ գրականության մեջ մշտական գրանցում ստացավ: Բնության գողտրիկ անկյունից Բանաստեղծը քայլեց դեպի բնությանը ձուլված գրական աշխարհ, ուր մարդն ու բնությունը, մարդու կյանքը և բնության տարրերքն ամբողջական ու անբաժանելի տպավորություն են թողնում: Թերևս իմաստուն խորհուրդ կա այն բանում, որ նրա հերոսն ապրում է իր պապերի օրենքներով («Մարո»), իսկ բնությունը՝ իր ոգու տարերքով («Լոռեցի Սաքոն»): Արտաքուստ կարող է թվալ, թե գյուղաշխարհում ժամանակն ինչ-որ պահ կանգ է առել, սակայն դա խաբուսիկ զգացողություն է, որովհետև հերոսների և բնության միջև թումանյանական զուգահեռները չափազանց բնութագրական են, ինչն ավելի լիարժեք է դարձնում հայրենի երկրի բնապատկերը: Բանաստեղծը հերոսներին չի տարանջատում ժամանակի բերած նոր հարաբերություններից, ընդհակառակը, հնի ու նորի փոխհարաբերության մեջ փորձում է գտնել ոսկե միջինը՝ վեր հանելով կյանքի դրական և բացասական կողմերը՝ համոզված, որ դարերի ընթացքում ստեղծված ավանդույթներն իրենց հնարավորության սահմաններում կարգավորել են մարդկային հարաբերությունները, դարձել ապրելակերպի անբաժանելի մասնիկ, որոնք ոչ ոք իրավունք չունեն խախտել («Անուշ»): Բնականաբար օրինական հարց է ծագում, արդյո՞ք Թումանյանը հստակ նորի կողմնակիցն էր, թե՞ կառչած էր մնացել հինից: Միանշանակ է, որ նա նորի կողմնակիցն ու ջատագովն է, բայց նաև անամոք ցավ է ապրում, որ ավանդական և օրինակելի շատ բարքեր ու սովորույթներ աստիճանաբար մոռացության են մատնվում: Հենց այդ նկատառումով բացահայտում է կյանքի թաքնված ճշմարտությունը, համատարած խավարը ցրելու նպատակով հոգու լույսն է վառում անցնելիք ճանապարհին՝ համոզված, որ կյանքի ճշմարտությունը ժամանակի իրական պատկերն է, որը բացահայտում է մարդուն ներկայացնելու հետ համատեղ («Գիքորը»): Թումանյանի նպատակը եղել է կոնկրետ

իրականության և դրանում ապրող մարդու կյանքի գեղարվեստական պատկերի ստեղծումը: Կյանքի զարգացման ընթացքը վերափոխում է մարդու նկարագիրը՝ նրան հրատապ լուծում պահանջող նոր խնդիրների առաջ կանգնեցնելով: Մարդը բանաստեղծի ստեղծագործություններում երևում է ոչ միայն բնավորության գծերի, ապրումների ու մտորումների, հոգու գաղտնիքների բացահայտման շրջանակներում, այլև դրամատիկական նկարագրով, ապրած օրերի յուրահատուկ կասկածներով և վաղվա անորոշության դեմ ընդվզումով, շուրջբոլորը կատարվող անարդարությունների դեմ արդարացված բողոքով («Հառաչանք»):

Խոսելով Հովհ. Թումանյանի պոեմների առանձնահատկությունների և նրանց էպիկական ամուր հիմքի մասին՝ Էդ. Ջրբաշյանը նկատում է, որ բանաստեղծը ձգտել է ժողովրդի կյանքն ընդգրկել բանաստեղծական և ողբերգական կողմերի միասնության մեջ, ապա ավելացնում. «Նրա կերտած պատկերները մեծագույն ուժ և տարողություն են ձեռք բերում՝ խտացնելով ժողովրդի դարավոր կենսափորձն ու ներկայի էական գծերը» (**Գրական Ժանրեր, 1973**): Բանաստեղծի հերոսները հարազատ բնությունից գրեթե ոչնչով չեն տարբերվում. երբեմն լուռ ու մունջ են, խուլ և համր, երբեմն էլ բնության նման անսպասելիորեն կերպարանափոխվում են՝ անամպ երկնքում ամպրոպ ու կայծակ դառնալով: Իսկ ովքե՞ր են նրա հերոսները, գյուղաշխարհի այն մարդիկ, որոնց օգնությամբ գրողը ձև ու կերպարանք է տալիս կյանքում հասունացած և ոչ միայն իրեն մտահոգող հարցերին ու բարձրաձայնում դրանց լուծման անհրաժեշտությունը: Նրանք իրենց ժամանակի ծնունդն են և անմեղ զոհերը: Նրանից յուրաքանչյուրը մտածում է հեղինակի լեզվով, որը բանաստեղծական է իր պատկերավորությամբ և փոխաբերականությամբ, իրենց կամքից անկախ գտնվում են հոգեբանական գրեթե նույն իրադրության մեջ, բոլորն էլ նույն կենցաղն ունեն, ապրում են ոչ միայն հարազատ բնակավայրի, այլև՝ միմյանց ճակատագրերով: Նրբանկատ քնարերգուի գեղարվեստական մտածողության և բանաստեղծական երևակայության շնորհիվ մարդն ու բնությունը մշտապես լրացնում են միմյանց: Հերոսներն ինքնատիպ անհատականություններ են, ովքեր հոգեբանական տարբեր հանգամանքներում առանձնանում են արտաքինի ամենատիպական գծերով (Կարո, Մարո, Բազազ Արտեմ, Համբո,

Գիքոր) նրանք ու նրանց արտաքինը կոնկրետ ժամանակի մեջ է ներկայացվում, սակայն ժամանակի սլացքին զուգահեռ գրողի աչքի առաջ փոխվում են նրանց կեցվածքը, մտածողությունը, սովորություններն ու հոգեբանությունը:

Թումանյանի տաղանդի շնորհիվ հայրենի գյուղը, բնությունը լեզու են առնում, անձայն խոսք ու զրույցի նստում ընթերցողի հետ՝ ոչինչ չթաքցնելով նրանից, ով տեսնում է մութ ու խավար աշխարհը, որի անունը գյուղ էր՝ բանաստեղծի սուրբ հայրենիքը, որն անկրկնելի էր առաջին հերթին իր արարող ու ստեղծագործ ժողովրդով, որի տառապյալ հոգու ցավը վերծանելու հանձնառությունն էր նա ստանձնել: Խոսելով թումանյանական մոտեցման ինքնատիպության մասին, Էդ Զրբաշյանը նկատում է. «Նա նահապետական աշխարհում նկատում էր նաև դրվատանքի արժանի կողմեր, նրա մարդկանց մեջ տեսնում էր նաև գեղեցիկ, վեհ հատկանիշներ: Նա այդ իրականությանը նայում էր ոչ թե թշնամաբար, այլ հարազատ և մոտ մարդու հայացքով, որի սրտում խոր արձագանք են գտնում միջավայրի բոլոր ցավերը, որը կրքոտ հոգով որոնում է նրա վերածնման և մարդկայնացման ուղիները» (**Հախվերդյան Լ., 1966**): Նրա հերոսները պարզ, անկեղծ, անմիջական, իրենց բնաշխարհին նվիրված, հոգսերի տակ կքած ու ապագային լավատեսորեն նայող մարդիկ են, որոնք ընդհանրապես անհաղորդ են քաղաքակրթությանը և լուռ ու մունջ հաշտվում են նորի հետ: Բացառություն է թերևս միայն «Հառաչանք»-ի իմաստուն հերոսը, որի ամենաբնորոշ գիծը տարակուսանքն ու զարմանքն է շուրջբոլորը կատարվող անհասկանալի և անբացատրելի փոփոխությունների հանդեպ, որոնք ամեն քայլափոխի ու ամենուր հիմնիվեր շուռ են տալիս կեցության օրենքները: Անդրադառնալով ծերունու և երիտասարդ մտավորականի զրույցին՝ Հ. Թամրազյանը նկատում է. «Դա սովորական բնական չէ, այլ գիշերային պահի մի խորունկ, թախծալի, մինչև իսկ՝ խորհրդապաշտ նկարագրություն, որը համապատասխան մթնոլորտ և տրամադրություն է ստեղծում գալիք ծանր գործողության համար» (**Զրբաշյան Է., 1979**): Ծերունին իրեն երկրի տերն է համարում և շատ ամուր է կանգնած իր հարազատ հողին, նահապետական ավանդույթներին հավատարիմ է, չի համակերպվում կատարվող փոփոխությունների հետ ու իրավացիորեն բողոքում է.

Մեր բանն էլ, ախպեր, էսպես է եկած

Մենք լեզու չունենք – ուժեղը աստված:

Մեր հին աղաթներից ընկել ենք, զըրկվել,

Նորն էլ չըզիտենք, թե ինչ է եկել... (Թումանյան Հ., 1978),

ապա նրբանկատորեն անկեղծանում.

Ո՞վ է մեղավոր: Միտք եմ անում, միտք,

Ու չեմ հասկանում ով է մեղավոր.

Բայց իմ կարճ խելքով էնքանն եմ տեսնում-

Ապրել չի լինիլ էսպես ամեն օր: (Թումանյան Հ., 1978)

Գիշերակացի մնացած իր հյուրի հետ զրույցում ծեր այգեպանը չի թաքցնում սոցիալական և իրավական անհավասարության դեմ ընդվզումը, կյանքի անտանելի ու օրեցօր էլ ավելի ծանրացող պայմաններին, չարին ընդդիմանալու և ստեղծված իրավիճակը փոխելու անհրաժեշտությունը: Նա տազնապաճ հոգին դատարկելու և թեթևացնելու պահանջ ունի: Մուր զիշերվա նման նոթերը կիտելուց հետո մի քանի կոճղեր է դնում կրակին, ինչը հուշում է, որ զրույցը երկարատև է լինելու: Իրեն բնորոշ պարզամտությամբ խոսք է ասում ամեն մեռնողին երանի տվող, չորս քսան տարին խոր ձորերում անցկացրած ու աչքը երբեք չլիացած ծերունին՝ բացելով բոլոր փակագծերը՝ անձանոթ երիտասարդին մանրամասն ներկայացնելով, թե ինչ անտանելի վիճակում են հայտնվել գյուղն ու գյուղացին: Կանխամտածված ներկայացնելով չորսն Չատիի հետ կապված չարաբաստիկ միջադեպը, երբ վերջինս, սուտն ու կեղծիքը տանել չկարողանալով, հերքում է իրեն ներկայացված հանիրավի մեղադրանքը, թե իբր ոչխարը թաքուն թավադի հանդն է քաշել և կոպտորեն պատասխանում իր պատիվն ու արժանապատվությունը գետնով տված թավադին: Իրեն գյուղի տիրակալ կարգած թավադը ոչ միայն ծեծում է հովվին, այլև սպառնում, որ այլևս չի տեսնի Լոռվա արևը: Անմեղ Չատիին պատժից ազատելու գնացած բանագնացները թավադի մոտից գլխահակ են վերադառնում: Վերջինս ավելի բարձր է գանգատվում, որտեղից էլ եկած պաշտոնյան քննություն է կատարում ու հայտարարում, թե կատարած արարքի համար Չատին «Միբիր է գնում»: Գյուղացիները վերստին թավադի մոտ են գնում, սակայն նա այս անգամ

լպիր2 պահանջ է ներկայացնում: Ո՞վ էր խեղճ ու կրակ հովիվը, որը հավատացած էր, թե ինքն իրավացի է, ճշմարտությունն իր կողմն է, արդարությունն անպայման կհաղթանակի: Պարզվում է, որ նա իր բախտակից շատերի նման իրականությունից հեռու կանգնած անձնավորություն էր, չէր հասկանում կյանքի չգրված օրենքերը: Ամեն մեռնողի երանի տալով ապրող այգեպանն արտաքուստ հանգիստ, իսկ իրականում աստիճանաբար սաստկացող զայրույթով չի թաքցնում դժգոհությունն ու հեգնանքը իրական կյանքից.

Մինը իր կամքին՝ ինչ ասես անի,

Մյուսը խոսելու իրավունք չունի...

Բայց իմ կարճ խելքով էնքան եմ տեսնում-

Էս ո՞ր աստվածն է կարգ դրել էսպես... (Թումանյան Հ., 1978):

Հասկանալի է, որ անարդարության հետ չհաշտվող Չատին անպայման կընդվզեր, թավադից վրեժը կլուծեր, կպատժեր ստոր արարածին, որից հետո համագյուղացիներից շատերի նման դաչաղ կդառնար և սարերը կհեռանար: Ծերունու այն գիտակցությունը, որ ինքը պարտավոր է պայքարել ավանդույթների պահպանման համար, նրան չգիտակցված ինքնավստահություն է հաղորդում, ավելին, նա համառորեն հրաժարվում է համակերպվել նորին և դրան տեղ հատկացնել իր կյանքում: Ինչ-որ տեղ նաև խոցված է հերոսի ինքնասիրությունը, ով աշխարհից խռոված է ապրում և չի թաքցնում դժգոհությունը, ինչը խոսում է լեռնցու պարզության և հպարտության մասին: Արտաքուստ տպավորությունն այնպիսին է, կարծես անցյալը սեպի նման խրվել է ներկայի մեջ իբրև հուշ, զգացմունք, մտածողություն, որից անհնար է ազատվել: Առօրյա հոգսերը, խառնիխուռն զգացմունքները, մտքերն ու հույզերը, անհասկանալի իրադարձությունները ծերունուն դարձնում են իրատեսական անձնավորություն: Նա հասկանալիորեն նեղացած է կյանքից, որովհետև մարդիկ չեն հասկանում իրեն, կենդանի իրականությունն ու ժամանակը հակադրվել, խռովվել են նրա բարի սիրտն ու հոգին, ինչից բարկությունն ու զայրույթը թաքցնել չի կարողանում՝ այսպես արտահայտելով իր ընդվզումը.

Թե չէ՝ թավադ ես՝ ինչ ուզես անես,

Ես չըկարենամ քեզ մի խոսք ասել...՝

Է՛հ, մի՛ խոսեցնի, աստված կըսիրես,

Թե չէ դաշաղ կըդառնամ ես էլ... (Թումանյան Հ, 1978):

Հ. Թումանյանի պատկերածն ավանդություններով հարուստ գյուղն ինքնին դեմ էր քաղաքակրթությանը, բայց նաև իրավացիորեն դժգոհ էր իր դարն ապրած բարքերից ու սովորություններից, որոնք մարդկանց համար ինքնատիպ ու անտես կապանքներ էին դարձել: Միանգամայն հասկանալի է բանաստեղծի մեղմ հեգնանքը, որը շատ լավ գիտի, որ անցյալի մասին հուշերից են ծնվում հնի ու նորի հակադրությունը, ինչն անգե՛ն աչքով նակատելի է գյուղաշխարհին նվիրված նրա գրեթե բոլոր ստեղծագործություններում, ուր ոչ թե իդեալականացվում են հերոսները, այլ հովվերգական երանգներով են ներկայացվում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հ. Թումանյանի խոսքը ճիշտ հասկանալու և գնահատելու համար պետք է թափանցել նրա բառերի աշխարհի խորքը, հնագետի համբերությամբ պրպտել ու գտնել գրողի բուն ասելիքի իմաստը և բովանդակությունը, լիովին հասկանալ մտադրությունը, որից հետո միայն խոսք ասել ստեղծագործության մասին ու գնահատական հնչեցնել: Մեծ քնարերգուի համար իրապես ամեն բառը մի անկրկնելի աշխարհ է, որի հետ պետք է ոչ միայն չափազանց զգույշ ու լուրջ վերաբերվել, այլև ճիշտ գնահատել, իսկ եթե ստեղծագործական կայծերից ճառագող լույսը նկատեցիր, կգտնես նաև նրա իմաստուն խոսքը ճիշտ հասկանալու բանալին: Բանաստեղծը միայնության ու խավարի երգիչ չէ, նրա պերճաշուք հոգու երգն ընկալել ու հասկանալ է պետք իր իսկ ներկայացրած գրավիչ և խոսուն պատկերների օգնությամբ, որովհետև հանճարեղ բանաստեղծի խոսքը բազմիմաստ է:

Թումանյանը կարողանում է ընթերցողի երևակայությունն աննկատ տեղափոխել հայրենի եզերք՝ վարպետորեն կերտած կերպարներին զուգահեռ հայրենի բնաշխարհի գույները ներկայացնելով: Նա գրական գործունեության ընթացքում աննկատ և առանց աղմուկի ստեղծեց սեփական աշխարհը,

ինքնաարտահայտման իր ձևը, միաժամանակ իրականության բացահայտման սեփական ուղին բացեց, այդ աշխարհին իր մեջ բացահայտեց ու ընթերցողի սեղանին դրեց իր ստեղծագործական աշխարհի փակ դռների բանալին: Նա ընթերցողին հնարավորություն է ընձեռում սեփական երևակայությամբ կերտել հերոսների արտաքին պատկերները, իսկ ինքը բացառիկ վարպետությամբ, նրանց իսկ պարզ ու անմիջական բառերով, բազմակողմանիորեն բացահայտում է մարդկանց բնավորությունը, հոգեկան աշխարհը:

Ժողովրդական ոգու խորքերի բազմակողմանի և ամբողջական բացահայտմանն է միտված Թումանյանի ստեղծագործությունների բովանդակությունը և պատկերային համակարգը: Պատկերվող իրականությունը և գեղագիտական բովանդակությունը ծառայում են ժողովրդի աշխարհզգացողության բացահայտմանը, ինչի վկայությունն առաջին հերթին նրա ստեղծագործությունների քնարականությունն է, որն անգնն աչքով նկատվում և անվերապահորեն զգացվում է գեղարվեստական զանազան հնարքների օգտագործման մեջ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Գրական ժանրեր» (1973), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
2. Թումանյան Հ. (1978), Ընտիր երկեր, Երևան, «Սովետական գրող» հրատ.:
3. Թումանյան Հ. (1995), ԵԼԺ, հ.7, Երևան, ՀՀ. ԳԱԱ հրատ.:
4. Հախվերդյան Լ. (1966), «Թումանյանի աշխարհը», Երևան, «Հայաստան» հրատ.:
5. Զրբաշյան Է. (1976), «Պոետիկայի հարցեր», Երևան, «Հայաստան» հրատ.:
6. Քալանթարյան Ժ. (2021), «Ժամանակների միջով, ժամանակի հետ», Երևան, ԵՊՀ հրատ.:

REFERENCES

1. "Literary Genres" (1973), Yerevan, SSRA AS edition.
2. Tumanyan H. (1978), Y'ntir erker /Selected Works/, Yerevan, "Soviet Writer" edition.

3. **Tumanyan H. (1995)**, ELZH, no. 7, Yerevan, RA. National Academy of Sciences.
4. **Hakhverdyan L. (1966)**, «Poetikayi harcer» / “Tumanyan's world”, Yerevan, “Armenia” edition.
5. **Jrbashyan E. (1976)**, «Poetikayi harcer» / "Questions of Poetics", Yerevan, "Armenia" edition.
6. **Kalantaryan Zh. (2021)**, «Jhamanakneri mijov, jhamanaki het» / "Through the times, with time"/, Yerevan, YSU edition.

Ани Казарян

Сельский мир О. Туманяна

Заключение

Ключевые слова и выражения: моральные ценности, трагическая любовь, бездонные скалы, суеверия, родное высокогорье, ночь, страх, поэт, пейзаж, деревня.

Творческое наследие О. Туманяна – одно из уникальных и бесценных сокровищ армянской литературы, включающее в себя прошлые и настоящие художественные традиции родины. По иронии судьбы жизнь великого лирика совпала с общественно-политическими скандалами с чрезвычайно громким звучанием на его родине, которые наложили свой отпечаток на ход его жизни, оставив неосуществленными многие мечты и стремления поэта, но тактичный писатель не сдавался, говорил и беседовал с родным народом, становясь эксклюзивным переводчиком горестей, мечтаний и надежд. Он считал, что национальный поэт должен до конца знать и понимать жизнь, чтобы суметь в полной мере выявить вибрации народного сердца, представить волны и взлеты и падения их бурной души, одновременно раскрывая психологию людей. Вот три основные задачи, которые он ставил перед собой, к которым тщательно обращался во всех своих масштабных произведениях, будучи убежденным, что литература не должна быть просто зеркалом, изображающим жизнь, наряду с отражением времени, событий и лиц, она должна «творить в жизни благородный и возвышенный, чистый и непорочный образ, данный ему Богом,

составленный из чистейших элементов природы (Г. Туманян, ЭЛЖ, №7, 1995). Таково понимание Туманяном взаимосвязи жизни и литературы.

То, что изобразил О.Туманян, - это богатое традициями село, само по себе противостоящее цивилизации, но в то же время недовольное многовековыми обычаями и привычками, ставшими уникальным и невидимым заточением для людей. Совершенно понятна нежная ирония поэта, прекрасно знающего, что воспоминания о прошлом несут в себе контраст между древним и новым, который можно заметить невооруженным глазом почти во всех его произведениях, посвященных сельскому миру, где он вместо того, чтобы идеализировать своих героев, он представляет их в пасторальных оттенках.

Он ставит перед собой задачу рассказать о неизбежном конфликте между традиционным строем и цивилизацией, который был более важным и жизненным, чем критика старого и отсталости.

Акцентируя внимание на моральных ценностях, поэт поднял голос против разрушительных усилий цивилизации, проникающей в сельский мир, ведь ускорющийся ход разрушительной машины времени уничтожал не только то, что отжило свое время, но и ставил под угрозу традиции, которые будут стать причиной столкновения традиционных систем и цивилизации.

Туманян умеет незаметно перенести воображение читателя в родные края, представив краски родного пейзажа параллельно с искусно созданными персонажами.

Он незаметно, параллельно своей литературной деятельности, создавал свой мир, свой способ самовыражения, и в то же время открывал свой путь познания действительности, открывал свой мир внутри себя и вкладывал ключ к закрытым дверям мира. свой творческий мир на столе читателя, оставаясь исключительно великим поэтом лирики родного пейзажа.

Причина трагической судьбы героев Туманяна – невежество, вызванное социальной ситуацией, которую поэт силой искусства отодвигает на второй план, ибо сознательно выдвигает на первый план условия, вызывающие гибель людей.

Писатель, превосходно знающий себя и людей, высоко ценил человеческое, оставаясь доносчиком сердца и души читателя, которое незаметно передается от него к читателю. Несомненно, это свидетельство исключительной мощи туманского искусства. Литературный критик Ж. Калантарян писал: «Туманян глубоко изучал новую литературу, обнаружил определенные закономерности, которые позволили ему иметь научный подход к литературным явлениям, а также оценивать явления в контексте времени и истории» (Ж. Калантарян, 2021, с. 32).

Ani Ghazaryan

The rural world of H. Tumanyan

Conclusion

Key words and expressions: *moral values, tragic love, abyssal cliffs, superstitious beliefs, native highlands, night, fear, poet, landscape, village.*

H. Tumanyan's creative heritage is one of the unique and invaluable treasures of Armenian literature, which includes the past and present artistic traditions of the motherland. By the irony of fate, the life of the great lyricist coincided with public and political scandals with an extremely loud sound in his homeland, which left their mark on the course of his life, leaving many of the poet's dreams and aspirations unfinished, but the tactful writer did not give up, spoke and talked with his native people, becoming the exclusive translation of sorrows, dreams and hopes.

He believed that a national poet should fully know and understand life in order to be able to fully bring out the vibrations of the people's heart, present the waves and ups and downs of their stormy soul, simultaneously revealing the psychology of people. These are the three main problems he set before himself, which he carefully addressed in all his large-scale works, convinced that literature should not be just a mirror depicting life, along with reflecting time and events and faces, it should "create in life the noble and sublime, the pure and immaculate image given to him by God, composed of the purest elements of nature (H. Tumanyan, ELZH, no. 7, 1995). This is Tumanyan's understanding of the relationship between life and literature.

What H. Tumanyan depicted was the village rich with traditions, that by itself opposed to the civilization, but that was also dissatisfied with the centuries-old customs and habits that had become a unique and invisible confinement for people. One does absolutely understand the gentle irony of the poet who perfectly knows that memories of the past bear the contrast between the ancient and the new, which one can notice with the naked eye in almost all of his works devoted to the rural world, where he rather than idealizing his heroes, represents them in pastoral shades.

He sets himself a task to talk about the inevitable conflict between a traditional system and the civilization that were more important and vital than the criticism of the old and the retardation.

Focusing on moral values, the poet raised his voice against the devastating efforts of the civilization penetrating into the rural world, because the accelerating course of the destructive time machine eliminated not only what had outlived its time but also imposed a threat to the traditions that would become a cause for the collision of traditional systems and the civilization.

Tumanyan is able to imperceptibly move the reader's imagination to his native edge by presenting the colors of his native landscape in parallel with the skillfully created characters.

He created his world imperceptibly, in parallel with his literary activity, his way of self-expression, and at the same time he opened his own way of discovering the reality, discovered his world within himself, and put the key to the closed doors of his creative world on the reader's table, remaining the exceptionally great poet of the lyrics of his native landscape.

The reason for the tragic fate of Tumanyan's heroes is the ignorance caused by the social situation, which the poet pushes into the background with the power of art, because he consciously brings to the fore the conditions that cause the destruction of people. The writer, who knows himself and people excellently, highly appreciated the humane, remaining a speaker to the reader's heart and soul, which is imperceptibly transmitted from him to the reader. Undoubtedly, this is a testimony of the exceptional power of Tumanian

art.

Literary critic Zh. Kalantaryan wrote, "Tumanyan deeply studied new literature, discovered certain patterns, which allowed him to have a scientific approach to literary phenomena, as well as to evaluate phenomena in the context of time and history." (Zh. Kalantaryan, 2021, p. 32).

Անի Ղազարյան - Բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ Ավ. Իսահակյանի և Հովհ. Թումանյան գրական ժառանգությունը: Հեղինակ է 10 գիտական հոդվածների և մեկ մենագրության:

arpinanyan21@gmail.com

Ani Ghazaryan – PHD, RA NAS M. Junior researcher of the Institute of Literature named after Abeghyan. Scope of scientific interests: Av. Isahakyan and Hovh. Tumanian literary heritage. Author of 10 scientific articles and one monograph.

arpinanyan21@gmail.com

Ани Казарян – Кандидат филологических наук, НАН РА, младший научный сотрудник Института литературы им. Абега. Область научных интересов: Ав. Исаакян и Ов. Туманское литературное наследие. Автор 10 научных статей и одной монографии.

arpinanyan21@gmail.com

ՏԱԹԵՎԻԿ ՄԵՐՁԱՆՅԱՆ

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐԻ ՌԱՑԻՈՆԱԼԻՍՏԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ
ՆԱՐ-ԴՈՍԻ «ՃՇՄԱՐԻՏ ԲԱՐԵԿԱՍԱԸ», «ՔՆՔՈՒՇ ԼԱՐԵՐ», «ԶԱԶՈՒՆՅԱՆ»
ԵՐԿԵՐՈՒՄ
(ՆՎԻՐՎՈՒՄ Է ՆԱՐ-ԴՈՍԻ ՄԱՀՎԱՆ 90-ԱՄՅԱ ՏԱՐԵԼԻՑԻՆ)

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v2i65.108

ԱՄՓՈՓՈՒՄ

Ներկա հրապարակման նպատակն է նոր տեսանկյունից ուսումնասիրել ու արժևորել Նար-Դոսի խնդրո առարկա վեպերը: Գրականագիտությունը հպանցիկ է անդրադարձել դրանց և այդ երկերի վերաբերյալ սահմանափակվել է միայն գաղափարագեղարվեստական և ճանաչողական ամփոփ խոսքով: Ուշարժան է, որ Նար-Դոսի՝ սիրո թեման արծարծող գրեթե բոլոր ստեղծագործություններում ակնառու է բանականության (հավատ, կրոն, բարոյականություն, հասարակական կարծիք) և բնության (զգացողություն ու ցանկություն) բախումը: Հեղինակը հիշյալ վեպերում դիտարկում է բարոյահոգեբանական տարաբնույթ երևույթներ, ուր առանցքային են ռացիոնալիստական լուծումները: Առհասարակ մարդն ամբողջ կյանքում միշտ խուսափում է փորձությունից, սակայն փորձության առկայությունը մարդուն տալիս է ընտրության երկու հնարավորություն՝ կա՛մ հաղթահարել այն, կա՛մ կործանվել դրա ճանապարհին: Նար-Դոսը մեղավոր սիրո ալեկոծումներին տրված իր հերոսներին տանում է փորձության «հաղթահարման» դժվարին ճանապարհով, որի վերջնակետը հատկանշվում է ներաշխարհային արթնացմամբ: Այստեղ ակնհայտ է, որ մեծ արթնացումին նախորդում է փորձության հանդիպելու պարտադրանքը: Հատկանշական է, որ եթե «Ճշմարիտ բարեկամը» և «Քնքուշ լարեր» երկերում գիտակցված անձնագոհությունը վերածվում է գաղափարական լուծման, ապա «Զազունյան» վեպում այդ գիտակցված անձնագոհությունը ընկալվում է որպես ինքնագոհողություն: Անկախ սեռերի տարբերությունից՝ դրսևորվում է նույն

հոգեբանությունն ու տառապանքը. մի կողմից՝ հանկարծահաս բուռն և անդիմադրելի սեր, մյուսից՝ սիրելի ընտանիք: Ուսումնասիրության արդյունքում եզրակացվել է, որ հանկարծահաս կրքի տեսքով ի հայտ եկող և բանականությանն ու բարոյականությանը հակադրվող մեղավոր սերը, չունենալով հոգևոր և մարմնական միաձուլում, որքան էլ պայքարում է, այնուամենայնիվ տեղի է տալիս, և բանականությունը հաղթում է բնությանը:

Բանալի բառեր և արտահայտություններ. բանականություն, ներաշխարհ, հոգեբանական դրամա, պայքար, բարոյափիլիսոփայություն, մեղավոր սեր, բնագոյ, փորձություն, արթնացում:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայ ռեալիզմի հոգեբանական ուղղության այս երևելի վարպետի մահվանից անցել է 90 տարի: Այս տարիների ընթացքում սերունդները մշտապես ընթերցել են հոգեդեռտ անհատականությամբ, ստեղծագործական յուրահատուկ դիտողականությամբ և գրելառճով հատկանշվող նարդոսյան երկերը, վերապրել այդ ստեղծագործություններում դրսևորված բարդ ու ներհակ կյանքի զարգացումներն ու մարդկային ճակատագրի կսկիծները, ինչպես նաև կատարել լրջմիտ դիտարկումներ արվեստի ճշմարիտ և մնայուն այդ արժեքների վերաբերյալ:

Գրական երկնակամարում Նար-Դոսի (1867-1933) աստղը փայլեց շուրջ 45 տարի: Այս ընթացքում ստեղծվեցին այնպիսի գործեր, որոնք այսօր էլ հետաքրքրում են գրականագիտությանը և մղում ողջամիտ ուսումնասիրությունների տիրույթ:

1931 թ. հունիսի 14-ին Թիֆլիսում մեծ հանդիսավորությամբ տոնել են Նար-Դոսի գրական գործունեության 45-ամյա հոբելյանը: Ուշարժան է, որ Թիֆլիսում լույս տեսնող «Գրական արշավ» ամսագրի մի ամբողջ համար «Ջերմ ողջույն տաղանդավոր Նար-Դոսին» խորագրով նվիրվել է արձակագրի գրական գործունեության 45-ամյա տարեդարձին (**«Գրական արշավ», 1931**): Մեծարման հանդիսության ժամանակ շնորհակալության խոսքով ելույթ ունեցավ նաև Նար-Դոսը (**Նար-Դոս, 1971**):

Նար-Դոսի մահվան 90-ամյա տարելիցին նվիրված մեր համեստ խոսքով

արժևորելու ենք արձակագրի վաղ շրջանի երկերը: Դրանք, գեղարվեստական տեսանկյունից լինելով պակաս հետաքրքրաշարժ, ժամանակին քիչ հավանության են արժանացել գեղագետ հեղինակի կողմից: Նար-Դոսը 1919 թ. կազմել է մի ցուցակ, որտեղ անկեղծացել է իր ստեղծագործություններից յուրաքանչյուրի տպագրության արժանի և անարժան լինելու մասին (**Նար-Դոս, 1970**): Այդ երկերը հանգամանորեն չեն ուսումնասիրվել գրականագիտության մեջ. գրական միտքն այդ երկերի վերաբերյալ սահմանափակվել է միայն գաղափարագեղարվեստական և ճանաչողական ամփոփ խոսքով (**Հովհաննիսյան Գ., 1959, Հովսեփյան Գ., 1961, Սարգսյան Ս., 1973, Տերտերյան Ա., 1980, Սաֆարյան Վ., 2021**):

Ուշարժան է, որ Նար-Դոսը, մտնելով գրական ասպարեզ, իր գաղափարագեղարվեստական ծրագիրը և նախընտրելի հերոսներին հայտնաբերեց «Նոր-Դար» գրական-հասարակական թերթի պահպանողական բարոյափիլիսոփայության տիրույթում: Ազգապահպան գաղափարների կշեռքի մի նժարին դրված «Մշակ»-ի ազատամիտների նյութական կշռաքարը հակակշռվում էր նորդարականների հոգևոր արժեքներով (ընտանիք, կրոն, եկեղեցի, պատմություն): Վերջիններիս ընդհանրության մեջ ընդգծվում էր ընտանիքը, որը, ձևավորվելով տարբեր սեռերի միասնությունից, ամրանում էր նրանց հոգևոր կապի և մարմնական զգացողությունների ներդաշնակ դրսևորումներից:

Հաշվի առնելով Նար-Դոսի գրական վաղ շրջանի ստեղծագործություններում առկա գաղափարապաշտությունը՝ վիճելի է ակադեմիկոս Արսեն Տերտերյանի հետևյալ տեսակետը. *«Նար-Դոսը մի նուրբ և խորաթափանց գեղագետ է: Նա ստեղծագործում է առանց կանխակալ միտումների. քարոզչական որևէ նպատակ նրան չի դեկավարում այս կամ այն տիպը բնութագծելիս: Ուստի և նրա հերոսները ընդհանրապես չինձու չեն, խոսող մեքենաների դեր չեն կատարում, այլ կենդանի, ոգեշունչ արարածներ են, որոնք հուզում են մեզ՝ կամ համակրանք զարթնեցնելով մեր մեջ կամ գարշանք»* (**Տերտերյան Ա., 1980**):

Ճիշտ է, խնդրո առարկա երկերի սկզբում բնության և բանականության ներհակ «պայքարի» հաղթանակը տրվում է բնությանը, բայց Նար-Դոսը, ելնելով իր պահպանողական սկզբունքներից, վերջնական հաղթանակը շնորհում է

բանականությանը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Առաջադիր հիմնահարցի հետազոտությունը կատարվել է պատմահամեմատական, վերլուծական համադրական և հակադրական մեթոդների, ինչպես նաև բարոյահոգեբանական և կենսափիլիսոփայական սկզբունքների կիրառությամբ:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

1886թ. «Նոր-Դար»-ում Միխ-Օհան ստորագրությամբ «Նոր-Դար» թերթում տպագրված «Ճշմարիտ բարեկամը» վիպակում արձակագիրը հայ ավանդական ընտանիքում հակադրում է *«օրինավոր սերն»* ու *«հանցավոր կիրքը»* («Նոր-Դար», 1886): Ի հակադրություն Բալզակի, որի հերոսուհին, վստահ լինելով, որ *«օրինավոր սերն հաճախ ավելի ծանր է, քան հանցավոր կիրքը»*, ի վերջո ընտրում է այդ նույն *«հանցավոր կիրքը»* (Բալզակ Օ., 1992)՝ Նար-Դոսը մեզանում գեղարվեստորեն պաշտպանում է ընտանիքի պահպանման գլխավոր միջոցներից *«օրինավոր սիրո»* գաղափարը: Այս տեսանկյունից ակադեմիկոս Սերգեյ Սարինյանը իրավացիորեն նկատում է. *««Բարոյական արժեքների» ընդհանրության մեջ առանձնահատուկ ընդգծում ունեն ընտանիքը, որ մի հայտնի տեսությամբ, պետության հիմքն է, ազգի ամրության ցուցանիշը»* (Սարինյան Ս., 2008):

Մի դիպված խաթարում է քսանհինգամյա Եղիսաբեթի երջանիկ անդորրը. պատահաբար հայտնվում է նրա ամուսնու՝ Գարասիմ Զաքարյանի վաղեմի ընկերը՝ Սուրեն Արևելյանը, և կնոջ ներաշխարհում արթնացնում բնության խորտակիչ ուժը: Միրային այս եռանկյունին ընկալելի և համոզիչ կլիներ, եթե Նար-Դոսը նրբորեն չակնարկեր Եղիսաբեթի հուզաշխարհում տխրադեմ խոհերի հորդահոս ալեկոծումներով և հառաչանքներով ուղեկցվող աննկատ տեղաշարժերը, որոնք կատարվում էին նախքան Արևելյանի հայտնվելը. *«Մի անգամ միայն նրա կրծքից մի հառաչանք դուրս թռավ, այն հառաչանքներից մեկը, որ դուրս է գալիս ակամայից այն անբախտների սրտի խորքերից, որոնք կռվում են անդադար մի*

անընկճելի, սիրտը կեղեքող զգացմունքի դեմ (Նար-Դոս, 1968):

Լրջմիտ խորհրդածությունների տեղիք է տալիս այս երկի այն հատվածը, երբ Զաքարյանի՝ կնոջ տխուր տրամադրության շուրջ արված հարցումներին Եղիսաբեթը խուսափելով պատասխանում է, որ միայն գլուխն է ցավում, և ձեռքերը հետ է քաշում ամուսնուց, իսկ երբ վերջինիցս լսում է, որ այդ օրը իրենց այցելելու է Սուրեն Արևելյանը, մանկահասակ կնոջ դեմքը պայծառանում է *«Նրա (Եղիսաբեթի – Տ. Մ.) մեծ աչքերի մեջ նկատվում էր մի ինչ-որ անհամբերության փայլ, մի փոքր առաջ նրա գունատ դեմքն այժմ շառագունվել էր, իսկ կուրծքը սաստիկ բաբախումից, կարծես, ուզում էր պատռվել»* (ընդգծ. – Նար-Դոս) (Նար-Դոս, 1968):

Ազնվական երիտասարդի կեցվածքով, գեղեցիկ արտաքինով, ռոմանտիկ փնտրտուքներով հատկանշվող Սուրեն Արևելյանը Եղիսաբեթի ներաշխարհում առաջացնում է մի անձանոթ, բայց շատ դուրեկան մի զգացմունք: Եղիսաբեթի սրտում ծնված այս նոր զգացումը նրան ձգում է մի այլ աշխարհ, որը բնագոյրեն քաղցր է թվում իրեն, բայց բանականությունը հուշում է, որ այդ աշխարհին հասնելու ճանապարհը լի է ողբերգություններով: *«Մանկահասակ կնոջ»* նորահայտ այս զգացմունքը գուցե անգիտակցաբար չգարգանար, եթե Սուրեն Արևելյանն իր բնական ազնվությամբ ու անկեղծությամբ չնպաստեր այդ ամենին. *«Շնորհակալ եմ, տիկին, դուք գեղեցիկ երգում եք...»* (Նար-Դոս, 1968):

Ընտանեկան մտերմիկ հանդիպումների առաջին շրջանում Եղիսաբեթի ներաշխարհում երկբայությամբ և մտավախությամբ հատկանշվող նոր ծնված սիրո ծլարձակման՝ *«մի թե ես նրան... սիրում եմ...»* հարցադրումը շուտով վերածվում է ինքնախոստովանության. *«Այո՛, այս զգացմունքն ուրիշ ոչինչ չի կարող կոչվել, եթե ոչ միայն սեր»* (ընդգծ. – Նար-Դոս) (Նար-Դոս, 1968):

Այս խոստովանությունից հետո սկսվում է բանականության և բնության բախումը, որը Նար-Դոսը անվրեպ զարգացնում է հոգեբանական դիտողականությամբ: Եղիսաբեթը բանականությամբ գիտակցում է, որ այդ զգացմունքը վտանգավոր ու կործանարար է իր համար: Անկախ ամեն ինչից՝ մարդը չի կարող անտեսել պարտքի նախատինքով հատկանշվող իր խղճի խայթը, տառապանքի հետապնդող հալածանքը, պատիվը, առաքինությունն ու

արժանապատվությունը: Տվյալ դեպքում՝ բնության անկասելի ուժի դեմ պայքարող Եղիսաբեթը հասկանում է, որ ինքը չի ցանկանում մեղանչել իր ընտանիքի առջև. *«Ա՛խ, եթե միայն մի րոպե, մի վայրկյան ես կարողանայի սրտիս վերա իշխել և մոռանալ նրան...»* (Նար-Ղու, 1968):

Եղիսաբեթը խորապես գիտակցում է նաև իր անգործությունն այդ զգացմունքի դեմ: Կինը չի կարողանում դիմադրել Բարոյական բոլոր օրենքները մերժող բնության ուժին. անձնատուր է լինում այդ զգացմունքին և Սուրեն Արևելյանի ներկայությամբ մատնում իր թաքուն սիրո զգացմունքը. *«Մանկահասակ կինը ավելի սկսեց հեկեկալ...»*

- *Մի՞թե այսքան ժամանակ դուք ինձ չհասկացաք...»* (Նար-Ղու, 1968):

Թվում է՝ Եղիսաբեթի այս անկեղծությանը հետևելու էր Սուրեն Արևելյանի փոխադարձ խոստովանությունը, որն, իհարկե, շատ պարզունակ կդարձներ Նար-Ղուի գաղափարների լայնարձակ ընկալումները: Ճիշտ է, Նար-Ղուը փորձում էր հեռու մնալ իր բնորոշմամբ՝ *«րաֆֆիական հեքիաթաբանություններից»* (Նար-Ղու, 1970), այսինքն՝ ռոմանտիզմից, այնուամենայնիվ այս երկում հավատարիմ է մնում Բաֆֆու և հատկապես Մուրացանի իդեալապաշտությանը:

Ըստ էության՝ Արևելյանի կերպարով ամբողջանում են պատվի և բարոյականության նարդոսյան ընկալումները: Ընկերոջ դավաճանության և ընտանիքի քայքայման համապատկերում նույնիսկ բուռն ու կատարյալ թվացող սերը արժեզրկվում է: Եթե Մուրացանի Գարեգինը («Խորհրդավոր միանձնուհի») իր սերը զոհում է հանուն հայրենիքի, ապա Նար-Ղուի Սուրեն Արևելյանը՝ հանուն պատվի, որն իմաստավորվում է ընտանեկան և ընկերական հարաբերությունների ամրության, ինչպես նաև հայրենիքի փրկության և ազգային դիմագծի պահպանման գաղափարների գիտակցմամբ: Իսկ ինչ վերաբերում է Եղիսաբեթին, ապա ժամանակը դեռատի կնոջ զգացմունքների բուռն փոթորկումները հանձնում է հուշերի գանձարանին, և նա իր ընտանեկան երջանկությունը ներդաշնակում է վերադարձի հայտնությամբ, այլ խոսքով՝ դարձ է կատարվում ի շրջանս յուր:

Գաղափարաբովանդակային նույն ընդհանրությամբ և հոգեբանական ավելի բարդ հանգույցների ռացիոնալիստական լուծումներով է հատկանշվում Նար-

Դոսի՝ այս հիմնահարցի շուրջ ուսումնասիրվող «Քնքուշ լարեր» (1887) վեպը: Կանացի հմայիչ, առինքնող և անդիմադրելի գեղեցկությամբ հատկանշվող, բարոյական օրենքները արհամարհող իշխանուհի Սոֆիային Նար-Դոսը հակադրում է նրա վաղեմի ընկերուհուն՝ արտաքնապես քիչ աչքի ընկնող, նիհար, չափավոր երջանկության վայելքներով ապրող, բարոյական օրենքները կրող ու ընտանեկան սրբությունը խստագույնս կարևորող Նունեին: Տարիների բաժանումից հետո մշտական հանդիպումների ընթացքում նրանք ջերմ սիրով էին վերհիշում անցած օրերի հոգեթով հուշերը:

Սոֆիան սովոր էր ընտրողի աչքով նայել երկրպագուներին և նրան խորթ էր իր գեղեցկության դեմ որևէ տղամարդու ամուր կամքն ու վեհանձն պահվածքը: Ընկերուհու ընտանիք կատարած մշտական այցելությունների ընթացքում իշխանուհու ներաշխարհում ակամա արթնանում է կանացի բնագոյը, որը հետաքրքրասիրության մի անսովոր մղումով ավելի է սաստկանում, երբ բախվում է Ստեփանոս Հարունյանի առնականությանը, իմաստությանն ու անմատչելիությանը: Հարունյանի՝ զգաստ բանականությամբ բնորոշվող տեսակը չէր գրանցվել Սոֆիայի արկածային կենսագրության էջերում: Հարունյանը հակասեռերի հարաբերության փիլիսոփայական զարգացման մեջ բացառում է կամագուրկ ենթակայությունը: Պահպանողական տղամարդու համոզմամբ՝ կնոջ *«կատարյալ ազատությունը»* վերածվել է *«կատարյալ ապականման և անբարոյականության»*, մինչդեռ *«լուսավորության և լուրջ մտածության դարը»* բոլորովին այլ ձգտումներ ունի (Նար-Դոս, 1968):

Նար-Դոսը «Քնքուշ լարեր» վեպը կառուցել է առանձին վերնագրերի տրոհված հատվածներից: Հատկանշական է, որ արձակագիրը Սոֆիայի ներաշխարհի տազնապախտով ալեկոծումներն ու ներհակ պայքարը գեղարվեստականացրել է «Նոր Շամիրամ» հատվածում: Իշխանուհին, վերանայելով իր անցյալը, փորձում է հասկանալ նախընթաց կրքերի փոթորիկների և սիրո զգացմունքի անադատության միջև եղած տարբերությունը: Հարունյանի վեհանձն պահվածքը նրան նետում է ոգեղեն սիրո դաշտ, որն ավելի է խորացնում նրա տառապանքը: Իրարամերժ մտորումները խախտում են Սոֆիայի հավասարակշռությունը:

«Միննույն ժամանակ նա (Սոֆիան – Տ. Մ.) պատրաստ էր և՛ խմել նրա արյունը, և՛ գրկել, համբուրել նրա ոտները...» (Նաբ-Դոս, 1968):

Այրական բնագոյներին քաջատեղյակ Սոֆիան հասկացել էր, որ Ստեփանոս Հարունյանը, որքան էլ հավատարիմ լինի *«ամուսնական սուրբ ուխտին»*, զերծ չի կարող մնալ բնության ուժի ազդեցությունից, և կինը վճռում է հանդուգն քայլով կոտրել Հարունյանի համառությունը: Սոֆիան կանացի բնագոյով ճիշտ էր զգացել երկուստեք սրվել էր դրաման: Հարունյանը նույնպես հայտնվել է ներհակ ուժերի պայքարի կիզակետում և մենության խոհերի անկեղծության պահին հասկանում է, որ *«մարդկային բոլոր կրքերով, բոլոր ցանկություններով»* կերտված ադամորդին չի կարող պայքարել բնության *«անշեղ օրենքի»* դեմ և եզրակացնում, որ դա *«իզո՛ւր, դոն-քիշոտական պատերազմ»* է հիշեցնում (Նաբ-Դոս, 1968):

Թեև իշխանուհի Սոֆիայի հետ հանդիպման ժամանակ բնության անդիմադրելի ուժը մի պահ հպատակեցնում է Հարունյանի այրական կամքը, և նրանք համբուրվում են, այնուամենայնիվ տղամարդը, գիտակցելով իր արարքի ծանր հետևանքները, կանխում է վերահաս աղետը:

Բանականության հաղթանակի վերոհիշյալ գաղափարները գրեթե նույնությամբ արծարծվում են նաև Նաբ-Դոսի «Զազունյան» (1890) վեպում: *Գրեթե* ասելով՝ նկատի ունենք գեղարվեստական այն ընդհանրությունը, որն աղերսվում է հոգեբանական դրամային: Ի տարբերություն նախորդ երկու ստեղծագործությունների՝ այս վեպում անակնկալ հանդիպումը, մեծ հրդեհի սպառնալիքով հատկանշվող սիրո կայծը, մարդկային ճակատագրերի սուր բախումներն ու ներաշխարհների ավերումները վերջավորվում են հոգեբանական դաժան ու անխուսափելի ողբերգություններով:

Բժիշկ Զաքար Մարկոսյանի վաղեմի ընկերը՝ Արսեն Զազունյանն իր արտաքին կեցվածքով և դատողությունների ողջախոհությամբ լուրջ ազդեցություն է թողնում Մարկոսյանի կնոջ՝ Էմմայի հուզաշխարհում: Մարկոսյանն ու Զազունյանը հակապատկերներ էին: Վերջինիս խոհուն և անթափանցելի հայացքը, խորհրդավոր ժպիտը, գրավիչ ձայնը, մետաֆիզիկական և բնաշխարհիկ հասկացությունների մասին բարոյափիլիսոփայական գաղափարներով համեմված

ընդարձակ դատողությունները, նորություն լինելով Էմմայի համար, նորովի էին իմաստավորում կնոջ զգացմունքների և խոհերի աշխարհը՝ արթնացնելով տարերային զգացողություններ:

Շոպենհաուերի և Հարթմանի հոռետեսական փիլիսոփայության համապատկերում ուշարժան են Ջագունյանի գիտակցական դատողությունները և վերաբերմունքը կյանքի ու մարդկանց հանդեպ: Նա ոչ թե շարունակում է շոպենհաուերյան հոռետեսական փիլիսոփայությունը, այլ հոգեբանորեն մեկուսանալով՝ փորձում է ներդաշնակ հարաբերություններ հաստատել մարդկանց հետ. *«Մարդիկ միայն բարի են ծնվում, իսկ չար – երբեք: Չարը բնական օրենք չէ, այլ սոցիալական անարդար կարգերի հետևանք»* (Նաթ-Դոս, 1968):

Նաթ-Դոսը, տուրք տալով իր գաղափարապաշտությանը և պահպանողականությանը, դեպքերի սրընթաց զարգացումը միջնորդում է Ջագորսկու և Աննայի կերպարներով, որոնք, վեպում մնալով անկատար, միջոց են դարձել Ջագունյանին և Էմմային բնութագրելու և դարձի բերելու համար: Աննան, ամեն կերպ առաջ քաշելով գիտակցության և բարոյականության կարևորությունը, ինչպես նաև ընտանիքի սրբության գաղափարը, փորձում է հետ պահել Էմմային այն կործանումից, որը նրան բերելու էր *«թափառական և բախտախնդիր սրիկա»* Ջագունյանի նկատմամբ ունեցած մեղավոր սերը (Նաթ-Դոս, 1968):

Վեպի գաղափարաբանությունը բացահայտվում է Ջագորսկու և Ջագունյանի հանդիպման դրվագով: Զինվորական Ջագորսկին Ջագունյանին է հանձնում նրա նախկին կնոջ նամակը: Ջագունյանը խորապես հասկանում է կնոջ՝ ապօրինի և հպանցիկ սիրո ալեկոծումների դրդապատճառը, Ջագորսկու հետ հեռացումը, այդ անդառնալի քայլի աղետալի հետևանքների գիտակցումը, զղջումն ու հոգեբանական ծանր տառապանքներով ուղեկցվող ողբերգական վախճանը: *«Մոլորված կինը խղճի տանջանքների տակ՝ վերջին անգամ դարձյալ դեպի նա է դառնում – դեպի իր ամուսինը և մահվան անկողնում պարզելով նրան իր դողդոջուն ձեռքերը, ներումն է հայցում»* (Նաթ-Դոս, 1968):

Վախճանված կնոջ նամակը, արթնացնելով Ջագունյանի խիղճը, գաղափարապես վերափոխում է նրան և բարոյապես փրկում ուրիշի

դժբախտության վրա սեփական երջանկությունը կառուցելու անկումից և փոխարենը մղում մեկ այլ՝ ոչ պակաս բարոյական անկման՝ ինքնասպանության: Ինքնասպանությունից առաջ Զագունյանը Էմմային մի նամակ է ուղարկում, որի մեկ նախադասությունն ընդհանրացնում է Նար-Դոսի այս շրջանի երկերի գաղափարական բովանդակությունը. «Ես ավելի լավ համարեցի ինձ զոհել ուրիշի համար, քան թե ուրիշին ինձ համար: Էմմա իմացիր, ես սերս չեմ զոհում, այլ - ինձ» (Նար-Դոս, 1968):

Ընդհանրացնելով կարելի է ասել, որ Նար-Դոսի խնդրո առարկա երկերում առկա հոգեբանական ստվերոտ հանգույցները հատկանշվում են ռացիոնալիստական լուծումներով: Կերպարները հանուն իրենց արդեն կայացած ընտանիքի բարօրության, անձնագոհությամբ կանխում են վերահաս աղետը, այլ խոսքով՝ բանականությունը հաղթում է, և կատարվում է հոգևոր մաքրագործում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պատմահամեմատական, վերլուծական, համադրական և հակադրական մեթոդների, ինչպես նաև բարոյահոգեբանական և կենսափիլիսոփայական սկզբունքների կիրառությամբ առաջադրված հիմնախնդրի ուսումնասիրության ընթացքում եկել ենք հետևյալ եզրակացությունների.

1. Նար-Դոսի ընկալմամբ՝ հայ ընտանիքի պահպանման միակ փրկությունը անխառն բարոյականության ու ողջամիտ բանականության գերակայությունն է, որը, հակադրվելով ապագգային դրսևորումներին, արտահայտվում է բացառապես ազգային գաղափարախոսության դիրքերից:

2. Արձակագրի պահպանողական ընկալումների համաձայն՝ մարդու պատիվն ու բարոյականությունը, հայրենիքի փրկության և ազգային դիմագծի պահպանման հիմնահարցերը դրսևորվում են ընտանեկան և ընկերական հարաբերությունների ամրությամբ և կայունությամբ:

3. Ճիշտ է, հանկարծահաս կիրքը մի պահ հպատակեցնում է կանացի և տղամարդկային կամքը, հանգեցնում որոշ մեղանչումների, բայց նարդոսյան

գաղափարակիր կերպարները, գիտակցելով ընտանեկան հարաբերությունների բարօրությունը, անձնագոհությամբ կանխում վերահաս աղետը:

4. Մեղավոր սիրո ալեկոծումներին տրված նարդոսյան հերոսներն անցնում են ներաշխարհային մաքրագործմամբ և հոգևոր արթնացմամբ դիտարժան փորձության *«հաղթահարման»* դժվարընթաց ճանապարհով: Այստեղ ակնհայտ է, որ ներաշխարհային արթնացմանը նախորդել էր փորձության հանդիպելու պարտադրանքը: Ուրիշ խոսքով՝ առանց փորձության չի կարող լինել հոգևոր արթնացում:

5. Ի հակադրություն ռոմանտիզմի այն սկզբունքին, ըստ որի՝ անհատն է ձևավորում հասարակությունը՝ Նար-Դոսը ռեալիզմի դիտակետից ամփոփ գեղարվեստականացմամբ արձանագրում է հասարակության ձևավորած անհատի բարոյական անկումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բալզակ Օ. (1992), Երեսնամյա կինը, Շագրենի կաշին, Վեպեր, Երևան, Նաիրի հրատ.:
2. Հովհաննիսյան Գ. (1959), Նար-Դոս, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ.:
3. Հովսեփյան Գ. (1961), Նար-Դոս, Երևան, Հայպետհրատ.:
4. Նար-Դոս (1968), Երկերի ժողովածու հինգ հատորով, հ. 1, Երևան, Հայաստան հրատ.:
5. Նար-Դոս (1968), Երկերի ժողովածու հինգ հատորով, հ. 2, Երևան, Հայաստան հրատ.:
6. Նար-Դոս (1968), Երկերի ժողովածու հինգ հատորով, հ. 3, Երևան, Հայաստան հրատ.:
7. Նար-Դոս (1971), Երկերի ժողովածու հինգ հատորով, հ. 5, Երևան, Հայաստան հրատ.:
8. Սարգսյան Ս. (1973), Նար-Դոս, Երևան, Հայաստան հրատ.:
9. Սարինյան Ս. (2008), Փիլիսոփայական հոսքը Նար-Դոսի գեղարվեստում, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, թիվ 2, էջ 11:

10. Սաֆարյան Վ. (2021), Գրողի և կերպարի անհատականությունը (Մուրացան. Նար-Դոս), Երևան, ԵՊՀ հրատ.:
11. Տերտերյան Ա. (1980), Երկեր, Երևան, Երևանի համալսարանի հրատ.:

ԱՄՍԱԳՐԵՐ

1. «Գրական արշավ» (1931), Թիֆլիս, թիվ 10-11, հունիս:
2. «Նոր-Ղար» (1886), Թիֆլիս, թիվ 31-35 համարները:
3. «Պատմա-բանասիրական հանդես» (2008), Երևան, թիվ 2:

REFERENCES

1. Balzac O. (1992), *Eresnamya kiny', Shagreni kashin /The Thirty Year Old Woman, The Skin of Shagreen/, Novells, Yerevan, Nairi Publishing House.*
2. Hovhannisyan G. (1959), *Nar-Dos /Nar-Dos/, Yerevan, Armenian SSR Publishing House.*
3. Hovsepyan G. (1961), *Nar-Dos /Nar-Dos/, Yerevan, Haypethrat.*
4. Nar-Dos (1968), *Erkeri jhoghovac'ow hing hatorov /Collection of Works in five volumes/, no. 1, Yerevan, Armenia Publishing House.*
5. Nar-Dos (1968), *Erkeri jhoghovac'ow hing hatorov /Collection of Works in five volumes/, vol. 2, Yerevan, Armenia Publishing House.*
6. Nar-Dos (1968), *Erkeri jhoghovac'ow hing hatorov /Collection of Works in five volumes/, no. 3, Yerevan, Armenia Publishing House.*
7. Nar-Dos (1971), *Erkeri jhoghovac'ow hing hatorov /Collection of Works in five volumes/, no. 5, Yerevan, Armenia Publishing House.*
8. Sargsyan S. (1973), *Nar-Dos /Nar-Dos/, Yerevan, Armenia Publishing House.*
9. Sarinyan S. (2008), *P'ilisop'ayakan hosqy' Nar-Dosi gegharvestowm /Philosophical Stream in Nar-Dos' Aesthetics/, [Historical-Philological Journal](#), Yerevan, N 2:*
10. Safaryan V. (2021), *Groghi & kerpari anhatakanowt'yowny' (Mowracan. Nar-Dos) /The personality of the writer and character (Muratsan: Nar-Dos)/, Yerevan, YSU Publishing House.*

11. Terteryan A. (1980), **Erker /Creations/, Yerevan, Yerevan University Publishing House.**

MAGAZINES

1. "Grakan arshav" /"Literary Campaign"/ (1931), Tiflis, No. 10-11, June.
2. "Nor-Dar" (1886), Tiflis, numbers 31-35.
3. "Patma-banasirakan han-des" /"Historical-philological conference"/ (2008), Yerevan, No. 2.

Татевик Мерджанян

Рациональные решения психологических проблем в сочинениях Нар-Доса

«Верный друг», «Изысканные струны», «Зазунян»

(Посвящается 90-летию смерти Нар-Доса)

Заключение

***Ключевые слова и выражения:** интеллект, внутренний мир, психологическая драма, борьба, моральная философия, грешная любовь, инстинкт, испытание, пробуждение.*

Цель настоящей публикации – изучить и оценить рассматриваемые романы Нар-Доса с новой точки зрения. Литературоведение затронуло их кратко и ограничилось лишь идейно-художественным и познавательным изложением. Очевидно, что почти во всех произведениях Нар-Доса, посвященных теме любви, выделяется конфликт между разумом (верой, религией, моралью, общественным мнением) и природой (чувством и желанием). В упомянутых романах автор рассматривает различные морально-психологические явления, ключевыми из которых являются рационалистические решения. Вообще человек всегда избегает испытания на протяжении всей своей жизни, но наличие испытания дает человеку два выбора: либо преодолеть его, либо погибнуть на своем пути. Нар-Дос ведет своих героев, отданных волнам греховной любви, на трудный путь «преодоления» испытания, конечная точка которого знаменуется внутренним пробуждением. Здесь очевидно, что великому пробуждению предшествует необходимость пройти испытание. Примечательно, что если в произведениях «Верный друг» и «Изысканные струны» сознательное

самопожертвование превращается в идеологическое решение, то в романе «Зазунян» это сознательное самопожертвование воспринимается как самопожертвование. Независимо от гендерной разницы проявляется одна и та же психология и страдания: с одной стороны – внезапная сильная и неодолимая любовь, с другой – любимая семья. В результате исследования был сделан вывод, что грешная любовь, проявляющаяся в виде внезапной страсти и противостоящая разуму и нравственности, не имея духовного и телесного слияния, сколько бы она ни боролась, все равно уступает, и разум побеждает природу.

Tatevik Merjanyan

**The Rationalist Solutions of Psychological Complexities
in the Works "True Friend", "Dainty Strings", "Zazunyan" by Nar-Dos
(Dedicated to the 90th Anniversary of the Death of Nar-Dos)**

Conclusion

***Key words and expressions:** intelligence, inner world, psychological drama, struggle, moral philosophy, conflicted love, instinct, temptation, awakening.*

The aim of this publication is to provide a fresh perspective on the analysis and evaluation of Nar-Dos's aforementioned novels. Previous literary critiques have often skimmed the surface, offering only ideological and cognitive summaries. Notably, all of Nar-Dos' works dealing with the theme of love, the conflict between reason (faith, religion, morality, public opinion) and nature (feeling and desire) is prominent. In these novels, the author delves into various moral and psychological phenomena where rationalist solutions play a pivotal role. In general, a person always avoids a test throughout his life, but the presence of a test gives a person two choices: either to overcome it, or to perish on its way. Nar-Dos leads his heroes, given to the waves of sinful love, on a difficult path of "overcoming" the test, the end point of which is marked by an inner awakening. Here it is evident that the great awakening is preceded by the compulsion to meet the test. It is noteworthy that if in the works "True Friend" and "Dainty Strings" conscious self-sacrifice turns into an ideological solution, then in the novel "Zazunyan" this conscious self-sacrifice is perceived as self-sacrifice. Regardless of the gender difference, the same psychology and

suffering is manifested. on the one hand - a sudden intense and irresistible love, on the other - a beloved family. Through this examination, it becomes evident that sinful love, arising as sudden passion and challenging reason and morality, cannot prevail without both spiritual and physical fusion. Regardless of its tenacity, it ultimately yields to reason, demonstrating the triumph of intellect over primal instincts.

Տաթևիկ Մերջանյան – Երևանի պետական համալսարան, հայ բանասիրության ֆակուլտետի՝ ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի ասիստենտ, բանասիրական գիտությունների թեկնածու: Գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ հայ նոր (արևելահայ և արևմտահայ) գրականություն, նորավիպագրություն, հայ և համաշխարհային գրական աղբյուրներ և առնչություններ: Տպագրել է գիտական շուրջ երկու տասնյակ հոդվածներ և հրատարակել է մեկ մենագրություն:

ORCID ID՝ 0009-0006-8672-4369, tatjanyan@mail.ru

Tatevik Merjanyan - Candidate of Philological Sciences, Lecturer, Assistant Professor at the Armenian Philology Faculty of Yerevan State University (YSU), Chair of Armenian Literature History and Literary Theory named after Academician Hrant Tamrazyan. The range of scientific interests includes new Armenian (Eastern Armenian and Western Armenian) literature, History of the Novelette, Armenian and world literary connections and relations. She published around twenty scientific articles and published one monograph.

ORCID ID: 0009-0006-8672-4369, tatjanyan@mail.ru

Татевик Мерджанян – Кандидат филологических наук, преподаватель, ассистент факультета армянской филологии ЕГУ, кафедра истории армянской литературы и теории литературы имени академика Гранта Тамразяна. Круг научных интересов включает новую армянскую (восточноармянскую и западноармянскую) литературу, историю новеллы, армянские и мировые литературные связи и отношения. Опубликовала около двадцати научных статей и опубликовала одну монографию.

ORCID ID: 0009-0006-8672-4369, tatjanyan@mail.ru

ՊԱՏԿԵՐԱՆՇԱՆԻ ԳԱՂԱՓԱՐԱԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ
ԷԴՈՒԱՐԴ ՀԱՐԵՆՑԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v2i65.109

ԱՄՓՈՓՈՒՄ

Որպես բանաստեղծության պատկերավորման կառուցվածքի բաղադրիչ տարր՝ խորհրդանիշը պատկերի հետ միասին դառնում են պատկերանշան, կազմում տեքստի նշանային ու խորհրդանշական համակարգը, ձևավորում գեղարվեստական համակարգի միասնականությունը: Բառի իմաստաբովանդակային գործառնությունների վերափոխումը պատկերանշանի և դրա՝ որպես պատկերավորման միջոցի կիրառումը, հատուկ է Է. Հարենցի մի շարք բանաստեղծություններին:

Պատկերանշանների միջոցով գեղարվեստական խոհը ծածկագրելու հիմնական առանձնահատկությունն այդօրինակ ծածկագրերի երկորակ հատուկ բնույթի մեջ է, որը կապված է միաժամանակ թե՛ գեղարվեստական իրավիճակին, թե՛ պատկերանշանին, բառ-պատկերի ենթատեքստում պահված խոհական մթնոլորտին, ինչը հանգեցնում է նշյալ առանձնահատկությամբ բնորոշվող միջտեքստային փոխազդեցության արդյունքում ձևավորվող իմաստային բարդության և իմաստային, այսպես ասած, խառնորակության:

Ընդհանուր առմամբ դժվար է ճշգրտորեն որոշել ու սահմանել որևէ պատկերանշանի հայտնության ողջ նախադրյալներն ու նախահիմքերը, քանի որ դրանց մշակութաբանական առնչությունները միջնորդավորվում են ինչպես գրապատմական, այնպես էլ հեղինակային բազում իրադրություններով, որոնք ամբողջացնում են, վերացարկում ու ընդհանրացնում: Հետևապես, պատկերանշանի վերծանումը հարկ է դիտել դրանք իրենց մեջ կրող կոնկրետ բանաստեղծական համակառույցի ակունքներում, փիլիսոփայական

հեռապատկերի վրա:

Հոդվածի ուսումնասիրության օբյեկտը պատկերանշանն է և դրա գործառության առանձնահատկությունը է. Հարենցի պոեզիայում:

Հոդվածի գիտական նորույթը պայմանավորված է օբյեկտի ընտրությամբ. սույն հոդվածն այս առումով, որպես տեսական-գրականագիտական ուսումնասիրություն, առաջին փորձն է:

Հոդվածի տեսական արժեքն այն է, որ հետազոտությունը թույլ է տալիս է. Հարենցի բանաստեղծական տեքստերի օրինակով անդրադառնալ պատկերանշաններով օժտված պատկերատեքստ հասկացության տեսական հիմքերին, դիտարկել բանաստեղծական տեքստում դրանց կիրառության տեսական դրույթները, ինչպես նաև պատկերատեքստն ընդունելով որպես նախադեպային տեսողական երևույթ, որը ներմուծվելով բանաստեղծական համակառույց, այն օժտում է միջտեքստային որակներով:

***Բանալի բառեր և արտահայտություններ.** պատկերատեքստ, խառնատեքստ, պատկերանշան, նշանագիտություն, պոեզիա, գեղարվեստական տեքստ, միջտեքստայնություն, մշակույթ, գեղարվեստական ոճ, պատկերավորություն:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Պատկերավոր մտածողությունն ընդհանուր առմամբ մշտապես ունենում է արդիականացված ընդգծված շրջափուլեր, որոնք համընկնում են բանաստեղծության զարգացման շրջադարձային ժամանակներին: Պոեզիայում պատկերավորման միջոցներից առավել քիչ տարածվածը թերևս պատկերանշանն է, երբ որևէ բառը, երևույթը կամ արտահայտությունը կիրառվում է այնպիսի առարկաների, երևույթների կամ հատկանիշների առնչությամբ, որոնք չեն գործածվում ուղղակիորեն, այլ հենվում են բառի, առարկայի կամ երևույթի հատկանիշն իր մեջ կրող պատկերանշանի վրա: Բառը, ունենալով իր հիմնական կայուն իմաստը, տեքստի մեջ կարող է գործածվել նաև պատկերանշանի տեսքով, որը, սակայն, երբեմն տեքստակերտման իմաստաբանական բարդ գործընթացի արդյունքում ձեռք է բերում իմաստային նոր շերտեր: Պատկերանշանի ձևավորման

առանցքային ուղին բառի անցումն է սեփական իմաստային պարունակից այլ՝ պատկերանշանային ոլորտի:—

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Որպես տեքստի վերլուծության մեթոդներ՝ ընտրվել են համատեքստային, տիպաբանական, լեզվաոճական հերմենևտիկական ու կառուցվածքային-գործառության վերլուծության մեթոդները: —

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Չնայած այն իրողությանը, որ նշանագիտական (սեմիոտիկական) բարդ, անհամասեռ կառուցվածքային տարրերով արարված տեքստերի նկատմամբ հատուկ հետաքրքրություն է նկատվել դեռևս քսաներորդ դարակեսերին, և «պատկերատեքստ» հասկացությունն այս կամ այն կերպ տեքստապատկերային համակարգերի առանձնահատկությունները բնութագրելու նպատակով կիրառվում է արդի գրականագիտության մեջ, այնուամենայնիվ, արդի գրականագիտության մեջ չկա այստեսակ բանաստեղծական տեքստերի տիպաբանության հարցում ընդհանրական մոտեցում. ըստ ամենայնի լուսաբանված չեն տակավին այդորակ բանաստեղծական տեքստերի տեսական հարցերը, մշակված չէ դրանց հետազոտության մեթոդաբանությունը, ինչը պայմանավորված է, որ նախ և առաջ պոեզիայում չկա այդօրինակ կառուցվածքով՝ պատկերանշանների ուղղակի կիրառմամբ արարված բանաստեղծական համակառույց: Ընդհանուր առմամբ բանաստեղծական տեքստի համակառույցում պատկերանշանակիրառումն առաջին անգամ հանդիպում է Է. Հաբենցի պոեզիայում, իսկ մեր հետազոտությունն այս առումով, կարելի է ասել, առաջին փորձն է: Բանաստեղծական բառ-պատկերի դրսևորման այդօրինակ կիրարկումները նորարարական հայտնություններ են, որոնք բազում կողմերով ընդլայնում են գեղարվեստական պատկերի գիտատեսական իմացության սահմաններն ու ինքնահատուկ երանգ հաղորդում Է. Հաբենցի պոեզիային:

Այսպիսով, արդի գրականագիտության մեջ՝ գիտական խոսույթում, մի քանի

նշանագիտական համակարգերի փոխհարաբերություններով օժտված տեքստապատկերային «հիբրիդային/խառնորակ» բնույթի ստեղծագործությունները խառնատեքստ/կրեոլիզացված տեքստ կամ պատկերատեքստ անվանումն են ստացել (**Анисимова Е., 2003**): «Պատկերատեքստ» (իկոնոտեքստ (հուն. *eikōn* - «պատկեր», լատ. *textus* - «տեքստ»)) եզրույթը ենթադրում է ստեղծագործություն, որի մեջ լեզվական ու պատկերավոր տարրերը դրսևորվում են որպես ընդհանրական, անբաժանելի ամբողջություն: Պատկերատեքստում տեղի է ունենում նշանագիտական յուրահատուկ խաղ՝ հեղինակը տեքստում գործածում է տարբեր գաղափարագրեր, ձայնանիշներ, նկարների մեջ գործածված մակագրություններ, գրաֆիկական խորհրդանիշներ և այլն, ինչպես նաև այլ տարակառույց նշանային համակարգեր, ինչպիսիք են կինոֆիլմերը, թատերական ներկայացումները և այլն, որոնք կարող են դրսևորվել խորհրդապատկերների միջոցով՝ խորհրդանշելով պատկերվող իրականության ներքին բնույթը, կամ էլ դառնալ կոնկրետ ստեղծագործության մեկնության բանալին: Տեքստային ու պատկերային համակարգերի փոխհարաբերակցությունը, որպես տարբեր նշանների հաջորդականություն, լայն առումով հարվում է տեքստի նշանագիտական հասկացակարգին՝ լոտմանյան «բազմանշանագիտություն» հասկացությանը (**Горбачкая О., 2012**): Համաձայն Յու. Լոտմանի՝ բազմանշանագիտությամբ օժտված տեքստը, հենվելով մի քանի լեզվական համակարգերի վրա, առանձնանում է բազմակի ծածկագրմամբ¹:

Պատկերակառույցային այս եղանակով իմաստավորվում են գաղտնախորհուրդ այնպիսի տրամադրություններ, զգացական պահեր, որոնց անվանումը երբեմն դժվար է գտնել: Պատկերակիրառման հենց այս հնարանքով ծածկագրված շերտի քողազերծումով է հնարավոր բացել բանաստեղծության իմաստային խորքերը.

.... ինքն իր արձագանքի

ետքից շտապելով,-

¹ «Մի լեզու օգտագործվում է իրավիճակը նկարագրելու կամ հաղորդագրությունը ծածկագրելու համար, մյուսը՝ այդ հաղորդագրությունը մեկնաբանելու համար», - այս առումով գրում է Մ. Լոտմանը (**Лотман Ю., 2012**):

սինդրոմ ՄՁ Ե -ի,-

դոնով ծափահարում,

քեզ թողնում է ու հե՛...

Մնում ես դու՝ հետո.... (Հարենգ Է., 2018)

Այս պարագայում տեքստն ու գործածված պատկերային տարրերը դրսևորվում են անհամասեռ կերպով՝ տեքստն օժտելով պատկերատեքստային բնույթով դրսևորված միջտեքստայնության որակով: Առաջնային մակարդակում տեքստն օժտված է կիսածածկագրված բնույթով, որում արտակա կերպով ամփոփված են պատկերանշանային գաղտնագրեր: Հեղինակը բանաստեղծության մեջ, ըստ էության, արտահայտում է Կույսի համաստեղծության խորհրդանշանակիրառման այլաբանական խորքը՝ զուգադրաբար զուտ ռճավորման սկզբունքով կցելով երաժշտական «բեմով» (Ե) (կիսվար)՝ ձայնի կես տոնով իջեցում ցույց տվող ձայնանիշը: Արդյունքում կիսվարը, զուգադրաբար միասնանալով կույսի համաստեղծության խորհրդանշանին, որը («virgo») լատիներենից թարգմանաբար նշանակում է «ինքնաբավ», մի դեպքում կարող է կարդացվել *«ինքն իր արձագանքի // ետքից շտապելով,- // սինդրոմ կույս-բեմովի», մի դեպքում՝ «ինքն իր արձագանքի // ետքից շտապելով,- // սինդրոմ ինքնաբավության»*: Այս իմաստով բանաստեղծության մեջ այն ունի դրսևորման տարբեր աստիճաններ: Կույսի խորհրդանիշը՝ որպես առանձնահատուկ նշանագիտական կադապար, միանգամայն այլ խորքեր է հաղորդում գեղարվեստական պատկերին. այս նշանակիրառմամբ վերակերտվում է բանաստեղծական հոգևոր պատկերն ամբողջության մեջ: Խորհրդանշանն իր նախահիմքով կապված է միֆի հետ և ածանցվում է դրանից (Կույսի համաստեղծության մասին միֆը, իրենց տարբեր շեշտադրումներով, լայն տարածում ունի բաբելոնյան, հունական ու հռոմեական դիցաբանություններում): Այլ կերպ ասած՝ միֆը «խորհրդանիշի շարժունակ կերպն է (modus)» (Иванов В., 1974) և ըստ էության նախադեպային տեքստ է, որը, ներմուծվելով գեղարվեստական տեքստակառույց, տեքստն օժտում է միջտեքստային որակներով: Փիլիսոփայական խոսույթի համակարգում խորհրդանիշը կարող է հանդես գալ ոչ միայն ինքնահատուկ հասկացություններով,

այլև ընդարձակվել միֆի կառուցվածքի մեջ: Ներմուծվելով բնագրից բնագիր, մի համատեքստից մյուսը՝ այն կարող է տրամագծորեն փոխել նախնական իմաստը: Արդյունքում նշանագիտական այլ կառուցվածքներ մշակույթի մի շերտից տեղափոխվելով մյուսը, նշանագիտական մշակութային կապեր ու հարաբերություններ են ձևավորվում. միֆը տեղափոխվում է վերաիմաստավորման նոր մակարդակ և նոր մշակութային համատեքստում, նոր տեքստային տարածության մեջ բարեշրջվում, հատուկ իմաստ է ձեռք բերում, որն ազդում է պարկերանշանն իր մեջ կրող տեքստի իմաստային շերտի վրա:

Բաղադրամասերի ներքին՝ իմաստաբանական հարաբերակցությունը ենթադրում է խորհրդանշական բաղադրիչների հարաբերակցություն տեքստային բաղադրիչի տարբեր մասերի հետ, այն է՝ պատկերի կապը նախադասության կամ դրա մասերի հետ: Այդ հնարանքը պատկերանշանի ու տառի կապն է, երբ ստեղծվում է պատկեր, որը փոխկապակցված է բառույթի հետ.

....Շուսինս մի՛ կտրիր,

քո սիգաճեմն եմ

սրում նրանով....

Մինչևս մի՛ կտրին,

ես քո ընդհուպն եմ

սրում նրանով... (Հաբենց Է., 2018)

Գեղարվեստական պատկերը հագնում է խորքային «նստվածքով», որ ավելի խորն է, քան պատկերի արտաքին բովանդակությունը: Ստեղծագործական նույն՝ պատկերանշանի ու սկզբնատառի միջանցուկ նրբաթելերով հյուսված պատկերակիրառման հնարանքով է կերտված նաև հոգեվիճակների գաղտնախորհրդավորություններով ներդաշնակված, բառակառույցի մեջ համաձուլված նշան-խորհրդանիշների խոհական համակարգով հյուսված «Զոդիակ» բանաստեղծությունը.

հայելին բառերն ես մի(այն)ակ:

Բայց դու ի՞նչ ես անում առանց իմ

տխրության: Պարի շուրջ մեռածիդ՝

արտասի՛ր դռները քեզ հենած... (Հարենց Է., 2020)

Այս պարագայում բառի (բառույթի) սկզբնատառով կազմված է Սատուրնի խորհրդանշական պատկերը, որը հին հայկական աստղագիտության մեջ անվանվել է Երևակ: Եվ չնայած սկզբնատառի ու պատկերանշանի սերտ համաձուլվածքին, բառն ու իմաստն անխզելի միասնություն են կազմում: Մյուս կողմից *անվանողական* արժեքով օժտված խորհրդապատկերի մեջ ամփոփված իմաստային միավորի տարբերակիչ հատկանիշը՝ Երևակը, փոխալայմանավորված կապով կապվելով սկզբնատառին, փոխում է բառի իմաստը, և նոր բառ է կազմվում՝ «Երևակայելին»: Արդյունքում ստացվում է մի դեպքում *«հայելին բառերն են մի(այն)ակ....»*, մյուս դեպքում՝ *«երևակայելին բառերն են մի(այն)ակ....»*: Կիրառվող երկրորդ հնարանքը պատկերանշանի ու սկզբնատառի համաձուլմամբ նոր բառաբարդման ստեղծումն է, որը բառի իմաստից վեր, կոնկրետ այդ իմաստի գեղարվեստական ընդարձակման, նրա իմաստային նոր «տարածություն» կերտելու բացարձակ հնարավորության մասին է: Այսկերպ ներկապակցված պատկերանշանն ու բառույթը զուգորդային հարաբերակցությամբ ստեղծում են իմաստային առումով միմյանցից բաժանելի բառաշղթայական բարդ ամբողջություն (Երևակ-հայելի-երևակայելի), որը տարածվում է ողջ տեքստային կառույցով՝ մասնակցելով տեքստային իմաստաբովանդակային շերտի ձևավորմանը: Այսպիսով՝ պատկերանշանն ու բառը, միահյուսվելով, միավորվելով ու կերպափոխելով, արարում են ոչ միայն բազմակերպվող պատկերներ, այլև միմյանց միահյուսվող ու միմյանց վրա բարդվող, երբեմն արտասովոր բառեր: Արդյունքում բանաստեղծությունը ձևավորվում է տարիմաստ երևույթների առնչակցություններից, որտեղ դրանցից յուրաքանչյուրը գործողության, վիճակի կամ ընթացքի մեջ է դնում մի այլ երևույթ. առաջ են գալիս են նոր առնչություններ ու փոխազդեցություններ: Այս կերպով լայնանում է բանաստեղծական խոհի ընդգրկման տարողությունն ու խորությունը և ենթադրվում պատճառահետևանքային փոխներգործությունների լինելիություն մի երևույթից մյուսն ընկած ուղիներում: Մի ընդհանուր կանոնով երկու բանաստեղծություններն էլ հյուսվածքային ամբողջության մեջ արտահայտում ու պարփակում են շարունակականություն,

մնում անավարտ ու չվերջավորված (այդ են վկայում կախման կետերը), ինչը սկիզբ է առնում հեղինակի պատկերավոր մտածողության ու աշխարհընկալման յուրահատուկ բնույթից: Երկու բանաստեղծություններում էլ պատկերված քնարական վիճակերը, երևույթներն ու փոխազդեցություններն ուղղակիորեն կապված են սկիզբ ու վերջ չունենալու դիալեկտիկական դատողությանն ու տրամաբանությանը: Պատկերանշանի ձևով հենց բառային բովանդակությունն է կազմում նրա առանձնահատկությունը: Բառային և պատկերային բաղադրիչների կապը բովանդակային-կոմպոզիցիոն մակարդակում դրսևորվում է բաղադրիչների ներքին (իմաստային) հարաբերակցության՝ պատկերանշանի ու նախադասության կամ դրա մասերի միջոցով: Պատկերանշանն իր հերթին նյութականացված նախադեպային տեքստ է, միջտեքստային տարր, որը ձևավորում է «տեքստ տեքստի մեջ» հյուսվածք: Այս պարագայում լուսինն իր խորհրդանշական բովանդակությամբ, գաղափարական իմաստով մոտենում է նաև սիմվոլիստական ավանդույթին՝ որում բառ-խորհրդանիշ լուսինն իր մեջ կրում է կանացի բնույթ: Նշյալ իմաստային կշռով պատկերակիրառման միտումներն ակնհայտ են հատկապես Շ. Պ. Բողերի հյուսած քնարական պատկերներում (**Бондарович М., 2013**): Դրանց փոխաբերական նշանակության բացատրությունը գտնում ենք նաև տարբեր ժողովուրդների դիցաբանությունների մեջ, ինչն էլ հնարավորություն է տալիս առավել համակողմանիորեն վերլուծելու այս և այսօրինակ պատկերակերտվածքով գեղարվեստական տեքստերի բովանդակությունը:

Պատկերանշանի ու բառի սկզբնատառի զուգադիր-համակցված դրսևորում է նկատվում նաև ներքոբերյալ բանաստեղծության մեջ, որն ամբողջի ու մասերի համամասնությամբ ամբողջական, ավարտուն կառույց է. բանաստեղծական տեքստը, պատկերանշան-բառն ու դրանով արտահայտված գաղափարները սերտորեն ու ներդաշնակորեն միահյուսված են միմյանց, բացատրվում ու փոխարինվում են միմյանցով.

Քանի՞ Աստծո

ընթրեշության

սփռոց կանի՝

ունեցվող

հատ գնալիս

այսքան երկար

շարունակվող

նարոտը քո... (Հաբենց Է., 2018)

Այս պարագայում սկզբնատառին նմանության սկզբունքով սերտաճած է արիական-հայկական կենաց ծառի խորհրդանշանը՝ վերարարված որպես բանաստեղծական պատկեր, որն առաջ է բերում նաև այլընթերցման հնարավորություն՝ «Կենսածառանի Աստծո»։ Բառը (տիեզերական ծառի տարբերակն է) նոր տարբերակում ձեռք է բերել փիլիսոփայական ընդհանրացում։ Պատկերանշանը, որն իր մեջ կրում է մշակութային ներուժ, և բառը փոխներթափանցվում ու արտացոլվում են միմյանց մեջ՝ ձևավորելով միմյանց առանձնահատկությունները։ Այսկերպ մի քանի տողանոց բանաստեղծության մեջ ներառված պատկերանշանի մեջ հեղինակը սեղմ ու բնորոշ ստվերագծերով ընդգրկել-խտացրել է ընդհանրացված պատկեր, ամենաբարդ ընդգրկումներով հակիրճ կերպով ապրումներ արտահայտել խորհրդապատկերի միջոցով։ Ընդհանուր առմամբ Է. Հաբենցի ոճական յուրահատկություններից մեկը հակիրճությունն է (սեղմությունը)։ Բանաստեղծական մի բառը շատ անգամ ծածկագրված կերպով փոխարինում է մեկ կամ քանի նախադասությունների՝ որոնումների ու շարժման մեջ դնելով ընթերցողական միտքը, զգացական աշխարհը, արթնացնում հուզական-առարկայական զուգորդություններ։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եթե նախադեպային տեքստերը, երևույթները և այլն կարող են տեքստ ներմուծվել ինչպես անփոփոխ՝ կանոնիկ, այնպես էլ փոխակերպված կերպով, ապա պատկերանշանը ներմուծվում է կանոնիկ՝ անփոփոխ ձևով, թեև երբեմն գործածվում են նաև ձևախախտված կերպով։ Հենց պատկերանշանի մեջ ամփոփված գեղարվեստական բառն է դեպի տեքստի հետևում ամփոփված իրականության երկրորդ պլան տանող ելքուղին։ Գեղարվեստական պատկերի ստեղծման միջոց է դառնում ոչ թե ուղղակիորեն պատկերանշանը, այլ նրա

գեղարվեստական էությունը, այսինքն դրա առանձնահատուկ գեղարվեստական կազմությունը, որի միջոցով առարկայի կամ երևույթի հատկանիշները փոխանցվում են մեկ ուրիշին՝ պատկերանշանն ընդունող տեքստին, արդյունքում մեկն իմաստավորվում է մյուսի միջոցով՝ գեղարվեստական իրականության մեջ դրսևորվելով արդեն փոխակերպված կերպով՝ իր մեջ շերտավորելով տարաբնույթ նոր իմաստներ, դառնալով սկիզբը նոր գոյավորման: Ամփոփ ձևակերպումով կարելի է ասել, որ ցանկացած գեղարվեստական պատկերանշանային արտահայտչամիջոց կարող է «վերափոխվել», դառնալ նախադեպային տարր և ծառայել ստեղծագործության իմաստային շերտերի հարստացմանը՝ բարձրացնելով նրա գործառական կշիռը, տեքստն օժտելով միջտեքստային բնույթով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Հարենց Է. (2018)**, Ելման կոնյե, Երևան, «Անտարես» հրատ.:
2. **Հարենց Է. (2020)**, Մենակի ծնունդ, Երևան, «Անտարես» հրատ.:
3. **Анисимова Е. (2003)**, Лингвистика текста и межкультурная коммуникация: (на материале креолизованных текстов): учеб. пособие для студ. фак. ин. языков вузов. Москва, изд. «Академия».
4. **Горбачкая О. (2012)**, Проблема определения рода слов-«феминизмов» в русском языке // Филологические науки. Вопросы теории и практики, № 7(18), часть 2. М Москва, изд. «Грамота».
5. **Бондарович М. (2013)**, Мифопоэтический аспектсимволики луны как воплощения женского начала в тексте «Диаволического» символизма // Христианский гуманизм и его традиции в славянской культуре: сборник научных статей. Вып. 7. Гомель, изд. ГГУ.
6. **Иванов В. (1974)**, Заветы символизма. Собр. соч. Т. 2., Брюссель, изд. Foyer Oriental Chrétien.
7. **Лотман Ю. (1992)**, Культура и взрыв. М. Изд. «Прогресс».

REFERENCES

1. **Harents E. (2018)**, Elman konye /Konie de l'ascendant sortant/, Yerevan, "Antares" newspaper.
2. **Harents E. (2020)**, Menaki c'nowsh /The Loner's wedding feast/, Yerevan, "Antares" newspaper.
3. **Anisimova E. (2003)**, Lingvistika teksta i mezhkul'turnaya kommunikatsiya /Lingvistika teksta i mezhkul'turnaya kommunikatsiya/ /Text linguistics and intercultural communication. M.: Izd. «Akademija».
4. **Gorbatskaya O. (2012)**, /The problem of determining the gender of words-“feminisms” in the Russian language // Philological Sciences. Questions of theory and practice, No. 7 (18). M.: Izd. «Gramota».
5. **Bondarovich M. (2013)**, Mifopoeticheskiy aspekt simvoliki luny kak voploshcheniya zhenskogo nachala v tekste «D'yavol'skogo» simvolizma /Mythopoetic aspect of the symbolism of the moon as the embodiment of the feminine principle in the text of “Diabolic” symbolism/ // Christian humanism and its traditions in Slavic culture: a collection of scientific articles. Vol. 7. Gomel': Izd. GGU.
6. **Ivanov V. (1974)**, Zavety simvolizma /Testaments of symbolism/ // Ivanov Vyach. Collection op. T. 2, Brjussel': Izd. Foyer Oriental Chrétien.
7. **Lotman Yu. (1992)**. Kul'tura i vzryv /Culture and explosion/, Moscow, Izd. “Progress”.

Рипсима Закарян

Идеологическая функция иконознака в поэзии Эдуарда Аренца

Заключение

Ключевые слова и выражения: *иконотекст, креолизированный текст, иконознак, семиотика, поэзия, художественный текст, интертекстуальность, культура, художественный стиль, образность.*

Являясь составным элементом визуальной структуры стихотворения, символ

вместе с образом становится иконознаком, образует знаково-символическую систему текста, образуя единство художественной системы. Превращение семантических функций слова в иконознак и использование его как средства репрезентации характерно для многих стихотворений Эдуарда Аренца.

Главной особенностью кодирования художественной мысли посредством иконознаков является двукачественная особенность таких кодов, связанная одновременно и с художественной ситуацией, и с иконознаком, к созерцательной атмосфере, хранящейся в контексте слова-образа, что приводит к смысловой сложности и смысловому, так сказать, смешанному качеству, формирующемуся в результате интертекстуального взаимодействия, характеризующегося указанным признаком.

Вообще трудно точно определить все предпосылки и основы появления того или иного иконознака, поскольку их культурные связи опосредованы многими литературными и авторскими событиями, которые завершают, абстрагируют и обобщают. Поэтому расшифровку иконознака следует рассматривать у истоков той конкретной поэтической соструктуры, которая их несет.

Объектом исследования статьи является иконознак и его функциональная особенность в поэзии Эдуарда Аренца.

Научная новизна статьи определяется выбором объекта: данная статья является первой попыткой в этом смысле как теоретико-литературоведческого исследования.

Теоретическая ценность статьи состоит в том, что исследование позволяет поразмышлять над теоретическими основами понятия иконотекста, наделенного иконознаками, на примере поэтических текстов Эдуарда Аренца, рассмотреть теоретические положения их применения в поэтическом тексте, а также как принятие иконотекста как прецедентного визуального явления, которое, будучи введено в поэтическую структуру, придает ей интертекстуальный характер. Цель статьи – одновременно подчеркнуть особую роль интертекстуальности в художественном тексте.

Hripsime Zakaryan

Ideological function of icon sign in the poetry of Eduard Harents

Conclusion

Key words and expressions: *iconotext, creolized text, icon sign, semiotics, poetry, literary text, intertextuality, culture, artistic style, imagery.*

Being an integral element of the visual structure of the poem, the symbol, together with the image, becomes an icon, forms a sign-symbolic system of the text, forming the unity of the artistic system. The transformation of the semantic functions of a word into an icon and its use as a means of representation is characteristic of many of Eduard Harent's poems.

The main feature of encoding artistic thought through icon signs is the two-quality feature of such codes, associated simultaneously with both the artistic situation and the icon sign, with a contemplative atmosphere stored in the context of a word-image, which leads to semantic complexity and semantic, so to speak, mixed quality that is formed as a result of intertextual interaction characterized by the specified feature.

In general, it is difficult to accurately determine all the prerequisites and foundations for the appearance of this or that icon, since their cultural connections are mediated by many literary and authorial events that complete, abstract and generalize. Therefore, the decoding of the icon sign should be considered at the origins of the specific poetic co-structure that carries them.

The object of study of the article is the icon and its functional feature in the poetry of Eduard Harents.

The scientific novelty of the article is determined by the choice of object: this article is the first attempt in this sense as a theoretical and literary study.

The theoretical value of the article lies in the fact that the study allows us to reflect on the theoretical foundations of the concept of iconotext endowed with icon signs, using the example of poetic texts by Eduard Harents, to consider the theoretical provisions of their application in a poetic text, as well as the acceptance of iconotext as a precedent visual phenomenon, which, having been introduced into the poetic structure, gives it an

intertextual character. The purpose of the article is to simultaneously emphasize the special role of intertextuality in a literary text.

Հռիփսիմե Ջաքարյան – Բանասիրական գիտությունների թեկնածու: Գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ նորագույն շրջանի հայ գրականություն, արտասահմանյան գրականություն, գրականության տեսություն, փիլիսոփայություն: Հեղինակ է երկու տասնյակից ավելի գիտական հոդվածների և մեկ մենագրության: zaqaryan_hripsime@mail.ru

Рипсима Закарян – Канд. филол. наук. Сфера научных интересов охватывает современную армянскую литературу, зарубежную литературу, теорию литературы, философию. Автор монографии и более десятка научных статей.

zaqaryan_hripsime@mail.ru

Hripsime Zakaryan - Candidate of Sciences in Philology. The scope of scientific interests covers modern Armenian literature, foreign literature, literary theory, and philosophy. Author of a monograph and more than a dozen scientific articles.

zaqaryan_hripsime@mail.ru

**ՖՐԱՆՑ ՎԵՐՖԵԼԻ «ՄՈՒՍԱ ԼԵՌԱՆ 40 ՕՐԸ» ՎԵՊԻ ԱՌԱՋԻՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ
ՀԱՅԿԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v2i65.110

ԱՍՓՈՓՈՒՄ

Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» վեպը լույս է տեսել 1933թ. և ունեցել նաև արևմտահայերեն թարգմանությամբ մի քանի հրատարակություններ, վեպին անդրադարձել են ինչպես հայ, այնպես էլ օտար հեղինակները՝ փորձելով վեպի արժևորումը ներկայացնել, և՛ պատմական, և՛ գեղարվեստական տեսակյունից:

Վեպի ազդեցության ու արժևորման գործում կարևոր նշանակություն ունեն մի քանի աշխատանքներ, որոնք մեր հետազոտության դիտակետում են եղել: Մանասե Սեւակի, Կ. Պալճեանի (Վազգեն առաջին կաթողիկոս), Ավետիք Իսահակյանի, Ալեքսանդր Փաշայանի, Ասատուր Փաշայանի, Յաիր Աուրոնի՝ վեպին նվիրված հետազոտական աշխատանքները լույս են սփռում թե՛ վեպի դերակատարման, թե՛ ազդեցության ու արձագանքի վրա:

***Բանալի բառեր և արտահայտություններ.** Հայոց ցեղասպանություն, Ֆրանց Վերֆել, Մուսա լեռ, Թուրքիա, Մովսես Տեր Գալուստյան, Ավետիք Իսահակյան, Վազգեն Ա կաթողիկոս:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կարելի՞ է արդյոք Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» վեպը համարել սկզբնաղբյուր, արդյոք նյութերն ու դրվագները, որոնք ներկայացված են վեպում արժանահավատ են և կամ նշանակությո՞ւն են ունեցել և ազդել են «մուսալեռցի» ինքնության ձևավորման ու զարգացման ընթացքին: Այս հարցադրումները միանշանակ չեն, նախ որովհետև գործ ունենք գեղարվեստական աշխատանքի հետ, երկրորդ՝ հրատարակվելուց հետո այն անհամեմատ ուշ է հանրայնացել հայկական

միջավայրում: Համենայն դեպս, հաշվի առնելով վեպի նկատմամբ մեծ արձագանքը և ինքնապաշտպանական մարտերի մասնակիցների վերաբերմունքը, այն իր ուրույն տեղն ունի իրական կամ մտացածին հերոսների ինքնության ձևավորման գործում: Անկասկած է, որ վեպը, գեղարվեստական գործ լինելով, շարադրվել է միանգամայն իրական գործողությունների շուրջ, և թե՛ հայ, թե՛ օտարերկրացի ընթերցողների ու մեկնողների կողմից դիտարկվել է որպես այնքան իրապատում, որ Մուսա լեռան իրադարձությունների որոշ մասնակիցների կողմից վեպի գործող անձինք ուղղակի նույնականացվել են վեպի տարբեր՝ իրենց կողմից ընտրած կերպարներին: Սրա լավագույն դրսևորումն «Ազդակ» օրաթերթի դրվագներից մեկն է, որտեղ մանրամասն ներկայացվում է, որ Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» վեպում Գաբրիել Բագրատյանի կերպարը հեղինակը Մովսես տեր Գալուստյանին «կակնարկե» (**«Ազդակ», 1936**):

Վեպի մասին արձագանքները հանրահռչակում էին մուսալեռցի հերոս ժողովրդին, որից ելնելով կարևոր է դիտարկել որոշ արձագանքներ, որոնք վեպի արժևորման այն բանալիներն էին, որ հայ ընթերցողի և կամ տեղեկույթ տարածողների շրջանում արձանագրվում էին և փոխանցվում արդեն որպես իրողություն, հաստատված փաստ: Սույն արձագանքները կարևոր հետք են թողել վեպի ընկալման և մեկնաբանման գործում, ինչպես նաև ճանաչելի դարձրել ոչ միայն վեպը, այլ հենց ինքնապաշտպանական մարտերը, մուսալեռցուն, կերպարն ու տարածքը, որի մասին խոսում էր Ֆրանց Վերֆելը: Բացի այդ, գիրքը գեղարվեստական էր և ընթերցող լայն շրջանակի համար շահեկանորեն տարբերվում էր Մարաշի, Զեյթունի, Հաճընի «դեպքերին» մասնակից հուշագիրների՝ ընթերցողին ձանձրալի թվացող մանրամասն շարադրանքներից: Նշվածները, անշուշտ, լուրջ սկզբնաղբյուրներ են, սակայն կարևոր են թվում միայն հետազոտողներին: «Մուսա լեռան 40 օրը» վեպի հեղինակը հայ չէր, հայերին շատ հաճելի էր նրա համակրանքը, իսկ օտարներին՝ նրա վեպն անաչառ էր թվում: Հրատարակվելուց հետո այն արագորեն թարգմանվել է բազմաթիվ լեզուներով, որի պատճառներից մեկը, թերևս, Եվրոպայում հասունացող նացիզմն էր և ջարդերի ու բռնությունների տագնապը: Վեպի մեծ հաջողության մեջ վերջին տեղում չէ

Թուրքիայում թե՛ հեղինակի՝ Ֆրանց Վերֆելի, թե՛ վեպում նրա կողմից բարձրացված բուն խնդրի՝ Թուրքիայում հայկական կոտորածների լռեցված թեմայի շուրջ մեծ ագրեսիվ աղմուկը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Նկատի ունենալով աշխատանքի ազգագրական ուսումնասիրություն լինելու հանգամանքը, և այդ համատեքստում առաջադիր նպատակ-խնդիրների բնույթը՝ կատարվել է գիտակարգին հատուկ մեթոդաբանության և միջգիտակարգային ուսումնասիրության համադրություն, որոնց համատեղ կիրառումը հնարավորություն է տվել ունենալ համակողմանի ուսումնասիրություն: Պատմահամեմատական մեթոդի կիրառմամբ իրականացված դիտարկումների, բանավոր պատմությունների և հարցազրույցների միջոցով փորձել ենք խորքային պատկերացում կազմել՝ տվյալ խմբի սոցիալական հիշողության մեջ դեպքերից որո՞նք են պահպանվել և որո՞նք մոռացվել:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» վեպը լույս է տեսել 1933 թ. և ունեցել նաև արևմտահայերեն թարգմանությամբ մի քանի հրատարակություններ: Վեպին անդրադարձել են ինչպես հայ, այնպես էլ օտար հեղինակները՝ փորձելով վեպի արժևորումը ներկայացնել և՛ պատմական, և՛ գեղարվեստական տեսակյունից (Փաշայան Ա., 2014):

Վեպի ազդեցության ու արժևորման գործում կարևոր նշանակություն ունեն մի քանի աշխատանքներ, որոնք մեր հետազոտության դիտակետում են եղել: Մանասե Սեւակի, Կ. Պալճեանի (Վազգեն առաջին կաթողիկոս), Ավետիք Բասիակյանի, Ալեքսանդր Փաշայանի, Ասատուր Փաշայանի, Յաիր Աուրոնի՝ վեպին նվիրված հետազոտական աշխատանքները լույս են սփռում թե՛ վեպի դերակատարման, թե՛ ազդեցության ու արձագանքի վրա:

Վեպի հրատարակությունից մեկ տարի անց՝ 1934 թվականին Նյու Յորքում հրատարակվող «Հայաստանի կոչնակ» հանդեսի տարվա 23 և 24-րդ համարներում

լույս է տեսնում Մանասէ Սեւակի «Մուսա Տադի քառասուն օրերը» գրախոսական աշխատանքը (Սևակ Մ., 1934): Այս նկարագրողական տեքստում հեղինակը նախ զարմանքով ներկայացնում է, թե ինչպիսի մանրամասնությամբ է հեղինակը տիրապետում հայկական նյութին. «... Նա երեկուան վաւերական եւ պատմական դէպքերէն ներդաշնակօրէն դասական դիւցազներգութիւն մը հիւսած է: Դիւցազներգութիւն մը, որ չընդգրկէր սոսկ փոքրիկ միջավայր մը, այլ կցուացնէ մարդկայնութեան ոգին: Հայը անոր համար կուլտուրայի ամենաբարձր աստիճանին հասած ժողովուրդ մըն է որուն նմանը հագուագիւտ է գտնել նոյնիսկ եւրոպական ազգերու մէջ: Հայ կինը, հայ մարդը, անոր համար քաղաքակրթական մէյմէկ անսասան սիւներ են: ... Հեղինակին մէջ կարծես ներքին մղում մը կայ նմանելու հային, վերապրելու հայ կեանքը, հոգ չէ թէ նա լինի լի հալածանքով: Նա չ'աղաւաղէր ռուս հայկական անուն, կը գործածէ հայկական խօսքեր. - «Hokud madagh kes kurban»: Հայերէն երգերը հարազատօրէն կը վերածէ գերմաներէնի: Հայ սովորութիւնները եւ պատմութիւնը ուսումնասիրած է տիրականօրէն» (Սևակ Մ., 1934): Հաջորդ կարևոր դրվագը, որն առավել ակնառու է, այն է, որ 1934թ. Մուսա լեոն արդեն հայտնի էր ամերիկահայերին, քանի որ ինչպես նախկին նյութերում ենք փորձել ներկայացնել, եթե 1910-20-ական թթ. Մուսա լեոնան անդրադարձող յուրաքայտի հեղինակի կողմից տվյալ տարածքի տեղը ճշգրտելու միտումներ էին նկատվում (Ներսէսեան Յ., 1911), ապա այստեղ հեղինակն ուղղակի փաստում է, որ սույն պատմական դեպքն ու տարածքի հայերն ուսումնասիրվել են ավստրիացի հեղինակի կողմից:

Ժամանակագրորեն հաջորդ հեղինակը, որն անդրադարձել է Ֆրանց Վերֆելի «Մուսա լեոն 40 օրը» վեպին, Լևոն-Կարապետ Պալճեանն է, (հետագայում՝ ամենայն հայոց Վազգեն Առաջին կաթողիկոս), որը 1940թ. Բուխարեստում հրատարակեց «Մուսա լեոն հայերը Ֆրանց Վերֆելի վեպին մէջ» գրքույկը: Այս աշխատության առաջին կարևոր նշանակետը հենց «վեպի հայերի» առանձնացումն է, որպես գոյություն ունեցող տեսակ, որպես հայի կենդանի ներկայացուցիչ: Կարևոր է նշել, որ հեղինակը հատուկ ուշադրություն է դարձնում վեպի ժամանակին՝ Հայոց Մեծ Եղեռնին՝ փորձելով վեպի գլխավոր արժեքը ներկայացնել որպես

Ցեղասպանության մասին առաջին արժանահավատ և հանրահռչակված գործ: Անդրադառնալով դեպքերի ժամանակին՝ Կ. Պալճեանը նշում է. «Մեծ եղեռնի մասին ոչինչ ունինք նոյնքան արժեքաւոր, ինչքան այս վեպը: Զարմանալի է, և սակայն իրական, թէ մեր գրագէտները և բանաստեղծները, որոնցմէ ոմանք նոյնիսկ ապրած են այդ տարագրութեան սև օրերը-ցարդ չեն կրցած տալ պատկերը այն ողբերգութեան, զօր ապրեցաւ մեր ժողովուրդը: Ճիշտ է, մեր յետպատերազմեան գրականութիւնը լեցուն է յիշողութիւններով, նկարագրութիւններով և սակայն անկեղծ ըլլալու համար պէտք է խոստովանինք թէ անոնք ոչ մէկ մնայուն արժէք կը ներկայացնեն» (Պալճեան Կ., 1940): Հաջորդ դիտանկյունը, որով հեղինակը փորձում է ներկայացնել վեպը, դա վեպի գեղարվեստական արժեքին անդրադարձն է: Փորձելով համեմատել համաշխարհային գեղարվեստական ժառանգության գոհարների հետ՝ հեղինակը մանրամասնորեն անդրադառնում է լեզվին, ոճին և սույն ողբերգության նշանակությանը: Կարևոր է նշել, որ Կ. Պալճեանը սույն հետազոտական նյութում առանձնացնում է «մուսա լեռան հայի» կերպարը՝ անդրադառնալով ցեղասպանության տարիներին տեղի ունեցած ինքնապաշտպանական մարտերին, ամբողջ հետազոտական տեքստը կառուցում է հենց այդ հայերի առանձնահատուկ ու ապագայի կերպար լինելու դրվագով, որպես հավաքական կերպար՝ նրանց շնորհելով «Մուսա լեռան հայ» և կամ «Ֆրանց Վերֆելի հայ» տիտղոսները. «Բայց ովքեր են Ֆրանց Վերֆելի հայերը: Վեպին տիպարները սովորական մարդեր են, սովորական հայեր: Գրեթէ անոնցմէ ոչ ոք հերոսի խառնուածք ունի: Գուցէ բացի Զաուշ Նուրիանէն և Սարգիս Կիլիկեանէն: Վեպին մեջ ապրողները նորմալ մարդիկ են, սովորական հայեր, նոյնիսկ միջակ մարդիկ, որոնք բնականոն պայմաններու մէջ ազգային կեանքին մէջէն աննշմար պիտի անցնէին: Եւ սակայն այն հանդարտ, բարեպաշտ, պահպանողական ու համբերատար մարդիկ արտաքնապէս զուրկ բացառիկ հոգեկան կարողութիւններէ, ճակատագրի մէկ ծանր պահուն գիտեն և կրնան ուժգնօրէն ցեղին հանճարը ապացուցանել և արժեցնել զայն առաւելագոյն չափով. . . .»: Սույն աշխատությունը փորձում էր վեպի միջոցով ընթերցողին հասցնել Հայոց մեծ եղեռնի տարիներին ինքնապաշտպանական եղելությունների դրվագների սակավությունը,

որ առավել տարածելի ու միգուցե «նախընտրելի է» խոսեն Ֆրանց Վերֆելի հայի մասին, որը հերոս չէ կերպարով, բայց գործով է հերոսանում և այդ գործը ինքնապաշտպանական մարտերի ձեռնարկումն է հանուն փրկության՝ սրանով իդեալականացնելով Մուսա լեռան հայերի, Մուսա լեռն ու հերոսապատումն ընդհանրապես: Բայց Կ. Պալճյանի այս գրախոսությունը կատարել է մեկ այլ գործառույթ նույնպես, որը հետագայում հպարտություն է ներարկել բուն մուսալեռցի հայերի մեջ՝ իրենց ոչ վաղ տրավմատիկ անցյալը և հենց իրենց՝ այդ տրավմատիկ անցյալի դերակատարներին, դիտարկելու շահեկան, արժանապատիվ խմբի լույսի ներքո:

Վեպի առավել ընդարձակ վերլուծական նյութ կարելի է համարել Ասատուր Փաշայանի «Մուսա լեռան 40 օրը վեպը» աշխատությունը, որտեղ հեղինակը անդրադարձել է վեպի հրատարակության ժամանակին, գեղարվեստական աշխատանքի ազդեցությանն ու վեպի դեպքերի քննությանը: Այս աշխատանքի գլխավոր արժեքն այն է, որ հեղինակն օգտագործել է ավելի քան 500 աղբյուր, որոնք վկայություններ են վեպի արձագանքների, Վերֆելի անձնական շահախնդրության ու հայկական շրջանակներում տարբեր տարիներին եղած մեկնաբանությունների մասին: Սույն աշխատանքում կարողանում ենք հստակ տեսնել, թե ինչպիսի լայն արձագանք է ստացել վեպը ոչ միայն հայկական, այլ նաև համաշխարհային շրջանակներում: Բացի վեպի արժևորումից, հեղինակը նաև սկսել է ուսումնասիրել ինքնապաշտպանական մարտերի դեպքերը, փորձելով պատմական դեպքի առանցքում ներկայացնել ինքնապաշտպանական մարտերի հերոսներին, տարածքն ու իրադարձությունների հերթականությունը:

Կարևոր է նշել, որ հեղինակը նաև փորձել է պարզել ինքնապաշտպանական մարտերի կազմակերպիչներին՝ անդրադառնալով թե՛ դաշնակցական և թե՛ վերակազմյալ հնչակյանների տեսակետներին:

Հաջորդ հեղինակը, որը փորձել է մեկնաբանել Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» վեպը, հայտնի բանաստեղծ Ավետիք Իսահակյանն է: Վերջինիս «Երկերի ժողովածու»-ի վեցերորդ հատորում մի նամակ է հրատարակված, որտեղ հեղինակը դիմել է Տ. Ալեքսանյանին: Նամակը վերնագրված է՝ «Մուսա դաղի քառասուն օրերը»

և ներկայացնում է Ա. Իսահակյանի տպավորությունները վեպի մասին, հեղինակի ով լինելն ու դեպքերի նկարագրությունը. «Միրելի ընկ. Տ. Ալեքսանյան. Այսքանը կարող եմ ասել Ֆրանց Վերֆելի և նրա վեպի մասին: Ֆ. Վերֆելը ծնվել է 1890 թվականին հրեա ընտանիքում: Վիեննայի բնակիչ է: Գրում է գերմաներեն: Գրել է բանաստեղծություններ, վեպեր, դրամաներ. վերջիններից կան ռուսերեն թարգմանություններ: Եվրոպական գրականության մեջ մեծ համբավ ունի վաստակած: Առաջավոր գաղափարների կրող է: Մեզ հետաքրքրող նրա վեպը Կիլիկիայի մի մասի հայերի կյանքից է, նրանց օրհասական կոիվը ջարդարար թուրք կառավարության դեմ, 1915թ: Թուրք ջարդարարները պաշարեցին Մուսա լեռը՝ հայերին կոտորելու և իրենց հայաջինջ ծրագիրն իրականացնելու համար, ինչպես իրականացրին Մեծ Հայքում և ամենուրեք: . . . Այս վեպի մասին ես լսեցի 1933-34 թվականներին, Փարիզում: Պատահաբար կարդացի մի թերթում 1933թ. գերմաներեն լեզվով լույս տեսած աչքի ընկնող գեղարվեստական գրքերի մասին. . . : Այս վեպը թարգմանված է բազմաթիվ լեզուներով: Կուլտուրական ժողովուրդ չի մնացել, որի լեզվով փոխադրված չլինի հայ ժողովրդի դատը նվիրագործող այս երկը: Միայն տմարդի, նյութապաշտ դիպլոմատիան է, որ ամեն միջոցներով ուզում էր արգելակել նրա տարածումը Եվրոպայում և Ամերիկայում և ջնջել ներգործությունը: 1930-ական թվականներին Ամերիկայի Մետրո-Գոլդվին կինո ֆիրման ձեռնարկեց այս վեպի նկարահանումը: Գործը հանձնված էր հայազգի հայտնի ռեժիսոր Ռ. Մամուլյանին: . . . Պարզվեց, որ թուրք կառավարությունը դիմել է Ամերիկայի կառավարությանը, որ վերջինս արգելի նկարահանումը, սպառնալով բոյկոտ հայտարարել Ամերիկայի կինոնկարներին: Չմոռանամ ասել, որ Հիտլերը արգելեց այս վեպի վաճառումը Գերմանիայում: Սակայն վեպը իր հաղթանակը տարավ, թարգմանվեց 24 լեզուներով: . . . Վեպը հայերեն թարգմանվել է 1935 թվին հանգուցյալ գրականագետ Երվանդ Տեր-Անդրեասյանի ձեռքով (արևմտահայ բարբառով) և տպագրվել է Սոֆիայում: Որքան գիտեմ՝ ռուսերեն լեզվով չկա. ցանկալի է, որ այդ լեզվով էլ լինի: Շատ և շատ բաղձալի է, և մանավանդ շատ այժմեական և անհրաժեշտ, որ մեր Պետհրատը առանց հապաղելու ձեռնարկե այս չքնաղ վեպի թարգմանությանը արևելահայ բարբառով և լույս ընծայե» (Իսահակյան Ա., 1979): Ա. Իսահակյանը

նամակը շարադրել է 1947թ., երբ Խորհրդային Հայաստանում վեպի մասին դեռևս հստակ տեղեկություն չկար: Կարելի է ասել, որ սույն նամակը Ֆ. Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» վեպի մասին առաջին արձագանքն է Խորհրդային Հայաստանի տարածքում: Կարող է տարօրինակ թվալ, բայց մինչև 1946-47թթ. խորհրդահայ մամուլում ոչ Ֆրանց Վերֆելի, ոչ նրա գրած վեպի մասին ոչինչ չի գրվել: Իրականում, ինչպես հայտնի է, ԽՍՀՄ-ում Հայոց ցեղասպանության թեման իսպառ լռեցված էր:

Եթե սփյուռքում Ֆրանց Վերֆելի վեպին ծանոթ էին և անգամ հայերեն թարգմանությամբ հրատարակել էին վեպի լույս աշխարհ գալուց մեկ տարի անց (Սոֆիա, 1935), ապա Ա. Իսահակյանի նամակից հետո (1947)՝ Խորհրդային Հայաստանում միայն 1964թ. լույս տեսավ վեպի արևելահայերեն թարգմանությունը: Մոտենում էր Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցը, Թուրքիան արդեն ՆԱՏՕ-ի անդամ էր, և Թուրքիային մի «փոքր անհարմարություն» պատճառելն ԽՍՀՄ-ում արդեն հնարավոր էին համարում:

Խորհրդահայ ընթերցողին վեպի և վեպի ժամանակի մանրամասների մասին առաջին անդրադարձողներից էր Ալեքսանդր Փաշայանը: Ծագումով մուսալեռցի և 1946-47թթ. «հայրենադարձության» ժամանակ Խորհրդային Հայաստան տեղափոխվելով, Ալ. Փաշայանը «Էջմիածին» ամսագրում ներկայացրեց վեպի մանրամասներն ու այն պատմական դեպքերը, որ տեղի են ունեցել Մուսա լեռան բարձունքում: Դրանից զատ, վեպի հրատարակությունից հետո Թուրքիայի արձագանքի որոշ դրվագների հետ է մեզ ծանոթացնում, որը ցույց է տալիս, թե ինչպիսի զարգացումներ են տեղի ունեցել վեպի հրատարակությունից հետո. «Միայն ու միայն թուրք ազգայնամուլները կարող են տխրել ու գազազել, ինչպես այդ արեցին 1938 թվականին, Ստամբուլի Թաքսիմ հրապարակում, երբ քսաներորդ դարի «քաղաքակրթված» թուրք ուսանողները արդեն զանազան լեզուներով թարգմանված «Մուսա լեռան 40 օրը» հավաքելով խարույկ սարքեցին, նրա լափլիզող բոցերի մեջ խեղդել ցանկանալով իրենց թանձր ատելությունը» (Փաշայան Ա., 1965):

Ա. Փաշայանի հոդվածը խորհրդահայ ընթերցողի համար կարևորվում էր նաև նրանով, որ հեղինակը փորձում էր ներկայացնել Մուսա լեռան

ինքնապաշտպանական մարտերի վերաբերյալ համաշխարհային հասարակության վերաբերմունքը, որը հասու էր դարձել Վերֆելի վեպի շնորհիվ: Հասկանալի է, որ այն տարիներին «Էջմիածին» հանդեսը Խորհրդային Հայաստանում շատ փոքր լսարան ուներ, բայց փոխարենը այն կարդում էին ինչպես «հայրենադարձ» մուսալեռացիները, այնպես էլ Այնճարում ապրողները:

Վեպի ընդարձակ մեկնաբանությամբ հանդես եկած վերջին հեղինակը Յաիր Աուրոնին է «Անընդունելի անտարբերություն, Միոնիզմը և հայոց ցեղասպանությունը» լայնածավալ աշխատությամբ: Յաիր Աուրոնին ընդարձակ մի գլխով՝ «Մուսա լեռան քառասուն օրը, խորհրդանիշ և այլաբանություն» խորագրով անդրադառնում է Վերֆելի վեպին: Հեղինակը մանրամասն ներկայացնում է Վերֆելի հրեական ծագումը և հրեական ասպարեզում ժամանակակիցների մեկնաբանությունների հիման վրա փորձում է կառուցել տեքստն այնպես, որ Ֆ. Վերֆելը սույն վեպը հեղինակել է ոչ թե հայ ժողովրդի, այլ հրեա ժողովրդի մասին: Կարևոր մի դիտարկում է աչքի զարնում, որ վեպի հրատարակման ժամանակը համընկնում է Հոլոքոստի տարիների հետ և Հայոց ցեղասպանությունը սույն վեպով ածանցվել է ժամանակի իրադարձություններին, որի սկիզբը կարելի է համարել Հիտլերի կողմից վեպի այրելը. «Կարդալով այդ աննման պատմական վեպը՝ դժվարությամբ ես հավատում, որ այն գրվել է մինչև Հոլոքոստը: Գրքում շոշափվում են նրբին հարցեր, ենթատեքստում զուգահեռներ են անցկացվում հրեական ինքնագիտակցության թեմայի հետ, որը հուզում էր և իրեն՝ Վերֆելին: Ուծացված հայը (հրեան), որն իր ցեղակիցների առաջնորդն է դառնում ողբերգական պահին, Մովսեսի սարը-Մուսա լեռ-Մասսադան՝ դրանք ընդամենը մի քանի խորհրդանիշներ ու այլաբանություններ են շարադրման հենքում: ... (Աուրոն Յ., 2013):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով՝ սույն հոդվածում փորձեցինք ներկայացնել Ֆրանց Վերֆելի Մուսա լեռան քառասուն օրը վեպի առաջին արձագանքներն հայոց մեջ: Դրանցում կարևորված շեշտադրումները ցույց են տալիս, թե ժամանակին ի՞նչ ուղղությամբ էր

հայկական մտավորականությունը փորձում մեկնաբանել թե վեպը՝ որպես գեղարվեստական ստեղծագործություն, և որն ավելի կարևոր է, այն իրադարձությունները, որոնք ընկած էին վեպի հիմքում, ինչպիսի անդրադարձ ու մեկնաբանություն էին ստանում հայոց մեջ:

Այդօրինակ դիտարկումները հնարավոր են դարձնում առաջ քաշել նաև այն ենթադրությունը, որ վեպն է՛լ ավելի կարևորվեց և մեծ հռչակ վայելեց, քանի որ այն լույս էր տեսել հրեա հեղինակի կողմից և զուգահեռ Հոլոքոստի նախապատրաստման տարիներին, ինչպես նաև վեպը ժամանակակից էր արդեն երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրեին, և հրեա ժողովուրդն այն ընկալում էր որպես իր պատմության, տանջանքների ու պայքարի ողիսականը:

1915-20 թթ. ցեղասպանության դեմ ինքնապաշտպանական մարտերում բոլոր հայերն էլ պարտվել են, բայց մուսալեոցիների պարտությունը՝ դիմադրելու հերոսական անցյալ է, որը սնում է նրա ներկայիս սերունդների ինքնությունը, որում իր ներդրումն ունի նաև Ֆրանց Վերֆելի վեպը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Աուրոն Յ. (2013)**, Անընդունելի անտարբերություն, Սիոնիզմը և հայոց ցեղասպանությունը, Երևան, «Ամարաս» հրատ.:
2. **«Ազդակ» օրաթերթ (1936)**, յունուար 4, շաբաթ, Բեյրութ, «Ազդակ» հրատ.:
3. **Իսահակյան Ա. (1979)**, Երկերի ժողովածու, հ. 6, Երևան, «Սովետական գրող» հրատ.:
4. **Մանասէ Մեւակ (1934)**, Մուսա Տաղի Քառասուն օրերը, Բոստոն, «Հայաստանի Կոչնակ», ԼԴ տարի, թիվ 23, յունիս 9, էջ 541, թիվ 24, յունիս 16, էջ 567:
5. **Ներսէսեան Յ. (1911)**, Մուսա լերան հայ գյուղերը, «Բյուզանդիոն», ապրիլ 26, թիվ 4418, Կ Պոլիս:
6. **Ներսէսեան Յ. (1911)**, Մուսա լերան հայ գյուղերը, «Բյուզանդիոն», ապրիլ 27, թիվ 4419, Կ Պոլիս:
7. **Պալճեան Կ. (1940)**, Մուսա լերան հայերը Ֆրանց Վերֆելի վեպին մեջ, Պուրբեշ, «Հայ մամուլ» հրատ.:

8. **Փաշայան Ա.** (1965), Լեռ, որ ապրում է ժողովրդի սրտում (Ականատեսի հուշեր ու մտորումներ Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը») գրքի արևելահայերեն հրատարակության առթիվ, Մայր Աթոռ, «Էջմիածին» հրատ., Բ-Գ-Դ, էջ 150:
9. **Փաշայան Ա.** (2014), Ֆրանց Վերֆելի Մուսա լեռան 40 օրը վեպը, Երևան, ՎՄՎ-Պրինտ.:

REFERENCES

1. **Auron Y.** (2013), Any'ndowneli antarberowt'yown, Sionizmy' & hayoc ceghaspanowt'yowny' /Unacceptable Indifference, Zionism and the Armenian Genocide/, Yerevan, "Amaras" ed.
2. **"Azdak" daily** (1936), January 4, Saturday, Beirut, newspaper, "Azdak".
3. **Isahakyan A.** (1979), Erkeri jhoghovac'ow /Collection of literary works/, vol. 6, Yerevan, "Soviet Writer" ed.
4. **Manase Sevak** (1934), Mowsa Taghi Qar'asown o'rery' /The Forty Days of Musa Tagh/, Boston, "Hayastani Kochnak", LD year, number 23, June 9, page 541, number 24, June 16, page 567.
5. **Nersesian Y.** (1911), Mowsa leran hay gyowghery' /Armenian villages of Musa mountain/, "Byzandion", April 26, No. 4418, K Polis
6. **Nersesian Y.** (1911), Mowsa leran hay gyowghery' /Armenian villages of Musa mountain/, "Byzandion", April 27, No. 4419, K Polis
7. **Paldjian K.** (1940), Mowsa leran hayery' Franc Ve'rfe'li ve'pin me'j /The Armenians of Musa Dag in Franz Werfel's novel/, Bucharest, "Armenian Press" ed.
8. **Pashayan A.** (1965), Ler', or aprowm e' jhoghovrdi srtowm (Akanatesi howsher ow mtorowmner Franc Verfeli «Mowsa ler'an qar'asown o'ry'») grqi ar&elahayeren hratarakowt'yan ar't'iv /A mountain that lives in the heart of the people (Memoirs and reflections of an eyewitness regarding the Eastern Armenian edition of Franz Werfel's book "The Forty Days of Musa Dag")/, Mayr Ator, "Echmiadzin" ed., B-G-D, p. 150.

9. Pashayan A. (2014), Franc Verfel'i Mowsa ler'an 40 o'ry' vep'y' /Franz Werfel's novel 40 Days of Musa Dag/, Yerevan, VMV-Print.

Хорен Григорян

**Первые реакции Романа Франца Верфеля «40 дней Муса-Дага»
в армянской реальности**

Заключение

Ключевые слова и выражения: Франц Верфель, Муса-Даг, Турция, Геноцид армян, Мовсес Тер Галустян, Аветик Исаакян, Вазген Католикос.

Роман Франца Верфеля «40 дней Муса-Дага» был опубликован в 1933 году и имел несколько публикаций в западноармянских переводах, к роману обращались как армянские, так и зарубежные авторы, пытаясь представить ценность романа как с исторической, так и с художественной точки зрения.

Несколько произведений, попавших в точку наблюдения нашего исследования, имеют важное значение для воздействия и оценки романа. На роль, влияние и реакцию романа проливают посвященные роману исследования таких мыслителей того времени, как Манасе Севака, К. Палджяна (Вазген Католикос), Аветика Исаакяна, Александра Пашаяна, сатура Пашаяна, Яира Аурона.

Эти толкования позволяют выдвинуть предположение, что роман стал еще более важным и популярным, поскольку был опубликован еврейским автором накануне геноцида евреев, а также что роман был современником Второй мировой войны и еврейский народ воспринял это как одиссею своей истории, страданий и борьбы.

1915-20 Все армяне проиграли в боях самообороны во время геноцида, но поражение армян Муса дага , является прошлое героической сопротивлении, которое питает идентичность его нынешних поколений, чему также способствует роман Франца Верфеля.

Khoren Grigoryan

First Reactions to Franz Werfel's novel "The 40 days of Musa dag" in Armenian reality

Conclusion

Key words and expressions: Franz Werfel, Musa dag, Turkey, Armenian Genocide, Movses Ter Galustyan, Avetik Isahakyan, Vazgen Katholikos

Franz Werfel's novel "The 40 Days of Musa Dagh" was published in 1933 and had several publications in Western Armenian translations, both Armenian and foreign authors turned to the novel, trying to present the value of the novel from both a historical and artistic point of view.

Several works that fell within the observation point of our study are of great importance for the impact and evaluation of the novel. The role, influence and reaction of the novel are shed light on the studies devoted to the novel by Manase Sevak, K. Paldzhyan (Vazgen Catholicos), Avetik Isahakyan, Alexander Pashayan, Asatur Pashayan, and Yair Auron.

These interpretations suggest that the novel was made even more important and popular because it was published by a Jewish author on the eve of the Jewish genocide, and that the novel was contemporary with World War II and that the Jewish people perceived it as an odyssey of their history, suffering, and struggle.

1915-20 All Armenians lost in self-defense battles during the genocide, but the defeat of the Armenians of Musa Dagh is the past of heroic resistance that feeds the identity of its current generations, which is also promoted by Franz Werfel's novel.

Խորեն Գրիգորյան – ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հայցորդ, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի դասախոս: Գիտական հետաքրքրությունները՝ ազգագրություն, ինքնության և ինքնագիտակցության փոխակերպումներ: Հեղինակ է 9 գիտական հոդվածի:

khorenethnography@gmail.com

Хорен Григорян – Соискатель Института археологии и этнографии Национальной академии наук Республики Армения, научный сотрудник Института археологии и этнографии Преподаватель Государственного университета имени В. Брюсова. Научные интересы: этнография, трансформации идентичности и самосознания. Автор 9 научных статей.

khorenethnography@gmail.com

Khoren Grigoryan - Competitor of the Institute of Archeology and Ethnography of the National Academy of Sciences of the Republic of Armenia, researcher at the Institute of Archeology and Ethnography, Lecturer of V.Brusov State University. Research interests: ethnography, transformations of identity. Author of 9 scientific articles

khorenethnography@gmail.com

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՏԱՐԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ՍԻՐՈ ԳԱՂԱՓԱՐԸ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ «ՓԱՐՎԱՆԱ» ԲԱԼԼԱԴՈՒՄ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v2i65.119

ԱՍՓՈՓՈՒՄ

Մարդկությունը իր ողջ գիտակցական կյանքի ընթացքում ձգտել է հասնել կատարելության՝ միաժամանակ իր շուրջը փնտրելով այն, փորձել է իրեն շրջապատող աշխարհում զգալ հավերժական սիրո բերկրանքը: Ե՛վ կատարելությունը, և՛ սերը մարդու հոգում և շուրջը ստեղծում են ներդաշնակություն: Շատ արագ փոփոխվող 21-րդ դարի մարդը, այնուամենայնիվ, ևս ձգտում է այդ ներդաշնակությանը: Հ.Թումանյանի «Փարվանա» բալլադը այդ գաղափարները իր հիմքում կրող ստեղծագործություն է, որը անգերազանցելի արժեք է մեր մշակույթի հարուստ գանձարանում:

«Փարվանա» բալլադում մեծ գրողը փորձել է նաև տալ Փարվանա լճի, լույսի շուրջը պտտվող թիթեռների առաջացման ստուգաբանությունը: Հյուսել է մի չքնաղ պատմություն՝ արտահայտելով իր խոհերն ու գաղափարները:

Երկը առանձնանում է իր շքեղ լեզվով, պատկերավորման ամենատարբեր միջոցներով հագեցնելով տեքստը՝ բանաստեղծն է՛լ ավելի գրավիչ է դարձրել այն:

Հայ գրականության գոհարը՝ «Փարվանա»-ն, բարձր են գնահատվել նաև ժամանակակիցները, և այն իր ուրույն տեղն ունի հայ գրականության մեջ:

Բալլադի լեզուն, կառուցվածքը, պատկերավորման-արտահայտչական զանազան միջոցները ընդգծում են Ամենայն հայոց բանաստեղծի՝ Հ.Թումանյանի՝ իրեն բնորոշ ոճը:

Բանալի բառեր և արտահայտություններ. Հովհաննես Թումանյան, Փարվանա, ամրոց, անշեջ հուր, կտրիճ, խնձոր, մրցություն, արցունքներ, լիճ, թիթեռներ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մարդկային կատարելության գաղափարը արվեստում ձգվում է կարմիր թելի պես: 1903 թվականին «Թմկաբերդի առումը» պոեմը Հ.Թումանյանը եզրափակում է հետևյալ տողերով. «Ա՛խ, երանի՛, ով մարդ կըգա ու մարդ կերթա անարատ» (Թումանյան Հ., 1991): Իսկ քառյակներից մեկում գրում է. «Բերանն արնոտ Մարդակերը ... հազար դարում հազիվ դառավ Մարդասպան... Ու հեռու է մինչև Մարդը իր ճամփան» (Թումանյան Հ., 1990): Հատկանշական է, որ Թումանյանը նշված տողերում մարդ բառը գրում է մեծատառով՝ առավել շեշտելով գաղափարը: Բանաստեղծի համար մարդկային կաղապարով օժտված լինելը դեռևս չի նշանակում լինել մարդ, լինել կատարյալ: Հովհաննես Շիրազը «Բիբլիականի վերջաբանը» պոեմում զարգացնում է այն տեսակետը, ըստ որի՝ մարդը կարող է դառնալ «Մարդ» և լինել կատարյալ, երբ «աղավնանա» դիմացինի նկատմամբ: Մարդերգությունը՝ որպես համամարդկային թեմա, բոլոր ժամանակներում եղել է խիստ արդիական, և մարդուն առաջին հերթին հետաքրքրել է հենց ինքը՝ մարդը՝ իր արտաքին ու ներքին աշխարհներով, իր ընդունելի և մերժելի հատկանիշներով: Մարդն է բնության իշխանը, տիեզերքի կենտրոնը, տիեզերք՝ տիեզերքի մեջ, Աստծո պատկերով ստեղծված միակը, եզակին: Սովորաբար մարդու արտաքին շքեղությանը հակադրվում է հոգու անկատարությունը: Մարդը բնության զարդն է, ամենագեղեցիկը, ամենախելացին. ահա սա է Վերածննդի դարաշրջանի առանցքային գաղափարը: Հայ գրականության մեջ Վերածնունդը ավելի ընդգծված ու բազմակողմանիորեն իր արտացոլումը գտավ տասներորդ դարի տաղերգու Գրիգոր Նարեկացու՝ «Մատյան ողբերգության» պոեմում և տաղերում, որոնք այնքա՛ն բարձր են գնահատվել և մինչև օրս էլ շարունակում են ընթերցողին հիացնել իրենց բազմաշերտությամբ, ոսկեղենիկ հայերենով ու հարուստ բառապաշարով: Թե՛ «Նարեկ»-ում, թե՛ տաղերում՝ «Հարության», «Մեղեդի ծննդյան», միջնադարի Մեծ աղոթասացը ստեղծում է երկու տարբեր բևեռներ: Տեսնում ենք մարդուն՝ որպես բնության շարժիչ ուժի («Հարության»), իսկ երբ կրոնական շղարշի տակ նկարագրում է կնոջը, բանաստեղծը հիացած փառք է տալիս այն թագավորին, այն նորածին փրկչին, նրան պսակողին: Պոեմի առանցքում դարձյալ մարդն է՝ իր

եզակիությամբ, արտաքին գեղեցկությամբ, միևնույն ժամանակ նաև հոգու անհամար արատներով: Իսկ ավելի ուշ՝ Մեծ Վերածննդի (Ռենեսանս) դարաշրջանում, Լեոնարդո դա Վինչին կերտեց կնոջը՝ ոչ այնքան գեղեցիկ, ոչ այնքան շքեղ, ինչպես սովորաբար պատահում է արվեստի գործերում, իսկ Միքելանջելոյի «Դավիթը» մարդու կողմից ստեղծված, մարդուն իսկ բնութագրող բացառիկ արժեք է: Եթե Շեքսպիրը պեղում է մարդու հոգին՝ բացելով նրա արատավոր կողմերը, որը խոր հիասթափություն է ծնում գրողի և ընթերցողի հոգում, ապա Սերվանտեսը իր հերոսի՝ Դոն Կիխոտի օգնությամբ փորձում է իրականության մեջ որոնել ու գտնել կամ չգտնել այն կատարյալը, ներդաշնակն ու գեղեցիկը: Երբ դարձյալ վերադառնում ենք հայ գրականություն և հայացք ենք գցում 20-րդ դարավերջի հսկաներից մեկի՝ Պարույր Սևակի էջերին ու կանգ ենք առնում «Մարդը ափի մեջ» ժողովածուի մոտ, ապա մի կողմից տեսնում ենք ափսոսանք ու հիասթափություն, մյուս կողմից՝ հպարտության զգացում: Մարդու էության ու կատարելության գաղափարը այստեղ եզրափակենք հայ մեծ քնարերգու Համո Սահյանի տողերով. «Ինձ ճանաչելը մի քիչ դժվար է, Հասկացեք, էլի, ես մի քիչ բարդ եմ...»:

Բոլոր ժամանակներում մարդն ինքը ձգտել է կատարյալին, այն վսեմին, գեղեցիկին: Այն արդյոք գոյություն ունի աշխարհում, որտեղ ապրում ենք, թե՞ միայն գրքերում է կամ մեր խորհրդանշական աշխարհներում: Ահա այն հարցադրումներից մեկը, որին Թումանյանը փորձում է պատասխանել **«Փարվանա»** բալլադում՝ իրեն բնորոշ ոճով ու լեզվով:

Վահան Տերյանը «Հայ գրականության գալիք օրը» հոդվածում գրում է. «Թումանյանի մի «Փարվանա»-ն չեմ փոխի պոլսահայ բոլոր հանկարծակի հեթանոսացած պոետների արտագրությանց հետ» (Տերյան Վ., 1989): Որքա՛ն բարձր է գնահատվել այս չքնաղ երկը ժամանակակիցների և նրանցից հետո եկող սերունդների կողմից: Հայ գրականության գոհարը՝ «Փարվանա»-ն, մինչև օրս շարունակում է գրավել իր ոճով ու լեզվով, շարունակում է մնալ արդիական 21-րդ դարի մարդուն նույնպես հուզող իր հարցադրումներով. **կա՞ մարդկային կատարելություն, կա՞ հավերժական սեր:**

Սիրո առեղծվածը փորձում է հասկանալ յուրաքանչյուր ոք: Ինչ խոսք, կա այն զգացմունքը, որ երբեմն մարդուն թներ է տալիս, բարձրացնում երկինք. մարդու հոգին սկսում է ճախրել, ճախրե՛լ ու ճախրել, իսկ երբեմն այնպես խոցում է սիրուն ու հոգին, որ շուրջը ամեն բան լռում է, պապանձվում, աշխարհը խավարով է պատվում:

Երբ դեռ մարդը հավատում էր դիցերին և հավատում էր, որ նրանք են տնօրինում իր ճակատագիրը, նրանց կամքով են ծաղիկները ծաղկում մարդու հոգում և շուրջը, նրանց կամքով է վսեմաշուք Հելիոսը լուսավորում անծիր տիեզերքը: Թե՛ Աստղիկի, թե՛ չքնաղ Վեներայի, թե՛ հավերժ երիտասարդ Աֆրոդիտեի առջև խոնարհվում էին անգամ աստվածներն իրենք: Սակայն մարդուն բոլոր ժամանակներում կեղեքում է մի հարց՝ մինչև օրս անպատասխան մնացած. հավերժ է սերը, թե՞ ոչ: Ահա այս իրարամերժությունը, մարդկային կատարելությանը հասնելու ձգտումը, հավերժ սիրելու փափագը յուրովի արտացոլված է Հովհաննես Թումանյանի՝ ամենքի հետ ապրող և ամենքի չափ տառապող մարդու, բանաստեղծի «Փարվանա» բալլադում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հովհաննես Թումանյանի «Փարվանա» բալլադը լայն ընդգրկվածություն և խորություն ունեցող բացառիկ երկ է հայ գրականության մեջ: Այն արժարժում է համամարդկային այնպիսի գաղափարներ, ինչպիսին են հավերժական սիրո փնտրտուքը և մարդկային կատարելությանը հասնելու ձգտումը: Ըստ այդմ՝ հետազոտությունը կատարվել է հետազոտական, համադրական-վերլուծական և գուգադրական մեթոդներով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«Փարվանա» բալլադը պատմում է Փարվանա արքայի գեղանի դստեր մասին: Ասում են՝ Ջավախք աշխարհի հսկա լեռները՝ Աբուլն ու մթին սարերը, իրենց ուսերին պահում են մի ուրիշ աշխարհ: Կապուտակ ու ծիծղուն երկինք, սեզ ու մթին սարեր, ճերմակ ամրոց: Ահա այսպիսին է այն աշխարհը, որտեղ անցնում են

Փարվանա արքայի ծերության օրերը: Հատկանշական է, որ բանաստեղծը անուններ չի տալիս ո՛չ արքային, ո՛չ դստերը՝ կատարելով խոր ընդհանրացում՝ արքայի և աղջկա կերպարների մեջ խտացնելով հազարավոր արքաներ ու սպասող դուստրեր:

Ամրոցը կոչվում է Փարվանա. այն ամբողջությամբ ճերմակ է: Բալլադի առաջին հատվածում իշխող երանգներն են ճերմակն ու կապույտը, որոնք խորհրդանշում են մաքրություն և մեր երագները: Քանի դեռ Փարվանա չքնաղ դուստրը՝ որպես մի եղնիկ, աշխույժ մանկությամբ զարդարում էր «ծերության օրերն ու սարերն իր հոր» (**Թումանյան Հ., 1990**), երջանիկ ու բախտավոր էր ծեր արքան, և ամեն բան այնքա՛ն լուսավոր էր: Տարիներն անցնում են, և գալիս հասնում է այն օրը երջանիկ, երբ աղջիկը պիտի ընտրեր այն միակին: Արքան ուրախ դեսպաններ ուղարկեց ամեն մի ամրոց, ամեն արքունիք՝ ասելով. «Որտե՞ղ է այն քաջը, թե կա, իմ չնաշխարհիկ դստերն արժանի» (**Թումանյան Հ., 1990**): Ստեղծագործության հենց սկզբում հեղինակը թերահավատորեն է վերաբերվում կատարյալի գոյությանը:

Այդ քաջը պետք է գար ու իր բախտը տաներ: Հավաքվում են կտրիճները Կովկասի՝ «հագած-կապած զենք ու զրահ, ձիանք հեծած ամեհի» (**Թումանյան Հ., 1990**), խոնվել են պալատի հանդիման ու սպասում են «մոտիկ ժամին մրցության»: Կար պայման. ով կհաղթեր մրցույթում, նա էլ կտիրանար «էն սիրունին»: Հնչում են փողերը: Ահա մենք տեսնում ենք և՛ ճերմակ ամրոցը, և՛ շենքերը փառավոր, և՛ պալատի դիմաց խոնված կտրիճներին, և՛ լսում ենք թմբուկների ու փողերի ձայնը: Ցնծում է ամրոցը Փարվանա: Դրանիկներ, նաժիշտներ, և ահա դուրս են գալիս աղջիկն ու արքան: Համեմատության զարմանալի օրինակ է հորն ու դստերը նկարագրող հետևյալ հատվածը. «Հայրը, ինչպես մռայլ մի ամպ, Աղջիկն անուշ մի լուսին, Ամպ ու լուսին, իրար փարված, Դուրս են գալի միասին» (**Թումանյան Հ., 1990**):

Մենք տեսնում ենք գեղանի օրիորդին, զգում նրա քնքշությունն ու մեղմությունը: Թումանյանի համար մի բառը մի աշխարհ է: Երբ հավաքվածները տեսնում են Փարվանա դստերը, հառաչում են, «երագների մեջ են ընկնում՝ էս աշխարհիքից վերացած»: Հայրը դիմում է դստերը. «Նայիր՛, դստրի՛կ իշխանագուն, էս քաջերին լայնալանջ, Այժմ պետք է հանդես դուրս գան, Պայքար մտնեն քո առաջ»

(Թումանյան Հ.,1990): Պիտի տեղի ունենար մրցություն.յուրաքանչյուրը ցույց տար իրեն.մեկը՝ «իրեն ուժը, մյուսը՝ շնորհքն իր բազկի, որը՝ ճարպիկ ձիարշավը, որն էլ՝ թափը իր վազքի» (Թումանյան Հ.,1990): Ապա աղջիկը հաղթողին պիտի ընդուներ որպես ամուսին, կյանքի ընկեր ուրախ և տխուր օրերի համար:

Բալլադում աղջկա սիրո խորհրդանիշը դառնում է կարմիր խնձորը: Խնձորը՝ որպես սիրո խորհուրդ, կա նաև «Սասնա ծռեր» էպոսում: Քառսուն Ճյուղ Դեղձուն-Ծամը՝ Պղնձե քաղաքի թագավորի դուստրը, համաձայնում է ամուսնանալ այն «փահլևան»-ի հետ, որը վիշապի բերանից կբերի խնձորը: Սանասարը՝ Սասնա տան հիմնադիրը, բերում է խնձորը: Հայկական ժողովրդական դյուցազներգության երրորդ ճյուղում («Սասունցի Դավիթ») Խանդութ խանումը յուրովի է արտահայտում իր սերը Դավթի նկատմամբ: Ժողովուրդը պատմում է՝ երբ Դավիթը գնացել էր՝ տեսնելու Խանդութ խանումին, ձին կապում է պարտեզում՝ արածելու, իսկ ինքը անուշ քնով քնում է: Պատուհանից տեսնելով քնած Դավթին՝ Խանդութ խանումը խնձորով հարվածում է նրան: Սերը յուրօրինակ զգացմունք է և յուրօրինակ դրսևորումներ կարող է ունենալ: Զարմանալի է. դարեր են անցել,սակայն խնձորը՝ որպես անմնացորդ սիրո խորհրդանիշ, այժմ էլ պահպանված է հայկական ժողովրդական ավանդույթներում: Սովորաբար ժողովուրդները իրենց ազգային դեմքն ու դիմագիծը դրսևորում են հարսանիքների ժամանակ: Հայկական ավանդական հարսանիքի ժամանակ խաչեղբայրը, բարձր պահած խնձորը, տանում է հարսնացուի տուն, այսինքն՝ տղան իր սերը տանում է աղջկան, և այդ սրբազործող զգացմունքը փոխադարձ է: Այսպիսով՝ յուրաքանչյուր ընտանիքի հիմքում պետք է լինի սերը՝ այդ առեղծվածային զգացմունքը, որն ընդունակ էր խոնարհեցնել անգամ Ջուսին:

Փարվանա ծեր արքան երջանիկ էր, քանզի ստեղծվելու էր իր դստեր ընտանիքը: Ո՞ր հայրը չի կամենում տեսնել իր զավակին բախտավոր: Աղջիկը պետք է ընտրեր,զարկեր խնձորն «անմահներից անմահին»,որ «ողջ աշխարհ մայիլ մնար» իր անգուգական բախտին:Շուտով պետք է հնչեին փողերը, ու զարկեին թմբուկները, և ազդարարվեր մրցության սկիզբը, սակայն աղջիկը, կարմիր խնձորն իր ձեռին, առաջ եկավ՝ ասելով. «Գուցե, հայրի՛կ, տկար լավին Հաղթի մի վես տմարդի, Բայց չի

կարող լինել երբեք Նա սիրելին իմ սրտի» (**Թումանյան Հ., 1990**):

Ֆիզիկապես հզոր ու գեղեցիկ կտրիճ լինել դեռևս չի նշանակում լինել լավ ու կատարյալ: Եվ, ի վերջո, միշտ պետք է հիշել, որ գեղեցկությունն ու քաջությունը հարաբերական հասկացություններ են և արագ փոփոխվող: Աղջկա խոսքից աշխարհը, Կովկասի ծեր արքան ցնցվում են: Ինչպե՞ս թե, չե՞ որ այդ մարդկանց իսկապես կարող էր երջանկացնել միայն նյութականը, շոշափելին՝ ոսկին ու արծաթը, անգին քարերն ու գոհարը, անգամ երկնքից վար բերված աստղերը: Նրանք կարող էին ի սրտե տալ, նվիրել դրանք: Այսպիսին էր այն դարաշրջանը, այսպիսին է նաև այժմ, ցավոք:

Հենց այս ամենն էր շեշտում հեթանոսական շարժման հիմնադիր Դանիել Վարուժանը՝ որպես 20-րդ դարասկզբի ամենամեծ պոետներից մեկը: Բանաստեղծը «Հարճը» պոեմում փառք է տալիս այն ասպետական դարերին, երբ իրական աստվածներն էին Ուժն ու Գեղեցիկը, և որ Սյունյաց Բակուր իշխանի հյուրերը գինարբուքի սեղանի շուրջ բազմել էին՝ ըստ իրենց «սուրերու» մեծության: Ցավոք սրտի, հազարավորների շարքերում ոչ հաճախ կտեսնենք այնպիսի մարդկանց, որոնց համար վերոնշյալ «թանկագին» համարվողները բնավ էլ արժեք չեն, և դրանք մարդուն երջանկացնել պարզապես չեն կարող: Որքա՞ն արդիական է, որքա՞ն բնորոշ մեր ժամանակներին: Կապիտալիզմի արմատները գնալով ավելի խոր ձգվեցին: Փարվանա դստերը հարկավոր չէր այդ ամենը՝ ո՛չ գանձ, ո՛չ արծաթ, ո՛չ անգին քարեր, ո՛չ էլ անգամ աստղը երկնքի: «Ես նրանից հուր եմ ուզում, Անշեջ հուրը սրբազան, Ով կբերի անշեջ հուրը, Նա է ընտրած իմ փեսան» (**Թումանյան Հ., 1990**):

Սա էր չնաշխարհիկ օրիորդի միակ ցանկությունը հավաքվածներից: Ինչ խոսք, այդ կտրիճները պատրաստ էին կովելու, պայքարելու հանուն «էն սիրունի»: Անշեջ հուրը այն կատարելությունն է, այն մշտնջենական սերը, որին սովորաբար ձգտում ենք ամենքս: Հասկացան արդյոք Փարվանա կտրիճները, թե ինչ էր աղջկա կամեցածը: Ցավոք, չհասկացան: Հատկանշական է, որ Փարվանա դուստրը դեռևս հավատում էր, որ, անշուշտ, կբերեն այս տարի կամ միգուցե եկող տարի ու կվերադառնան հարկավ: Կտրիճները թռան դեպի չորս կողմն աշխարհի, որ գտնեն բերեն անշեջ հուրը աղջկան. նա շարունակում էր հավատալ ու հավատով սպասել

նրանց դարձին: Սակայն, ցավոք, ժամանակը չի սպասում այն շարունակում էր սլանալ: Տարիները գալիս-գնում էին, ըստ կարգի ու օրենքի՝ հերթագայում միմյանց, սակայն այդպես էլ չէր երևում այն կտրիճը, ում երբեմն աղջիկը երագում տեսնում էր, «էն հերոսին ապագա», որը լուսանում էր ու չկա: Երբեմն կասկածն էր կրծում «էն սիրունի» հոգին, ու մերթնդմերթ հարցնում էր հորը. «Հայրի՛կ, ինչու՞ ետ չդարձան էն քաջերը սիրատենչ. Մի՞թե, հայրի՛կ, ինձ մոռացան, էլ չեն բերիլ հուրն անշեջ» (**Թումանյան Հ., 1990**)... «Ու՞ր է, հայրի՛կ, ե՞րբ կգա նա **Թումանյան Հ., 1990**) «Մի՞թե չկա էս աշխարհքում անշեջ հուր» (**Թումանյան Հ., 1990**):

Ստեղծագործության մեջ աստիճանաբար փոխվում են տրամադրությունները: Այն լուսավոր աշխարհի փոխարեն, որտեղ ապրում են բալլադի հերոսները, ընթերցողի երևակայության մեջ հառնում է մութ ու տխուր Փարվանա, և կյանքը ապարանքի պատերի ներսում ու դրանցից դուրս դառնում է «պաղ ու տխուր»: Ի՞նչ պիտի պատասխանի այն հայրը, որը այդ աշխարհի մի մասն էր: Նա գիտակցում էր, որ իրական սեր գտնելը չափազանց բարդ է, անգամ անիրատեսական, բայց հավատում էր, որ այդ անշեջ հուրը, որը պետք է երջանկացներ իր միակ դստերը, զավակին, պահպանում են յոթգլխանի դները «Մութ աշխարհքից», «սև ջրից» այն կողմ: Ինչևէ, այնքան տարբեր են մարդիկ ու նրանց ընկալումները իրերի, երևույթների նկատմամբ: Հաճախ հայրը հուսադրում էր դստերը. «Իմ դստրի՛կ, կըզան անշուշտ Ու կըբերեն էս տարի...» (**Թումանյան Հ., 1990**):

Աղջկան մնում էր լուռ ու համբերատար սպասել... Սակայն երբ Փարվանա չքնաղ աղջիկն ինքն է խոստովանում, որ միգուցե աշխարհում չկա անշեջ հուր, հայրը «...էլ չի խոսում. մռայլ, տրտում... Միտք է անում գըլխակոր...» (**Թումանյան Հ., 1990**): «Էսպես անցան շա՛տ տարիներ. Տխուր աղջիկն արքայի Նայե՛ց, նայե՛ց սարերն ի վեր, Ճամփաներին ամայի...» (**Թումանյան Հ., 1990**):

Հուսահատությունից լաց է լինում: Աղջկա արցունքներից գոյանում է Լոռվա աշխարհի հրաշալիքներից մեկը՝ Փարվանա լիճը, որի տակ են անցնում քաղաքը, ամրոցն ու շենքերը փառավոր: «Կորա՛ն, ինքն էլ հետը... Այժմ էնտեղ խոր Փարվանա լիճն է ծփում, Հստա՛կ, ինչպես արտասուք» (**Թումանյան Հ., 1990**):

Իսկ այն կտրիճները թռել էին դեպի չորս կողմն աշխարհի՝ բերելու անշեջ հուրը: Սակայն, ցավոք, նրանք այդպես էլ չհասկացան, որ աղջկա ուզածը ոչ թե իրական կրակն էր, այլ հոգու կրակը՝ սերը: Նրանք շտապելուց թն առան, դարձան թեթև թիթեռներ: «Ու տակավին հուր տեսնելիս ջանք է անում ամեն մինը Շուտով տանի, տիրանա... Ու այրվում են, այրվում անվերջ Կըտրիճները Փարվանա» (Թումանյան Հ., 1990):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, «Փարվանա» բալլադով մեծ բանաստեղծը փորձում էր պատասխանել մարդուն հուզող որոշ հարցերի, որոնք միշտ արդիական են: Նա, ի վերջո, եկավ այն եզրակացության, որ հավերժ սեր և կատարելություն չկա: Այս ստեղծագործությամբ Թումանյանը հակադրվեց Ավ. Իսահակյանին, որը «Հավերժական սերը» բալլադում զարգացնում է այն միտքը, որ սերը հավերժ է ապրում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Թումանյան Հ. (1990)**, Երկերի լիակատար ժողովածու, հ. 2, Երևան, Հայաստանի ԳԱ հրատ.:
2. **Թումանյան Հ. (1991)**, Երկերի լիակատար ժողովածու, հ. 2, Երևան, Հայաստանի ԳԱ հրատ.:
3. **Տերյան Վ. (1989)**, Երկեր, Երևան, «Սովետական գրող»:

REFERENCES

1. **Tumanyan H. (1990)**, Erkeri liakatar jhoghovac'ow /Complete collected works/, ten volumes, publishing house, Yerevan, N.A. of sciences of Armenia, volume two.
2. **Tumanyan H. (1991)**, Erkeri liakatar jhoghovac'ow /Complete collected works/, ten volumes, publishing house - Yerevan, N.A. of sciences of Armenia, volume two 2.
3. **Teryan V. (1989)**, Erker /Works/, Yerevan, The soviet writer.

Кристине Казарян

Тема человеческого совершенства и вечной любви

в балладе Ованнеса Туманяна

Резюме

Ключевые слова и выражения. Ованнес Туманян, Парвана, крепость, неугасимый огонь, смельчок, яблоко, состязание, слёзы, озеро, бабочки.

Человечество на протяжении всей своей сознательной жизни стремилось достичь совершенства. Человечество, пыталось найти совершенства в своём окружении, одновременно пыталось почувствовать в окружающем мире счастье вечной любви. И совершенство, и любовь, и душе человека, и вокруг создают гармонию.

В балладе «Парвана» великий писатель также попытался дать этимологию появления бабочек, кружащихся вокруг озера Парвана, света. Он сплел небольшой рассказ, выразив свои мысли и идеи.

Стихотворение отличается и роскошным языком, насыщая текст различными образными средствами, поэт сделал его еще более привлекательным.

Жемчужина армянской литературы «Парвана» была высоко оценена современниками и занимает свое место в армянской литературе.

Язык, структура, разнообразные изобразительно-выразительные средства баллады подчеркивают стиль только ему-всеармянскому поэту Ованнесу Туманяну.

В балладе «Парвана» обсуждается универсальная тема, идея, которая всегда будет спорной. Великий писатель, обобщая сказанное, наконец пришел к выводу, что в этом и без того преходящем мире нет ничего вечного. имеет исключительную ценность в нашей литературе и противопоставляется балладе Аветика Исаакяна «Вечная любовь».

Christine Ghazaryan

The ideology of human thoroughness and eternal love in the ballad "Parvana"

by Hovhannes Hovhannes Tumanyan

Conclusion

Key words and expressions: *Hovhannes Tumanyan, "Parvana", a castle, quenchless fire, daredevil, an apple, a duel, tears, a lake, butterflies.*

Humanity has strived for thoroughness within all his conscious life, at the same time looking for it around, has tried to feel the delight of eternal love in the surrounding world. Both love and thoroughness in a human's soul and around him create harmony. In the 21st century a very quickly changing human being, anyhow, also strives for this harmony. The ballad "Parvana" written by Hovhannes Tumanyan is a creation having all these ideas in its base, what is an unequalled value in the rich treasury of our culture. The ballad language, structure, imaging-expressive different tools of the ballad emphasize the unique typical style of all Armenians writer Hovhannes Tumanyan.

In the "Parvana" ballad, the great writer also tried to give the etymology of the appearance of the butterflies circling around the Parvana lake, the light. He weaved a short story, expressing his thoughts and ideas.

The gem of Armenian literature, "Parvana", was highly appreciated by contemporaries and has its own place in Armenian literature.

Քրիստինե Ղազարյան - Երևանի Աշոտ Մանուկյանի անվան համար 93 դպրոցի ուսուցչուհի. kristinekazaryanh@mail.ru

Кристине Казарян - Учительница школы N 93 имени Ашота Манукяна. kristinekazaryanh@mail.ru

Christine Ghazaryan - A teacher at school N 93 named after Ashot Manukyan. kristinekazaryanh@mail.ru

«Հայագիտական հանդես» ամսագրի խմբագրությունը չեզոքություն է դրսևորում հոդվածներում արտահայտած կարծիքների ու տեսակետների նկատմամբ:

ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈՒՅԱՆ

ԿՈԼԱԺԸ՝ ՈՐՊԵՍ ՄԻՋՏԵՔՍԱՅՆՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿ
(ԸՍՏ ԳՈՒՐԳԵՆ ԽԱՆՋՅԱՆԻ ԿՈԼԱԺՆԵՐԻ)

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v2i65.112

ԱՍՓՈՓՈՒՄ

Հոդվածում քննության են առնված Գուրգեն Խանջյանի կոլաժները: Կոլաժն ու կոլաժային մտածողությունն առհասարակ նշանակալի դեր ունեն մշակույթների միջև կապ ստեղծելու, երկխոսելու և այդ կապի միջոցով սեփական ինքնությունը բացահայտելու, հասկանալու գործում: Սկսելով կոլաժի պատմողականության գնահատումից՝ հոդվածում քննության ենք առել կոլաժային պատմվածքի հաղորդակցական և կառուցվածքային պոետիկան Գ. Խանջյանի ստեղծագործությունների օրինակով:

Հանգել ենք այն եզրակացությանը, որ Գ. Խանջյանը, գեղարվեստական տեքստը խճողելով այլ տեքստային ներդիրներով ու կոլաժային կողավորմամբ, արտահայտել է ազգային և անհատի ինքնության որոնումների բազմաբարդ ուղին՝ ստեղծելով բազմամոդալ միջտեքստային կառույց, որտեղ յուրաքանչյուր տեքստ այլ տեքստի կլանումն ու փոխակերպումն է:

Բանալի բառեր և արտահայտություններ. Գուրգեն Խանջյան, միջտեքստայնություն, կոլաժ, միջմշակութային կապ, բազմամոդալություն, ազգային և անհատի ինքնություն:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գ. Խանջյանի «Մարդկանց տուն ուղարկիր» գրքում տեղ գտած կոլաժների՝ մեզ հայտնի գրականագիտական արձագանքներից է գրականագետ Զավեն Ավետիսյանի «Կոլաժը որպես գրական ժանր» հոդվածը: Հոդվածագիրը, Խանջյանի կոլաժները բացառիկ իրողություն որակելով հայ գրական դաշտում, անդրադարձել

է դրանցում առկա ժանրային ու պատկերավորման միջոցների բազմազանությանը: Զ. Ավետիսյանը, ընդհանրացնելով հեղինակի և նրա հերոսի կերպարը, եկել է այն եզրահանգման, որ հեղինակն ու նրա հերոսը երևույթները, իրերը գիտակցելու, ընկալելու երկու սկզբունք ունեն՝ վիզուալ և սենսուալ: Նա այդ հատկանիշները մեկնաբանում է անկողմնորոշ հերոսի հանգամանքով» (Ավետիսյան Զ., 2005):

Մեր նպատակը Գ. Խանջյանի կոլաժների մեկնաբանությունն է միջտեքստային կապերի տեսանկյունից: Խնդիրներն են բացահայտել միջտեքստային կոլաժների ստեղծման ռազմավարությունն ու սկզբունքները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրությունը կառուցված է համաշխարհային գրականագիտության մեջ հայտնի գիտական հետևյալ հարացույցների երկխոսության սկզբունքի հիման վրա՝ հերմենևտիկա, ֆենոմենոլոգիա և սոցիոլոգիա (Տուրիշևա Օ., 2017):

Հերմենևտիկան, որ իր ձևավորման շրջանից ի վեր գրականագիտության մեջ ձեռք է բերել տեսական և մեթոդաբանական բազմազան տարբերակներ, միտված է գեղարվեստական ստեղծագործության թաքուն, խորքային իմաստի մեկնաբանմանը: Հերմենևտիկական ուղղության նոր տարբերակը զարգացնում է այն գաղափարը, որ տեքստը՝ իբրև իմաստային իրողություն, գոյություն չունի. կարելի է խոսել միայն իմաստների ձևավորման գործընթացի մասին:

Հերմենևտիկայի այս նոր մեկնաբանության շարունակությունը կարծես լինի ֆենոմենոլոգիան, որը կողմնորոշում է ուսումնասիրողին՝ բացահայտելու գեղարվեստական տեքստը ստեղծող կամ ընկալող գիտակցության աշխատանքի փորձը: Հերմենևտիկայի և ֆենոմենոլոգիայի համադրման տարբերակն առաջարկել է Պոլ Ռիկերը՝ այն անվանելով «հերմենևտիկային ֆենոմենոլոգիական պատվաստանյութ ներարկելու» միջոց:

Սոցիոլոգիական հարացույցի մեթոդաբանությունը մի կողմից ուղղված է ստեղծագործությունում արտաքին ազդակների՝ սոցիալական, մշակութային, տնտեսական, պատմական պատճառների ամբողջության բացահայտմանը, մյուս կողմից, գրականությունն է դիտում հասարակական գիտակցության ձևավորման

գործոն: Այս մեթոդի օգնությամբ փորձել ենք բացահայտել այն պատճառները, որոնք ձևավորել են գեղարվեստական երկի ստեղծման յուրահատկությունները, ինչպես նաև նրա համատեքստային մեկնաբանության առանձնահատկությունները:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Կոլաժի պատմողականությունը: Ռ. Շտայները, խոսելով մոդեռնիստական գեղանկարչության մասին, նշում է, որ ցուցահանդեսների ժամանակ նույն վայրում տարբեր նկարներ հավաքելը կարծես նշանակում է կերպարվեստը միջտեքստային պատահական շրջանակի մեջ առնել, որն արմատապես ազդում է այդ նկարների ընկալման և ընդունման վրա: «Որոշումներն այն մասին, թե ինչ նկարներ պետք է կախել միասին կամ ինչ նկարներ զետեղել գրքում, ստեղծում են հարաբերություններ առանձին նկարների միջև, որոնք սովորաբար չէին կարող լինել դրանց սկզբնական ձևավորման և մտահղացման մաս» (Можейко М., 2001): Այս տեսանկյունից տեքստում մշակութային տարբեր իրողությունների կոլաժային համադրությունը ևս կարող է իմաստային ցուցիչի գործառույթ կատարել: Այս առումով բավականին ուշագրավ է ոչ միայն Գ. Խանջյանի ստեղծագործություններում տեքստային հատվածների կոլաժային զուգակցումը, այլ նաև դրանց դասավորությունը, որոնք ընդգրկվել են նախ նրա «Մարդկանց տուն ուղարկիր» (Խանջյան Գ., 2004), ապա նաև «Նամակներ ընթացքից» (Խանջյան Գ., 2009) գրքերում:

Կոլաժի փոխակերպումը կերպարվեստի տեխնիկայից տեքստերի կառուցման ունիվերսալ սկզբունքի իրականացվել է ավանգարդիստական արվեստի ներկայացուցիչների կողմից. նրանք հայտնաբերել են գեղարվեստական տեխնիկայի կարողությունը՝ տապալելու նշանների ավանդական իմաստաբանությունը, քննադատելու նշանների ամբողջականությունը, իրականության մասին պատկերացումների գոյություն ունեցող համակարգը: Տեքստերի կառուցման նոր մեթոդը տարածվել է արվեստի բոլոր տեսակների վրա և այնուհետև պոստմոդեռնիստների կողմից հռչակվել որպես համընդհանուր «մշակութային տարածքի կազմակերպման սկզբունք» (Юнг К., 1991): Այս առումով

կարևոր է մշակութային հարուստ գիտելիք ունեցող ընթերցողը, որպեսզի կայանա միջմշակութային կապն ու կոլաժային կառույցի գործառույթը:

Գ. Խանջյանի կոլաժները: Ըստ հեղինակային դասավորության՝ առաջինը «Կոլաժ բլուզ՝ տիբեթյան շան մասին» գործն է. այստեղ հերոսը գնացքի ուղևոր է, որը փորձում է գտնել իր արմատները: Նա երկխոսում է մի աղջկա հետ, որն էլ իր հերթին փնտրում է իր Մոլոս շանը: Մոլոսը շան հնագույն ցեղատեսակ է, որը հայտնի է իր արտասովոր ուժով, ֆիզիկական ցավին դիմանալու կարողությամբ, անհնազանդությամբ ու խելացիությամբ: Մոլոսը հաճախ է հիշատակվել համաշխարհային գրականության տեքստերում՝ Հոմերոսի, Եվրիպիդեսի, Վերգիլիոսի և այլոց գործերում: Խանջյանը համադրություններով ու հակադրություններով է կառուցել տեքստը՝ մոլոսին կապելով Ալազյազում ապրող Գամփոի հետ և այդպիսով կապ ստեղծելով Տիբեթի ու Ալազյազի միջև:

«Մոլոսների ցեղից եմ ես, բայց ապրում եմ Ալազյազում,

Ապրում եմ ես Ալազյազում, բայց ձեզ սիրուն երգ եմ ասում:

Ալազյազա ոչխարների բլուզն է սա, օխչարի բլուզ...» (Խանջյան Գ., 2009):

Մոլոս-Գամփո, Տիբեթ-Ալազյազ-Աշտարակ, Դալայ Լամա-դմբո, Մոլոսյան բլուզ-օչխարի բլուզ, կաթ ու մածուն-խոտածաղիկ, բուրդ-բարդու բամբակ զույգերով հեղինակն ապահովել է միջմշակութային կապերը, ազոավի դունդունանք-աղավնու կոկոռց, կանաչ խոտ-կարպետ, թուք-արյուն բինարային զույգերով ընդգծել են միջտեքստային կապերը, իսկ թան-կոլա, ժողովրդական երգ-բլուզ զույգերով հեղինակը շեշտադրել է ազգային առանձնահատկությունները և ժամանակի ու տարածության խնդիրը: Հոտերի վիզուալիզացիայի միջոցով բացահայտվում է հերոսի ալտեր էգոն: Հերոսի՝ դեպի կամուրջը կամ կայարան գնալու, գնացք նստելու ցանկությունները տեքստային նշաններ են, որոնք փաստում են ինքնահղման՝ հեղինակային ինտերտեքստի մասին.

«Իմ սերն ապրում է Աշտարակում, նա լքել է ինձ,

Ու թե չվերադարձավ, ես կգնամ դեպի կամուրջը:

Աշտարակի պոպոքը, Համայակի սապոգը, Համայակ ջան...» (Խանջյան Գ., 2009):

Անհամատեղելի իրողությունները, իրականն ու անիրականը միմյանց հետ կապելով, երաժշտական ու գրական տեքստերը համատեղելով՝ հեղինակը ժանրային բազմամոդալություն է հաղորդում իր ստեղծած տեքստերին, որտեղ կոլաժի սկզբունքով արված մեջբերումների նպատակն է ուշադրությունը կենտրոնացնել ասելիքի, հիմնական գաղափարի, մտքի հիմնախնդրի վրա: Կոլաժայնությունը դառնում է աշխարհը մեկնաբանելու և գեղարվեստական արտահայտման չափերը բազմապատկելու միջոց:

Հաջորդ՝ «Տունդարձի կոլաժում» հեղինակ-հերոսի գլխում սեփական տան ու տունդարձի մասին մտքերն են: Այստեղ ևս զուգադրվում են միջմշակութային հին ու նոր իրողությունները: Այսպես, զուգադրվում են Պոսեյդոնն ու ճահճի ջրիմուռներով պատված, խեղդամահ մեկը, Ուլիսեսն ու հեղինակին ժամանակակից տնանկը, որը պատկերացնում է իր տունը կարուսելների շարունակական պտույտի մեջ, պտույտի ներսում, քանի որ այդ դեպքում տունը ևս կարուսելի նման կենտրոն կունենա: Մտակառույց տան պատկերին հաջորդում է ծուռ հայելիների սենյակը, որը նախընտրելի է իսկական հայելուց, որովհետև իսկական հայելին, ինչպես և իսկական իրականությունը սարսափելի են: Կարևորվում է փոքրից մեծ պտույտների անցնելու հնարավորությունը, քանզի այդպիսով մեծանում է ինչ-որ բան գտնելու հավանականությունը: Կարուսելի պտույտը, որ կյանքի հավերժության խորհրդանիշն է, պարզվում է, հերոսի մտապատկերում է, իրականության մեջ այն կանգնած է, չի պտտվում, աստիճանները վնասված են, կոտրված, ձիուկի մոտիժը ջարդված է, փղիկի կնճիթը՝ կիսված. այն տարիների ընթացքում չի մեծանում: Միֆաքայքայման միջոցով Պոսեյդոնի և Ուլիսեսի միջավայրերը հակադրվում են ժամանակակից իրականությանը, որտեղ ջարդված 22ի, «Կիլկա» պահածոյի դատարկ տուփի, տիդմից մեկ երրորդով դուրս ցցված լրագրի, մեկ ու կես երրորդով դուրս պրծած ռադիոյի, երկու երրորդով դուրս պրծած հեռուստացույցի, երեք չորրորդով լվացված կրպակի ու բանվորական արտահագուստով, «Կազբեկ» ծխող տղերքի պատկերներ են: Ջրային ու ցամաքային միջավայրերի, հին ու նոր ժամանակների կտրուկ անցումները, որ բնորոշ են կոլաժին, խորհրդանշում են կյանքի հարափոփոխ բնույթը, սակայն ներկայում այդ շարժը կասկածի տակ է

դրված. կարուսելն անշարժ ճոռում է, հեքիաթը չի տարածվում զբոսայգով. հերոսին անհանգստացնում է շարժման գաղափարը. «Ազդրիս վրայով, տաբատի տակ, մրջյուն վազեց: Ցրտում է: Գնալ է պետք: Այո՛, ժամանակն է, պետք է գնալ՝ փոքրից մեծ պտույտներով և չկասկածել. սա շատ կարևոր է՝ չկասկածել» (Խանջյան Գ., 2009): Անշարժություն կարող է հանգեցնել մարմնի վրայով մրջյունների վազքին:

«Մարգագետնային կոլաժում» միջտեքստային շերտերն ավելի ակնհայտ ու շեշտված են: Մարգագետինը երկրագունդն է, որը հեղինակը աստվածաշնչյան հետևյալ մեջբերմամբ է բնորոշում՝ «մազաչափ ոչինչ չես ավելացնի ու չես պակասեցնի»: Այստեղ այլ տեքստերի, մտքերի ներկայությամբ տրոհված է ոչ միայն հիմնական տեքստը, այլ նաև տեքստի պայմանական հերոսը: «Կա-չկա տրոհված ես, եղբայր, չլինի՞ զիտակցությունդ չդիմացավ, պայթեց ու բեկորները հիմա ֆոֆոում են գլխիդ շուրջն, ինչպես էլեկտրոնները՝ միջուկի» (Խանջյան Գ., 2009): Հակադրվում են ստի և ճշմարտության գաղափարները՝ հանգելով անհատի օտարացման, միայնության գաղափարին. «Եթե չես ուզում խաբված լինել, ընկեր մի՛ ունեցիր, շուն ու կատու ունեցի՛ր» (Խանջյան Գ., 2009): Հաջորդում են Գազանանոցի և Գրադարանի, Կարմիր գրքի ու Սև գրքի զուգորդումները, որոնց մասին մտորումներն ի վերջո բերում են Աստծո գոյության մասին մտորումների՝ հանգելով նիցշեական «Աստված մեռել է» փիլիսոփայության գաղափարին: «Աստված կա՞... Դե կա, կա, հանգստացիր, սա ի՞նչ հիվանդություն է, Աստվածային հիվանդություն: Մոռացիր: Կա, բայց քոնը չի: Չէ, կա, բայց զբաղված է, քեզնով զբաղվելու ժամանակ չունի: Հանգիստ թող Աստծու դին» (Խանջյան Գ., 2009) (ընդգծումը մերն է՝ Ն. Ն.): Գազանանոցն ու գրադարանը բնագոյային ու բանականության խորհրդանիշների դեր են կատարում, ընդ որում, գազանանոցի՝ *հանրային* գրադարանի ներքնահարկում տեղակայված լինելու փաստը հղում է Յունգի «կոլեկտիվ անգիտակցականի» գաղափարին: Ըստ Յունգի՝ կոլեկտիվ անգիտակցականը ավելի խորն է, քան անձնական անգիտակցականը: Կոլեկտիվ անգիտակցականում են գտնվում բոլոր արքետիպերը (Ожух Л., 2008): Հեղինակի մտքերը մի պահ կանգ են առնում գազանանոցի վրա, որտեղ ինչ ուզում ես, կարող ես անել, սակայն մտքերի հոսքը շարունակվում է դեպի Մարգագետին, որտեղ գեղեցիկ-ուզեղ, ուրախ-տխուր,

չար-բարի բինարային հասկացությունները ցածր գաղափարներ են. «Մարգագետինն քո իմաստություններից անդին է փոված»: Հայտնի «Գեղեցիկը կփրկի աշխարհը» ասացվածքի քայքայումով հեղինակը ցույց է տալիս մարգագետնի՝ տիեզերքի հարափոփոխությունը, գաղափարների անկայունությունը: «Մի՛ մտածիր գեղեցիկի կամ տգեղի մասին, հանկարծ չասես, որ Սա հենց այն գեղեցիկն է, որ կփրկի աշխարհը, անհեթեթ մի եղիր, պարզապես նայիր, հոտ քաշիր, շնչիր, հանիր միջիցդ հույզերը, թող միայն տեսնելու, զգալու կարողությունդ» (Խանջյան Գ., 2009): Հեղինակը զգուշացնում է, որ կաղապարների հետևից գնալը կարող է վտանգավոր լինել:

Հաջորդիվ «Կալոժ Զեմֆիրայի մասին» գործն է, որը հեղինակը կառուցել է՝ ռուս երգչուհի Զեմֆիրայի «-140», «Երիցուկներ», «Անսահմանություն», «Փնտրում էի» երգերից առանձին տողեր վերցնելով: Արդյունքում ստացվել է մի խճանկար, որը գաղափարական բանավեճ է ռուս երգչուհու հետ: Այստեղ նույնպես հանդիպում ենք գնացքի, մետրոյի, թունելի, փողոցի, տիեզերքի, տան խորհրդանիշների: Զեմֆիրայի «-140» վերնագրով երգի սկզբի հատվածի նմանությամբ Խանջյանն այսպիսի կոլոժային միջտեքստայնություն է ստեղծել.

«Странно, трамваи не ходят кругами,

А только от края до края». Զեմֆիրա

«Տարօրինակ է... Ինչո՞ւ մետրոյի գնացքը չի պտտվում փողոցներով, այլ միայն գետնի տակ, մութ թունելներով, մի ծայրից մյուսը» (Խանջյան Գ., 2009):

Տրամվայ-մետրո զուգորդումով Խանջյանը շարունակում է միտքը՝ շեշտը դնելով մարդկային հարաբերությունների, շփումների բնույթի վրա: Ակնհայտ են ռուսական իշխանությունների և առկա իրողությունների մասին բազմանշանակ ակնարկներ, ինչպես՝ «Եվ ինչո՞ւ այսպես *կենտրոնաձիգ* է ամեն բան, ու *փողոցները չեն փախչում տիեզերքով*, և երբեք չեն հանդիպում տարբեր մոլորակների փողոցներն իրար» (Խանջյան Գ., 2009): Կենտրոնաձիգ լինելը ռուսական իշխանությունն է, որը հետխորհրդային շրջանում մեզանում ևս լիովին չի հաղթահարվել:

Տեքստում ներկայացվում է մարդու արժեզրկման աստիճանական ընթացքը:

«Կրպակի մոտ մեր ժամանակի վկաները փրփուր են փչում գարեջրի վրայից ու ցրված ժպտում գավաթի միջով, ժպիտի տակ՝ բարեհոգություն, ներողամտություն, ժպիտի տակ՝ ափսոսանք, ակնարկ, ժպիտի տակ... ժպիտի տակ... խորքում, ավելի խոր... նախամոր չորացած ծծերն ու դիվային կրակող աչքերը, գայլահմա քուրմն ու հմայված գայլեր, ցուլեր, եղջերուներ ու հիպնոսի մեջ քնած թրատամ վագր, ժպիտի տակ՝ վարդագույն միս, ուրիշ մսեր...» (Խանջյան Գ., 2009): Մարդուն որպես միս դիտելու պետությունների քաղաքականության ուղղակի ծաղրն է կոլաժի այս հատվածը. «Միսն էլ պոեզիա է, մեղեդի ու ռիթմ, նաև պատմություն՝ եթե դեռ տաք է» (Խանջյան Գ., 2009): Ուշագրավ է նաև հետևյալ ձևակերպումը. «Մեր սուզանավը նաև այստեղ է՝ մսերի ներսում, նույն սուրբ պլազմայի մսային խտացումն է, հետո կլինի ապախտացում-լորձ-փրփուր, վերստին՝ *խտացում, հեղուկացում, գերխտացում, բետոն, ալմաստ, ուրան, երկրաշարժ, պայթյուն, ազատում, թոփչք...*»: Մեր ընդգծած հատվածում բերված բառերի շարանում դժվար չէ տեսնել խորհրդային ու հետխորհրդային մի որոշակի ժամանակաշրջանի խտացված պատկերը՝ բառական կաղապարներով:

Խանջյանի ստեղծած կոլաժների ուշագրավ համապատկերը եզրափակվում է **«Կոլաժ խեղճիկի համար»** գործով, որտեղ հերոսը, որին հեղինակը խեղճիկ է անվանել, խորհրդանշում է աշխարհի մարդուն: Խեղճիկը, լինելով աշխարհի քաղաքացի, ունի նաև որոշակի ազգային դիմագծեր: «Սակայն ի՞նչ Մատուբի, Մատուբին ո՞վ է, ախր ո՞վ է այդ Մատուբին, նրա տիրոջ մերը... Ի՞նչ գործ ունես Մատուբիի հետ, ի՞նչ անենք, որ Նոյից է սերվել ու նրա նախնին էլ Արարատի փեշով է իջել, ինչո՞ւ ես ուզում աշխարհի բոլոր խեղճիկներին գլխիդ հավաքել, դու քեզ հերիք չե՞ս, դու քո կոկորդիլոսներն ու երգը չունե՞ս... Վերջ, ոչ մի Մատուբի, մենք էգոիստ ենք, եսապաշտ: Վերջ...» (Խանջյան Գ., 2009): Մատուբին ջունգլիների սևամորթ ներկայացուցիչ է, որը համարձակ է, պայքարող, ուժեղ: Տեքստում մեջբերվում է «Նավավարի երգը» վերնագրով չափածո հատված, որը մի կողմից հղում է Ա. Ծատուրյանի «Նավավար» բանաստեղծությանը, մյուս կողմից՝ Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմում առկա նավաբեկության պատկերին:

«Քայքայվեց նավը թիավարության,

Հիմնախիլ եղավ կայմը բարձրաբերձ...» (Խանջյան Գ., 2009):

Բանաստեղծական հատվածն տխուր է ավարտվում.

«Որպես արդյունք այդ ավերածության՝

Մնաց ողբերիս հուշարձանն այս լոկ» (Խանջյան Գ., 2009):

Տեքստում ակնհայտ են զգուշավորության, վախի ու ցավի զգացողության արտահայտությունները: Վախն ու ցավը մեղմելու համար հայտնվում է ՆԱ-ն: «Սսսս՝ս, վեր չնայես, *չնայես, չմտածես, չքննարկես*, այնտեղ ՆԱ է: ՆԱ քեզ հետևում է: ՆԱ միշտ հետևում է, երբ հիվանդությունը հետաքրքիր է...» (Խանջյան Գ., 2009) (ընդգծումը մերն է՝ Հ. Հ.): Հարկ է նկատել, որ հետապնդված լինելու ու կառավարելիության մասին մտքերը բավականին շատ են հանդիպում ժամանակակից հայ գրականության էջերում (հիշենք Ա. Գյուլբանգյանի, Ա. Պաչյանի, Հ. Սարիբեկյանի ստեղծագործությունները): Այդ մտքերը կապված են աշխարհաքաղաքական թեժ զարգացումների հետ, որոնց հղումները տեսնում ենք նաև Խանջյանի տեքստում: «Սկսվեց, սկսվեց, սկսվեց... Երկինքը բառաչում է, փոթորիկն ուժգնացավ անսպասելիորեն, ճայթեց *քաթանե վարագույրը*՝ ճիշտ երկու կես եղավ, *կարմիր լուսինը* ճաքեց դիրիգով և շրջվեց ջրերի մեջ, ծովն ուռեց, պրկեց կեղևը, ջրերն ահագնացան, պայթեցին ու սուրացին վիրավոր գոմեշի մոնյունով... Ո՞ր է լուսինը... *Շնաձկներն* են հոշոտում *արնագույն լուսինը*: Սակայն *նավը*, նավն անկարող է այլևս դիմակայել... Ախր ասվեց քեզ, *բոցման*, ասվեց, չէ՞, «Հեյ, բոցման, ի՞նչ ես անում, զուր ես նստում դու նավակ...» (Խանջյան Գ., 2009) (ընդգծումները մերն են՝ Հ. Հ.): Նշված բառերը կողավորված նշաններ են, որոնց գործառույթն ավելին է, քան պարզապես անցյալի գրական և մշակութային խորհրդանիշներ լինելը: Իրականության հետ համատեղելի և անհամատեղելի ինտերտեքստերի միջոցով հեղինակը ստեղծում է սեմիոտիկ միասնություն՝ ամբողջացնելով պատմական իրադարձությունների շղթայի պատկերային համակարգը, որը կարելի է վերծանել գրական ու մշակութային մետաֆորային տարրերի մասին որոշակի նախագիտելիք ունենալու պարագայում: Այսպես՝ «երկաթե վարագույր» հայտնի դարձվածքը փոխարինվել է «քաթանե վարագույր» արտահայտությամբ, կարմիր կամ արնագույն լուսինը, ինչպես հայտնի է, թուրքական դրոշի, ուստիս պետության խորհրդանիշն

է, երկնքի բառաչելն ու փոթորիկի ուժգնանալը պատերազմի ակնարկ է, շնաձկան ու ծովի ներկայությունը ամբողջացանում է նկարագրվող պատկերը՝ դառնալով Հեմինգուեյի «Ծերունին ու ծովը» հանրահայտ գործի ակնհայտ այլուզիա:

Խորհրդապատկերներով ստեղծված պատերազմական իրականության պատկերներին հաջորդում է դրամատիկական ժանրին բնորոշ կարճ հատված, որտեղ գրուցում են Ս. Բեքեթի հայտնի «Գողթին սպասելիս» գործի հերոսներ Փոզգոն, Էստրագոնը և Վլադիմիրը: Այստեղ շեշտվում է սպասման գաղափարը. գրուցակիցները սպասում են Գողթին, որին նույնիսկ չեն ճանաչում, բայց *սպասում են*: Նորից վերադարձ է կատարվում խեղճիկին, որն իր ծովի հետ պայքարում մենակ է, չկա նավը, «այսինքն կա, բայց ուրիշ տեղում է և բացարձակ անօգուտ քեզ համար, մի մտածիր այլևս նավի մասին» (Խանջյան Գ., 2009): Շնաձուկը Խանջյանի տեքստում, ինչպես Հեմինգուեյի մոտ, երկու տեսանկյունից է ներկայացված. «Շնաձուկը փրկի՞չ... Նայած ո՞վ է ուղարկել» (Խանջյան Գ., 2009): Նավավարը, որ նույն խեղճիկն է, կյանքի ծովում պայքարող մարդը: Արևի ծագելու հեռանկարը հուսադրում է խեղճիկին, սակայն կծագի՞ արդյոք նոր արփի: Ի պատասխան հեղինակը բերում է երաժշտական նոտաների պատկեր՝ Ջոնի երգի տեսքով, սակայն երգին ունկնդիր և հաղորդակից չկա, Ջոնին չեն հասկանում, մշակույթը չի գնահատվում, կա հավանականություն, որ այն կարող են նույնիսկ պղծել: Այա ինչի՞ն ապավինի խեղճիկը ապրելու համար: Գուցե սիրուն: «Այո, եսապաշտ ենք, մորթապաշտ, և ջանում ենք փրկվել. ինչո՞ւ ոչ: Ինչո՞վ: Սիրով: Այո, սիրով. ճերմակ կրծքիկ, ճերմակ ծնկիկ, ճերմակ պարանոց, բարակ մեջք...» (Խանջյան Գ., 2009): Փրկության փնտրտուքը խեղճիկին կարծես տանում է դեպի աշխարհի քաղաքացի լինելու գաղափարին, նրան մի պահ թվում է, թե այլևս խեղճիկ չէ, սակայն... դարձյալ չի ստացվում: «Դե՛հ, ուրեմն հաց թխի՛ր, ցորեն ցանի՛ր, ջուրը շո՛ւտ տուր արտիդ վրա, հերկի՛ր, հնձիր ու ասա՝ «Կանգ առ ժամանակ, քանզի հրաշալի ես»: Հրաշալի է, չէ... Չէ՞... Ինչո՞ւ չէ, խեղճիկ»: Գյոթեի խոսքերին հաջորդում է շեքսպիրյան հայտնի «Լինել, թե չլինել» թեզը, որը հոգնեցնող է թվում, քանզի վրայով շատ են անցել: Փոխարենն առաջարկվում է զանգվածի պահպանման օրենքի քիմիական բանաձևը, ըստ որի՝ ռեակցիայի մեջ նյութը չի կարող ստեղծվել կամ ոչնչացվել. զանգվածը

ռեակցիայի ընթացքում կարող է ձևափոխվել, բայց նյութը չի ստեղծվում կամ ոչնչացվում: Դրան հաջորդում և փոխարինում է ֆիզիկական $E=mc^2$ զանգվածի և էներգիայի համարժեքության բանաձևը, որը թերևս բոլոր ֆիզիկական բանաձևերից ամենահայտնին է, ինչը պայմանավորված է ատոմային զենքի հետ նրա կապով: Բացի այդ, հենց այս բանաձևն է խորհրդանշում հարաբերականության տեսությունը և լայնորեն օգտագործվում է գիտության հասարակայնացման համար (**Окунь Л., 2008**):

Գրականությունը, մշակույթն ու նույնիսկ գիտությունը այդպես էլ չեն օգնում մարդուն գտնել փրկության ուղին: Մարդը շարունակում է տառապել ու որոնել փրկության ուղին, իսկ հեղինակը շարունակում է նրան ուղղորդել՝ կիրառելով նշանային բառեր ու արտահայտություններ և ակնհայտ դարձնելով, որ խեղճիկը եղել ու շարունակում է խաբված մնալ աշխարհաքաղաքական խաղերի բովում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, համաշխարհային և հայ գրականության տարբեր տեքստեր ու տեքստային նշաններ կիրառելով՝ Խանջյանը ստեղծել է մեկնողական բացահայտումներով նորիմաստ կառույց, որը համապարփակ ներկայացնում է աշխարհի ստեղծումից ի վեր մարդու, ինչպես հեղինակն է բնորոշում, խեղճիկի անցած ուղու՝ մաքառումներով լի փրկության, տառապանքից ազատվելու ճանապարհի համառ ու մշտական որոնումների պատկերը, որը շարունակվում է ու դեռ կշարունակվի. անվերջ է: Խանջյանի ստեղծագործությունների կոլաժային հատվածներից յուրաքանչյուրը (այսինքն՝ արձակ և կոլաժ-պատկեր գուգորդումները) կարելի է կարդալ կամ առանձին կամ որպես բաղադրիչներ ավելի մեծ փոխկապակցված հաջորդականությամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Ավետիսյան Զ. (2005)**, Կոլաժը որպես գրականության ժանր, «Գրական թերթ», 6 մայիսի, էջ 8, 9:

2. **Խանջյան Գ. (2004)**, Մարդկանց տուն ուղարկիր (կոլաժներ, էսսեներ, վիպակ, պիեսներ), Երևան, «Անտարես» հրատ.:
3. **Խանջյան Գ. (2009)**, Նամակներ ընթացքից, Պատմվածքներ, էսսեներ, կոլաժներ, Երևան, Հեղինակային հրատ.:
4. **Տուրիշևա Օ. (2017)**, Արտասահմանյան գրականագիտության տեսությունը և մեթոդաբանությունը, Երևան, ԵՊՀ հրատ.:
5. **Steiner, J. (1985)**, Turning a Blind Eye: The Cover up for Oedipus. International Review of Psychoanalysis, 12, 161-172.
6. **Можейко М. (2001)**, Коллаж //Постмодернизм//: Энциклопедия. – Минск: Интерпрессервис, с. 368–369.
7. **Юнг К. (1991)**, Архетип и символ, Москва, «Ренессанс», с. 41-45.
8. **Окунь Л. (2008)**, Формула Эйнштейна: $E=mc^2$. «Не смеётся ли Господь Бог?», УФН, , том 178, с.541–555:

REFERENCES

1. **Avetisyan Z. (2005)**, Kolajhy' orpes grakanowt'yan jhanr /Collage as a genre of literature/ Grakan tert, May 6, p. 8, 9.
2. **Khanjian G. (2004)**, Mardkanc town owgharkir (kolajhner, e'ssener, vipak, piesner) /Send people home (collages, essays, novels, plays)/, Yerevan, Antares, 192 pages.
3. **Khanjian G. (2009)**, Namakner y'nt'acqic, Patmvac'qner, e'ssener, kolajhner /Letters from the process, Stories, essays, collages/, Yerevan, Author's edition, , pp. 244-250.
4. **Turisheva O. N. (2017)**, Artasahmanyany grakanagitowt'yan tesowt'yowny' ev met'odabanowt'yowny' /The Theory and Methodology of Foreign Literary Studies/, Yerevan, YSU publishing house, 266 p.
5. **Steiner, J., (1985)**, Turning a Blind Eye: The Cover up for Oedipus. International Review of Psychoanalysis, 12, 161-172.
6. **Mozheiko M. (2001)**, Collage //Postmodernism//: Encyclopedia. – Minsk: Interpresserswiss.,. – P. 368–369.
7. **Jung K. (1991)**, Archetype and symbol, Moscow, “Renaissance”, 41-45.

8. Okun L. (2008), Einstein's formula: $E=mc^2$. "Isn't the Lord God laughing?", UFN, volume 178, art. 541–555:

Асмик Акобян

Коллаж как способ интертекстуальности (по коллажам Гургена Ханджяна)

Заключение

Ключевые слова и выражения: Гурген Ханджян, интертекстуальность, коллаж, межкультурная связь, мультимодальность, национальная и индивидуальная идентичность.

В статье мы рассмотрели коллажи Гургена Ханджяна. Коллаж и коллажное мышление играют значительную роль в создании связи между культурами, в диалоге и через эту связь в раскрытии и понимании собственной идентичности. Начав с оценки коллажного повествования, в статье мы рассмотрели коммуникативную и структурную поэтику коллажного повествования на примере творчества Гургена Ханджяна.

Мы пришли к выводу, что Гурген Ханджян, переплетая художественный текст с другими текстовыми вставками и коллажным кодированием, выразил сложный путь поиска национальной и индивидуальной идентичности, создав мультимодальную интертекстуальную структуру, где каждый текст является поглощением и трансформацией другого текста. Используя различные тексты и текстовые символы мировой и армянской литературы, Ханджян создал новую структуру с интерпретативными находками, которая всесторонне представляет картину пути, пройденного, по определению автора, бедняком с момента сотворения мира, стойкого и постоянный поиск спасения, полный лишений, пути избавления от страданий, который продолжается и будет продолжаться, он бесконечен. Каждый из коллажных разделов произведений Ханджяна (т. е. сочетание прозы и коллажа-изображения) можно читать как отдельно, так и как компоненты более крупного взаимосвязанного ряда.

Hasmik Hakobyan

Collage as a way of intertextuality (according to Guren Khanjyan's collages)

Conclusion

Key words and expressions: *Guren Khanjyan, intertextuality, collage, intercultural connection, multimodality, national and individual identity.*

In the article, we have examined Guren Khanjyan's collages. Collage and collage thinking in general have a significant role in creating a connection between cultures, in dialogue and through this connection in discovering and understanding one's own identity. Beginning with an assessment of the narrativity of collage, this paper considers the communicative and structural poetics citing the example from Guren Khanjyan's works.

We came to the conclusion that Guren Khanjyan, by intertwining the artistic text with other text insertions and collage coding, expressed the complex path of national and individual identity searches, creating a multimodal intertextual structure, where each text is the absorption and transformation of another text. By using various texts and text symbols of world and Armenian literature, Khanjyan created a new structure with interpretive findings, which comprehensively presents the picture of the path taken by the poor man since the creation of the world, as defined by the author, the persistent and constant search for salvation full of hardships, the way to get rid of suffering, which continues and will continue, is endless. Each of the collage sections of Khanjyan's works (i.e., the prose and collage-image combinations) can be read either individually or as components of a larger interconnected sequence.

Հասմիկ Հակոբյան – Երևանի պետական համալսարանի ասպիրանտ գրականության տեսություն (Ժ.01.04) մասնագիտությամբ: Գիտական հետաքրքրությունները՝ նորագույն շրջանի հայ գրականություն, միջտեքստայնություն: Հեղինակ է չորս հոդվածի: hasmikhakobyan1@gmail.com

Асмик Акобян – Аспирантка кафедры теории литературы ЕГУ. Научные интересы: современная армянская литература, интертекстуальность. Автор четырех статей. hasmikhakobyan1@gmail.com

Hasmik Hakobyan - PhD student of the Chair of Literary Theory of Yerevan State University. Scientific interests: modern Armenian literature, intertextuality. She is an author of four articles. hasmikhakobyan1@gmail.com

ԿՐԱԿԻ ԽՈՐՀՐԴԱՊԱՏԿԵՐԸ ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v2i65.113

ԱՍՓՈՓՈՒՄ

Սույն հոդվածում քննաբանվում է հայ բանաստեղծ, հրապարակախոս, թարգմանիչ և դրամատուրգ Վահագն Դավթյանի ստեղծագործության առանցքային խորհրդապատկերներից մեկը՝ կրակը:

Վահագն Դավթյանի կենսագրությունը բազմաթիվ թելերով կապված է իր սերնդի ու ժողովրդի պատմության հետ, որն էլ մեծ ազդեցություն է թողել նրա մարդկային խառնվածքի, գեղարվեստական մտածողության ձևավորման, ստեղծագործական ուղու վրա: Հայրենիքի ճակատագրով մտահոգ բանաստեղծի պոեզիայի ակունքը կորուսյալ ծննդավայրի կարոտն է:

Վահագն Դավթյանի պոեզիայի պատկերային համակարգը ձևակերտվում է հողի և կրակի իմաստային գուգաձևումներով, որոնք հանդես են գալիս մի կողմից հող-հայրենիքի՝ սնուցող ուժի, պահող զորության, մյուս կողմից ոգեղեն ուժի՝ երազի ու կարոտի նշանակելիներով:

Դավթյանի բանաստեղծական մտածողության ակունքում հայրենակարոտի կրակն է, որը պայմանավորել է նաև նրա պատկերազգացողության նկարագիրը: Վերջինս առանցքում ներայրման զգացողությունն է՝ մխալու և կայծկլտալու, բռնկվելու և մարմրելու, շիկանալու և անթեղվելու տարաբնույթ պատկերային լուծումներով: Կրակի խորհրդապատկերային լուծումները ձևակերտվում են կրակ-ազատություն, կրակ կյանք, կրակ-անմահություն, կրակ-լույս, կրակ-կին, կրակ-կիրք, կրակ-կարոտ գուգակցումներով:

Բանալի բառեր և արտահայտություններ. Վահագն Դավթյան, կյանք-կրակ, կրակ-ազատություն, կրակ-անմահություն, կրակ-լույս, կրակ-կին, կրակ-կիրք, կրակ-կարոտ, տեսիլ, անմահություն:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1922թ. Արևմտյան Հայաստանի Արաբկիր գյուղաքաղաքում ծնված հեղինակը բազմաթիվ թելերով կապված է իր սերնդի ու ժողովրդի պատմության հետ, և հայրենի ծննդավայրից հարկադրաբար հեռանալն ու ծննդավայրի կորուստը (1926թ.) մեծ ազդեցություն են թողել նրա մարդկային խառնվածքի, գեղարվեստական մտածողության ձևավորման ու ստեղծագործական ուղու վրա: Բանաստեղծն իր 60-ամյա հոբելյանի առթիվ հնչեցրած խոսքերից մեկում ասում է. «Հավանաբար հենց այդ օրերից մեջս սկսել է միալ ծննդավայրի ու հայրենի տան կարոտ» (Քալանթարյան Ժ., 1991):

Վահագն Դավթյանի պոեզիայի խորհրդապատկերային համակարգում չորս տարրերի բնափիլիսոփայական լեզուն դրսևորվում է տարբեր հարակցումներով և հարաբերակցությամբ: Տիրական են հողը և կրակը պատկերավորող նշանային հարացույցները:

Դավթյանի պոեզիայում հողի տարերքը պատկերավորվել և իմաստավորվել է հետևյալ նշանային հարակցումների և առնչությունների ձևով՝ հող-երկինք, հող-երկիր, հող-կավ, հող-շունչ, հող-սկիզբ, հող-աստված, հող-հայրենիք, հող-սեր, հող-կարոտ, հող-կանչ, հող-բույր, հող-արև, հող-ավազ և այլն:

Հեղինակի պոեզիայում ինչպես հողը, այնպես էլ կրակը ունեն սկիզբը, ակունքները նախանշող խորհուրդ: «Անկեզ մորենի» բանաստեղծական շարքը դրա վառ վկայությունն է: Կրակի խորհրդապատկերային լուծումները ձևակերտվում են կրակ-ազատություն, կրակ կյանք, կրակ-անմահություն, կրակ-լույս, կրակ-կին, կրակ-կիրք, կրակ-կարոտ գուգակցումներով:

Կրակի խորհրդապատկերային հարացույցը Դավթյանի պոեզիայում ծագում ու շարունակաբար սնուցվում է ազգային առասպելական և բանաստեղծական ավանդույթից, դրսևորվում համապատասխան կերպընկալումներով և դրանց հենքով ձևավորված պատկերային լուծումներով, ապա արտահայտվում գուտ դավթյանական գեղարվեստական մեկնաբանությամբ:

Կրակի հատկորոշումները արևելյան կերպընկալումներում կապվում են բոցի, աշխուժության, բնագդայինի, հաստատակամության, ուժի, ագրեսիայի, բռնության,

մաքրագործող գործության, վերածննդի, աշխարհը գրավելու ցանկության, ռազմատենչ ինքնահաստատման, քաջության, ինքնավստահության, սեփական ուժերի որոշակի գերազնահատման, նաև պատվի և արժանապատվության զգացումների հետ (Бовк О., 2008) :

Հիշատակվում է նաև ներքին կրակը: Այս համատեքստում ուշագրավ է զուգահեռումով դրսևորվում է Վահագն Դավթյանի սերնդակից բանաստեղծներից Համո Սահյանի՝ հոգու կրակը թեժ պահելու պատգամը:

Կրակը ունի նաև լույսի և հաղթության խորհրդանշական իմաստ՝ ընդդեմ մահվան և մթի: Օջախի կրակն իր հերթին ընտանեկան բարեկեցության և խաղաղության խորհրդանշն է. այն մաքրում, պաշտպանում է և վանում չարը (Энциклопедия Брокгауза и Ефрона, 1892):

Այս առումով հատկանշական են մեր ազգային Մեծ և Փոքր Միերների կերպարները, որոնք ստեղծված են լույսի, բարու և արևի աստծո՝ Միհրի/Միթրաս/նմանողությամբ (Բոտվիննիկ Մ., Կոզան Մ., 1985): Երկնային լույսի և արեգակի աստվածն էր լուսաճաճանչ Միհրը՝ Արամազդի մյուս որդին, Անահիտի և Նանեի եղբայրը:

Դավթյանի պոեզիայում, ինչպես նշվեց, թե՛ հողը, թե՛ կրակը ունեն սկիզբը, ակունքները նախանշող խորհուրդ: «Անկեզ մորենի» շարքը՝ որպես հայրենի հողի ու այդ հողի կարոտի՝ միացող կրակի ու վառ երազի երգ, բանաստեղծի սկիզբը՝ Դավթյանի էության, բանաստեղծական խառնվածքի ակունքն է նշում: Օրինաչափորեն իր երկհատորյակի առաջին հատորի (1985թ.) առաջաբանում գրում է. «Գործերը դասավորեցի ոչ թե ժամանակագրական կարգով, այլ ըստ կենսագրության: Եվ, բնականաբար, երկերիս առաջին հատորը բացեցի «Անկեզ մորենի» շարքով, որն իմ ծննդավայրի և վաղ մանկության մասին է (Վահագն Դավթյան, 1985):

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Վահագն Դավթյանի պոեզիայի ուսումնասիրման համար համադրվել են կենսագրական, կուլտուր-պատմական, հոգեբանական մեթոդներ, ինչպես նաև

կիրառվել են կառուցվածքային-նշանագիտական վերլուծության սկզբունքներ:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Կրակի դավթյանական գեղարվեստական ընկալման առումով կարևոր է ոչ միայն ազգային ավագանը, այլև աստվածաշնչյան իմաստային դաշտը: «Անկեզ մորենի» վերնագիրն աստվածաշնչյան ավագանից է սկիզբ առնում: Ըստ Աստվածաշնչի՝ Քորեբ լեռան մոտ Մովսեսը տեսել է մի բոցավառված թուփ, որը վառվել է, բայց չի կիզվել (**Աստուածաշունչ, 1981**): Մատթեոսի Ավետարանում կարդում ենք Հովհաննես Մկրտչի խոսքերը, թե՛ ով գալիս է ինձնից հետո, ավելի հզոր է, և նա կմկրտի ձեզ Սուրբ Հոգով ու հրով (**Աստուածաշունչ, 1981**): Սուրբ Հոգով և հրով մկրտության վերաբերյալ կան տարբեր մեկնաբանություններ, բայց այստեղ կամենում ենք ուշադրություն դարձնել հրով մկրտվելու հանգամանքին: Հուրը խորհրդանշում է Աստծո ներկայությունը աստվածաշնչյան հրե սյան պատկերով (**Աստուածաշունչ, 1981**), արդեն հիշատակված այրվող մորենու պատկերով կամ, օրինակ, հետևյալ դրվագում՝ «Մինա լեռն ամբողջովին ծխում էր, քանի որ Աստված նրա վրա իջել էր իբրև հուր».... (**Աստուածաշունչ, 1981**):

Հատկանշական է, որ քրիստոնեության մեջ կրակն ունի երկակի բնույթ. այն կարող է դրսևորվել ոչ միայն դրական, աստվածայինի նշանակությամբ, այլև դժոխային: Այն և՛ ստեղծարար է, և՛ ավերող ու կործանող: Կրակը, բացի այդ, կարող է լինել և՛ երկրային, և՛ երկնային՝ լուսավորելով մարդու ուղին, նրա կյանքը:

Հատկանշական է հետևյալ գուգահեռը. աստվածաշնչյան պատմության մեջ Աստված մորենու միջից է տեսնում մարդկային տառապանքները և հասնում օգնության: «Անկեզ մորենի» շարքի բանաստեղծություններից մեկում էլ բոցի միջից զարմանալի բարբառի ձայն է հնչում, և հետո սկիզբ է առնում սուրբ պատարագը՝ պատկերավորելով բանաստեղծական խոսքը իբրև զոհաբերություն. «...Եվ բոցի միջից մի զարմանալի //Բարբառ է հնչում, //Եվ ծավալվում է մի սուրբ պատարագ...» (**Դավթյան Վ., 1985**):

Դավթյանն իր ողջ կյանքում կրակի բռնկում է երագել, սակայն ցավոք միացող կրակն է եղել նրա պատկերակառույցի առանցքում՝ որպես կարոտ ու պատրանք, և

դավթյանական պատկերներում կրակն ունի անշեջ կարոտի, երազի ու կանչի, կանչող կարոտի, չմարող մորմոքի իմաստային լիցք, որ երևում է նաև շարունակաբար հայտնվող տեսլապատկերի ձևով. «Այրվում է, այրվում...// Եվ բոցը մորմոք...//Կարոտ է ու կանչ» (Դավթյան Վ., 1985):

Աշխարհում ամեն բան այրվում ու մոխրանում է, անշեջ ու անմար է միայն հայրենակարոտը խորհրդանշող մորենին:

«Կրակի լեզվով պատմվող առասպել» հոդվածում Լ.Սեյրանյանը նկատում է. «Դավթյանը այս երկու՝ հողի և կրակի նշաններով է կարդում ու ծրում մշակույթի գիրը՝ հողի ակոսները՝ որպես հանճարեղ տողեր, ծաղիկները՝ հողի անձայն բառեր, ամպրոպն իբրև լեռնաշխարհի մայրենի լեզու, որով էլ գրվում է կայծակի «հրեղեն տողը», անդունդներն ու վիհերը՝ կայծակի՝ երկնային կրակի թողած հետքեր, գետերը՝ մոր ձեռքերի երակներ: Վերջին պատկերի մակերևույթին ջրային տարերքի նշանն է, սակայն խորքում կրկին կրակն է աշխատում, կրակ-արյուն գուգահեռը: Նա երագում է հպվել բառի նախնական իմաստային ակունքներին, ըստ որում դիտարկում է (իհարկե, ամեննին ոչ պատահական) մարմին և ոգի բառերը. առաջինը կավ ու արեգակ է բուրում, իսկ երկրորդում թրթռում է լույսի խորհուրդը: Այլազան գուգորդումներով հանդիպադրվում են հողի և կրակի նշանային շարքերը. մի կողմից՝ հող-մոխիր-մարմին-հաց, մյուս կողմից՝ կրակ-ոգի-լույս-արյուն-գինի-սեր-բանաստեղծություն» (Սեյրանյան Լ., 2021):

Հեղինակը բանաստեղծորեն վերապրում է կատարվածը այրող ու թանկ հուշի մեջ: Կորուսյալ հայրենիքը վերագտնելու հավատը, վերադարձի հույսը, կանչող կարոտն ու բոցկլտացող երազը չեն մարում երբեք. «Անկեզ մորենին այրվում է, այրվում, //Եվ չկա մոխիր, //Չկա սպառում և չկա վախճան» (Դավթյան Վ., 1985):

«Տաղ կրակի» քերթվածում Դավթյանը կրակը բնորոշում է իբրև բանաստեղծություն. «Այրվո՛ւմ ես, այրվո՛ւմ...//Եվ օրհնյալ ես դու, հրեղեն հառաչ...» (Դավթյան Վ., 1985):

Կրակի խորհրդապատկերային նշանները շարքում հայտնվում են մե՛րթ հեռավոր աստղեր տեսքով, որ «գիշերն ի լույս արցունք են լալիս», մե՛րթ մեղրի ցոլանքով՝ որպես «ծանր լույս» և «լույծ արեգակ», պայթող նռան գույնի պես՝ իբրև

միջօրե, «իբրև բերկրության կարմիր աղաղակ», հուրհրան արեգակի ոսկեգույն ճառագայթի պատկերով: Հուրհրատող բոցերի միջից, որն այս դեպքում խորհրդանշում են արյան ու կրակի մեջ ողջակիզված հայրենի բնաշխարհը, երևում է հանկարծ այդ բնաշխարհի երբեմնի կենդանի պատկերը, երևում է ու էլի սուզվում բոցերի մեջ: Այդ «կապույտ ու կանաչ» տեսիլը հեղինակը համեմատում է ձյունոտ լեռներում բռնկված արևածագի հետ, որ հովիտն ի վար ցոլանք է ցանում՝ կրակի նշանային համակարգը հարստացնելով ևս մեկով: Արևոտ է անգամ հայրենի ծուխը, որի ճաճանչը մայր արագիլն իր կտուցին է առնում, բոցերի նման կարմիր են հայրենի բնաշխարհի ձիերը: Իսկ հայրենակարոտի երգը՝ որպես սուրբ պատարագ, խունկի պես օծում է մասունք ու աճյուն, ծավալվում է իր հրեղեն ողբը հառաչող այրված ու ծարավ անապատում:

«Արարչություն» պոեմում կրակը պատկերավորվում է իբրև խարսյաշ աղջիկների պար, որոնք, դեն նետելով ծխի սև մորթիները, սկսում են մերկանդամ պարել: Կրակի նշանային հարացույցը այստեղ ևս շատ տպավորիչ է՝ արևածագի կարմիրի նման, նռան ծաղկի պես բոսոր, դեղին՝ իբրև աշնան բռնկում, մով մանուշակների, երազի ու երկնքի պես կապույտ:

Այս պոեմում կրակը ազատության սկզբունքն է, կյանքի հիմքը. «Եվ խավարի մեջ բռնկվեց հանկարծ՝//Ինքը՝ սկիզբը...//Ինքը՝ ազատը...//Եվ եղավ կրակ...» (Դավթյան Վ., 1985):

Կրակի դավթյանական ընկալումներում առկա է նաև չարենցյան ազդեցությունը: Օրինաչափորեն հայտնվում է «Բրոնզ ես, հուր ես» սկսվածքով բանաստեղծության հայտնի դրվագը, ուր երևում է հզոր, բոսոր, արևառ քրոջ պատկերը, որը հրեղեն նկարագիր ունի՝ որպես կրակի ինքնօրինակ պատկերավորում: Առհասարակ Չարենցի գեղարվեստական մտածողության մեջ աշխարհաստեղծ-աշխարհավեր չորս տարրերի բնափիլիսոփայական լեզուն աշխատում է կրակի կատարսիսային նախահիմքի տիրականությամբ՝ ի հակադրություն Բլոկի պոեզիայի համար հատկանշական «օդեղեն» տարերքի: Կրակի միստերիան բնորոշ է հինարևելյան կրոնադիցաբանական գիտակցությանը և պոետիկային, ու այդ ավագանից է մեկնարկում Չարենցը:

Կին-կրակ գուգահեռը Դավթյանը խորհրդապատկերային ուշագրավ հակադրությամբ է բացում «Հիմն կնոջ» բանաստեղծության մեջ՝ բնորոշելով կնոջ մարմինը՝ որպես տաք հողի շնչառություն, կնոջ արթնացումը՝ իբրև քնած կրակի հառնող ու ծավալվող շունչ: Բանաստեղծը հաջորդիվ կարծես հակադրում է Եվային ու Լիլիթին. «Հողի պես սուրբ ու բեղուն և կրակի նման նենգ, // Դու՝ հայտնություն հրաշքի, տառապանքի դու օրենք» (Դավթյան Վ., 1985):

Ինչպես Դավթյանի մեկ այլ՝ «Տենդ» պոեմի կապակցությամբ նկատում է Լ. Մելքանյանը, «Պոեմում պարող կինը կրակն է, և կրակը պարող կինն է՝ դյուբող, կանչող ու կործանող գորություն, ջերմացնող ու այրող էություն, մեղքը և զոհաբերումը, կյանքի տենչն ու մահվան սարսափը, այրող կարոտն ու զովության երազը, որոնք հայտնակերպվում են նաև որպես արարման տքնանք-տառապանք, հնարավոր անհնարիություն ու հանճարեղ տողի, մոգական բառերի սպասում» (Մելքանյան Լ., 2021):

Վահագն Դավթյանի ամենածավալուն չափածո երկը «Թոնդրակեցիներ» պոեմն է: Գլխավոր հերոսը շարժման դեկավար ու գաղափարախոս Սմբատ Զարեհավանցին է, որը հասարակ ծագումով մի շինական է Ծաղկոտն գավառի Զարեհավան գյուղից: Բայց Դավթյանը ստեղծել է բազմակողմանի, հարուստ հոգեկան աշխարհ ունեցող մի անհատականության կերպար: Գլխավոր հերոսը հանդես է գալիս իբրև փրկիչ, մի նորօրյա Հիսուս Քրիստոս: Այս ըմբռնումը իսկապես եղել է թոնդրակեցիների համոզմունքը (այդ մասին վկայում է Ե. Տեր-Մինասյանը «Միջնադարյան աղանդների ծագման և զարգացման պատմությունից» աշխատության մեջ) (Տեր-Մինասյան Ե., 1968):

Առաջին հաղորդումը Սմբատի մասին տրվում է Մանագկերտի շուկայում: Բազմության առաջ գուսանը երգում է փրկչի հայտնության տաղը, որ արձագանքն է տանջահար ժողովրդի երազանքների. «-Դե, լսե՛ք, մանկտիք, ասեմ...//...Ծագել է արեգակ մի բոց... » (Դավթյան Վ., 1985):

Հուրը պոեմում դիտարկվում է նաև որպես հայրենադավության սիմվոլ, որը պիտի մաքրվի՝ թեկուզ գործիք դարձնելով հենց հուրը, սուրը, ահեղ շանթը... «Ուստի եղիր սատար, տե՛ր, զորավիգ եղիր, // Որ հապշտապ մարենք հուրն այս

հայրենադավ...» (Դավթյան Վ., 1985):

Խորքային քննաբանումը բացահայտում է հողի և կրակի առնչակցության նոր նրբաշերտեր, անգամ ազգային բնավորության ու ճակատագրի հայտնի խնդրադրումների դավթյանական լուծումներ: Մտորումների տեղիք է տալիս «Թոնդրակեցիներ» պոեմում Ծումբա վանքի վանահոր և Սմբատ Զարեհավանցու զրույցի հետևյալ հատվածը. «... Մխանք պիտի, որդի՛ս, // Մխանք պիտի այնպես, որ չհանգչենք երբեք: //Բայց կայծակը, ավա՛ղ, մի վայրկյան է տևում» (Դավթյան Վ., 1985):

Հատկանշական է նաև այն, որ Սմբատ Զարեհավանցու խաչելությունն ու վախճանը պատկերակերտվում են ապառաժի մեջ շեղբը ջարդած ու հողում հանգած կայծակի մահով:

Դավթյանի պոեմում դիտարկվու է հավիտենական թվացող ազգային երկրնսրանքը՝ լինել միացող կրակ և գոյատևել կամ լինել կայծակ ու աշխարհի կողը խրվել:

Կրակը Դավթյանի սիրո նշանակելին է նաև՝ իբրև հեթանոսական հանդես, այրող կարոտ ու կսկիծ, որն անգամ լեռներ է այրում: «Մենախոսություն» երկում այն պատկերավորվում է իբրև տաք հաց, բոց վարսերով կին, բոցավառվող շշուկ:

Դավթյանը սիրած էակի գեղեցկությունը բնորոշում է իբրև այրող ու վտանգավոր գեղեցկություն, որի գույնը հրեղենն է. «Այն ունի լուկ գույն՝ // Հրե՛հ, հրավառ, հրեղեն մի գույն...» (Դավթյան Վ., 1985):

Դավթյանն իր ու սիրելիի հանդիպումը գուգահեռում է նախամարդու՝ առաջին անգամ կայծն ու բոցը տեսնելու հետ, որը, անկախ ամեն ինչից, ինչքան էլ հրաշալի է, գեղեցիկ, միևնույն ժամանակ վտանգավոր է:

Վահագն Դավթյանի իդեալը անշարժ ու լճացած կյանքը չէ, բանաստեղծի սիրտը հավերժ ձգտում է փոթորկի ու ամպրոպի: Ըստ Դավթյանի՝ հարկ է ապրել ինքնանվեր այրումով, թեկուզ մի ամբողջ կյանք արժենա այդ այրումը: Բանաստեղծի ձևակերպումով՝ «Լավ է մի վայրկյան ապրել բոցի պես, քան փտել դարեր...» (Դավթյան Վ., 1985):

Այս առումով նշանակալի է ամպրոպի խորհուրդը, որն իր ակնթարթային

ճայթյունով աշխարհին մաքրություն է բերում:

Հեղինակի «Լույս առավոտի» բանաստեղծական շարքում կրակը հանդես է գալիս լույսի նշանով: Այդ լույսը երաժշտության է նման, որ պիտի գա ու բանաստեղծին փրկի գիշերվա անդաշնությունից, հաշտություն բերի: Այդ լույսն է, որ իրեն պիտի տանի արևի, գինու, հացի հետևից: Նա է, որ պիտի հետ բերի ասուպի պես բարակ աղջկա հուշը՝ իբրև լույսի խաղ, որ ոսկե կաճանի պես պիտի տանի իր երդվյալ ու հին ճամփորդին շանթի պես ցուացող նժույգի հետքով, կորուսյալներին միանալու ճանապարհով:

Բանաստեղծի ճակատագրի ու սիրո խորհուրդը Դավթյանը բացում է մի անգուգական պատկեր-համեմատությամբ. «...Չիլես երբեք այս թրթիռն անքուն, // Քանզի շուրթերն այն, որ կնոջ շուրթից չեն այրվում կյանքում, // Չեն կարող նաև մարգարեական խոսքերով այրվել» (Դավթյան Վ., 1985):

Այդ լույսը կնոջ շիկնանքն է, հանդիպումի տաք բերկրությունը, արևավոր օրհնությունը, աշխարհի առաջ ծնրադիր երկրպագությունը, անմոխիր այրման խորհուրդն է, նահատակների սրտից բխող լույսը՝ որպես հրեղեն մի սյուն:

Կրակի խորհուրդը կապված է նաև անմահության գաղափարի հետ, վախճան ու վերջ չունենալու հետ: Դավթյանական հայրենեղբայության առանցքում հայրենիքի հավերժության ու անմահության գաղափարն է, որը մեկ կրակի նման բոցավառվում է՝ տալով լույս և կյանք, մեկ էլ անվերջ այրում է՝ կարոտը մշտաբորբոք պահելով բանաստեղծի սրտում:

«Հուզիչ է պատանու տպավորությունն առաջին անգամ Արարատ լեռը տեսնելիս: Նրան թվացել է, թե գույգ լեռները հրաշքով են կտրվել գետնից և կախվել գարնանային առավոտի կապույտ ու զրնգուն օդում: Տարիներ հետո, զինվորական ծառայության ժամանակ, լեռան պատկերը մտովի հիշելիս «կոկորդը արցունքով պիտի լցվեր»: «Արարատ լեռն է կանգնել կապույտում՝ կրծքին վիհ ու վերք, // Այդ վերքի վրա ինձ կախիր որպես անկեղ մորենի» (Այվազյան Հ., 2019):

Այդ կարոտը հաղթահարելու մի ինքատիպ քայլ է կատարել հեղինակը. նա ընտրել է տեսիլների հնարքը, որն անընդհատ քնարական հերոսին թափառումների միջով տանում հասցնում է հայրենիք, և տեսիլների մեջ հայտնագործելով այն՝ նա

ասես երդում է տալիս՝ ինքն իրեն սպառնալով այրումի ցավով... «Թե քեզ մոռանամ, Երկի՛ր ավետյաց, // Թող լեզուս կաշի իմ այրվող քիմքին... » (Դավթյան Վ., 1987):

Տարբեր դարերում հայ գրականության մեջ լայնորեն կիրառվել են տեսիլները: Հայ միջնադարյան գրականության մեջ դրանք հիմնականում կրոնական բնույթի էին: 20-րդ դարի բանաստեղծների՝ Սիմանթոյի ու Չարենցի ստեղծագործության մեջ տեսիլն այլ խորհրդապատկերային դրսևորումներ ունի, որոնցինքնատիպորեն հավելվում են Դավթյանի տեսիլները, որոնք հիմնականում լուսավոր են, արևով օծված և տանում են դեպի սկիզբը:

Պահպանվել են ինքնակենսագրական վերիուշային դրվագներ, որ հիմք են դարձել Դավթյանի եղեռնապատումի կենտրոնական գործերից մեկի՝ «Ռեքվիեմ» պոեմի համար («1977, Հալեպ-Երևան» ծանուցումով լույս է տեսել 1978 թ. «Կապույտ գիրք» ժողովածուի մեջ):

Ուշագրավ է պոեմի ստեղծագործական պատմությունը: Զբոսաշրջիկների խմբի հետ ինքնաթիռով մեկնելով Սիրիա՝ բանաստեղծն այցելել է նաև Դեր-Զոր, մեկ անգամ ևս տեսել Եփրատը, տեսլաշարով պատկերացրել ու պատկերավորել Եղեռնը: Ինչպես նկատում է գրականագետ Ս. Գրիգորյանը. «Պոեմի վերնագրին համահունչ զգացողությամբ նա գնում է հոգեհանգստյան ծեսի, պատարագման մի գործողության» (Գրիգորյան Ս., 2021), որը ներքին մթնոլորտով զուգահեռվում է թումանյանական «Հոգեհանգստի» «Ու վեր կացա ես...»-ի կառուցվածքին ու պատկերազգացողությանը:

Եղեռնի թեման շոշափելու, ազգային ողբերգության տարողությունը գեղարվեստորեն իմաստավորելու գործողության հանգրվանային դրվագներից է ծննդավայրի հերթական պատկերավորումը. «Ու՛ր ես, Արաբկիր, իմ ծննդավայր, // Իմ արյան մորմոք, իմ արյան կարոտ...» (Դավթյան Վ., 1985):

Պոեմում ավագները շարժվում են ասես, և բանաստեղծի հայացքի դեմ ելնում են սուրբ նահատակների տեսիլները՝ «Մի ասպետական կորովի հասակ, հեթանոսորեն գեղեցիկ մի այր», որ շշնջում է լուսե բարբառով, ապա «Մի սքեմավոր, սևավոր մի այր»՝ «Սև թևերի պես սքեմը բացած», մի խարսյաշ մանուկ, ցամաքած մի մայր...

«Ռեքվիեմի» «վերջերգում Դավթյանը ստեղծում է հետաքրքիր մի հակադրություն: Քնարական հերոսը, որն իր ասպատակված ծննդավայրի շիրիմանապատին այցի էր եկել՝ լռելու ու քարանալու («Որ խաչքար դառնամ Իմ մարմնի խաչով...»), «Սուրբ-սուրբի» դրվագից հետո մտովի դարձյալ դառնում է Արարատյան սրբազան հողը, որտեղ հարության նման վառվել է իր ցայգածաղիկ հայրենիքը: Պատարագման ծեսը ավարտած առաքյալը ծնկաչոք աղոթքի է իջնում այս անգամ վերապրած հայրենիքի առջև» (Գրիգորյան Ս., 2021):

Կրակի խորհրդապատկերը Դավթյանի «Ռեքվիեմ» պոեմում ստացել է ազգային տառապանքի պատկերավորման տարբեր դրսևորումներ: Բնափիլիսոփայական չորս տարրերը՝ հողը, կրակը, օդը և ջուրը, ինքնօրինակ հակադրամիասնություն են կազմել այստեղ: Հարակցվում են դեռևս միացող հսկայական զոհասեղանի կապույտ ծուխը, անապատային շիկացած տենդը, կարմիր ու սև, բոսոր ու դեղին ավազների հառաչը, հովերն ու գոլ ամպը, աղբյուրների սառնորակ լացը, որ բանաստեղծն ուզում է բերել ու դնել դեռևս այրվող այն ճակատներին... Առանցքում նորից ու կրկին կրակն է՝ խորհրդապատկերային բազմիմաստ լուծումներով. «Մեր մաքրությունը տվինք աշխարհին, // Մենք խարույկ ելանք...» (Դավթյան Վ., 1985):

«Նրանց արմատը այստեղ կխրեն, // Որ ծառերն աճեն շանթ ու կայծակի» տողով վրեժի արմատավորման ու հառնումի պատգամն է թողնում նա սերունդներին: Շեշտադրվում է այն գաղափարը, որ վրեժը ապրեցնող գործություն ունի: Պոեմի շիկացած մթնոլորտն այրվում է ներքին կրակով: Ուշագրավ է Եփրատի կամրջի վրա կանգնած աղջկա սրտառուչ «Սուրբ-սուրբ»-ը, որը լույս էր, ոգի, սաքսուռ, որի մեջ զոհասեղանի կապույտ կրակն էր բոցկլտում (Գրիգորյան Ս., 2021):

Այս համատեքստում պատահական չէ նաև ապրիլի խորհրդանշական իմաստը: զոհերի անանուն շիրիմներին ծաղիկներ է բացել բնաշխարհը. «Ապրիլը դաշտից առել կայծ ու բոց, // ...Վառել է ահա // ...Հրեղեն ու բորբ... » (Դավթյան Վ., 1985): Պատկերային այս լուծումը կրակ-ծաղիկ հարակցումն է՝ զոհերի հիշատակը հավերժացնող անմար կրակի տեսքով:

Այսպիսով, Կարոտի և սիրապրումի դավթյանական պատկերավորումը

ներառում է կրակի բոլոր որակները՝ բռնկումից մինչև վերջին պահը: Ավարտվող ու տնող, անվերջ մարմրող, բայց չմարող, մայրամուտի պես շարունակվող սիրո և կարոտի պատկերային արտահայտությունը հագճող արևի տխուր մխանքն է: Անմար հուշի պատկերային արտահայտությունը ևս կրակի նկարագիր ունի, և ապրիլին իր մեջ զարթնում է նորից «տաք հողի հետ լուռ մխալու կարոտը տաք»: Դեր Ջորում բանաստեղծն իրեն պատկերում է իբրև անապատի թախծության վրա շրջող այրվող, մերկացած սիրտ, առկայծող թափառիկ հուր, իսկ ժողովրդի հավերժումի ցայգածաղիկը՝ որպես անմար կերոն: Կրակը պատկերային արարչանյութ է դառնում նաև ոգեղենի գեղարվեստական արտահայտության փորձերում՝ հանդես գալով, օրինակ, Անի-հրեղեն սյուն, Զվարթնոց-ոգու մաքուր կրակ, Նարեկացի-Նարեկա վանքի բուրվառում հրդեհվող սիրտ զուգահեռներով: Գոյության խորհուրդը անգամ բանաստեղծի համար բացվում է որպես «մուծում ցոլացող անհայտ հուր»:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վահագն Դավթյանի պոեզիայի պատկերազգացողական համակարգը ձևակերտվում է հողի և կրակի իմաստային զուգաձևումներով, որոնք հանդես են գալիս մի կողմից հող-հայրենիքի՝ սնուցող ուժի, պահող զորության, մյուս կողմից ոգեղեն ուժի՝ երազի ու կարոտի նշանակելիներով: Դավթյանն իր ողջ կյանքում կրակի բռնկում է երազել, սակայն ցավոք մխացող կրակն է եղել նրա պատկերակառույցի առանցքում՝ որպես կարոտ ու պատրանք: Դավթյանի պոեզիայում ինչպես հողը, այնպես էլ կրակը ունեն սկիզբը, ակունքները նախանշող խորհուրդ: «Անկեզ մորենի» բանաստեղծական շարքը դրա վառ վկայությունն է:

Կրակի խորհրդապատկերային լուծումները ձևակերտվում են կրակ-ազատություն, կյանք-կրակ, կրակ-անմահություն, կրակ-լույս, կրակ-կին, կրակ-կիրք, կրակ-կարոտ զուգակցումներով: Կրակի խորհրդապատկերային նշանները շարքում հայտնվում են մե՛րթ հեռավոր աստղեր տեսքով, որ «գիշերն ի լույս արցունք են լալիս», մե՛րթ մեղրի ցոլանքով՝ որպես «ծանր լույս» և «լույծ արեգակ», պայթող նռան գույնի պես՝ իբրև միջօրե, «իբրև բերկրության կարմիր աղաղակ»,

հուրհրան արեգակի ոսկեգույն ճառագայթի պատկերով: Հուրհրատող բոցերի միջից, որն այս դեպքում խորհրդանշում են արյան ու կրակի մեջ ողջակիզված հայրենի բնաշխարհը, երևում է հանկարծ այդ բնաշխարհի երբեմնի կենդանի պատկերը, երևում է ու էլի սուզվում բոցերի մեջ: Այդ «կապույտ ու կանաչ» տեսիլը հեղինակը համեմատում է ձյունոտ լեռներում բռնկված արևածագի հետ, որ հովիտն ի վար ցլանք է ցանում՝ կրակի նշանային համակարգը հարստացնելով ևս մեկով: Արևոտ է անգամ հայրենի ծուխը, որի ճաճանչը մայր արագիլն իր կտուցին է առնում, բոցերի նման կարմիր են հայրենի բնաշխարհի ձիերը: Իսկ հայրենակարոտի երգը՝ որպես սուրբ պատարագ, խունկի պես օծում է մասունք ու աճյուն, ծավալվում է իր հրեղեն ողբը հառաչող այրված ու ծարավ անապատում:

Այսպիսով, բնափիլիսոփայական չորս տարրերի խորհրդապատկերային նշանները Դավթյանի պատկերային լուծումներում հաճախ զուգակցվում են, որտեղ ազգային տառապանքի պատկերավորման տարբեր դրսևորումների առանցքում դարձյալ դավթյանական կրակն է՝ խորհրդապատկերային բազմիմաստ լուծումներով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Այվազյան Հ. (2019)**, Կապույտ հիշողությունների ծալքերում, «Գրական թերթ», 13.07.2019, <http://www.grakantert.am/archives/12809>:
2. **Աստուածաշունչ (1981)**, Հին և Նոր Կտակարաններ, Եբրայական և յունական բնագրերեն թարգմանուած, Աստուածաշունչի միացեալ ընկերութիւններ, Պէյրութ:
3. **Բոսովինիկ Մ., Կոզան Մ. (1985)**, Դիցաբանական բառարան, Երևան, «Լույս» հրատ.:
4. **Գրիգորյան Ս. (2021)**, Վահագն Դավթյանի պոեմները, Երևան, «Արմավ» հրատ.:
5. **Դավթյան Վ. (1985)**, Երկեր 2 հատորով, հ. 1, Երևան, «Սովետական գրող» հրատ.:
6. **Դավթյան Վ. (1987)**, Անքնություն, Երևան, «Սովետական գրող» հրատ.:

7. Սեյրանյան Լ. (2021), Հայեցումներ բառերից անդին, Երևան, «Արմավ»:
8. Տեր-Մինասյան Ե. (1968), Միջնադարյան աղանդների ծագման և զարգացման պատմությունից, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1968:
9. Քալանթարյան Ժ. (1991), Վահագն Դավթյան, Երևան, ԵՊՀ հրատ.:
10. Вовк О. (2008), Энциклопедия знаков и символов, Москва, «Вече».
11. Энциклопедия Брокгауза и Ефрона (1892), Санкт-Петербург, Акционерное издательское общество Ф. А. Брокгауз — И. А. Ефрон:

REFERENCES

1. Ayvazyan H. (2019), Kapowyt hishoghowt'yownneri c'alqerowm /In the folds of blue memories/, "Literary Newspaper", 13.07.2019, <http://www.grakantert.am/archives/12809>.
2. The Bible (1981), Hin & Nor Ktakaranner /Old and New Testaments/, translated from the Hebrew and Greek originals, United Bible Societies, Beirut.
3. Botvinnik M., Kogan M. (1985), Dicabanakan bar'aran /Mythological dictionary/, Yerevan, "Luys".
4. Grigoryan S. (2021), Vahagn Davt'yani poemnery' /Poems of Vahagn Davtyan/, Yerevan, "Armav".
5. Davtyan V. (1985), Erker 2 hatorov /Lands in 2 volumes/, no. 1, no. 2, Yerevan, "Soviet writer".
6. Davtyan V. (1987), Anqnowt'yown /Insomnia/, Yerevan, "Soviet Writer".
7. Seyranyan L. (2021), Hayecowmner bar'eric andin /Thoughts beyond words/, Yerevan, "Armav".
8. Ter-Minasyan E. (1968), Mijnadaryan aghandneri c'agman & zargacman patmowt'yownic /From the history of the origin and development of medieval sects/, Yerevan, Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR.
9. Kalantaryan J. (1991), Vahagn Davt'yan /Vahagn Davtyan/, Yerevan, YSU publishing house.

10. Vovk O. (2008), Entsiklopediya znakov i simvolov /Encyclopedia of signs and symbols/, Moscow, "Veche".
11. **Encyclopedia of Brockhaus and Efron (1892)**, St. Petersburg, Joint-Stock Publishing Company F. A. Brockhaus — I. A. Efron.

Эмма Григорян

Символ огня в поэзии Ваагна Давтяна

Заключение

Ключевые слова и выражения: Ваагн Давтян, жизнь-огонь, огонь-свобода, огонь-бессмертие, огонь-свет, огонь-женщина, огонь-страсть, огонь-тоска, видение, бессмертие.

Образно-перцептивная система поэзии Ваагна Давтяна формируется смысловыми сочетаниями земли и огня, которые, с одной стороны, обозначают землю-родину, питающую силу, удерживающую силу, а с другой стороны, духовную силу, мечту и тоску. Давтян всю жизнь мечтал о пожаре, но, к сожалению, тлеющий огонь лежал в основе его образов как тоска и иллюзия. В поэзии Давтяна и земля, и огонь имеют тайну, указывающую на начало, истоки. Поэтический сериал «Анкез Морени» – яркое тому свидетельство.

Символические решения огня формируются сочетаниями огонь-свобода, жизнь-огонь, огонь-бессмертие, огонь-свет, женщина-огонь, огонь-страсть, огонь-тоска. Символические знаки огня предстают в ряду то как мертвые далекие звезды, которые «плачут с ночи до рассвета», с брызгами мертвого меда как «тяжелый свет» и «растворившееся солнце», как цвет взрывающегося граната как полдень». Как красный крик радости», с изображением золотого луча ликующего солнца. Среди ликующих языков пламени, которые в данном случае символизируют сгоревшую в крови и огне родную природу, вдруг появляется, появляется и снова погружается в пламя некогда живой образ этой природы. Это «сине-зеленое» видение автор сравнивает с восходом солнца в заснеженных горах, который окропляет долину, обогащая символическую

систему огня другим. Солнечным является даже родной дым, чей луч мать-аист ловит клювом, лошади родного отечества, рыжие, как пламя. А песня патриотизма, как святая литургия, освящает реликвию и остается как благовоние, разворачивает свою пламенную скорбь в обожженной и жаждущей пустыне.

В изобразительных решениях Давтяна часто сочетаются символические символы четырех стихий натурфилософии, где Давидиан огонь с многозначными символическими решениями лежит в основе различных проявлений национального страдания.

Emma Grigoryan

The symbol of fire in the poetry of Vahagn Davtyan

Conclusion

Key words and expressions: *Vahagn Davtyan, life is fire, fire is freedom, fire is immortality, fire is light, fire is a woman, fire is passion, fire is longing, vision, immortality.*

The imagery system of Vahagn Davtyan's poetry is shaped by the semantic pairings of land and fire, which on the one hand stand for land-homeland, nourishing power, holding power, and on the other hand for spiritual power, dream and longing. Davtyan dreamed of a fire all his life, but unfortunately the smoldering fire was at the core of his imagery as longing and illusion. In Davtyan's poetry, both earth and fire have a mystery that indicates the beginning, the origins. The poetic series "Ankez Moreni" is a vivid testimony of this. Symbolic solutions of fire are shaped by combinations of fire-freedom, life-fire, fire-immortality, fire-light, fire-woman, fire-passion, fire-longing. Symbolic signs of fire appear in the series as dead distant stars that "weep a tear in the night," with a splash of dead honey as "heavy light" and "dissolved sun," as the color of an exploding pomegranate as noon, "as a red cry of joy", with the image of a golden ray of the rejoicing sun. From among the cheering flames, which in this case symbolize the native nature burned in blood and fire, the once living image of that nature suddenly appears, appears and sinks into the flames again. The author compares that "blue and green" vision to the sunrise in the snowy mountains, which sprinkles down the valley, enriching the symbolic system of fire with

another one. Even the native flock is sunny, whose feather the mother stork catches in its beak, the horses of the native world are red like flames. And the song of patriotism, as a holy liturgy, anoints the relic and remains like incense, unfolds its fiery lamentation in the burnt and thirsty desert.

The symbolic symbols of the four elements of natural philosophy are often combined in Davtyan's pictorial solutions, where the Davidian fire with multi-meaning symbolic solutions is at the core of various manifestations of national suffering.

Էմմա Գրիգորյան – ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտի հայցորդ, Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության Հայ-հունական պետական քոլեջի դասախոս, Երևանի թիվ 46 ավագ դպրոցի ուսուցիչ: Արևմտյան Հայաստանում զբոսավար /գիր/: Գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ Նոր և նորագույն շրջանի հայ գրականություն, գրաքննադատություն, գրականության տեսություն: em.grigoryan77@mail.ru

Эмма Григорян – Аспирант, Институт литературы имени Манука Абегяна НАН РА. Преподаватель Ереванского Армяно-Греческого государственного колледжа туризма, сервиса и пищевой промышленности, учитель Ереванской средней школы №46. Гид по Западной Армении. Научные интересы: Новая и современная армянская литература и теория литературы. em.grigoryan77@mail.ru

Emma Grigoryan – Ph.D researcher at the Institute of Literature after Manuk Abeghyan of NAS of RA. Lecturer of Yerevan Armenian-Greek State College of Tourism, Service and Food Industry, teacher of Yerevan High School No. 46. Tour guide in Western Armenia. Scientific interests: New and Contemporary Armenian literature and literary theory. em.grigoryan77@mail.ru

ԱՐՏԱՇԵՍ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԺԵՆՅԱ ԱԲԳԱՐՅԱՆ

ԱՊԱՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆ ԱՐԴԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ
ՄԵԴԻԱԴԱՇՏՈՒՄ*DOI: 10.24234/journalforarmenianstudies.v2i65.114*

ԱՄՓՈՓՈՒՄ

21-րդ դարում ապատեղեկատվության հիմնախնդրի արդիականությունը կապված է կեղծ լուրի՝ ժամանակակից մեդիայի համար խնդիր կամ խոչընդոտ հանդիսանալու հետ, որի պատճառով էլ շատ հաճախ ճիշտ լուրը նույնպես որպես կեղծ է ընկալվում: Անհրաժեշտ գիտելիքների առկայության դեպքում անհամեմատ նվազում է մանիպուլյացիայի զոհ լինելը: Կեղծ լուրերին չտրվելու համար անհրաժեշտ է հնարավորինս խուսափել դրանցից, ստուգել ստացված տեղեկությունը և բացահայտել կեղծիքը և, իհարկե, պայքարել դրա դեմ:

Ապատեղեկատվության դեմ պայքարում Հայաստանի քաղաքացիական հասարակության հիմնական օրակարգը պետք է ներառի անկախ լրատվամիջոցների հզորացում, լրատվամիջոցների պատկանելիության և ֆինանսավորման թափանցիկության ձեռքբերում, լրատվամիջոցների ինքնակարգավորման մեխանիզմների խթանում, փաստերի ստուգման նախաձեռնություններ և մեդիագրագիտության ուսուցում: Ապատեղեկատվություն տարածում են քարոզչության և լսարանի վրա մանիպուլյացիոն ազդեցություն թողնելու համար: Դրանց հիմնական տարածողներն այն կառույցներն են, որոնք հանրության հետ շփվում են ոչ թե տեղեկություն հաղորդելու, այլ քարոզչության, սեփական կարծիքը, վերաբերմունքը մանիպուլյացիոն հնարքներով տարածելու միջոցով:

Բանալի բառեր և արտահայտություններ. ապատեղեկատվություն,

մեղիագրագիտություն, մանիպուլյացիա, մեղիառություն, ժողովրդավարություն, քաղաքական կայունություն:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մենք բոլորս էլ առօրյայում կարող ենք լինել կեղծ լուր արտադրող, տարածող և սպառող: Այս գործողությունները շատերն անում են նպատակաուղղված, իսկ ոմանք նաև՝ ակամա:

Հայկական լրատվամիջոցներում կեղծ լուրերի տարածման խնդիրը բարդանում է թվային հարթակների արագ ընդլայնման և նորություններ սպառելու համար սոցիալական մեդիայի աճող կախվածության պատճառով:

Ժամանակակից տեղեկատվական տիրույթում, ինչպես տեղեկատվական պատերազմում գտնվող մյուս երկրները, Հայաստանը նույնպես կանգնած է լուրջ խնդրի՝ կեղծ լուրերի տարածման առջև:

Տարեցտարի Հայաստանում կտրուկ փոփոխություններ են տեղի ունեցել նորությունների սպառման և տարածման ձևերում: Ավանդական լրատվամիջոցներն այլևս տեղեկատվության միակ աղբյուրները չեն: Փոխարենը, սոցիալական մեդիայի հարթակները և առցանց լրատվական կայքերն են դարձել գերիշխող աղբյուրներ: Սակայն ակնհայտ է, որ բացի առաջարկված հնարավորություններից՝ առկա են նաև ռիսկեր: Այս թվային վերափոխումն էլ, ժողովրդավարացնելով տեղեկատվության հասանելիությունը, նաև նպաստեց ապատեղեկատվության արագ տարածմանը:

Հայաստանում կեղծ լուրերի ֆենոմենը ոչ միայն հանրային քննարկման առարկա է դարձել, այլև լուրջ սպառնալիք է հասարակության համախմբվածության, քաղաքական կայունության և ժողովրդավարության ամբողջականության համար: Ապատեղեկատվությունը կարող է խեղաթյուրել հանրային ընկալումը, ազդել քաղաքական մի շարք իրողությունների վրա և նույնիսկ սոցիալական հուզումներ առաջացնել: Հաշվի առնելով Հայաստանի աշխարհաքաղաքական խոցելիությունը և ներքաղաքական դինամիկան՝ կեղծ լուրերի հետևանքները կարող են հատկապես լուրջ լինել:

Հոդվածում ուսումնասիրվում են հայաստանյան մեդիայում կեղծ լուրերի ծավալներն ու ազդեցությունը, լույս է սփռվում այն խնդիրների վրա, որոնք առկա են մեդիա էկոհամակարգում, հանրային վստահության և ժողովրդավարական գործընթացների վրա: Ուսումնասիրությունից բացի՝ առաջարկվում են այդ սպառնալիքի դեմ պայքարի հնարավոր ռազմավարություններ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Որպես ապատեղեկատվության հիմնախնդրի ուսումնասիրման տեսական մոտեցումներ, սկզբունքներ, պատճառականություն և ուսումնասիրման մեթոդների համակարգ՝ դիտարկելի են տեղեկատվական առկա նյութերի ուսումնասիրությունը, դրանց համադրումը տարաբնույթ իրողությունների հետ, սոցիոլոգիական հարցումների մեթոդն ու վերլուծությունը, ոլորտի մասնագետների հետազոտությունները:

ՔՆՆԱԼԿՈՒՄ

Հայերենում *կեղծ լուրի* ամենատարածված հոմանիշն **ապատեղեկատվությունն** է: Սակայն այս տերմինն էլ ամբողջությամբ չի արտացոլում դրա իրական նշանակությունը: Անգլերենում ապատեղեկատվություն բառի երկու թարգմանություն կա՝ *misinformation* և *disinformation*: Դրանք տարբեր նշանակություն ունեն: «*Misinformation*»-ն օգտագործում ենք այն դեպքում, երբ գործ ունենք խաբելու, մոլորեցնելու նպատակ չունեցող ապատեղեկատվության հետ: Օրինակ, երբ լրագրողը սխալմամբ է ոչ ճիշտ տեղեկություն տարածում: «*Disinformation*» տերմինն օգտագործում ենք այն դեպքում, երբ ապատեղեկատվությունը հենց խաբելու, մոլորեցնելու նպատակով է տարածվում: Օրինակ, երբ սուտ լուրը ստեղծվում է չարամտորեն, երբ այն ամբողջությամբ հորինված է և չի հանդիսանում լրագրողական կամ մարդկային սխալի արդյունք: Ընդհակառակը, այն ամբողջությամբ և դիտավորությամբ ստեղծված կեղծիք է (Մեդիա նախաձեռնությունների կենտրոն, 2022):

Ֆեյք նյութը մեդիագրագիտության առջև ծառացած խնդիրներից մեկն է: Այն ժամանակակից մեդիատենդենց է, որն արտահայտվում է ն՝ լրատվական կայքերում, ն՝ սոցիալական ցանցերում, ն՝ քաղաքական ու հասարակական կյանքում: Կեղծ լուրը կարող է լինել *նպատակադրված* և *ակամա*:

Նպատակադրվածը հիմքում ունի լսարանին թյուրիմացության մեջ գցելու, նրան սխալ տեղեկություն փոխանցելու նպատակ:

Կեղծ լուրը, ըստ «Մեդիայի և տեղեկատվական գրագիտության լաբորատորիայի» (MilLab), այն տեղեկությունն է, որում փաստերը դիտավորությամբ կեղծված կամ խեղաթյուրված են: Դրանք կարող են տարածվել մեդիայի բոլոր միջոցներով՝ երկու հնարավոր նպատակներով.

1. *Քաղաքական*. ներքին քաղաքական նպատակներով կամ արտաքին դերակատարների շահագրգռվածության դեպքում: Սրանք կոչվում են տեղեկատվության վրա ազդող գործոններ;
2. *Ֆինանսական շահույթի համար*. «քլիքայթը» գրավում է ընթերցողի ուշադրությունը սենսացիոն վերնագրերի և կեղծ լուրերի միջոցով՝ յուրաքանչյուր քլիքի համար գումար աշխատելով:

Ֆեյք նյութն այսօր շատ ավելին է, քան կեղծ և ապակողմնորոշիչ տեղեկատվության պիտակ, որը քողարկված է և տարածվում է որպես նորություն կամ լուր: Այն դարձել է հուզական տերմին, որն օգտագործվում է լրագրությունը խաթարելու և վարկաբեկելու համար: Այդ իսկ պատճառով Wardl-ի և Derahshan-ի առաջարկած «ապատեղեկատվություն» և «տեղեկատվական խառնաշփոթ» տերմինները նախընտրելի են, քան սահմանված չեն (**ՅՈՒՆԵՍԿՕ, 2018**):

Ըստ Իռլանդիայի համացանցային անվտանգության իրազեկման կենտրոնի (անգլ.՝ The Irish Internet Safety Awareness Centre)՝ կեղծ տեղեկատվությունն այն նորությունը, պատմությունը կամ խաբեությունն է, որն ստեղծվել է՝ ընթերցողներին դիտավորյալ ապատեղեկացնելու կամ խաբելու նպատակով: Սովորաբար, այս պատմությունները ստեղծվում են կա՛մ մարդկանց տեսակետների վրա ազդելու, քաղաքական օրակարգ առաջ մղելու, կա՛մ շփոթություն առաջացնելու համար: Դրանք հաճախ կարող են շահութաբեր բիզնես լինել համացանցում նյութեր

տեղադրողների համար: Կեղծ տեղեկատվությունը կարող է մոլորության մեջ գցել մարդկանց՝ ներկայանալով որպես վստահելի կայք կամ օգտագործելով անուններ և վեբ հասցեներ, որոնք նման են հեղինակավոր լրատվական կազմակերպություններին: Կեղծ լուր արտահայտությունը նոր չէ: Ապատեղեկատվության թեման արդիական է դեռևս 2016 թվականից, երբ տեղի ունեցան ԱՄՆ նախկին նախագահ Դոնալդ Թրամփի ընտրությունները: 2017 թվականից այն դարձել է թեժ քննարկման թեմա: Հայկական մեդիայում ապատեղեկատվությունն սկսեց լայն տարածում ստանալ 2020 թվականին տեղի ունեցած Արցախյան 44-օրյա պատերազմի ընթացքում:

Ըստ Վահրամ Միրաքյանի՝ տպագիր լրատվամիջոցներում կիրառվում են 20 տեսակի հիմնական մեթոդներ, որոնք մանիպուլյացիայի միջուկն են (**Միրաքյան Վ., 2010**): Հայկական մեդիային ավելի բնորոշ է հետևյալը՝

ա. *Պիտակավորում*. (name calling)

Սա մարդկանց, կազմակերպություններին, գաղափարներին, ցանկացած սոցիալական երևույթին պիտակավորելն է: Պիտակ կպցնելը լեզվահոգեբանական մանիպուլյացիոն հնարք է, երբ վարկաբեկելու համար տալիս են «անբարենպաստ բնորոշումներ»: Պիտակները մարդկանց մոտ առաջացնում են զգայական բացասական վերաբերմունք: Օրինակ, ադրբեջանական ԶԼՄ-ների ներմուծած «хайизм» նորաբանությունը, որը նպատակ ունի բացասական երանգ հաղորդել հայության հետ կապված յուրաքանչյուր նյութին:

բ. *Բդեալական կամ փայլուն ընդհանրացում* (glittering generality), որի նպատակն է գաղափարին, երևույթին, մարդուն ավելի դրական վերաբերմունք առաջացնող ընդհանուր անուն տալու միջոցով փոխել սոցիալական նշանակությունը: Նման բառ-կարծրատիպերից են «հայրենասեր», «խաղաղություն», «սեր», «հաղթանակ» բառերը:

գ. *Հեղինակության վկայակոչում* (referring to authority), որի ժամանակ մեջբերվում է հեղինակությունների խոսքը՝ որևէ երևույթի, անձի նկատմամբ դրական կամ բացասական վերաբերմունք առաջացնելու նպատակով: Հեղինակությունը կարող է լինել կրոնական, քաղաքական, գիտական, ռազմական և այլ ոլորտներից: Օրինակ,

«Ինչ է արել ռուսաստանաբնակ Գարիկ Մարտիրոսյանը», որը հրապարակել է «24 լուր»-ը յուրօրում 2022թ. ապրիլին: Օրինակից եզրակացնում ենք, որ պարտադիր չէ, որ հեղինակությունը լինի տվյալ ոլորտից և հասկանա այն խնդիրները, որոնց մասին նա կարծիք է հայտնում: Այս մեթոդը հնարավոր է կիրառել նաև առանց հեղինակության վկայակոչման: Օրինակ, «գիտնականների հավաստմամբ», «բժիշկների խորհրդով» և նման վկայակոչումներ: Մեթոդի հնարքներից է նաև անանուն աղբյուրին վկայակոչելը, օրինակ՝ «ըստ հավաստի աղբյուրների», «բրիտանացի գիտնականները բացահայտել են, որ...»:

Այժմ շատերը նորություններ են ստանում լրատվամիջոցների սոցիալական կայքերից, և հաճախ դժվար է ասել՝ տեղեկությունը վստահելի՞ է, թե՞ ոչ: Տեղեկատվության գերբեռնվածությունը և լսարանի մեղիագրագիտության բացակայությունը նույնպես նպաստում են կեղծ լուրերի և պատմությունների ավելացմանը:

Ըստ «Լրագրողներ առանց սահմանների» միջազգային կազմակերպության՝ կեղծ լուրը դասակարգվում է հետևյալ կերպ՝ ամենաթույլ նշանակություն ունեցողից մինչև ամենաուժեղը. երգիծանք, լրագրողական սխալ, ապակողմնորոշող լուր, համտեքստից կտրելը, մանիպուլացնող բովանդակություն, նպատակային և ամբողջովին հորինված բովանդակություն:

Երգիծանքի դեպքում թվում է, թե կարելի է ըմբռնել, սակայն համացանցում գոյություն ունեն այնպիսի կայքեր, որտեղ տեղադրված նյութերն այնքան լավ են մշակված, որ կարող են թվալ իրական, օրինակ, onion.com, intersax.ru (Interfax.ru լրատվական գործակալության մեկ տառը փոխած): Երգիծական տեքստում օգտագործվում են չափազանցության, հեզնանքի և նմանակման մեթոդները: Երգիծանքն առաջնորդվում է ինչ-որ ճշմարտություն պարզաբանելու, ընդգծելու ցանկությամբ: Շատ առումներով լրագրության նորմատիվային ձգտումները նման են երգիծանքի ձգտումներին: Երգիծանքն ու լրագրությունը փոխգործակցության մեծ պատմություն ունեն՝ սկսած ժամանակակից լրագրության ամենավաղ ուղղություններից: Երգիծանքը հաճախ օգտագործվում է որպես լրագրողական գործիք: Լրագրության դիրքը օգտակար էր երգիծաբանների համար, երգիծանքի

զվարճալի հատկությունները և ուշադրություն գրավելը երկար ժամանակ հետաքրքրել են լրատվամիջոցներին:

Հայկական հեռուստաթերթում կեղծ լուրի երգիծական տեսակին է պատկանում «*ArmComedy*» հաղորդաշարը: Հաղորդման ընթացքում ցուցադրվում են հոլովակներ, և հաղորդավարները տալիս են իրենց սեփական մեկնաբանությունը՝ հաճախ նաև սուբյեկտիվորեն շարունակելով և զարգացնելով հոլովակներում ներկայացվող պատմությունները: Սա և հաղորդման ընթացքում էկրանին պատկերվող գրառումները շատ հեշտությամբ կարող են ընկալվել որպես իրականություն, ինչպես՝ «Ցույցերին չմասնակցող քաղաքները կարող են վերջնականապես զրկվել հանրահավաքներից» (8:34 վրկ) կամ «ԱՄՆ-ը կարճազանքի *մաեստրոյին* (Հաղորդման մեջ *մաեստրո* անվանում են ԱԺ նախկին նախագահ Գ. Սահակյանին) վերջինիս խոսքի թարգմանությունն ավարտելուց հետո՝ 2023թ. -ին» (17:04 վրկ):

Շատ լրատվամիջոցներ երգիծական ժանրի հրապարակումներ են անում հումորի միջազգային օրը՝ ապրիլի 1-ին: Հայկական մեդիայում մինչև վերջերս տարածված էին նմանատիպ հրապարակումները, որոնք ընկալվում էին որպես եղելություն: Սակայն արդեն նկատում ենք, որ այլևս հանրությունը չի նշում օրը, և մեդիայում չենք տեսնում կատակ-հրապարակումներ:

Լրատվական բոլոր գործակալություններն ու լրագրողներն, անկախ իրենց քաղաքական հակումներից, պետք է խուսափեն ոչ միտումնավոր ապատեղեկատվության տարածումից: Լրագրողական սխալներից են հայտնի դեմքերի՝ դերասանների, քաղաքական գործիչների մահվան լուրը հրապարակելուց առաջ՝ չճշտելով տվյալ անձի հարազատների, բարեկամների, գործընկերների, ընկերների հետ: Այդպիսի հրապարակումներ եղել են դերասան Արմեն Զիգարխանյանի մահվան մասին, սակայն նա այդ ժամանակ պարզապես վատառողջ է եղել: Նման դպքերում լրատվամիջոցները կայքերից ջնջում են իրենց արած սխալները, և հետագայում հնարավոր չի լինում հղում անել դրանց:

Լրագրողական հաջորդ սխալի օրինակը 44-օրյա պատերազմի ժամանակ է հանդիպել: ՊՆ հաղորդագրություններում զոհված զինծառայողների անունների

ցուցակմներում երբեմն հայտնվում էին վիրավորված, կորած, բայց չգոհված զինվորների անուններ, ճշտելուց հետո՝ հերքվում: Նման սխալներից բացի՝ ոչ միտումնավոր կամ ակամա կեղծ տեղեկություն են համարվում նաև տարեթվերը, անձնանունները, տեղանունները, պաշտոնները սխալ գրելը:

Համատեքստից կտրված խոսքի և կադրերի մասին հիմնականում խոսում են քաղաքական, կուսակցական, պետական և հասարակական գործիչները: Համատեքստից կտրված խոսքի մասին բողոքները շատ են: Յուրաքանչյուր փոքր թվացող կոնտեքստ գրեթե միշտ ունենում է ավելի մեծ համատեքստ: Հետևաբար բարեխիղճ լրագրողները և հեղինակավոր լրատվամիջոցները վիճահարույց նյութերի վերջում միշտ տալիս են խնդրի նախապատմությունը: Կոնտեքստից կտրված և իբրև ճիշտ ներկայացված հրապարակումները բացահայտվելուց հետո նույնպես հեռացվում կամ ջնջվում են:

Մանիպուլացնող բովանդակության հնարքն օգտագործելու ժամանակ փաստերն առանձին վերցրած ճիշտ են, բայց միասին կամ որոշակի դասավորությամբ՝ միտումնավոր են, որպեսզի ընդհանուր միտքն ընկալվի այն հաղորդողի ուզած ձևով: Ժամանակակից աշխարհում ապատեղեկատվության ամենահայտնի դեպքերից մեկը Մեծ Բրիտանիայում Եվրոպական միությունից դուրս գալու հանրաքվեի՝ Բրեքսիթի ժամանակ երկրով մեկ շրջող կարմիր ավտոբուսն էր, որի վրա հետևյալ կարգախոսն էր. «Մենք ամսական 350 միլիոն ֆունտ ենք ուղարկում ԵՄ, եկեք փոխարենը ֆինանսավորենք մեր ազգային առողջապահության համակարգը»: Կարմիր ավտոբուսի գրառումը հանրաքվեի քարոզարշավի ժամանակ ամենաշատ քննարկվածներից էր: Երկրի վիճակագրության ծառայությունը հաստատեց, որ ընտրողներին ներկայացված թվերը չափազանցված են: Տեխնիկապես էլ այդ գումարը չէր կարող ուղղվել առողջապահական համակարգին: Սակայն հասարակությունը գերադասեց հավատալ պարզ, բայց մանիպուլյատիվ կարգախոսին եւ քվեարկեց Մեծ Բրիտանիայի՝ ԵՄ-ից դուրս գալու օգտին:

Հայկական իրականության մեջ մանիպուլյատիվ բովանդակություն ունեցող նյութերից մեկը «ArmLur TV» լրատվական կայքի յուրօրօրյան էջում տարածած

«Կատարվածի մեջ կասկածում ենք բոլորին «Ժողովուրդ» օրաթերթ» վերնագրով տեսանյութն է¹: Այն պատմում է, որ «Ժողովուրդ» օրաթերթի և «ArmLur» լրատվական կայքի տարածք են ներխուժել ու տակնուվրա արել անհայտ անձինք և շեշտում, որ «Օրաթերթին լռեցնել չեն կարող», «գոյության առաջին օրվանից օրաթերթը որդեգրել է օրաթերթ բոլորի և ամեն ինչի մասին սկզբունքը, և բնական է, որ այդ ամենը կարող էր դուր չգալ շատ մարդկանց»:

2018 թվականին fir.am-ը, հղում անելով ռուսական «360 աստիճան» հեռուստաընկերությանը, հրապարակել է, որ ռուսական մի շարք ԶԼՄ-ներ պատմել են Եվրոպայում «Ների՛ր ինձ» խորագրով ֆլեշմոբի մասին, որով ներգաղթյալների կողմից բռնաբարության ենթարկված գոհերը, իբր, ներողություն են խնդրում իրենց բռնաբարողներից: Սակայն հեռուստաընկերության հաղորդած այս լուրը հորինված ապատեղեկատվություն է, որը ներկայացվել է նաև համացանցային լրատվամիջոցներում:

Ապատեղեկատվության հոսքը պատերազմական իրավիճակների ընթացքում կտրուկ մեծանում է: Մեդիադաշտը ողողվում է քարոզչական նյութերով, կեղծ լուրերով, հակառակ կողմի մեդիալուրերով՝ լսարանի մոտ ստեղծելով թյուրբանալություն և թերահավատություն լրատվամիջոցների նկատմամբ:

Մեդիապատերազմի ընթացքում ապատեղեկատվություն տարածելու գործիքներից մեկն աղբյուրի նմանակումն է: Արցախյան 44-օրյա պատերազմի օրերին աղբյուրները ստեղծել էին Հանրային հեռուստաընկերության լուրերի կայքի նմանակը: Վիզուալ առումով կայքն ամբողջովին նման էր բնօրինակին, սակայն «Լուրեր» անվան մեջ ավելացված էր «live» բառը: Հաջորդ հնարքն արդեն վերաբերում է սոցիալական ցանցերի օգտահաշիվներին: Վերցվում է որևէ հայտնի մարդու կամ շատ լսարան ունեցող էջ, փոխվում է անվանումը և օգտագործվում է որպես լրատվական օգտահաշիվ: Եթե հաշիվը բացվել է Ֆեյսբուքում, հատուկ գործառույթի շնորհիվ հնարավոր է տեսնել էջի թափանցիկությունը՝ անվանման փոփոխությունների ժամանակագրությունը, կիրառված գովազդները:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հետազոտությունը հաստատում է, որ կեղծ լուրերը հայկական մեդիաոլորտում լայնորեն տարածված են, որոնք հիմնականում ունեն նույն դրդապատճառները՝ քարոզչություն, հանրային մտածողության ձևավորում, վարկաբեկում: Ներքին քաղաքական խմբավորումներն ապատեղեկատվություն տարածելն օգտագործում են որոշ իրողություններում և գործընթացներում: Շատ դեպքերում նկատում ենք, որ անկախ կայքերը, սոցիալական լրատվամիջոցները պարզապես ձգտում են սենսացիոն բովանդակությամբ կեղծ լուրեր տարածել՝ դիտումների քանակն ավելացնելու համար:
2. Կեղծ լուրերի շարունակական տարածումը զգալիորեն խաթարում է հասարակության վստահությունը լրատվամիջոցների նկատմամբ: Այս խնդիրը չի սահմանափակվում առցանց հարթակներով, այլ տարածվում է նաև ավանդական լրատվամիջոցների վրա:
3. Սոցիալական մեդիայի հարթակները կարևոր դեր են խաղում կեղծ լուրերի տարածման գործում: Նրանց ալգորիթմները, որոնք առաջնահերթություն են տալիս ներգրավվածությանը, ակամայից խթանում են սենսացիոն և ապակոդմնորոշիչ բովանդակության դիտելիության ցուցանիշը, այլ ոչ թե իրական տեղեկատվությունը: Սա հեշտացնում է կեղծ լուրերի տարածումը լայն լսարանի շրջանում և բարդացնում ապատեղեկատվությանը հակազդելու ջանքերը:
4. Կեղծ լուրերը գալիս են տարբեր աղբյուրներից, այդ թվում՝ տեղական քաղաքական գործիչներից, օտարերկրյա ազդեցության արշավներից և համացանցային անկախ հարթակներից:
5. Ապատեղեկատվության դեմ պայքարի արդյունավետ միջոցներից մեկը մեդիագրագիտության ուսուցումն է, որը կբարձրացնի հանրության՝ նորությունների աղբյուրները քննադատաբար գնահատելու և ապատեղեկատվությունը ճանաչելու կարողությունը, լրագրության ստանդարտների ամրապնդում, որը կխրախուսի լրատվամիջոցներին՝ հետևելու ճշգրտության և հաշվետվողականության ավելի բարձր չափանիշներին: Անհրաժեշտ է նաև կառավարության, ԶԼՄ-ների և քաղաքացիական

հասարակության միջև համագործակցության խթանում՝ ապատեղեկատվության տարածման դեմ պայքարի միասնական ճակատ ստեղծելու համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Մեղիա օգիտություն» ուսումնական ձեռնարկ դասավանդողների համար (2022), Մեղիա նախաձեռնությունների կենտրոն, Երևան:
2. ՅՈՒՆԵՍԿՕ (2018), «Լրագրություն, կեղծ լուր և խտրականություն» ուսումնական ձեռնարկ դասավանդողների համար:
3. Միրաքյան Վ. (2010), «Լրատվամիջոցների ազդեցության հնարավորությունները», Երևան, «Լուսակն» հրատ.:
4. <https://fip.am/2496>
5. <https://www.webwise.ie/teachers/what-is-fake-news/>
6. <https://www.youtube.com/watch?v=AGhjdrFw5Ww>
7. <https://www.dw.com/ru/%D1%82%D0%B5%D0%BC%D1%8B-%D0%B4%D0%BD%D1%8F/s-9119>
8. <https://www.youtube.com/@armcomedy/videos>
9. <https://www.youtube.com/watch?v=ifsDoKU5G1s>
10. <https://www.youtube.com/watch?v=vLqgo7iaVwc>
11. <https://www.youtube.com/watch?v=VRuZ7FBE6AM>
12. https://www.youtube.com/watch?v=MC8m_Jvi4mU
13. https://www.researchgate.net/publication/335383597_Satire_and_Journalism

REFERENCES

1. «Media igitowt'yown» owsowmnakan d'er'nark dasavandoghneri hamar /"Media science" handbook for trainings/ (2022), Media initiatives center, Yerevan.
2. UNESCO (2018), «Lragrowt'yown, keghc' lowr & xtrakanowt'yown» owsowmnakan d'er'nark dasavandoghneri hamar /Journalism, fake news & discrimination: handbook for education & trainings/, USA.

3. Mirakyan V. (2010), «Lratvamijocneri azdecowt'yan hnaravorowt'yownnery'» /«Possibilities of media influence»/, Yerevan, "Lusakn" publishing house.
4. <https://fip.am/2496>
5. <https://www.webwise.ie/teachers/what-is-fake-news/>
6. <https://www.youtube.com/watch?v=AGhjdFw5Ww>
7. <https://www.dw.com/ru/%D1%82%D0%B5%D0%BC%D1%8B-%D0%B4%D0%BD%D1%8F/s-9119>
8. <https://www.youtube.com/@armcomedy/videos>
9. <https://www.youtube.com/watch?v=ifsDoKU5G1s>
10. <https://www.youtube.com/watch?v=vLqgo7iaVwc>
11. <https://www.youtube.com/watch?v=VRuZ7FBE6AM>
12. https://www.youtube.com/watch?v=MC8m_Jvi4mU
13. https://www.researchgate.net/publication/335383597_Satire_and_Journalism

Арташес Мартиросян, Женя Абгарян

Проблема дезинформации в современном армянском

медиа-пространстве

Заключение

Ключевые слова и выражения: дезинформация, медиаграмотность, манипуляции, медиасфера, демократия, политическая стабильность.

Актуальность проблемы дезинформации в 21 веке связана с тем, что ложные новости являются проблемой или препятствием для современных средств массовой информации, из-за чего очень часто правильные новости также воспринимаются как ложные. Чтобы не поддаваться поддельным новостям, важно избегать их, насколько это возможно, проверять полученную информацию и выявлять подделки и, конечно же, бороться с ними: Основная повестка дня гражданского общества Армении в борьбе с дезинформацией должна включать расширение прав и возможностей независимых средств массовой информации, достижение прозрачности в отношении

принадлежности и финансирования средств массовой информации, продвижение механизмов саморегулирования средств массовой информации, инициативы по проверке фактов и обучение медиаграмотности. Их основными распространителями являются те структуры, которые общаются с общественностью не для передачи информации, а для пропаганды, собственного мнения, распространяя отношение с помощью манипуляций.

Фейковые новости поступают из различных источников, включая местных политиков, кампании иностранного влияния и независимые онлайн-платформы. Одним из эффективных способов борьбы с дезинформацией является обучение медиаграмотности, которое повысит способность общественности критически оценивать источники новостей и распознавать дезинформацию, а также ужесточение стандартов журналистики, которые будут стимулировать средства массовой информации придерживаться более высоких стандартов точности и подотчетности. Также необходимо развивать сотрудничество между правительством, СМИ и гражданским обществом для создания единого фронта по борьбе с распространением дезинформации.

Artashes Martirosyan, Zhenya Abgaryan

The problem of disinformation in the Modern Armenian media space

Conclusion

Key words and expressions: *disinformation, media literacy, manipulation, media sphere, democracy, political stability.*

The relevance of the problem of disinformation in the 21st century is due to the fact that false news is a problem or an obstacle for modern mass media, which is why very often correct news is also perceived as false. In order not to succumb to fake news, it is important to avoid it as much as possible, check the information received and identify fakes and, of course, fight them:

The main agenda of the Armenian civil society in the fight against disinformation should include empowering independent media, achieving transparency regarding media

ownership and financing, promoting media self-regulation mechanisms, fact-checking initiatives and media literacy training. Their main distributors are those structures that communicate with the public not to transmit information, but to promote their own opinions, spreading the attitude through manipulation.

Fake news comes from a variety of sources, including local politicians, foreign influence campaigns, and independent online platforms. One effective way to fight disinformation is media literacy training, which will increase the public's ability to critically evaluate news sources and recognize misinformation, and strengthening journalism standards that will encourage the media to adhere to higher standards of accuracy and accountability. It is also necessary to promote cooperation between the government, media and civil society to create a united front to fight the spread of misinformation.

Արտաշես Մարտիրոսյան – Խաչատուր Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի հեռուստառադիոլրագրության ամբիոնի դոցենտ, Բ.Գ.Թ.: Գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ բառային ստուգաբանություններ, բառակազմություն, բառային իմաստաբանություն, թարգմանության տեսություն: Հեղինակ է ավելի քան 20 հոդվածի: artashesmartirosyan@yandex.ru

Ժենյա Աբգարյան - Խաչատուր Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի հեռուստառադիոլրագրության ամբիոնի մագիստրոս: Գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ գիտագործնական ժուռնալիստիկա: Հեղինակ է 21 հոկտոբրական հոդվածի: jenyabgaryan@gmail.com

Арташес Мартиросян - Доцент кафедры телерадиожурналистики Армянского государственного педагогического университета им. Хачатуря Абовяна, кандидат педагогических наук. Сфера научных интересов: лексическая этимология, словообразование, лексическая семантика, теория перевода.: Автор около 20 статей: artashesmartirosyan@yandex.ru

Женя Абгарян - Магистр кафедры телерадиожурналистики Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна: Область научных интересов: научная журналистика. Автор 21 риторической статьи. jenyabgaryan@gmail.com

Artashes Martirosyan - Associate Professor of the Department of Television and Radio Journalism at the Armenian State Pedagogical University after Khachatura Abovyan, Candidate of Pedagogical Sciences, Research interests: lexical etymology, word formation, lexical semantics, theory of translation: Author of about 20 articles: artashesmartirosyan@yandex.ru

Zhenya Abgaryan - Master of the Department of Television and Radio Journalism of Khachatur Abovyan Armenian State Pedagogical University: Scope of scientific interests: scientific journalism. Author of 21 rhetorical articles. jenyabgaryan@gmail.com

ԷԴԳԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՄԵՐԻԿԱՑԻ ՄԻՍԻՈՆԵՐ ՀԱՐԻՍՈՆ ԴՈՒԱՅԹԻ ՀԱՂՈՐԴԱԾ
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ
ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ¹

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v2i65.115

ԱՄՓՈՓՈՒՄ

Բողոքականությունը արևմտահայության շրջանում հիմնականում տարածվել է ամերիկյան միսիոներների միջոցով 19-րդ դարի առաջին տասնամյակներից: Արդեն դարի վերջերին հայ բողոքականների թվաքանակը, հատկապես Արևմտյան Հայաստանի տարածքում, զգալի աճում է: Օսմանյան կայսրության տարածքում քրիստոնյաների, մասնավորապես հայերի, շրջանում քարոզչություն իրականացնելու նպատակով գործունեություն իրականացրած ամերիկացի առաջին միսիոներներից էր Հարիսոն Գրեյ Օթիս Դուայթ: Վերջինս կայսրության հայերի շրջանում իր քարոզչական գործունեությունը ներկայացրել իր հեղինակած **«Արևելքում վերածնված քրիստոնեությունը կամ պատմություն Աստծո գործի Թուրքիայի հայերի շրջանում»** խորագրով աշխատության մեջ: Սույն հոդվածում անդրադառնում ենք նշված աշխատությանը՝ ցույց տալով դրա աղբյուրագիտական նշանակությունը հայերի շրջանում բողոքականության տարածման պատմության ուսումնասիրման համար: Հոդվածում քննության են ենթարկվում նաև հեղինակի ընկալումներն ու սկզբունքները, ինչպես նաև սուբյեկտիվ մոտեցումները ներկայացված փաստերի և իրադարձությունների հարցում:

Բանալի բառեր և արտահայտություններ. Ամերիկացի բողոքական միսիոներներ, բողոքականություն, Հարիսոն Գրեյ Օթիս Դուայթ, Կ.Պոլսի հայոց պատրիարքություն, Արևմտյան Հայաստան:

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսական աջակցությամբ՝ 21T-6A224 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Առաջին բողոքական միսիոներները Մերձավոր Արևելյան տարածաշրջանում հայտնվել են դեռևս 16-րդ դարում (**Կիրակոսյան Ա., 2014**): Սակայն վերջիններիս ակտիվ և մշտական գործունեության մեկնարկը ողջ աշխարհում սկիզբ է առնում 19-րդ դարի սկզբներից (**Կիրակոսյան Ա., 2014, Charles C. Creegan, 1903**): Մերձավոր Արևելքում միսիոներական շարժումը հիմնականում համակարգվում էր «Օտարերկրյա առաքելությունների լիագործների ամերիկյան խորհրդի» (կամ ուղղակի «Ամերիկյան խորհուրդ») կողմից, որը ստեղծվել էր 1810թ. Բոստոնում (**William E. Strong, 1910**): 1829թ. այդ կառույցի կողմից կայացվում է հատուկ որոշում Օսմանյան կայսրության հայերի շրջանում առաքելություն հաստատելու վերաբերյալ (**Tootikian Vahan, 1994**): 1830թ. ԱՄՆ-ը և Օսմանյան կայսրության միջև պաշտոնական հարաբերությունների հաստատումը զգալիորեն նպաստեց կայսրության տարածքում ամերիկացի միսիոներների գործունեության ծավալմանը (**Կիրակոսյան Ա., 2014**):

Ամերիկացի միսիոներների առաջին շփումները հայերի հետ տեղի ունեցան դեռևս 1820-ական թթ. սկզբներին: Սակայն վերջիններս որևէ համակարգված և խորքային պատկերացումներ չունեին բուն Հայաստանում ապրող հայերի վիճակի վերաբերյալ:

Ամերիկացի միսիոներներ Էլի Սմիթի (1801-1857թթ.) և Հարիսոն Գրեյ Օթիս Դուայթի (1803-1862թթ.) մասնակցությամբ 1830-1831 թթ. կազմակերպվում է առաջին ուղևորությունը ողջ Հայաստանի տարածքում, որը նպատակ էր հետապնդում մոտիկից ծանոթանալ հայությանը (**Հովհաննիսյան Է., 2024**): 1833թ. ամերիկացի միսիոներների Հայաստանում կատարած ճամփորդության արդյունքում կատարած ուսումնասիրությունները երկու հատորով տպագրվում են ԱՄՆ-ում (**Eli Smith and Rev. Harrison Gray Otis Dwight, 1833**), իսկ մեկ տարի անց մեկ ամբողջական հատորով Լոնդոնում (**Eli Smith, Harrison Gray Otis Dwight, 1834**):

1831թ. «Ամերիկյան խորհրդի» որոշմամբ Արևելքի քրիստոնեական եկեղեցիների հետևորդների շրջանում քարոզչական գործունեություն իրականացնելու նպատակով սկսեցին հիմնվել միսիոներական կայաններ: Նման

առաջին կայանը հիմնվեց Կոստանդնուպոլսում: Սկզբնական շրջանում ամերիկացի միսիոներները հիմնականում գործում էին Օսմանյան կայսրության մայրաքաղաքում և ծովափնյա խոշոր քաղաքներում: Սակայն ժամանակի ընթացքում «Ամերիկյան խորհուրդը» խնդիր դրեց թափանցել երկրի խորքերը այնտեղ ապրող քրիստոնյա ժողովուրդներին անմիջապես ծանոթանալու և ուսումնասիրելու նպատակով:

Սկիզբ է առնում ամերիկացի բողոքական միսիոներների և Օսմանյան կայսրության հայերի առնչությունների ակտիվ շրջանը: Բողոքականության աճող ազդեցության պայմաններում արդեն 1846 թ. հուլիսի 1-ին Կ.Պոլսի Բերա թաղամասում 40 հայ ավետարանականների կողմից հիմնադրվում է Հայ Ավետարանական եկեղեցին (**Թուֆիկեան Վ., 1998**): Չորս տարի անց՝ 1850 թ. նոյեմբերի 27-ին սուլթան Աբդուլ Մեջիդը, հատուկ ֆերմանով այն ճանաչեց որպես առանձին կրոնական համայնք՝ «միլլեթ», որով սկիզբ առավ հայ ավետարանականների պաշտոնական գործունեությունը (**Leon Arpee, 1946**): Նշենք, որ Արևելյան Հայաստանում ավետարանական առաջին շարժումը սկիզբ էր առել դեռևս 1823 թ. Շուշիում Շվեցարիայի Բազել քաղաքի «Ավետարանական քարոզչական ընկերության» գործունեությամբ (**Ղազարյան Ա., 1999**): Վերջիններիս շուրջ 15 տարվա գործունեության արդյունքում Շուշիում ձևավորվեց փոքրաթիվ հայ ավետարանական համայնք:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հոդվածում քննության ենթարկված աշխատությունը ունի որոշակի աղբյուրագիտական արժեք թե՛ 19-րդ դարի առաջին տասնամյակների արևմտահայության պատմության առանձին հարցեր ուսումնասիրելու և թե՛ հայության շրջանում բողոքականության տարածման պատմության հետազոտելու տեսանկյունից: Հետազոտությունը կատարվել է պատմահամեմատական, համադրական-վերլուծական և գուգադրական մեթոդներով: Ցուցաբերվել է նաև քննադատական մոտեցում խնդրո առարկա աշխատության հեղինակի առանձին մոտեցումների և գաղափարների ներկայացման հարցում, որոնք տեղ են գտել

աշխատությունում:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Հարիսոն Գրեյ Օթիս Դուայթ 1832 թ. հունիսից իր ընտանիքի հետ հաստատվում է Պոլսում (**Dwight Harrison Gray Otis, 1854**): Վերջինս համարվում է Օսմանյան կայսրությունում հայ բողոքական առաքելության հիմնադիրներից և «հայկական առաքելության հայրը»: Վերջինս իր կյանքի 30 տարիները նվիրել է Օսմանյան կայսրությունում բողոքական գաղափարների տարածմանն ու բողոքական համայնքի կազմավորմանը (**Leon Arpee, 1946**):

Հարիսոն Դուայթը Հայաստան կատարած իր ուղևորությունից մոտ երկու տասնամյակ անց իր սեփական հիշողություններն ու հայերի շրջանում կատարած հետազոտությունները ամփոփում է 1850 թվականին հրատարակված աշխատությունում, որը կրում է **«Վերածնված քրիստոնեությունը Արևելքում կամ պատմություն Աստծո գործի Թուրքիայի հայերի շրջանում»** («Christianity Revived in the East, Or, A Narrative of the Work of God Among the Armenians of Turkey») խորագրը և հրատարակվում է Նյու-Յորքում (**Dwight [Harrison Gray Otis, 1850](#)**): Աշխատանքը ժամանակագրական առումով ընդգրկում է 1830-ական թթ. սկզբներից մինչև 1848-1849թթ.: Հարիսոն Դուայթի գրքի երկրորդ հարատարակությունը՝ **«Քրիստոնեությունը Թուրքիայում. Հայոց եկեղեցու բողոքական բարեփոխումների պատմություն»** («Christianity in Turkey: A Narrative of the Protestant Reformation in the Armenian Church») (**Dwight [H. G. O., 1854](#)**) խորագրով, հրատարակվում է 1854թ. Լոնդոնում: Այս աշխատանքը նախորդի խմբագրված տարբերակն էր, որտեղ ներկայացված շատ տեղեկություններ կրկնվում են, սակայն կան նաև նոր ավելացումներ, փաստեր, իսկ իրադատությունների նկարագրությունը հասցվում է մինչև 1854 թվական:

Սույն հոդվածում հիմնականում անդրադառնում ենք Դուայթի հեղինակած առաջին՝ 1850 թ. հրատարակված գրքին, առանձին դեպքերում ներկայացնելով տեղեկություններ նաև գրքի երկրորդ հրատարակությունից:

Դուայթի աշխատությունը կարևոր սկզբնաղբյուր է հանդիսանում, ոչ միայն

Հայաստանում բողոքական հարանվանության տարածման պատմության, այլ նաև 19-րդ դարի առաջին կեսի Հայոց պատմության մի շարք հարցերի ուսումնասիրման տեսանկյունից:

Այս աշխատանքը մանրամասնորեն ցույց է տալի ամերիկացի բողոքականների ջանքերն ու իրականացրած քայլերը, որի արդյունքում բողոքականությունը 19-րդ դարի 30-ական թթ. աստիճանաբար տարածվեց հայ իրականության մեջ՝ ունենալով որոշակի թվով հետևորդներ:

Դուայթի հեղինակած այս աշխատությունը հատկապես հետաքրքրական տեղեկություններ է պարունակում արևմտահայության հասրակական, կրթական, հոգևոր-կրոնական, մշակութային կյանքի, կենցաղի վերաբերյալ: Բնականաբար փաստերն ու իրադարձությունները ներկայացված են բողոքական միսիոներներին հատուկ, այսպես ասած, քննադատական տեսանկյունից: Հասկանալի պատճառներով այդ «քննադատության» հիմնական թիրախում հաճախ հայտնվում է հայոց եկեղեցին, մասնավորապես Պոլսո հայոց պատրիարքությունը, որի հետ էլ եղել է ամերիկացի միսիոներների հիմնական շփումները:

Դուայթի աշխատանքը իր բնույթով նման է հուշագրությունների ժանրին, քանզի վերջինս հանդիսանում է իր նկարագրած իրադարձությունների կամ անմիջական մասնակիցն ու ականատեսը կամ էլ ներկայացված տեղեկատվության առաջնային կրողը:

Դուայթը մանրամասնոր անդրադառնում է ամերիկացի միսիոներների Օսմանյան կայսրության տարածքում հաստատվելու գործընթացին: Վերջինս փաստում է, որ «Ամերիկայի խորհուրդը» դեռևս 1829թ. որոշում էր Օսմանյան կայսրության հայերի շրջանում առաքելություն բացելու վերաբերյալ (**Dwight H.G.O., 1850**):

Հեղինակն անդրադառնում է միսիոներների ծավալած առաջին գործողություններին՝ ներկայացնելով Արևմտյան Հայաստան ժամանած բոլոր միսիոներներին: Առաջիններից մեկը 1831թ. Կ.Պոլսում հաստատվում է վերապատվելի Ռ. Գուդելը, որը սկզբնական շրջանում գործել է Բեյրութում ու Մալթայում, իսկ այնուհետև սկսում է համակարգել ամերիկացի միսիոներների

գործունեությունը Օսմանյան կայսրության տարածքում (**Dwight H.G.O., 1850**): Այնուհետև աստիճանաբար ժամանող միսիոներների թիվը սկսում է ավելանալ:

Դուայթի ներկայացրած փաստերը վկայում են, որ միսիոներներն իրենց գաղափարների տարածման հիմնական միջոց ընտրել էին քարոզչությունն ու կրթությունը: Այդ նպատակով վերջիններս հսկայական կարևորություն էին հատկացնում Աստվածաշնչի և այլ կրոնական գրականության հրատարակությանը: Հայտնի է նաև, որ վերջիններիս ջանքերով է առաջին անգամ աշխարհաբար թարգմանվում Աստվածաշունչը, որը սկսվում է լայնորեն տարածվել հայության շրջանում (**Dwight H.G.O., 1850**):

Կարևորելով հրատարակչական գործունեությունը՝ 1833 թ. Մալթայից Ջմյունյա են տեղափոխվում վերապատվելի Դ. Թեմփլը (D. Temple), բողոքական հրատարակիչ Հոման Հալոկը (Homan Hallock) և հայազգի եպիսկոպոս Դիոնիսիոսը որպես թարգմանիչ, որը ի հակառակ հայոց եկեղեցու օրենքների, ամուսնացել էր և անցել բողոքականների շարքը: Միսիոներների կողմից Ջմյունիայում տպարան հիմնադրելու հանգամանքը վրդովեցնում է թե՛ կաթոլիկներին և թե՛ հայոց եկեղեցու ներկայացուցիչներին: Ընդլայնելու համար ժամանակակից հայերենով և, ինչպես Դուայթն է ասում, «թուրքահայերենով» Աստվածաշնչի և քարոզչական նյութերի հրատարակումը՝ միսիոներների մշտնջերով Նյու-Յորքում հայերեն տառատեսակներ են պատրաստվում և տեղափոխվում Ջմյունիա (**Dwight H.G.O., 1850**): 1838թ. հունվարի դրությամբ արդեն Ջմյունիայի տպարանում տպագրվել էր մոտ 2,5 միլիոն էջ հայերեն նյութ, իսկ 1840թ. 6 մլն էջ (**Dwight H.G.O., 1850**): Միսիոներները աշխարհաբար հայերեն են թարգմանում նաև Հնգամատյանը, սաղմոսները և այլն (**Dwight H.G.O., 1850**):

Վերապատվելի Գուդելի ջանքերով 1841 թ. ավարտին է հասցվում Հին կտակարանի հայատառ թուրքերեն թարգմանությունը, որը 1842 թ. տպագրվում է Ջմյունիայի տպարանում: Դրան հաջորդում է նույն Գուդելի կողմից Նոր կտակարանի վերանայումն ու հրատարակումը, ինչպես նաև Նոր կտակարանի հրատարակումը ժամանակակից հայերենով (**Dwight H.G.O., 1850**):

Իրենց հրատարակչական գործունեության առաջին երկու տասնամյակների

ընթացքում՝ 1835 թ. սկսած, բողոքականների կողմից հայերեն թարգմանվում և հրատարակվում են 81 գրքեր և քարոզչական ձեռնարկներ (**Dwight H.G.O., 1854**):

Միսիոներների հրատարակած կրոնական գրականությունը ոչ միայն բաժանվում էր, այլ նաև վաճառվում: Դրա մի մասն էլ ուղարկվում էր նաև կայսրության խորքերը, ինչպես նաև Պարսկաստան, Ռուսաստան և Կովկաս (**Dwight H.G.O., 1854**):

Դուայթը նշում է, որ հայերի շրջանում իրենց քարոզչական գործունեությունը հիմնականում որոշում են իրականացնել կրթության միջոցով: Ինչպես նշվեց ամերիկացի բողոքականները Մալթայում գտնվող իրենց տպարանում Աստվածաշունչը թարգմանաել էին հայերի «խոսակցական» լեզվով (**Dwight H.G.O., 1850**), որպեսզի այն ավելի հասանելի դառնա մարդկանց, բացի այդ Զմյուռնիայի տպարանը սկսել էր ակտիվ հրատարակչական գործունեություն: Սակայն քանի որ կարդալ շատերը չգիտեին, ուստի միսիոներները որոշում էին զարկ տալ դպրոցների հիմնադրմանը արևմտահայության շրջանում, որոնք էլ պետք է հանդիսանային բողոքական քարոզչության հիմնական կենտրոնները:

1834թ. հոկտեմբերին ամերիկացի միսիոներների ջանքերով Կ.Պոլսի Բերա թաղամասում բացվում է դպրոց, որի գլխավոր նպատակը հայոց եկեղեցին, ասպես ասած, «բարեփոխելու» համար կադրեր պատրաստելն էր, դպրոցի աշակերտների թիվը կարճ ժամանակում 3-ից հասնում է 30-ի, հետո 40-ի (**Dwight H.G.O., 1850**): Դույաթի իսկ խոստովանությամբ իրենց հիմնադրած դպրոցը ոչ այնքան կրթական հաստատություն էր, որքան որ երկրում բողոքականության «լայն և խորը» տարածման կենտրոն (**Dwight H.G.O., 1850**): Հետագա տասնամյակներում, հատկապես 1850 թ. հետո, բողոքական կրթական հաստատությունների թիվը ողջ Արևմտյան Հայաստանի տարածքում զգալիորեն ավելանում է (**Ատալանյան Կ., 1952**):

Դուայթի սուբյեկտիվ կարծիքով Պոլսի հայկական համայնքում հայոց եկեղեցու կողմից դպրոցներ բացելը, հատկապես խոսքը Սկյութարի հայկական դպրոցի մասին է, կատարվում էր ի հակադրություն միսիոներների կրթական գործունեության, որը կարծում ենք չի համապատասխանում իրականությանը

(Dwight H.G.O., 1850):

Միսիոներները ուշադրություն են դարձնում նաև կանանց շրջանում քարոզչությանը կրթության միջոցով: 1836 թ. վերջիններս կողմից Զմյուռնիայում բացվում է դպրոց աղջիկների համար: Կ.Պոլսում ևս մի փոքր խումբ աղջիկների համար կազմակերպվում են ընթերցանության դասընթացներ (Dwight H.G.O., 1850), իսկ 1845 թ. Բերա թաղամասում բացվում է փոքր դպրոց աղջիկների համար (Dwight H.G.O., 1850): Սակայն այս դպրոցները մեծ չէին, հաճախ աշակերտների թիվը չէր գերազանցում մեկ տասնյակը: Բողոքականները դժգոհում են, որ Արևելքի սովորույթների սահմանափակումների պատճառով իրենք հնարավորություն չունեին ազատ քարոզչություն իրականացնելու կանանց շրջանում, սակայն անընդհատ փորձում են ստեղծել նման հնարավորություններ: Օրինակ հատուկ կանանց համար առանձնացվում են քարոզչության ժամեր (Dwight H.G.O., 1850): Բացի այդ կային նաև կին միսիոներներ: Արդեն 1840-ական թթ. Դուայթի վկայությամբ իրենց քարոզներին այցելող կանանց թիվը զգալիորեն աճում է:

Վերջինս փաստում է նաև, որ Պոլսում և շրջակայքում աստիճանաբար ավելանում է այն հայերի թիվը, ովքեր իրենց բացահայտ համարում էին բողոքական: Դուայթը գրքում մանրամասն ներկայացնում է իրենց քարոզչության առաջին քայլն ու այն առաջին հայերին, ովքեր միանում են իրենց (Dwight H.G.O., 1850): 1833թ. դրությամբ անձամբ Դուայթի մոտ ամենշաբաթյա քարոզների էին գալիս մոտ 8 հայեր և մի քանի հույներ (Dwight H.G.O., 1850): Սրանք միոսոներների քարոզչության առաջին արդյունքներն էին: Բողոքականները աստիճանաբար յուրացնելով տեղական լեզուները՝ քարոզչությունը կատարում էին տեղացիների համար հարազատ լեզուներով:

Հսկայական ջանքերի և միջոցների ներդրման արդյունքում հայտնի է, որ բողոքականությունը հայության շրջանում սկսում է աստիճանաբար որոշակի աճ գրանցել: Միսիոներների գործունեության թիրախում էին նաև կայսրության այլ քրիստոնյա ժողովուրդները: Հետաքրքիր է, որ վերջիններս իրենց քարոզչական ջանքերն աստիճանաբար կենտրոնացնում են հայերի ուղղությամբ և ոչ թե հույների, ասորիների կամ հրեաների (Dwight H.G.O., 1850): Պատահական չէ, որ 1854թ.

դրությամբ «Ամերիկյան խորհրդի» շուրջ 110 միսիոներներից միայն 45-ը գործում էին հայկական առաքելությունում, որոնցից 21-ը տղամարդ էին, 24-ը կին: Նրանց հետ գործում էին նաև 8 տեղացի, այսինքն հայ բողոքական քարոզիչներ (**Dwight H.G.O., 1854**):

Հայտնի է, որ ամերիկացի միսիոներները Արևելքում իրենց առաքելության սկզբնական շրջանում, իրենց հիմնական թիրախ համարում էին մահմեդականներին: Սակայն հետագայում վերջիններս հրաժարվեցին այդ գաղափարից, նախ և առաջ այն պատճառով, որ Օսմանյան կայսրության օրենքներով կրոնափոխ մահմեդականները ենթակա էին մահվան: Դուայթը նկարագրում է Թուրքիայում մահմեդականություն ընդունել ցանկացած, այնուհետև հրաժարված մի հայի փողոցում գլխատման դեպքը, որպես պատիժ մահմեդականությունից հրաժարման: Դուայթի վկայությամբ այդ դեպքը առաջացնում է եվրոպական դեսպանների վրդովմունքը: Այդ դեպքից հետո, Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի դեսպանների ջանքերով հնարավոր է դառնում սուլթանից ստանալ երաշխավորագիր, որ այլևս նման դեպքերում մահապատժի որոշումներ չեն կայացվի (**Dwight H.G.O., 1850**): Սակայն մահմեդականների կրոնափոխության դեպքում անձին մահապատժի ենթակելու օրենքը Օսմանյան կայսրությունում դեռ երկար մնաց գործողությամբ մեջ:

Ամերիկացի միսիոներները իրենց գործունեության ընթացքում կարողանում են իրենց շարքերը ներառել նաև որոշ հոգևորականների, անգամ բարձրաստիճան, ովքեր բավականին հանդուրժող են եղել բողոքականների նկատմամբ (**Dwight H.G.O., 1850**):

Միսիոներների գործունեության ակտիվ մեկնարկին խանգարում է 1832 թ. Թուրքիայում բռնկված խուլերան ու ժանտախտը և միայն հաջորդ 1833 թվականին են միսիոներները սկսում որոշակի ակտիվություն ցուցաբերել (**Dwight H.G.O., 1850**):

Աստիճանաբար միսիոներական կայաններ են հաստատվում նաև Կ.Պոլսից դուրս: 1834 թ. կայաններ են հիմնադրվում Տրապիզոնում և Բուրսայում, որտեղ որպես կանոն փորձում են հիմնել նաև դպրոցներ: Դուայթի վկայությամբ Տրապիզոնի 15

հազար բնակիչներից հայեր էին 1250-ը, իսկ Բուրսայի 8-9 հազար բնակչությունից՝ 5-6 հազար (**Dwight H.G.O., 1850**): Տրապիզոնից միսիոներները 1839թ. արդեն անցնում են Էրզրում և հաստատվում այնտեղ (**Dwight H.G.O., 1850**): Գրքի տարբեր հատվածներում Դուայթը Պոլսից բացի անդրադառնում է նաև Բուրսայում, Տրապիզոնում, Էրզրումում, Նիկոմեդիայում և այլուր հիմնադրված միսիոներական կայանների գործունեությանը, դրանց արձանագրած հաջողություններին: Վերջինս հատկապես մեծ ոգևորությամբ է խոսում Այնթապում իրենց արձանագրած հաջողությունների մասին (**Dwight H.G.O., 1850**):

Գնալով ավելանում է նաև Ամերիկայից ժամանած միսիոներների թիվը, նրանցից շատերը ժամանում են ընտանիքներով և հաստատվում Օսմանյան կայսրության տարբեր քաղաքներում, որտեղ կար հայ բնակչություն:

Միսիոներները հաճախ տարբեր շրջայցեր էին կազմակերպում երկրի խորքերը տեղում վիճակին ծանոթանալու և իրենց գաղափարների տարածման հնարավորությունը պարզելու նպատակով: Այդ այցերի ընթացքում վերջիններս հաճախ ունենում էին հայ ուղեկցորդներ: Հետաքրքիր է, որ նման այցեր կազմակերպվում էին նաև Օսմանյան կայսրության եվրոպական տարածքներում (**Dwight H.G.O., 1850**):

Դուայթն իր գրքում մեծ տեղ է հատկացնում նաև Պոլսո հայոց պատրիարքության հետ ունեցած հարաբերություններին:

Սկզբնական շրջանում հայոց եկեղեցու և միսիոներների հարաբերությունները լարված չէին կամ առնվազը երկու կողմերը արտաքինապես այդպես էին ցույց տալիս: Սակայն հետագայում միսիոներների գործունեության ընդլայնմանը զուգահեռ հարաբերությունները սկսեցին սրվել: Սակայն աստիճանաբար պատրիարքարանը սկսել է ուղղակի պայքարել միսիոներների դեմ: Միսիոներները հակազդեցության էին ենթարկվում ոչ միայն հայոց եկեղեցու, այլ նաև հույն ուղղափառ եկեղեցու, ինչպես նաև կաթոլիկների կողմից: Հայ կաթոլիկ եկեղեցին ևս հակազդում էր միսիոներների գործունեությանը՝ արգելելով իր հետևորդներին ձեռք բերել վերջիններիս հրատարակած Աստվածաշնչի օրինակները: Դուայթն աշխատության մեջ մանրամասն անդրադառնում է միսիոներների և հայոց

պատրաիարքության հետ հարաբերություններին և վերջինիս դիմադրությանը արևմտահայության շրջանում բողոքականության տարածմանը (**Dwight H.G.O., 1850**):

Պոլսում բողոքական առաքելության հիմնադրման սկզբում հայոց պատրիարքը Կարապետ Գ Պալթագին էր (1823-1831թթ), որին շուտով հաջորդում է Ստեփանոս Բ Զաքարյանը (1831-1839թթ, 1840-1841թթ): Դուայթը նշում է, որ Ստեփանոս պատրիարքը մեղմ ու խաղաղ բնավորության տեր էր և հակված չէր խիստ վերաբերմունքի միսիոներների նկատմամբ: Սակայն պատրիարքի տեղակալ Պողոս սրբազանը ավելի հետևողական էր և փորձում էր վերահսկել միսիոներների գործունեությունը (**Dwight H.G.O., 1850**): Ստեփանոս պատրիարքի՝ բողոքականների նկատմամբ ունեցած հանդուրժող վերաբերմունքի արդյունքում անգամ վերջինս որոշ շրջանակների կողմից մեղադրվում է բողոքական լինելու մեջ (**Dwight H.G.O., 1850**):

1838թ. վերջերին Ստեփանոս պատրիարքի տեղապահ է դառնում Հակոբոս Սերոբյանը, որը կարճ ժամանակով՝ 1839-1840թթ., ստանձնում է նաև պատրիարքական աթոռը: Վերջինս պատրիարքական աթոռը զբաղեցնում է նաև երկրորդ անգամ՝ 1848-1858թթ: Հակոբոսի տեղապահության և պատրիարքության շրջանում հայոց պատրիարքարանի պայքարը բողոքականների դեմ ավելի ընդգծված է դառնում (**Dwight H.G.O., 1850**): 1841թ. նոր պատրիարք է դառնում Աստվածատուր Բ Կոնստանդնուպոլսեցին, որը պաշտոնավարում է մինչև 1844թ: Հաջորդ պատրիարքի՝ Մաթևոս Բ Չուխաճյանի (1844-1848թթ.) գահակալության շրջանում ավելի լայն պայքար է սկսվում միսիոներների գործունեության դեմ, ուստի պատահական չէ, որ Դուայթը ոչ ավել ոչ պակաս վերջինիս անվանում է «Թուրքիայի բողոքականներին հալածող» (**Dwight H.G.O., 1850**):

Բողոքականների գործունեությունը օսմանյան իշխանությունների կողմից ևս ընկալվել է որպես օտար ազդեցության տարածում և վերջիններս այս հարցում աջակցել են տեղի ավանդական քրիստոնեական դավանական ուղղությունների պայքարին բողոքականության դեմ: Դուայթը աշխատության մեջ բերում է ամերիկացի միսիոներներին հակազդեցության և նրանց դեմ պայքարի բազում

օրինակներ պատրիարքության կողմից:

Սակայն այս ամենը չէր խանգարում, որ ամերիկացի միսիոներները աստիճանաբար թափանցեն Օսմանյան կայսրության խորքերը՝ իրենց խոսքերով «թշնամի երկրի» սիրտը, հատկապես դեպի հայաշատ բնակավայրերը:

Հետաքրքիր է, որ Դուայթի վկայությամբ ամերիկացի բողոքականներին տեղացիները հաճախ անվանում էին մասոններ, լյութերականներ, վոլտեր, բողոքականներ, ինչպես նաև երբեմն ուղղակի անհավատներ (**Dwight H.G.O., 1850**): Հայոց եկեղեցու կողմից բողոքականները համարվում էին «ժամանակակից աղանդավորներ» (**Dwight H.G.O., 1850**):

Դուայթը հաճախ է անդրադառնում նաև Պոլսի հայկական համայնքին, հարուստ ամիրայական դասին, բանկիրներին և նրանց ունեցած հսկայական ազդեցությանը ոչ միայն հայության ներսում, այլ նաև իշխանությունների շրջանում (**Dwight H.G.O., 1850**): Ներկայացնում է Պոլսի հայոց պատրարքության դերը հայոց կյանքում (**Dwight H.G.O., 1850**): Անդրադառնում է նաև Թուրքիայում գործող միլլեթային համակարգին, համայնքի անդամների կարգավիճակին (**Dwight H.G.O., 1850**): Որպես ականատես՝ վերջինս անդրադառնում է նաև 1840-ական թթ. սկզբներին Պոլսի հայկական համայնքում սկիզբ առած հակամարտություններին առևտրական ու արհեստավորական դասի մի կողմից և մյուս կողմից համայնքում ազդեցիկ դիրք ունեցող ամիրաների միջև (**Dwight H.G.O., 1850**): Հայտնի է, որ այս հակամարտության արդյունքում է, որ Ստեփանոս պատրիարքը հեռացվում է պաշտոնից, որին փոխարինում է Աստվածատուր Բ Կոնստանդնուպոլսեցին (1841-1844թթ.) (**Միքունի 3., 1969**):

Դուայթը վկայում է, որ օսմանյան սուլթան Աբդուլ Մեջիդը (1839–1861թթ.) 1839թ. նոյեմբերի 3-ին հռչակած Նվիրական գրով (Հաթթը շերիֆ, Սրբազան գիր), որով կայսրությունում սկիզբ դրվեց Բարենորոգումների՝ Թանզիմաթի, դարաշրջանին, ներմուծված որոշակի կրոնական ազատություններից ամենից շատ ուրախացել և օգտվել էին բողոքական միսիոներները (**Dwight H.G.O., 1850**):

Արդեն նշվեց, որ 1844թ. Պոլսո հայոց Աստվածատուր պատրիարքին փոխարինում է Մաթևոս պատրիարքը: Դուայթը նկարագրում է, որ վերջինիս

պատրիարքության սկզբնական շրջանում բողոքականների հետ հարբերությունները այնքան էլ լարված չեն եղել (**Dwight H.G.O., 1850**), սակայն դրանք հետագայում սրվում են: 1846թ. հունվարի 26-ին կիրակնօրյա պատարագից հետո Մաթևոս պատրիարքի կողմից հրապարակվում է դրանից մի քանի օր առաջ ստորագրված բանադրանքի տեքստը, որն ուղղված էր բողոքականների ազդեցության տակ ընկած Վրթանես անունով մի քահանայի դեմ: Բանադրանքի տեքստում հայոց եկեղեցուց հեռացած հոգևորականը համարվում է հերետիկոս, սատանա, հավատացյալներին կոչ էր արվում այսուհետ անգամ չնայել նրա դեմքին, չբարևել, տեղ չտալ սեփական տներում, քանի որ վերջինս հետևում է, այսպես ասած, «նոր աղանդավորների» կեղծ ուսմունքին: Այն ըստ էության զգուշացում էր ուղղված հայոց եկեղեցու հետևորդներին՝ հեռու մնալու բողոքականությունից (**Dwight H.G.O., 1850**): Սրան շուտով հաջորդում է պատրիարքի երկրորդ բանադրանքը, որում հստակ ընդգծվում էր, որ նախորդ բանադրանքը չի վերաբերում միայն Վրթանեսին, այլ բոլոր նրանց, ովքեր հետևում են բողոքականությանը կամ ընկել են վերջիններիս ազդեցության տակ (**Dwight H.G.O., 1850**): Բանադրանքով արգելվում էր բողոքականների հետ անգամ շփում ունենալ, վերջիններիս անգամ հաց կամ կեցության վայր տրամադրել, նրանց հետ առևտուր կամ որևէ գործարք իրականացնել: Բողոքականները համարվում են հայոց եկեղեցու կործանողներ և ողջ ազգի խայտառակություն: Պատրիարքական բանադրանքի տեքստերն ուղարկվում են նաև այլ հայաշատ բնակավայրեր ու թեմեր (**Dwight H.G.O., 1850**):

Առաջին հայացքից չափազանց խիստ այս պահանջները պայմանավորված էին բողոքականության հետ մեծացող մրցակցությամբ, այն պարագայում երբ վերջիններս իրենց ազդեցության տարածման համար չէին խնայում իրենց նյութական միջոցները՝ միաժամանակ ստանալով մի շարք մեծ տերությունների անսքող աջակցությունը:

Դուայթը անդրադառնում է պատրիարքական բանադրանքից հետո իրեն հայտնի հալածանքների գրեթե բոլոր դեպքերին՝ փորձելով ցույց տալ հայոց պատրիարքության, այսպես ասած, դաժան վերբերմունքը (**Dwight H.G.O., 1850**): Ծանոթանալով նկարագրված դեպքերին՝ հասկանալի է դառնում, որ դրանք փոքր-

ինչ չափազանցված էին և ներկայացված խտացված գույներով: Մյուս կողմից չպետք է մոռանալ, որ բողոքականները վայելու էին ԱՄՆ-ի, Անգլիայի և մի շարք այլ երկրների դիվանագիտական ներկայացուցիչների հովանավորությունն ու աջակցությունը, ուստի այդ հալածանքները չէին կարող խիստ տարածում ունենալ: Նշելի է, որ հալածանքներն էլ հիմնականում ուղղված էին ոչ թե ամերիկացիների, այլ այն հայերի դեմ, որոնք հեռացել էին սեփական եկեղեցուց և հարել էին բողոքականությանը:

Բողոքականության հետևորդ շատ հայեր պատրիարքի բանադրանքի հրապարակումից հետո նամակով դիմեցին վերջինիս՝ խնդրելով չեղարկել այն, այնուհետև նրանք դիմեցին անգամ կայսրության արտաքին գործերի նախարար Ռեշիդ փաշային, ինչպես նաև անգլիական, պրուսական և ամերիկյան դեսպաններին՝ խնդրելով պաշտպանել իրենց իրավունքները (Dwight H.G.O., 1850): Սակայն եղան այնպիսիները, որոնք դիմեցին պատրիարքին՝ հրաժարվելով բողոքականությունից և որպես մեղսագործներ՝ հայցեցին վերջինիս ներողամտությունն ու բարեհաճությունը հայոց եկեղեցու գիրկը վերադառնալու համար (Dwight H.G.O., 1850):

Պատրիարքի կողմից 1846 թ. փետրվարի 4-ին պատրաստվում է 9 կետից բաղկացած առաքելական դավանանքի հիմնադրույթների վրա հիմնված մի փաստաթուղթ, որը պարտադրվում էր ընդունել բողոքականությանը հետևած հայերին կամ, այսպես ասած, դարձի եկածներին (Dwight H.G.O., 1850):

Պետք է նշել, որ բողոքականները վայելում էին ոչ միայն մի շարք մեծ տերությունների աջակցությունը, այլև նրանց շնորհիվ աջակցություն էին ստանում նաև «թանգիմաթի» ուղին բռնած թուրքական իշխանություններից: Օրինակ, երբ պատրիարքի կողմից միջնորդություն է ներկայացվում մայաբքաղաքից վտարելու 13 հայ բողոքականների, Անգլիայի դեսպան Սթրաթֆորդ Քաննինգի և եվրոպացի մի շարք այլ դեսպանների ջանքերով դա կանխվում է (Dwight H.G.O., 1850):

Ռեշիդ փաշան Մեծ Մեզիր դառնալուց հետո արգելում է բողոքականության հետևորդ դարձած հայ առևտրականների նկատմամբ հալածանքները: Անշուշտ, այս ամենը ամերիկայի և եվրոպական դիվանագետների ճնշումների արդյունքն էր:

Դուայթը սա համարում է Թուրքիայում բողոքականության ազատության հարցի սկիզբը (**Dwight H.G.O., 1850**): Վերջինս բողոքականներին պաշտպանող թուրքական կառավարության կողմից հրապարակված առաջին փաստաթուղթը համարում է 1846 թ. հունիսին Ռեշիդ փաշայի նամակը Էրզրումի փաշային տեղի բողոքականների քաղաքացիական իրավունքները չխախտելու վերաբերյալ, քանզի վերջիններս, ըստ այդ գրության, ևս հանդիսանում են սուլթանի հավատարիմ հպատակները (**Dwight H.G.O., 1850**):

Հայտնի է նաև, որ 1846 թ. հունիսի 26-ի հրովարտակով Օսմանյան կայսրությունում թույլատրվում է Հայ Ավետարանական եկեղեցու ստեղծումը: Նույն թվականի հուլիսի 1-ին Պոլսի 40 հայ բողոքականներ, որոնց թվում երեք կին, հավաքվում և ստեղծում են Հայ Ավետարանական եկեղեցի: Դուայթը ևս անդրադառնում է այդ իրադարձություններին: Հավաքին ներկա են լինում ամերիկացի և շոտլանդացի բողոքականներ: Հայ ավետարանական եկեղեցու առաջին հովիվ է ընտրվում Աբիսողոմ Խաչատուրյանը (Ութուճյանը) (**Dwight H.G.O., 1850**): Շուտով հայերենով ընդունվում է Պոլիս հայկական ավետարանական եկեղեցու հիմնադրման վերաբերյալ հայտարարություն, ինչպես նաև դավանանքն ու ուխտը, որոնք էլ հանդիսանում են այդ եկեղեցու հիմնադրման գլխավոր փաստաթղթերը, ուր սահմանվում է եկեղեցու կառուցվածքային և դավանական առանձնահատկությունները (**Dwight H.G.O., 1850**):

Աբիսողոմ Խաչատուրյանը երկար չի պաշտոնավարում: 1847թ. մարտին վերջինս մահանում է և նրան փոխարինում է Սիմոն Խաչատուրյանը (**Dwight H.G.O., 1850**):

Պոլսում Հայ ավետարանական եկեղեցու հիմնադրումից հետո 1846 թ. ամառվա ընթացքում հայ ավետարանական եկեղեցիներ են հիմնադրվում նաև Նիկոմեդիայում, Ադաբազարում և Տրապիզոնում: Դուայթը, սակայն, խոստովանում է, որ անգամ բողոքական եկեղեցու հիմնադրումից հետո դրա հետևորդների թիվը քիչ էր (**Dwight H.G.O., 1850**): Սակայն, այնուամենայնիվ, բողոքականությունը սկսում է տարածում գտնել Օսմանյան կայսրության և Արևմտյան Հայաստանի զանազան բնակավայրերում (**Թուրքիկեան Վ., 1996, Dwight H.G.O., 1850**):

1846թ. հետո բողոքականները գործունեության ազատություն էին ստացել: Դուայթը նկարագրում է պաշտոնապես Հայ ավետարանական եկեղեցու հիմնադրումից հետո տեղի ունեցած բողոքականներից մեկի թաղման, ինչպես նաև մեկ ուրիշի հարսանիքների արարողությունները, որոնք արդեն տեղի էին ունենում անխոչընդոտ պայմաններում (**Dwight H.G.O., 1850**):

Արդեն մեկ տարի անց՝ 1847թ. նոյեմբերի 15-ին, Անգլիայի դեսպան Սթրաթֆորդ Քաննինգի ջանքերով կայսրության բնիկ հայ բողոքականները ճանաչվում են առանձին և անկախ համայնք: Փաստաթուղթը ստորագրվում է Մեծ վեզիր Ռեշիդ փաշայի կողմից, որն էլ Դուայթը թարգմանաբար ներկայացնում է իր գրքում (**Dwight H.G.O., 1850**): Այդ փաստաթուղթով բողոքականներին ազատ դավանանքի իրավունք էր տրվում, արգելվում էր հալածանքներ վերջիններիս նկատմամբ: Փաստաթուղթն ուղարկվում է բոլոր նահանգապետներին: Սակայն հայտնի է, որ հայ բողոքական միլեթի վերջնական ճանաչման գործընթացը ավարտվում է 1850թ. նոյեմբերի 27-ին սուլթան Աբդուլ Մեջիդը հատուկ ֆերմանի հրապարակումով (**Leon Arpee, 1946**):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հարիսոն Գրեյ Օթիս Դուայթի «Արևելքում վերածնված քրիստոնեությունը կամ պատմություն Աստծո գործի Թուրքիայի հայերի շրջանում» խորագրով գիրքը կարևոր աղբյուր է արևմտահայ իրականության մեջ բողոքականության տարածման պատմության ամբողջական ուսումնասիրման համար: Վերջինս՝ որպես ականատես և իրադարձությունների անմիջական մասնակից, հայտնում է հետաքրքրական տեղեկություններ՝ իր հեղինակած աշխատությանը տալով նաև աղբյուրագիտական կարևոր արժեք: Սակայն, հարկ է նկատի ունենալ, որ սույն աշխատության մեջ իրադարձություններն ու երևույթները երբեմն ներկայացված են սուբյեկտիվ, սեփական ընկալումների դիտակետից: Այս ամենում, անշուշտ, կարևոր նշանակություն է ունեցել հեղինակի դավանական պատկանելությունը և գործող քարոզիչ լինելը: Ուստի հեղինակը սեփական կրոնական, դավանական և աշխարհաքաղաքական ընկալումների տեսանկյունից յուրովսանն շարադրում է իր մտքերը և տալիս իր գնահատականները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ատալանյան Կ. (1952), Հուշարձան Հայ Ավետարանականաց և Ավետարանական եկեղեցվո, Ֆրեզնո, Crown հրատ.:
2. Թուրքիկեան Վ. (1996), Հայ աւետարանական եկեղեցին. 1846-1996, Դետրոյթ, Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան հրատ.:
3. Թուրքիկեան Վ.(1998), Նոր յայտնութիւններ Հայաստանեայց ավետարանական եկեղեցիին հիմնադրութեան եւ հիմնադիր անդամներուն մասին, Հայկազեան հայագիտական հանդես, Հատոր ԺԸ, Պէյրութ, 1998, էջ 253-259:
4. Կիրակոսյան Ա. (2014), ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը և արևմտահայությունը (19-րդ դար-1914թ.), Երևան, ԵՊՀ հրատ.:
5. Հովհաննիսյան Է. (2024), Ամերիկացի բողոքական քարոզիչների առաջին ճամփորդությունը և ուսումնասիրությունները Հայաստանում 1830-1831թթ., «Էջմիածին» կրօնագիտական եւ հայագիտական ամսագիր, Ս.Էջմիածին, ՁԱ տարի, համար Ա, էջ 120-132, (առաջին մաս), ՁԱ տարի, համար Բ, էջ 93-104, (երկրորդ մաս):
6. Ղազարյան Ա., Լևոնյան Ռ. (1999), Հայաստանյայց Ավետարանական եկեղեցի (Հայաստան-Կովկաս), Երևան, Հայկական հանրագիտարան հրատ.:
7. Սիրունի Յ. (1969), Պոլիս եւ իր դերը (1800-1900): Երկրորդ հատոր, Պէյրութ, հրատ. Հ. Սիրունի:
8. Charles C. Creegan (1903), Pioneer Missionaries of the Church, New York, American Tract Society ed.
9. Dwight H.G.O. (1850), Christianity Revived in the East, or A Narrative of the Work of God Among the Armenians of Turkey, Baker and Scribner, New York, Baker and Scribner ed.
10. Dwight [Harrison Gray Otis](#) (1854), Christianity in Turkey: A Narrative of the Protestant Reformation in the Armenian Church, London: J. Nisbe ed.

11. **Eli Smith, Harrison Gray Otis Dwight (1833)**, Researches of the Rev. Eli Smith and Rev. Harrison Gray Otis Dwight in Armenia: Including a Journey Through Asia Minor, and into Georgia and Persia, With a Visit to the Nestorian and Chaldean Christians of Oormiah and Salmas, in 2 vols., Boston: Crocker and Brewstar, New York: Jonathan Leavitt ed.
12. **Eli Smith, Harrison Gray Otis Dwight (1834)**, Missionary Researches in Armenia: Including a Journey Through Asia Minor, and into Georgia and Persia, With a Visit to the Nestorian and Chaldean Christians of Oormiah and Salmas, London, G. Wightman ed.
13. **Leon Arpee (1946)**, A Century of Armenian Protestantism 1846-1946, New York., Armenian Missionary Association of America ed., էջ 40:
14. **Tootikian Vahan (1994)**, The genesis of Armenian Evangelism, Հայկազեան հայագիտական հանդես, հատոր ԺԴ, Պեյրուք, էջ 174-175:
15. **William E. Strong (1910)**, The story of the American board, Boston The Pilgrim Press ed.

REFERENCES

1. **Atalanian K. (1952)**, Howshard'an Hay Avetaranakanac & Avetaranakan ekeghecv /The Monument for the Armenian Evangelicals and Evangelical Church/, Fresno, Crown ed.
2. **Tootikian Vahan (1996)**, Hay awetaranakan ekeghecin. 1846-1996 /The Armenian Evangelical Church. 1846-1996/, Detroit, Armenian Evangelical Church fo America ed.
3. **Tootikian V. (1998)**, Nor yaytnowt'iwnner Hayastaneayc avetaranakan ekegheciin himnadrowt'ean ew himnadir andamnerown masin /New Data about the founding of the Armenian Evangelical Church and its founding members/, Haigazian Armenological Review, volume 18, Beyrut, 1998, pp. 253-259.

4. **Kirakosyan A. (2014)**, AMN-i artaqin qaghaqakanowt'yowny' & ar&mtahayowt'yowny' (19-rd dar-1914t'.) /Foreign policy of the USA and Western Armenians (19th year-1914)/, Yerevan, YSU ed.
5. **Hovhannisyan E. (2024)**, Amerikaci boghoqakan qarozichneri ar'ajin twamp'ordowt'yowny' ew owsowmnasirowt'yownnery' Hayastanowm 1830-1831t't'. /The first travel and researches of American Protestant missionaries in Armenia in 1830-1831 /Amerikaci boghoqakan qarozichneri ar'ajin twamp'ordowt'yowny' ew owsowmnasirowt'yownnery' Hayastanowm 1830-1831 t't'./, "Etchmiadzin" Theological and Armenological Journal, Etchmiadzin, January, 2024, pp. 120-132, (part one), February, pp. 93-104, (part two).
6. **Ghazaryan A., Levonyan R. (1999)**, Hayastanyayc Avetaranakan ekegheci (Hayastan-Kovkas) /Armenian Evangelical Church (Armenia-Caucasus)/, Yerevan, Armenian encyclopedia ed.
7. **Siruni H. (1969)**, Polis ew ir dery' (1800-1900) /Polis and its role (1800-1900)/: volume 2, Beyrut, H.Siruni ed.
8. **Charles C. Creegan (1903)**, Pioneer Missionaries of the Church, New York, American Tract Society ed.
9. **Dwight Harrison Gray Otis (1850)**, Christianity Revived in the East, or A Narrative of the Work of God Among the Armenians of Turkey, Baker and Scribner, New York, Baker and Scribner ed.
10. **Dwight H.G.O. (1854)**, Christianity in Turkey: A Narrative of the Protestant Reformation in the Armenian Church, London: J. Nisbe ed.
11. **Eli Smith, Harrison Gray Otis Dwight (1833)**, Researches of the Rev. Eli Smith and Rev. Harrison Gray Otis Dwight in Armenia: Including a Journey Through Asia Minor, and into Georgia and Persia, With a Visit to the Nestorian and Chaldean Christians of Oormiah and Salmas, in 2 vols., Boston: Crocker and Brewstar, New York: Jonathan Leavitt ed.
12. **Eli Smith, Harrison Gray Otis Dwight (1834)**, Missionary Researches in Armenia: Including a Journey Through Asia Minor, and into Georgia and Persia, With a Visit

to the Nestorian and Chaldean Christians of Oormiah and Salmas, London, G. Wightman ed.

13. **Leon Arpee (1946)**, A Century of Armenian Protestantism 1846-1946, New York, Armenian Missionary Association of America ed., էջ 40:
14. **Tootikian V. (1994)**, The genesis of Armenian Evangelism, Haigazian Armenological Review, volume 14, Պէյրոս, pp. 174-175:
15. **William E. Strong (1910)**, The story of the American board, Boston The Pilgrim Press ed.

Эдгар Оганнисян

Сообщенные сведения американского миссионера Харрисона Дуайта о
распространении протестантизма среди армян Османской империи

Заключение

Ключевые слова и выражения: Американские протестантские миссионеры, Протестантизм, Харрисон Грей Отис Дуайт, Армянский патриархат Константинополя, Западная Армения.

Протестантизм получил распространение среди армян в основном благодаря американским миссионерам, и уже в конце XIX века число армянских протестантов, особенно в Западной Армении, значительно выросло. За время своей миссии американские протестанты собрали большой объем материалов, которые впоследствии были опубликованы и в настоящее время имеют важную источниковедческую ценность.

Работа «Возрождение христианства на Востоке, или Повествование о деле Божьем среди Западных армян» Харрисона Грея Отиса Дуайта является важным источником для всестороннего изучения истории распространения протестантизма в Западной Армении. Последний, как очевидец и непосредственный участник процесса, предоставляет нам интересную информацию, благодаря чему его работы служат ценным источником. Однако следует отметить, что события и явления местами подаются автором сквозь призму предвзятых, а также исключительно личных

представлений. Конфессиональная принадлежность автора и тот факт, что он был активным проповедником, безусловно, оказали влияние на весь процесс написания работы. Фактически, автор выражает свои мысли и дает свои оценки с точки зрения собственных религиозных, конфессиональных и геополитических представлений.

В статье представлено историографическое значение данного труда с точки зрения изучения истории распространения протестантизма среди западных армян.

Edgar Hovhannisyan

The reported information of the American missionary Harrison Dwight about the spread of Protestantism among the Armenians of the Ottoman Empire

Conclusion

Key words and expressions: American Protestant Missionaries, Protestantism, Harrison Gray Otis Dwight, Armenian Patriarchate of Constantinople, Western Armenia.

Protestantism became popular among Armenians generally through American missionaries, and already at the end of the 19th century, the number of Armenian Protestants, particularly in Western Armenia, saw a significant growth. Throughout their mission, the American Protestants collected a large volume of materials, which they later published and currently have an important sourceological value.

The work “Christianity Revived in the East, or a narrative of God's work among the Armenians of Turkey”, authored by Harrison Gray Otis Dwight is an essential source for a comprehensive study of the history of the spread of Protestantism in the Western Armenia. The latter, as an eyewitness and a direct participant of the process, provides us with interesting information, owing to which his work serves as a valuable source. However, it should be noted that the events and phenomena are sometimes presented by the author through the prism of biased, as well as just personal perceptions. The author's religious affiliation and the fact that he was an active preacher certainly influenced the entire process of writing the work. So, the author expresses his thoughts and gives his assessments from the point of view of his own religious, denominational and geopolitical perceptions.

The article presents the historiographical significance of this work in terms of

studying the history of the spread of Protestantism among Western Armenians.

Էդգար Հովհաննիսյան – Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ պատմության և հասարակագիտության ֆակուլտետի դեկան, պ.գ.թ., դոցենտ: Գիտական հետաքրքրությունները՝ Հայկական սփյուռքի պատմություն, Հայաստան-Սփյուռք հարաբերություններ, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության պատմության հարցեր: Հեղինակ է շուրջ հիսուն գիտական հրապարակումների: hovhannisyanedgar16@aspu.am

Эдгар Оганнесян - Декан факультета истории и общесоведения наук АГПУ им. Х. Абовяна, кандидат исторических наук, доцент. Сфера научных интересов: История армянской диаспоры, взаимоотношения Армения-Диаспора, История Католикосата Великого Дома Киликийского. Является автором около пятидесяти научных публикаций. hovhannisyanedgar16@aspu.am

Edgar Hovhannisyan - Dean of the Faculty of History and Social Sciences of the Armenian State Pedagogical University, PhD, Associate Professor. Scientific interests: History of the Armenian Diaspora, Armenia-Diaspora relationship, History of the Catholicosate of the Great House of Cilicia. He is the author of about fifty scientific publications. hovhannisyanedgar16@aspu.am

ARCHPRIEST DRTAD UZUNYAN

TYPES OF PROPHECIES: AN INNOVATIVE APPROACH

*DOI: 10.24234/journalforarmenianstudies.v2i65.116***ABSTRACT**

While prophecy constitutes the most important part of the Bible, it has been, in our opinion, its least analyzed subject. The interpretation of the prophecies has produced the most extensive works in the Christian tradition. While the messages of the prophets have been analyzed in detail, the phenomenon of “prophecy” itself has received little attention. This study presents a brief but innovative approach to the subject of prophecy and its types. An approach from the Jewish tradition handed down from the Middle Ages to the present day is taken and only a summary is presented, while a new diversification is proposed with a different approach.

In the first part of this study some studies from the Jewish and Armenian traditions about the types of prophesy are given with examples and examples of diversification are presented.

In the second part, the subject of Practical Types of Prophecy, which is our proposition, is discussed and it is explained which types of prophecies should be examined. In conclusion we summarized our purpose and the main parts of the study.

Key words and expressions: *Prophecy, Types of Prophecy, Practical Types of Prophecy, Prophet, New Testament, Old Testament, Armenian tradition, Jewish tradition.*

INTRODUCTION

The purpose of this study is to study the types of prophecy as a proposition, which have been little analyzed.

In this study, we thought it appropriate to deal with a subject that we think is very little studied. In fact, we thought it was necessary to approach the phenomenon of prophesy, which is an extremely broad subject, from the perspective of the types of

prophecies and to offer a new perspective and propositions.

Recognizing from pastoral experience that the wrong approach to the structure of prophecies creates a false spirituality in Bible readers, we suggest that this study is of vital importance.

This study is essentially a proposition. It is a preliminary call for the future work, and especially a preliminary study for the proper understanding and handling of the prophecies of the New Testament later on.

METHODOLOGY

When drafting the article, we are guided by historical research and comparative analysis methods, by researching and analyzing existing material, published sources and studies.

TYPES OF PROPHECY ¹

In the Bible we see various prophecies and ways of divine revelation. Before we make our suggestions about the types of prophecy, we would like to show a few classification approaches.

In his vast work *Dalalat al-Hairin*, Moshe Bin Meimon (Meymonides) classifies prophecies into twelve levels. We present a summary based on his work to convey an idea of the Jewish mindset. Giving broad explanations, he classifies the levels of prophecy from the smallest to the greatest.

- i. A divine help. This is the experience of Israeli judges or others (Judges 2:18, 1 Chronicles 12:18)².
- ii. To have wisdom and the ability to speak with divine help. The person feels that a new power has come to him and starts speaking through the Holy Spirit. This is how David wrote the psalms, and Solomon authored his books. This is how the books of Daniel, Job, and Kings were written. Also, the seventy judges chosen by Moses received wisdom from that same power.

¹ We do not mean the types of interpretation here. An extensive study of schools and approaches of interpretation can be found in Buzand Yeghiayan's book (Yeghiayan B., 1976).

² The original examples found in the article are taken from the Bible.

Moshe Bin Meimon considers these two levels to be degrees leading to prophecy, but a person of this level cannot yet be officially called a prophet.

- iii. The lowest level of prophecy is observed in this category. This is the experience of the prophets when, *“the word of the LORD came to...”* An example of this prophecy is the experience of the prophet Zechariah (Zech. 1: 1).
- iv. This level is hearing a word in a dream. This is the experience that Samuel had when he first heard the experience of his first revelation. (I. Samuel 3rd, 4th, 6th & 8th chapters).
- v. In a dream, talking to a prophet is the fifth level. Here we see the experience of Ezekiel (Ezek. 40: 4).
- vi. Talking to an angel in a dream is the sixth level. The experience of many prophets corresponds to this level. This is the dream of Jacob (Genesis 31.11).
- vii. Speaking to a prophet of God in a dream is the seventh level. This is the experience of the prophet Isaiah (Isaiah 6: 1 & 7) and the experience of the prophet Micah (1 Kings 2:19).
- viii. The eighth level is when the prophet sees "something" in a vision, just as Abraham saw a firebox being passed through the "smoke of the furnace and the radiance of fire" (Genesis 17:17).
- ix. At the next level, the prophet hears a word in a vision. This is another experience of Abraham (Gen. 17: 4).
- x. In a vision, speaking to a prophet is the tenth level. This is the experience of Joshua (Josh. 5:13).
- xi. In a vision, speaking to an angel is considered the highest level of prophecy. This is the experience of Abraham when he would sacrifice Isaac (Gen. 12:15).
- xii. And above all other levels there is only one person. This is seen in the privilege or special level reserved for Moses when God appears in a vision to the prophet and speaks to him personally (Exodus 17:22).

It should be noted that Moshe Bin Meimon did not limit any prophet to just one level, but as we see in experiences 8th, 9th, and 11th, a prophet may have various levels of experience

(Maimonides M., 1904).

About communicating with God, based on the teachings of St. Gregory of Tatev, Hagop Kyoseian defines three levels of knowledge of God. *“First to the hearers, second to the wise, third to the visible”* based on Isaiah 21: 26. He concludes as follows: *“Each of these points to a particular way and level of knowing God. Such a sequence of sensory and cognitive abilities to some extent presupposes the upward development of cognition (audible, knowledge, visible). ... Knowledge of God, therefore, requires the harmonious cooperation of the senses and the mind.”* The author discusses about the levels of knowing God St. (Gregory of Tatev, 2008).

PRACTICAL TYPES OF PROPHECY

We now present another approach to Old Testament prophecy and its classification according to its purposes. In other words, what did God want to do through that prophecy or revelation, what was his purpose? In our opinion, making these distinctions in the study of prophecies is crucial for a direct approach to the interpretation of Scriptures and for the accurate explanation. It is also more important to clarify the purpose of Messianic prophecies, since many of the prophecies interpreted in the New Testament about the person of Christ have an entirely different purpose in the context of the Old Testament. In our explanations, we will use scriptures that are some examples and are not a comprehensive study.

○ Legislation

Through these prophecies, God establishes the Law (most of the books of Exodus, Leviticus, and 2 Deuteronomy), the Ten Commandments (Exodus 1: 1-17), the moral laws (Exodus chapters 1st, 2nd, 3rd), and the ritual (Exodus chapters 17th - 30th.) rules, etc. Most of the messages of Moses must be contained in this section, and no other prophet can be included in this section.

○ Self-revelation

This is the prophecy where God reveals His inaccessible nature, in the measure and in the form that He finds convenient. He reveals Himself in the form of a man to Abraham (Gen. 17: 1-15), to Jacob (Gen. 25: 25-30); speaking face to face with Moses (Exodus 10:10) and

showing his back to him (Exodus 33:23); in the form of an angel to others (Judges 2: 1-2); to Isaiah and Ezekiel in the form of a man on the throne in great glory and power (Isa. 6: 1, Ezekiel 1:26); to Daniel on the throne as a judge (Dan. 5: 9-10) and many others. In this way, God manifests His glory and identity within the bounds of human capacity (the greatest example of this self-revelation is the humanity of the Word of God, Jesus Christ, and the revelation of the Most Holy Trinity at the time of Baptism).

- Warning or rebuke

Through such prophecies, God rebukes, corrects peoples, cities, countries, nations, kings, prophets, priests, and individuals calling them to repentance. The most famous example is the book of the Prophet Jonah, especially verse 3: 4, where punishment is announced. In Isaiah chapter 24th the whole nation is rebuked. Isaiah chapters 16th - 21st is sent to various cities to rebuke them. A person is warned in Isaiah 2: 15-25 and in Amos 5: 13-17 the lifestyle of the priests is condemned in chapter 28:7-10. The book of Jeremiah especially chapters 2nd -11th are full of prophecies of punishment, reprimand, and warning. The first six chapters of the book of Amos are a complete rebuke. This form of prophecy was the most dangerous and the most painful form for the prophet. It was dangerous because prophets were in danger of being killed, being imprisoned, deported, and were faced with all kinds of hardships. For this very reason God prepared the prophets to be courageous in the face of their adversaries. He warns them: Isaiah (chapter 6th), Jeremiah (Jer. 1: 4-10), Ezekiel (Ezek. chapter 3rd), rebukes and even punishes Jonah (chapters 1: 1, 2), and Balaam (Numbers chapter 2nd). It was also painful as the prophet saw the coming punishment. Or, just like Jonah, they would become enraged when punishment was lifted from Israel's enemies. One of the most painful events is the experience of Elisha (2 Kings 11: 13-13).

- Message

This is the form of prophecy through which God conveys a message to the people to encourage, to give hope, to convey a new vision, and to show them the right way. These prophecies also contained promises. When a person obeyed the message, was blessed, and found good. Otherwise, would suffer great damage. Through these prophecies the people were educated, guided, and invited to change their behavior. One of the best examples is

Deut.27 where God shows the "way" of blessing and curse. The word of Joshua (Josh. 24: 2-13), most of the chapters 40th - 62nd of book of Isaiah, the visions and the messages recorded in the first six chapters of the book of the Zechariah, should be considered in this category. We see more of such prophecies in the prophets and in the historical books.

○ Leadership

This is the prophecy where God leads a people, a group, and an individual. Leaders often sought divine guidance before making decisions. Sometimes God himself intervened and showed a direction. We find particularly good examples in the following: in each case, Moses was guided by God in specific ways and revelations. During the Ten Plagues and the Exodus, God guided Moses and the people of Israel step by step (Exodus 17-14). He also led them on a journey through the desert with a pillar of cloud and fire. Joshua was guided during battles and the conquest of the Promised Land (Josh. 3: 7-8, 4: 1-3; chapter 6th, 8: 1-26).

In the same way, God also led the judges through prophecy: He led Barak through Deborah, (Jud. 4.6-7); Gideon through an angel (Jud.6.12-19); Samuel for the anointing of David (1 Sam. 16: 1-13), David on various occasions (through Ephod, 1 Sam.30. 8-9, directly 2 Sam. 2: 1, 5.19, through prophets 2. Sam.7:4, 12:25) etc.

○ Foretelling

This is the form of prophecy where God foretold would happen in the future. This could be a plague, or the interpretation of a dream, or accidents that would happen in the future. This kind of prophecy is found in the Bible everywhere. The most prominent prophecies are the book of Daniel (Dan. chapters 7th and 8th), the commentaries of Joseph and Daniel (Gen. 10: 1-36; Dan. 2.24-49), the statement of Elijah (1 Kings 17: 1) and many others.

○ Messianic Revelation

This is the form of prophecy that has been interpreted in connection with Christ. These prophecies should be divided into two groups:

- Explicit prophecies, such as the prophecy concerning the birthplace of Christ. This prophecy was so well known that it made clear the hometown during the visit of the magi. The priests, and teachers of the Law knew exactly the place through prophesy.

- Prophecies that become known when they were fulfilled and only then it became clear that this was also spoken of Christ. Such prophecies are especially some of the prophecies quoted in the Gospels, which are interpreted by the four Evangelists.

So, we have suggested types of prophecy here. When there is a need for interpretation and the ability to interpret it rightly, we need to know what kind of prophecy it is. This becomes especially important when the prophecy is interpreted in the New Testament. If a prophecy legislates, it requires a different interpretation and approach, and if it is a message given in time, it requires a different approach. The rebuke and the foretelling, the message and the legislation must be differentiated and acquired in separate ways. Confusion leads to inappropriate practices.

CONCLUSION

In this study, we touched upon the types of prophecies and summarized an example from the Jewish tradition and a short example from the Armenian tradition. We summarized the categorization of prophecy in a famous work, the work of Maimonides (1138-1204). In this work, Maimonides made a huge study of the Jewish belief system and published it in this work. He received a great deal of criticism in his own time, but at the same time his work was translated into many languages. We have used his translation *“The Guide For The Perplexed, Translated from The Original Arabic Text”* in this study. The work, which consists of an introduction and three main chapters, contains a large corpus. The first part is divided into 76 chapters, the second part into 48 chapters and the third part into 54 chapters. In the work, which deals with many topics in the style of an Aristotelian philosopher, the second part, which we have quoted from, has 45 chapters, and the following chapters deal with the subject of prophecy from different perspectives.

We have also included the only example we could find in the Armenian language, from the foreword by Hagop Kyoseyan in the book *“St. Gregory of Tatev, Commentary on Prophecies of Isaiah”*.

In the last section, Practical Types of Prophecy, we again present a completely original work. In this chapter, we have taken the prophecy as 7 Types and made propositions and divided them into types of prophecies and gathered them under seven main headings:

Legislation, Self-revelation, Warning or rebuke, Message, Leadership, Foretelling, Messianic Revelation. We would like to emphasize that this section is entirely a proposition. Naturally, we are presenting a work that is open to all criticism, changes, and improvements. Our greatest hope is that this chapter will be taken up and developed by scholars interested in this subject and, if possible, become the subject of thesis studies.

We hope that this study will pave the way for an innovative approach to prophecies. We aim to encourage the new generation of theologians to work on this subject and to develop this study as to make more comprehensive researches and arrangements.

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

1. **Ս. Գրիգոր Տաթևացի (2008)**, Մեկնություն մարգարեությանն Եսայեայ, բնագիրը եւ Ներածությունը Յ. Քեօւէեանի, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատ.:
2. **Եղիայեան Բ. (1976)**, Քննական պատմություն Սուրբ Գրական ժամանակներու, հտ. Ե., Անթիլիաս-Լիբանան, Կաթողիկոսություն Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ հրատ.:
3. **Մայմոնիդես Մոսէս (1904)**, Ուղղեցոյց Մոլորածոց, թարգմանուած՝ արաբերէն բնագէն, թրգմ.՝ Մ. Ֆրիտլէնտըր, Նյու Յորք, Է.Պ.Դուրթոն եւ Քոմպանի հրատ.:

REFERENCES

1. **St. Gregory of Tatev (2008)**, Meknowt'iwn margare'owt'eann Esayeay /Interpretation of the Prophecy of Isaiah/, ed. by H. Kyoseyan, Etchmiadzin, Mother See of Holy Etchmiadzin Publishing House ed.
2. **Yeghiayan Buzand (1976)**, Qnnakan patmowt'iwn Sowrb Grakan jhamanaknerow /Critical History of Holy Scripture Times/, vol. 5, Antelias, Lebanon, Catholicosate of the Great Armenian House of Cilicia ed.
3. **Maimonides Moses (1904)**, Owghghecoyc Molorac'oc, t'argmanowac՝ arabere'n bnage'n /The Guide For The Perplexed/, Translated from The Original Arabic Text, by M.Friedlander, Ph.D., New York, E. P. Dutton & Company ed.

Տրդատ Ա. Քահանայ Ուզունեան

Մարգարէութիւններու տեսակները. Նորարարական մօտեցում մը

Ամփոփում

Բանալի բառեր և արտայայտութիւններ. մարգարէութիւն, մարգարէութեան տեսակներ, մարգարէութեան գործնական տեսակներ, մարգարէ, Նոր Կտակարան, Հին Կտակարան:

Թէեւ մարգարէութիւնը Աստուածաշունչի ամենակարեւոր մասն է, սակայն, մեր կարծիքով, եղած է ամենաքիչ վերլուծուած թեմաներէն մէկը: Մարգարէութիւններու մեկնութիւնը տուած է քրիստոնէական աւանդութեան ամենաընդարձակ աշխատութիւնները: Մինչ մարգարէներու պատգամները մանրամասնօրէն վերլուծուած են, «մարգարէութիւն» գաղափարը ինքնին քիչ ուշադրութեան արժանացած է: Այս ուսումնասիրութիւնը կը ներկայացնէ կարճ, բայց նորարարական մօտեցում՝ մարգարէութիւն թեմային եւ անոր տեսակներուն: Միջնադարէն մինչեւ մեր օրերը փոխանցուած հրեական աւանդութիւնէն մօտեցում մը կը ներկայացուի ամփոփ կերպով: Ապա կ'առաջարկուի նոր տեսակաւորում՝ այլ մօտեցմամբ:

Այս ուսումնասիրութեան առաջին բաժնին մէջ տրուած են որոշ ուսումնասիրութիւններ հրեական և հայկական աւանդութիւններէն մարգարէութեան տեսակներու վերաբերեալ՝ օրինակներով և ներկայացուած են տեսակներու օրինակներ:

Երկրորդ բաժնին մէջ կը քննարկուի մարգարէութեան գործնական տեսակները, որ մեր առաջարկութիւնն է եւ կը բացատրի, թէ մարգարէութիւններու ինչ տեսակներու բաժնելով պէտք է քննուին:

Եզրափակութեան մէջ մենք ամփոփեցինք մեր նպատակը և ուսումնասիրութեան հիմնական մասերը:

Протоиерей Трдат Узунян

Виды Пророчеств: Инновационный подход

Заключение

Ключевые слова и выражения: Пророчество, виды пророчеств, практические виды пророчеств, пророк, Новый Завет, Ветхий Завет, еврейская традиция.

Несмотря на то, что пророчества составляют важнейшую часть Библии, они, на наш взгляд, являются ее наименее изученной темой. Толкованию пророчеств посвящены наиболее обширные работы в христианской традиции. В то время как послания пророков подробно анализировались, самому феномену "пророчества" уделялось мало внимания. В данном исследовании представлен краткий, но новаторский подход к теме пророчества и его типов. Взят подход из иудейской традиции, передаваемой от средневековья до наших дней, и представлено лишь краткое изложение, в то время как предложена новая диверсификация с иным подходом.

В первой части исследования приводятся некоторые исследования из еврейской и армянской традиций о типах пророчества с примерами, а также примеры диверсификации.

Во второй части обсуждается тема практических типов пророчества, которая является нашим предложением, и объясняется, какие типы пророчеств должны быть рассмотрены.

В заключение мы подвели итог нашей цели и основных частей исследования.

Տրդատ Աւ. Քահանայ Ուզունեան – ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի, աստվածաբանության և Հայ Եկեղեցու պատմության ամբիոնի ասպիրանտ: Գիտական հետաքրքրությունները՝ Աստվածաշունչ, աստվածաբանություն, Սուրբ Գրային մեկնություն: Հեղինակ է շուրջ 15 հոդվածի եւ երկու գրքի: duzunyan@gmail.com

Протоиерей Трдат Узунян - Аспирант кафедры теологии и истории армянской церкви ЕГУ. Научные интересы: Библия, богословие, герменевтика.: Он является автором около пятнадцати статей. Опубликовал две книги. +905324839557
duzunyan@gmail.com

Archpriest Drtad Uzunyan - Phd student of the Chair of Theology and Armenian Church history at the YSU. Scientific interests: Bible, Theology, Hermeneutics. He is the author of about fifteen articles. He has published two books. +905324839557
duzunyan@gmail.com.

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ԳՐԵՏԱ ՀԱԿՈԲՅԱՆ

ՍՈՖՅԱ ՔԵՐՈԲՅԱՆ

**ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ՝ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՃԱՆԱԶՈՂԱԿԱՆ
ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ***DOI: 10.24234/journalforarmenianstudies.v2i65.117***ԱՄՓՈՓՈՒՄ**

Հոդվածում քննարկված են նախագծային ուսուցման տեսական-գործնական հարցեր: Հիմնավորված է նախագծային ուսուցման կարևորությունը 21-րդ դարի հմտությունների և սովորողների կարողունակությունների ձևավորման չափորոշչային պահանջների շրջանակներում: Վերլուծված են նախագծային ուսուցման նպատակները, սկզբունքները, իրականացման ձևերը, ուսուցչի գործառույթները: Նկարագրված է Կոտայքի մարզի Բալահովտի միջնակարգ դպրոցում իրականացված նախագծային աշխատանքի օրինակ: Բնութագրված են աշխատանքի բովանդակությունը, ընթացքը, քայլաշարը, հիմնական ուղղությունները, վերջնարդյունքները:

***Բանալի բառեր և արտահայտություններ.** նախագծային աշխատանք, համագործակցություն, ճանաչողական կարողություններ, Բալահովտի Սուրբ Աստվածածին եկեղեցի, 21-րդ դարի հմտություններ, ֆասիլիտատոր ուսուցիչ, աշխատանքի քայլաշար, կրթական վերջնարդյունքներ, կարողունակություններ:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից աշխարհում փոխվել են կրթական տարածքի ըմբռնման վերաբերյալ ավանդական պատկերացումները: Այսօր արդեն բնական, կենսական, մարդկանց կողմից կառուցված տարածքները և թվային միջավայրերն ընկալվում են որպես համապարփակ ուսումնառության միջավայր՝ ներառելով համամարդկային

մշակույթի, գիտության և դրանց յուրացման համար ՏՀՏ-ների հասանելիության ռեսուրսները, ներառականության, հավասարության, փոխգործունեության և համագործակցության սկզբունքները, որն արդեն չափորոշային պահանջ է: Մեզ շրջապատող աշխարհը, այսպիսով, կրթական տարածք է, որում սովորողը կարող է սխալվել, փորձարկել, ստուգել, ծանոթանալ, իր փորձով ճանաչել աշխարհն ու գիտելիք ստեղծել: Ուստի կարևորվում են այն մեթոդներն ու տեխնոլոգիաները, որոնք նպաստում են շրջապատող աշխարհում խնդիրներ տեսնելուն, լուծման համար գիտելիք ձեռք բերելուն ու նոր գիտելիքը կիրառելուն: Իսկ դրա համար կարևոր է աշխատանքի նախնական պլանավորումն ու մտադրության իրականացման համար քայլերի հաջորդականության սահմանումը, այսինքն՝ **աշխատանքի նախագծումը:**

Հաշվի առնելով կրթության կիրառական ուղղվածության և իրական կյանքի պահանջներին համապատասխանության, սովորողների ուսումնահետազոտական գործունեության կարողությունների զարգացման հրամայականը՝ Հանրակրթության պետական չափորոշիչը սահմանում է. «7-12-րդ դասարաններում յուրաքանչյուր աշակերտ տարեկան իրականացնում է առնվազն մեկ ուսումնական նախագիծ՝ իր ընտրած առարկայից կամ առարկաներից» (**Հանրակրթության պետական չափորոշիչ, 2021**):

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հոդվածը պատրաստվել է «Վիզուալ Հայաստան» զարգացման հիմնադրամի նախաձեռնած [«Հանրակրթական դպրոցների տեխնիկական վերագինում»](#) մրցութային ծրագրի՝ 2023-2024 ուստարվա 1-ին կիսամյակում չորս շաբաթ տևողությամբ կատարված «Իմ համայնքը» ընդհանուր խորագրով նախագծային աշխատանքի շրջանակներում: Նախագծին մասնակցել են Կոտայքի մարզի Բալահովտի միջնակարգ դպրոցի 7-րդ դասարանի աշակերտները, որոնց կատարած *«Բալահովտ գյուղի Սուրբ Աստվածածին եկեղեցին»* խորագրով նախագծային աշխատանքը հաղթող ճանաչվեց մրցույթում, և Բալահովտի միջնակարգ դպրոցը այն 40 դպրոցներից մեկը դարձավ, որը նվեր ստացավ վերջին

սերնդի ինտերակտիվ սմարթ-էկրան (<https://visualarmenia.org/40-smarth-ekran-40-hanrkrthakan-dproci%E2%80%A4-haytni-en-vizual-hayastan-zargacman-himnadrami-baregortcakan-mrcuyth-tcragri-haghtoghnerah/uncategorized/>):

Աշխատանքային նյութերի ամբողջական փաթեթը գետեղված է համապատասխան էլեկտրոնային կայքում (https://drive.google.com/drive/folders/1R4jdB_5cdr-7SYVnjYBxCDyAH9W3tx98):

Հոդվածը շարադրված է վերլուծահամադրական մեթոդով: Նախագծային աշխատանքի նկարագրությունն արված է Հանրակրթության պետական չափորոշի՝ սովորողների կարողունակություններին և ակնկալվող վերջնարդյունքներին ներկայացվող պահանջների համատեքստում:

ՔՆՆԱԼԿՈՒՄ

Արդի հայերենի բացատրական բառարանում «նախագիծ» բառի իմաստային մի քանի մեկնաբանություններից առանձնացնենք հետևյալը. «4. Աշխատության՝ ստեղծագործության և այլն, նախնական և ընդհանուր պլան, որի մեջ տրվում է շարադրանքի՝ կառուցվածքի ընդհանուր բնութագրությունը, 4. Դիտավորություն, մտադրություն» (Աղայան Է., 1976): Բառի իմաստային տիրույթում, այսպիսով, նախագիծը մեկնաբանվում է որպես ստեղծագործական աշխատանքի նախնական պլան, որում արտահայտվում են աշխատանքի մտահղացման և քայլաշարի իրականացման բովանդակային բաղադրիչները:

Նախագծային ուսուցման նախահիմքերը դրվել են ամերիկացի փիլիսոփա, մանկավարժ Ջոն Դյուիի գաղափարներում: Նրա մանկավարժական դրույթներում արտահայտված են ուշագրավ մոտեցումներ, որոնք բնորոշ են նախագծային ուսուցմանը: Ջ. Դյուին ճանաչողական տեսության շրջանակներում կիրառում է փոխներգործուն /interactive/ եզրույթը, որի շրջանակներում շեշտում է պրոբլեմային իրավիճակը և դրա լուծման քայլաշարը: Իր «Ժողովրդավարությունը և կրթությունը» հոդվածում նա առաջ է քաշում արդյունավետ ուսուցման իր մոտեցումը. դպրոցը պետք է դառնա լաբորատորիա, իսկ աշակերտներին պետք է իրավունք ընձեռել ժողովրդավարական որոշումներ կայացնելու: «Արդյունավետ ուսուցման

նշանաբանը կյանքին մասնակցելն է և ոչ թե նախապատրաստումը: Դպրոցը երեխաներին պետք է սովորեցնի ոչ թե **ինչ մտածել, այլ ինչպես մտածել»** (Վարդումյան Ս., 2005): Ուսուցիչների առաջնային պարտականությունն է աշակերտներին ներգրավել սոցիալական և միջանձնային առավել կարևոր խնդիրների քննարկումների մեջ: Ջ. Դյուիի առաջարկած դասարանն ըմբռնվում է որպես աշակերտների փոքր, պրոբլեմներ լուծող խմբեր, որոնք փնտրում են իրենց սեփական պատասխանները: Համագործակցային վարքագիծը մարդկային գործունեության հիմքն է, որի վրա կարող են ստեղծվել և ղեկավարվել ժողովրդավարական համայնքները (Վարդումյան Ս., 2005):

Ուսումնական նախագծային աշխատանքը հետազոտություն է, որի շրջանակներում մասնակիցները որոնում են լուծում պահանջող պրոբլեմային իրավիճակներ, ձևակերպում են հիմնահարցը, հավաքագրում, մշակում և գնահատում են հիմնահարցին առնչվող տպագիր, էլեկտրոնային փաստերն ու տվյալները, աշխատում են ՏՀՏ-ներով, որոշումներ ընդունում, լուծումներ առաջարկում: Աշխատանքի ընթացքում սովորողները նաև քննարկումներ ու բանավեճեր են նախաձեռնում, հանդիպում են խնդրով շահագրգիռ տարբեր կառույցների ներկայացուցիչների հետ: Աշխատանքը նպաստում է ձեռք բերված գիտելիքները կենսական իրավիճակներում դիտարկելուն և կիրառելուն: Նախագծային աշխատանքը ճանաչողական կարողությունների զարգացման միջոց է: Դրանք մարդու իմացական այն որակներն են, որոնք ձևավորվում են շրջապատող աշխարհի զգայական ընկալման, պատկերացումների ձևավորման, տեսական մտածողության և պրակտիկ գործունեության արդյունքում՝ ապահովելով գիտելիքների արդյունավետ յուրացումը: Ճանաչողական կարողությունների շնորհիվ մարդն ուսումնասիրում է իրեն շրջապատող աշխարհը, վերլուծում նրանում իրականացող երևույթներն ու գործընթացները, արտահայտում իր գնահատողական, հուզական-արժեքային վերաբերմունքը: Այդ կարողությունները ձեռք են բերվում ճանաչողական ակտիվ գործունեության արդյունքում փաստերի, երևույթների, իրադարձությունների համարժեք ընկալման, վերլուծության, համադրման, կապերի և օրինաչափությունների

գիտակցման, փաստարկման, առկա գիտելիքների հիման վրա նոր իրողությունների ըմբռնման, ռեֆլեքսիայի, ստեղծագործական գործունեության ճանապարհով: Մտագործունեության արագությունը, ճկունությունը, գործունեության նպատակահարմար եղանակների ընտրությունը, գիտելիքների համարժեք և ճիշտ կիրառումը, ցանկացած իրավիճակում աշխատանքի մի ձևից մյուսին անցումը, արագ փոփոխվող պայմաններին հարմարումը, գործնական կարողությունների դրսևորումը, հաղորդակցումը, պլանավորումը, կանխատեսումը, տեղեկության նկատմամբ քննադատական մոտեցումը, համակարգումը, գնահատումը, ընդհանրացումը, փաստարկված եզրահանգումներ անելը, բանավիճելու մշակույթն այն կարևոր հատկանիշներն են, որոնք հանրակրթության վերջնարդյունք են՝ կարևոր ու անհրաժեշտ հարափոփոխ աշխարհում բնականոն կենսագործունեության համար: Սովորողների ճանաչողական կարողությունների զարգացման առումով կարևորվում է քննադատական մտածողության զարգացումը՝ որպես ժամանակակից աշխարհում տարաբնույթ իրողությունների նկատմամբ անձի իմացական և հուզաարժեքային վերաբերմունքի դրսևորման կարևոր պայման և միջոց: Դ. Հալփերնը նշում է. «Քննադատական մտածողությունը նախկինում ձեռք բերված գիտելիքների գնահատումն է, որը ներառում է փաստերի տիրապետումը, համակողմանի դիտարկումը, կողմնորոշումները և մտածական գործընթացների իրականացման հմտությունները» (Halpern D., 2013):

Նախագծային ուսուցման նպատակն է սովորեցնել սովորել, խթանել հետազոտական աշխատանքը, զարգացնել ստեղծագործական միտքը, նպաստել կենսական փորձի ձեռքբերմանը, կյանքում գիտելիքների կիրառմանը, լուծել կյանքում հանդիպող խնդիրներ: Այսօր սովորողը ցանկանում է հասկանալ իր գործողությունների նպատակը, գիտելիքների նշանակությունն այդ նպատակների նվաճման համար, կանխատեսել արդյունքը և դրա կարևորությունը կյանքում, այլապես նա չի գիտակցի և համոզվի, թե ինչու է սովորում, որտեղ և ինչպես պետք է կիրառի յուրացված գիտելիքները:

Նախագծային ուսուցման սկզբունքներ են՝

- այն պետք է լինի մասնակցային. ընթացքն ու որոշումը պետք է լինեն երեխայի ընկալմանը մատչելի. ուսուցիչը օգնող է և ոչ թե թելադրող,
- աշխատանքը չպետք է համեմատելու, հանդիմանելու, նախատելու միջոց դառնա. պետք է գնահատել յուրաքանչյուրի վաստակը. կարևոր են թիմային աշխատանքի հմտությունը, մասնակցայնությունը, փոխըմբռնումն ու կենսական հարցերի վրա ուշադրության սևեռումը,
- նախագծային աշխատանքի համար պետք է հստակ, չափելի նպատակներ դնել ու վերջնարդյունքներ սահմանել:

Ըստ բովանդակության՝ նախագծային աշխատանքը կարող է լինել ներառարկայական՝ մեկ ուսումնական առարկայի շրջանակում, միջառարկայական՝ երկու և ավելի առարկաների ինտեգրմամբ, վերառարկայական՝ համապիտանի, վերառարկայական, առանցքային, ընդհանրական կարողունակությունների զարգացման համատեքստում: Ըստ տևողության՝ նախագծային աշխատանքը կարող է լինել կարճաժամկետ, օրինակ՝ 1-2 շաբաթ, և երկարաժամկետ՝ մեկ ամիս, մեկ կիսամյակ տևողությամբ: Ըստ ուսումնական թեմաների ուսումնասիրության և յուրացման ընթացքի՝ լինում է ընթացիկ և ամփոփիչ: Ըստ մասնակիցների քանակի՝ նախագծային աշխատանքը կարող է լինել անհատական, խմբային:

Նախագծային աշխատանքի թեման պետք է հասարակական հնչեղություն ունենա, լինի արդիական, խնդրահարույց, բխի սովորողների կյանքից և նրանց հուզող խնդիրներից. Ջոն Դյուին այն համոզումն ուներ, որ մտքերը կարևոր և արժեքավոր են միայն այն դեպքում, երբ օգնում են կենսական խնդիրներ լուծելու և բարելավելու մարդկանց կյանքը: Ըստ նրա՝ դպրոցի առաջնահերթությունը սովորողներին կենսական կարևոր խնդիրների քննարկումների մեջ ներգրավելն է: «Դպրոցը նախևառաջ հասարակական ինստիտուտ է: Ուստի համարում եմ, որ ուսուցումը կյանքի գործընթաց է, ոչ թե նախապատրաստում ապագա կյանքին: ...Իսկական կրթությունը տեղի է ունենում այն ժամանակ, երբ երեխայի կարողություններն արթնանում են այն հասարակական իրավիճակների պահանջների ազդեցությամբ, որոնցում երեխան հայտնվում է: Այդ պահանջներ ստիպում են նրան գործել որպես հասարակության անդամ» (Դյուի Ջ., 2013):

Նախագծային ուսուցման մեթոդաբանության մեջ կարևոր են ոչ միայն ստացված արդյունքը, այլև բուն գործընթացը, համագործակցության մթնոլորտը, ընդհանուր արդյունքի համար պատասխանատվությունը, մասնակցությունը, նոր գիտելիք ձեռք բերելու ճանապարհը: Ձևավորվում են ինքնուրույն և համատեղ աշխատանքի մշակույթ, թիմային մտածողություն: Սովորողները կարողանում են կանխատեսել, պլանավորել քայլերի հաջորդականությունը, գիտակցել գիտելիքի կիրառական նշանակությունը՝ այն կապելով իրենց կենսափորձի հետ:

Նախագծային ուսուցման հիմքում ընկած է սովորողի ճանաչողական հմտությունների, տեղեկատվական տարածքում կողմնորոշվելու, քննական և ստեղծագործական մտածողության զարգացումը, որոնք կարևոր են ուսումնական տարբեր առարկաներին առնչվող և իրական կյանքում հանդիպող խնդիրների լուծման համար: «Վերախմաստավորելով մեր համատեղ ապագայի հեռանկարները» խորագրով ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ ի նպաստ կրթության հանրային նոր համաձայնագրի մեջ ուսումնական ծրագրերում շեշտը դրվում է էկոլոգիական, միջմշակութային և միջառարկայական ուսուցման վրա, որը խրախուսում է սովորողների համար գիտելիքի հասանելիությունն ու նրանց կողմից դրա վերարտադրությունը՝ միաժամանակ զարգացնելով քննական և կիրառական կարողությունները (Reimagining Our Futures Together, 2021, <https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000379707/PDF/379707eng.pdf.multi>):

Փաստաթղթում նախանշված են 21-րդ դարի կրթության գերակա ուղղությունները՝ հիմնված միջառարկայական, խնդրահենք, համագործակցային ուսուցման, ուսումնական ծրագրերում էկոլոգիական, միջմշակութային որոնելի, փոխանցելի գիտելիքների վրա: 21-րդ դարի հմտությունների թվում են նաև՝ լինել նախաձեռնող, կրեատիվ, մասնակցային, ակտիվ, համագործակցել թիմային աշխատանքում, պատասխանատու լինել արդյունքի համար, իր կարծիքը ձևավորել, անդրադարձ կատարել և դրսևորել համապատասխան վարք, կարողանալ անդրադառնալ ու արձագանքել շուրջը կատարվող իրադարձություններին, տեսնել հիմնախնդիրներ և փորձել առաջարկել լուծումներ:

Ուսումնական նախագծերում պետք է ներառվեն այն խնդիրները, որոնք

առնչվում են իրական կյանքին. վավերականությունը մեծացնում է սովորելու դրդապատճառները: Ուսումնական նախագիծը նշանակալի արդյունք կունենա, եթե սովորողները հանրային հնչեղության, համայնքային նշանակության, առարկայական, շոշափելի թեմաներով նախագծեր իրականացնեն, աշխատանքի արդյունքը ներկայացվի դպրոցի լսարանին, համայնքին: Նախագծի վերջնական արդյունքի հանրային ներկայացման հեռանկարը ձևավորում է դրա նկատմամբ պատասխանատվություն: Նախագծային ուսուցմամբ ձեռք բերվող գիտելիքի հանրային արժևորումը զգալիորեն բարձր է:

Նախագծային աշխատանքի ընթացքում փոխվում է ուսուցչի դերը. նա պետք է հրաժարվի դասարանի նկատմամբ ավանդական վերահսկողությունից, վստահի սովորողներին և խրախուսի նրանց ազատությունն ու ինքնուրույնությունը: Ֆասիլիտատոր ուսուցիչը ձևավորում է դրդապատճառներ, խրախուսում է սովորողների ինքնուրույն աշխատանքը և համագործակցությունը, ստեղծում է ուսումնական ռեսուրսների բազա, ուղղորդում որոնելու տեղեկատվական աղբյուրներ, օգնում ձևակերպելու նախագծի թեման և հիմնահարցը, առաջարկում աշխատանքի ձևեր, քայլաշար, ձևավորում խմբեր, կառավարում է ամբողջ գործընթացը, խթանում համաչափ ներգրավվածությունը, մղում է շարունակաբար կատարելու անդրադարձ:

Վերոնշյալ մոտեցումները մենք կյանքի ենք կոչել **«Բալանսավիտ գյուղի Սուրբ Աստվածածին եկեղեցին»** խորագրով նախագծային աշխատանքում:

Հիմնախնդիրը՝ ուսումնասիրել, թե ինչու է նախկինում գործող հոգևոր-մշակութային կարևոր կառույցն այսօր մոռացության մատնված, և առաջարկել լուծումներ այն կրկին կյանքի կոչելու համար:

Նպատակներ՝

1. ուսումնասիրել Սուրբ Աստվածածին եկեղեցու պատմությունը,
2. հավաքել տեղեկություններ և փաստեր,
3. արժևորել ազգային հոգևոր և նյութական ժառանգությունը, ձևավորել դրա պահպանման և փոխանցման գիտակցում, պատասխանատվություն,
4. նպաստել մեղիա-որոնողական հմտությունների և S2S միջոցներով աշխատելու կարողությունների զարգացմանը:

Խնդիր դրվեց ուսումնասիրել խոնարհված եկեղեցու հիմնադրման և գործունեության պատմությունը, եկեղեցու հետ կապված ավանդություններն ու ավանդազրույցները, գյուղի հնաբնակների՝ եկեղեցու հետ կապված հուշերի և տեղեկատվական աղբյուրների հիման վրա ամբողջացնել եկեղեցու պատմաճարտարապետական համալիր պատկերը և առաջարկել լուծումներ մշակութային այդ արժեքի պահպանման ու վերականգնման համար:

Նախագծային աշխատանքը կատարվել ու ներկայացվել է հետևյալ խորագրերով.

1. Կոտայքի մարզի Բալահովիտ գյուղ. անցյալն ու ներկան:

2. Հոգևոր-մշակութային կյանքը համայնքում:

3. Սուրբ Աստվածածին եկեղեցու անվան ծագումը, հիմնադրման և գործունեության պատմությունը, ճարտարապետությունը, պահպանված բեկորները:

4. Խոսում են խաչքարերը. ձայներ անցյալից:

5. Խոնարհված եկեղեցու խորհուրդը և ուղերձը սերունդներին:

Աշխատանքներն իրականացվեցին հետևյալ քայլաշարով.

- Առաջին շաբաթ. թեմայի և առաջադրանքների քննարկում, աշխատանքի բաշխում, խմբերի ձևավորում:

- Երկրորդ շաբաթ. հետազոտության կազմակերպում՝ ըստ խմբերի: Խմբերն իրականացնում են հարցազրույցներ թեմային առնչվող անձանց հետ, կատարում թիրախային հարցումներ, ուսումնասիրություններ:

- Երրորդ շաբաթ. աշխատանքների նախնական տարբերակների ներկայացում, քննարկում, խորհրդատվություններ և առաջարկություններ:

- Չորրորդ շաբաթ. նախագծի վերջնական արդյունքների ներկայացում/շնորհանդես/, յուրաքանչյուր խումբ ձևավորում է իր թղթապանակը և աշխատանքային նյութերը, պատրաստվում ներկայացմանը:

Ձևավորվեցին աշխատանքային խմբեր՝ *բանահավաքներ, բանասերներ, պատմաբաններ, լուսանկարիչներ, մեդիագրագետներ:*

Առաջադրանքներն ըստ խմբերի՝ ուսումնասիրել տարածքը, մաքրել տապանաքարերն ու խաչքարերը աղբից և խոտածածկույթից, հանդիպում ունենալ տարածաշրջանի հոգևոր թեմի առաջնորդի, համայնքապետի հետ, կատարել

համապատասխան լուսանկարներ և ձայնագրություններ, համակարգել նյութերը, ստեղծել տեսանյութեր, ձայնվածքներ, սահիկաշարեր:

Բանահավաքները զրույցներ ունեցան գյուղի՝ եկեղեցու պատմությանը քաջածանոթ հնաբնականների հետ, որոնց հիշողություններում տակավին թարմ էին խոնարհված եկեղեցու հիշատակները: Զրույցեցին նաև նոր սերնդի ներկայացուցիչների հետ, որոնք իրենց ընտանեկան հիշողություններից տեղեկություններ հաղորդեցին եկեղեցու կյանքի մասին: Փաստահավաք աշխատանքների արդյունքում ստեղծվեց ու համակարգվեց մեծածավալ նյութ:

Բանասերներն ուսումնասիրեցին Բալահովիտ գյուղի պատմությունը, եկեղեցական կառույցների վրայի արձանագրությունները, բացահայտեցին գյուղի նախկին անվան ստուգաբանությունը (<https://www.almaany.com/en/dict/ar-en/%D9%85%D8%AD>), մշակեցին հավաքված նյութը, գրեցին հոդված, պատրաստեցին գրական-երաժշտական ինտեգրված տեսահոլովակ-կոմպոզիցիա:

Պատմաբանները տպագիր և էլեկտրոնային աղբյուրներից հավաքագրեցին Կոտայքի մարզի Բալահովիտ գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, Սուրբ Աստվածածին եկեղեցու հետ կապված տեղեկություններն ու փաստերը, նաև ցայսօր պահպանված բեկորների վերաբերյալ (<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=11757>). տարածքում կան տարբեր չափսերի ու ձևերի յոթ խաչքար, տասնութ տապանաքար, նախկին՝ Սուրբ Հովհաննես եկեղեցու սրբատաշ քարերից, ինչպես նաև սյան մույթ հիշեցնող մի քար: Շատ կարևոր է ծանոթանալ խնդիրներին, ներկայացնել եկեղեցու պատմությունը, ներկայիս կարգավիճակը:

Լուսանկարիչները կատարեցին եկեղեցու, տապանաքարերի ու խաչքարերի լուսանկարներ, նախատեսվեց ստեղծել վահանակներ՝ լուսանկարներով, որոնցում տարածքը մոլախոտերից ու աղբից մաքրելուց հետո առավել արտահայտիչ կերևան մոռացված պատմամշակութային արժեքները:

Մեդիագրագետները համակարգեցին նյութերը, ստեղծեցին տեսանյութեր, վեբ-կայք, ձայնվածքներ, սահիկաշարեր: Քարտագրեցին, դաստասեցին հավաքված նյութերը՝ նշելով աղբյուրը, հեղինակի ազգանուն-անունը, աշխատանքի խորագիրը,

վայրը, թվականը և այն կայքերը, որոնցից օգտվել են: Ամբողջական նյութը տեղադրեցին աշխատանքային պանակում՝ պարբերաբար հաշվետվություններ կայացնելով:

Նախագծի շրջանակներում աշակերտները հանդես եկան հետաքրքիր ստեղծագործական մտահղացումներով՝ միաժամանակ դրսևորելով իրենց նախասիրությունները, որը ապագա մասնագիտության ընտրության յուրահատուկ փորձ դարձավ: Ստեղծվեցին սոցիալական գովազդային հոլովակ, դպրոցի շնորհալի աշակերտների ձեռքով նկարված եկեղեցու նկարների, լուսանկարների և մանրակերտի ցուցահանդես կազմակերպվեց, ստեղծվեց գրքույկ՝ հավաքված տեղեկությամբ, նկարներով և ականատեսների հիշողություններով, աուդիո և վիդեո ձայներիցով: Մաքրվեց, բարեկարգվեց հանրային տարածքը, խնդրահարույց մի շարք հարցեր բարձրացվեցին: Աշխատանքը հանրայնացվեց, հրապարակավ ցուցադրվեց, տարածվեց էլեկտրոնային հարթակում, հասանելի դարձավ հանրությանը, առցանց քննարկվեց և մեկնաբանվեց:

Նախագծային աշխատանքի վերջնարդյունքներ՝

- ձևավորվեց ինքնուրույն և համատեղ աշխատանքի մշակույթ. աշակերտները կարողացան աշխատել թիմում, ժամկետներում տեղավորվել, պատասխանատու լինել թիմային արդյունքի համար,
- նպատակ դրեցին, պլանավորեցին իրենց քայլերը, հետազոտեցին, համագործակցեցին,
- զարգացան սովորողների ստեղծագործական, ճանաչողական, գիտելիքի ինքնուրույն ձեռքբերման կարողությունները, ձևավորվեցին քաղաքացիական պարտքի ու պատասխանատվության զգացում, նախաձեռնողականություն,
- ձեռք բերեցին տեղեկատվական տարածքում կողմնորոշվելու կարողություններ՝ դրսևորելով տեղեկատվական աղբյուրների նկատմամբ քննական և ստեղծագործական մոտեցում, տեղեկատվական գրագիտություն,
- արժևորեցին ազգային մշակութային ժառանգությունը՝ գիտակցելով ազգային արժեքների պահպանման կարևորությունը, գնահատեցին ավագ սերնդի, ընտանիքի, համայնքի դերը,

- ճանաչեցին, ըմբռնեցին, արտահայտեցին, հաղորդակցվեցին, ստեղծեցին ու մեկնաբանեցին տարբեր փաստեր ու կարծիքներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախագծային աշխատանքի շնորհանդեսը կատարվեց դպրոցում՝ համայնքի ներկայացուցիչների մասնակցությամբ: Աշխատանքը գնահատվեց ըստ սահմանված չափանիշների, որոնցում սովորողների ոչ միայն կրթական, այլև սոցիալ-մշակութային կարողունակություններն արժևորվեցին: Միջոցառման ավարտին աշակերտները խոստացան այսօրինակ աշխատանքները դարձնել ավանդույթ, ստանձնել եկեղեցու և գյուղի այլ հիշարժան վայրերի մաքրման ու պահպանման պարտականությունը, եկեղեցու տարածքում տեղեկատվական եռալեզու փոքրիկ վահանակներ տեղադրել, և միգուցե այն դառնա զբոսաշրջության գրավիչ վայր: Նախագծային աշխատանքի ուղերձը հստակ էր ու ներազդու. «Խոնարհված եկեղեցիները չեն լուր, նրանց քարերին դեռ պահպանված են շարականների աստվածային ելևէջների հնչյունները և մյուռոնի՝ անուշաբույր ու չարը հալածող բույրը, որոնք պատգամում են սերունդներին ճանաչել հոգևոր-մշակութային արժեքները և խոսեցնել ի լուր ամենքի»:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղայան Է. (1976), Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան» հրատ.:
2. Դյուի Զ. (2013), Իմ մանկավարժական դավանանքը, Երևան, «Դպիր» հրատ.,
[/https://issuu.com/susanmarkosyan/docs/john_dewey1/](https://issuu.com/susanmarkosyan/docs/john_dewey1/) դիտվել է 11.12.2023:
3. Հանրակրթության պետական չափորոշիչ/
<https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788/> դիտվել է 28.11.2023:
4. Պետական ցուցակ Հայաստանի Հանրապետության պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների. ՀՀ Կոտայքի մարզ:
[/https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=11757](https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=11757) /դիտվել է 14. 12. 2023:
5. Վարդումյան Ս. (2005), Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, Երևան, «Նոյյան տապան» հրատ.:

6. 40 սմարթ-էկրան 40 հանրակրթական դպրոցի. հայտնի են «Վիզուալ Հայաստան» զարգացման հիմնադրամի բարեգործական մրցույթ-ծրագրի հաղթողները / <https://visualarmenia.org/40-smarth-ekran-40-hanrkrthakan-dproci%E2%80%A4-haytni-en-vizual-hayastan-zargacman-himnadrami-baregortcakan-mrcuyth-tcragri-haghtoghnerh/uncategorized/> / ղիսվել է 18. 11. 2023:
7. Halpern D. (2013), [Teaching for critical thinking: A four-part model to enhance thinking skills](#). In The Teaching of Psychology (pp. 111-126). Psychology Press.
8. **Reimagining Our Futures Together (2021)**,
<https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000379707/PDF/379707eng.pdf.multi>
/ ղիսվել է 28. 11. 2023:
9. Translation and Meaning in Almaany English Arabic Dictionary
<https://www.almaany.com/en/dict/ar-en/%D9%85%D8%AD> / ղիսվել է 18. 12. 2023:

REFERENCE

1. **Aghayan E. (1976)**, Ardi hayereni bacatrakan bar'aran /Modern Armenian Explanatory Dictionary/, Yerevan, “Hayastan”.
2. **Dewey J. (2013)**, Im mankarjhan davananqy' /My Pedagogic Creed/, Yerevan, “Dpir” , Retrieved December 11, 2023 from
https://issuu.com/susanmarkosyan/docs/john_dewey1/.
3. Hanrakrt'owt'yan petakan chap'oroshich /State Standard for General Education/ RA. Retrieved November 28, 2023 from
<https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788>.
4. Petakan cowcak Hayastani Hanrapetowt'yan patmowt'yan & mshakowyt'i ansharjh howshard'aneri /State registration of immovable historical and cultural monuments/. Kotayk Province of RA . Retrieved December 14, 2023 from
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=11757>.
5. **Vardumyan S. (2005)**, Jhamanakakic mankarjhan motecowmner /Modern Pedagogical Approaches/, Yerevan, “Noyan Tapan”.

6. 40 smart'-e'kran 40 hanrakrt'akan dproci. haytni en «Vizowal Hayastan» zargacman himnadrami baregorc'akan mrcowyt'-c'ragri hagh'toghner'y' /40 smart boards to 40 public schools: Visual Armenia Development Foundation announced winner schools of charitable competition/. Retrieved November 18, 2023 from <https://visualarmenia.org/40-smarth-ekran-40-hanrakrthakan-dproci%E2%80%A4-haytni-en-vizual-hayastan-zargacman-himnadrami-baregortcakan-mrcuyth-tcragri-haghtoghnerh/uncategorized/>
7. Halpern D. (2013), [Teaching for critical thinking: A four-part model to enhance thinking skills](#). In The Teaching of Psychology (pp. 111-126), Psychology Press.
8. Reimagining Our Futures Together (2021), Retrieved November 28, 2023 <https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000379707/PDF/379707eng.pdf.multi>,
9. Translation and Meaning in Almaany English Arabic Dictionary. Retrieved December 28, 2023 from <https://www.almaany.com/en/dict/ar-en/%D9%85%D8%AD>

Грета Акопян, Софья Керопян

Проектная работа как средство развития познавательных способностей учащихся

Заключение

Ключевые слова и выражения: проектная работа, сотрудничество, познавательные способности, церковь Святой Богородицы Балаовита, навыки 21-го века, преподаватель-фасилитатор, алгоритм работы, конечные результаты обучения, компетенции.

Педагогика участия и сотрудничества актуальна для всех уровней образования, а также для всех образовательных учреждений. Сегодня одним из важнейших вопросов образования является перенос знаний в жизнь. С этой точки зрения весьма оправдана и актуальна организация работы по методу проектов.

В данной статье рассматриваются теоретические и практические вопросы

проектного обучения. Анализированы цели, принципы, формы реализации проектного обучения. Сделана попытка классифицировать типы проектной работы, сформулировать определение учебной проектной работы, указать ее особенности, детализировать роль и функции педагога в процессе проектной работы. Обоснована важность проектного обучения в рамках стандартных требований формирования компетенции учащихся 21-го века.

Описан пример проектной работы, проведённый в Балаовитской средней школе Котайкского марза. Описаны также содержание, процесс, алгоритм действия, основные направления и конечные результаты данной проектной работы. Утверждается, что проектное обучение, как образовательная технология, предполагает интеграцию психолого-педагогических, предметных и методических знаний учащихся.

Выводы: проектное обучение способствует развитию умения ставить познавательные цели и находить альтернативные пути их реализации, обеспечивает формирование информационной культуры, развитие коммуникативных способностей, гибкости, самостоятельности и уникальности мышления. Результатом реализации метода проектов, который способствует выявлению взаимосвязей элементов логики научного исследования, является развитие творческих познавательных способностей.

Greta Hakobyan, Sofya Qerobyan

Projects as a way of developing learners' cognitive abilities.

Conclusion

Key words and expressions: project work, cooperation, cognitive abilities, Holy Theotokos Church in Balahovit, skills of the 21st century, facilitator teacher, workflow, education final results, competations.

Participatory and cooperative pedagogies are relevant to all levels of education, as well as to all educational settings. Today one of the most important issues of education

is the transfer of knowledge to life. From this point of view, the organization of works in the field of education through the project method is highly justified. Theoretical and practical issues are considered in the article. The goals of project learning, ways of implementation are analyzed. We have tried to classify project works with a certain logic formulate, the definition of educational project work, point out its features, specify the role and functions of the teacher. There is also justified the importance of project-based learning of the 21st century skills within the framework of standard requirements for students' competence formation.

An example of project work implemented in Balahovit secondary School is described in detail. The content, process and structure of the work are characterized. The main points and final results are also indicated. It is justified that as a educational technology, planned learning implies the integration of learner' psychological, pedagogical, subject and methodical knowledge.

Conclusions: project-based learning contributes to the development of the ability to set cognitive goals and find alternative ways of their implementation, ensures the formation of information culture, the development of communication skills, flexibility, independence and uniqueness of thinking. The result of the implementation of the project method, which helps to identify the interrelations of the elements of the logic of scientific research, is the development of creative cognitive abilities.

Գրեալ Հակոբյան - Մանկավարժական գիտությունների թեկնածու, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ մանկավարժության ամբիոնի դոցենտ: Գիտական հետաքրքրությունները՝ անձի հոգևոր զարգացում, սովորողների գիտելիքների գնահատման նորագույն միջոցներ, ակմեոլոգիայի, ուսուցիչների վերապատրաստման արդի հիմնախնդիրներ, մանկավարժական պրակտիկայի կազմակերպման մեթոդաբանական հարցեր, կրթության փիլիսոփայության հիմնահարցեր, մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն,

Էթնոմանկավարժություն: Հեղինակ է ուսումնամեթոդական 5 ձեռնարկի և 77 գիտական հոդվածի:

hakobyangreta@gmail.com

Սոֆյա Քերոբյան - Կոտայքի մարզի Բալահովտի Ի. Վիրաբյանի անվան միջնակարգ դպրոցի հայոց լեզվի և գրականության առաջին աստիճանի տարակարգի ուսուցչուհի, Հումանիտար առարկաների մասնախմբի ղեկավար: Հեղինակ է տպագրված մեկ գիտական հոդվածի:

sofya.qerobyan@mail.ru

Грета Акопян- кандидат педагогических наук, доцент кафедры педагогики АГПУ им. Х Абовяна. Научные интересы: Духовное развитие личности, новейшие средства оценивания знаний учащихся, современные проблемы акмеологии, переподготовки учителей, методологические вопросы организации педагогической практики, вопросы философии образования, методология педагогических исследований, этнопедагогика. Является автором пяти учебно-методических пособий и 77 научных статей.

hakobyangreta@gmail.com

Софья Керобян - Учительница первой категории армянского языка и армянской литературы Балаовитской средней школы им. И. Вирабяна Котайкского марза, председатель методобъединения гуманитарных предметов. Является автором напечатанной научной статьи.

sofya.qerobyan@mail.ru

Greta Hakobyan- PhD of Pedagogical Sciences, Associate Professor, Chair of Pedagogy Kh. Abovyan ASPU. Scope of Academic Interests: Individual's spiritual development, modern means of assessing learners' knowledge, current issues in acmeology and teacher training, methodological issues in organising pedagogical internship,

philosophy of education, methodology of pedagogical research, ethnopedagogy. Author of five educational-methodological manuals and 77 scientific articles.

hakobyangreta@gmail.com

Sofya Kerobyan - A first degree category teacher of Armenian language and literature in the Secondary School of Balahovit after I. Virabyan , Marz Kotayq. The head of the department of humanities. Author of one published scientific article.

sofya.qerobyan@mail.ru

ԱՄԱԼՅԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԸՆԹԵՐՑՈՂԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ
ՈՉ ԼԵԶՎԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐՈՒՄ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v2i65.118

ԱՄՓՈՓՈՒՄ

Ընթերցանությունը լինելով խոսքային բարդ կարողություն՝ առանձնանում է իր կայունությամբ և կարող է հանդես գալ երկու հիմնական գործառույթով՝ որպես ուսուցման նպատակ և ուսուցման միջոց՝ ուղղված որպես ընթերցանության տեխնիկայի զարգացմանը: Առաջին գործառույթը կապված է ընթերցանության տեսակների տարբերակման հետ, երկրորդը ընկալվում է որպես ընթերցանության տեխնիկայի ուսուցման միջոց: Հենց տեխնիկական հմտություններն են ենթարկվում ավտոմատացման և ապահովում տեքստի բովանդակության փաստացի ընկալումը:

Ինչպես նշում է Ս.Կ.Ֆոլոմկինան, տեխնիկական հմտությունները ենթարկվում են ավտոմատացման և գրաֆիկական պատկերների հարաբերակցության արդյունքում ապահովում տեղեկատվության իմաստային վերամշակումը, այլ կերպ ասած՝ տեսողական ազդանշանները վերակոդավորվում են իմաստային միավորների և տեղի է ունենում իմաստային կապերի հաստատում (Фоломкина С., 1982):

Տեքստի ընկալման բնույթը էական դեր է խաղում և կախված է ընթերցանության նպատակից, ինչն էլ կանխորոշում է ընթերցանության կոնկրետ տեսակի ուսուցման համապատասխան ռազմավարության ընտրությունը:

Բանալի բառեր և արտահայտություններ. լեզվական-հաղորդակցական իրազեկություն, տեղեկատվություն, ընկալում, ընթերցանություն, թռուցիկ ընթերցանություն, ընդհանուր բովանդակությանը ծանոթացնող ընթերցանություն, մանրակրկիտ ընթերցանություն, որոնողական ընթերցանություն, ընթերցանության տեխնիկա

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ընթերցանությունը որպես խոսքային գործունեության ռեցեպտիվ գրավոր տեսակ՝ հաղորդակցման ամենակարևոր տեսակներից մեկն է:

Ընթերցանության հոգեբանաֆիզիոլոգիական էությունը կազմում են ընկալումը և տեղեկատվության ըմբռնումը, որոնք հիմնվում են ընթերցողի լեզվական երևույթների գրաֆիկական պատկերների վրա:

Ըստ մեթոդիկայում ընդունված մոտեցումների՝ կարելի է բաժանել ռեցեպտիվ կարողություններն ու հմտությունները երկու խմբի՝

ա/ տեքստի պերցեպտիվ վերամշակումն ապահովող հմտություններ և կարողություններ, գրաֆիկական նշանների ընկալումն ու դրանց հարաբերակցումը որոշակի նշանակությունների հետ, տեսողական ազդանշանի գուգորդումը համապատասխան իմաստի հետ:

բ/ տեքստում հաղորդվող ինֆորմացիայի իմաստավորումն ապահովող հմտություններ և կարողություններ, տարբեր լեզվական միավորների միջև իմաստային կապերի հաստատում (**Աստվածատրյան Մ., 1985**):

Առաջին խմբի կարողությունները կազմում են ընթերցանության տեխնիկան, իսկ երկրորդը՝ տեքստի բովանդակության ընկալումը:

Լուր ընթերցանությունն ուսուցման նպատակն է, իսկ բարձրաձայնը՝ ուսուցման միջոց /բանավոր խոսքի զարգացման, լեզվական նյութի ամրապնդման, արտասանական հմտությունների ձևավորման և այլն/: Հույժ կարևորվում է այն թեզը, որ իմաստային ինֆորմացիա ստանալու համար պետք է դիմել լուր ընթերցանությանը, իսկ ընթերցանության տեխնիկան զարգացնելիս՝ թե՛ բարձրաձայն և թե՛ լուր: Այստեղից բխում է մեթոդական կարևոր եզրակացությունը. տեքստին առաջին անգամ պետք է ծանոթանալ սոսկ լուր ընթերցանությամբ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտության մեթոդաբանության հիմքում ուսուցման **անձնակենտրոն մոտեցումն է**, ըստ որի՝ պետք է հաշվի առնել սովորողի անհատական, հոգեբանական, տարիքային առանձնահատկությունները,

պահանջներն ու հետաքրքրությունները՝ զարգացնելով սովորողի ստեղծագործական ընդունակությունները և ձևավորելով նրա ինքնավարության, ինքնակառավարման և ինքնաստուգման կարողությունները:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Օտար լեզվի դասավանդման նպատակը ոչ լեզվական բուհում լեզվական-հաղորդակցական կարողությունների ձևավորումն ու զարգացումն է: Հաղորդակցական նպատակներն իրականացնելու համար սովորողը պետք է համատեղի իր ընդունակությունները լեզվական-հաղորդակցական կարողությունների հետ:

Հիմնվելով Եվրախորհրդի կողմից մշակված «Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ» աշխատության վրա՝ դիտարկենք «լեզվական-հաղորդակցական իրազեկություն» հասկացությունը, որը, ինչպես նշված է ԼԻԻՀՀ-ում, իր մեջ ներառում է մի շարք բաղադրիչներ՝ լեզվական, հանրալեզվաբանական և գործաբանական:

Լեզվական իրազեկությունն (linguistische Kompetenz) ընդգրկում է գիտելիքներ և կարողություններ բառապաշարի, հնչյունաբանության, քերականության, ուղղախոսության մասին: Այն ներառում է նաև լեզվական համակարգի այլ առանձնահատկությունները՝ անկախ դրանց տարբերակների սոցիալ-լեզվաբանական արժեքից և կիրառման գործաբանական դերից, որն առնչվում է ոչ միայն գիտելիքների ծավալին ու որակին, այլ նաև այդ գիտելիքների պահպանման ձևերին և ճանաչողական տեսանկյունից դրանց կազմակերպմանը (**Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ, 2005**):

Հանրալեզվաբանական իրազեկությունը (soziolinguistische Kompetenz) ներառում է լեզվի օգտագործման սոցիալական ասպեկտին առնչվող գիտելիքներն ու ունակությունները: Սոցիալ-մշակութային բաղադրիչը (քաղաքավարության կանոններ և նորմեր, հաղորդակցման ռեգիստրի տարբերություններ, բարբառ և խոսվածք) կարող է իր ազդեցությունն ունենալ այլ մշակույթների ներկայացուցիչների հաղորդակցության վրա (**Gemeinsamer europäischer**

Referenzrahmen für Sprachen, 2020):

Գործաբանական իրազեկությունը (pragmatische Kompetenz) առնչվում է լեզվական գործառույթի իրականացման, խոսքային ակտի գործառական կիրառմանը, ինչպես նաև խոսույթի ստեղծման կարողություններին, տեքստի կապակցելիությանը (cohesion/Kohäsion) և իմաստային կապին (coherence/Kohärenz), տեքստի տեսակների ճանաչմանը: Գործաբանական իրազեկության ձևավորման վրա մեծապես ազդում են հասարակական փոխներգործությունն ու այն մշակութային միջավայրը, որտեղ ձևավորվում են անձի որոշակի ունակությունները (**Gemeinsamer europäischer Referenzrahmen für Sprachen, 2020**) :

Լեզուներ սովորողի հաղորդակցական կարողունակությունը դրսևորվում է խոսքային գործունեության տարբեր ձևերում, ներառյալ ընկալումը, վերարտադրումը, փոխներգործությունը կամ միջնորդավորված գործունեությունը: Ըստ էության, խոսքային գործունեության հիմքը կազմում են գրավոր և բանավոր ընկալումն ու վերարտադրումը:

Ինչպես նշվեց, ընկալողական գործունեությունն ու ռազմավարությունը ներառում են ունկնդրելու և ընթերցելու գործողությունները: Մեր աշխատանքում մենք կանդրադառնանք միայն ընթերցանությանը՝ որպես ռեցեպտիվ խոսքային գործունեության:

Ընթերցանության ընթացքում սովորողը ձեռք է բերում տեքստում առկա տեղեկատվությունը: ԼԻԻՀՀ-ում տարբերակված են ընթերցանության հետևյալ տեսակները.

- ընթերցանություն՝ ընդհանուր կողմնորոշման համար (Leseverstehen zur allgemeinen Orientierung),
- ընթերցանություն՝ տեղեկատվություն ստանալու համար (Lesen, um Informationen aufzunehmen),
- ընթերցանություն՝ ըստ հրահանգի (Anweisungen lesen und befolgen),
- ընթերցանություն՝ հաճույքի համար (Lesen zur Unterhaltung) (**Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ, 2005**):

Տեքստն ընթերցելու համար սովորողը պետք է կարողանա.

- ընկալել տեքստը (տեսողական կարողություններ),

- ճանաչել տառատեսակը (ուղղագրական կարողություններ),
- ճանաչել և ըմբռնել տեղեկատվությունը (լեզվական և իմաստաբանական կարողություններ),
- մեկնաբանել տեղեկատվությունը (իմացական կարողություններ) **(Լեզուների իմացության/իրագրելության համաեվրոպական համակարգ, 2005) :**

Անդրադառնալով ընթերցանության տեսակների դասակարգման սկզբունքներին:

Մասնագիտական գրականության մեջ ընթերցանության տեսակների դասակարգման վերաբերյալ մոտեցումներն ու սկզբունքները տարբեր են: Այսպես օրինակ՝ ընթերցանության տեսակների դասակարգման ժամանակ ընդգծվում է կամ ընթերցածը *հասկանալու գործընթացի բաղադրիչներից մեկի գերակշռումը* (վերլուծական – համադրական, թարգմանական – ոչ թարգմանական), *կամ լեզվական նյութի ուղղությամբ տարվող աշխատանքի բնույթը* (ինտենսիվ – էքստենսիվ, նախապատրաստված – հանապատրաստից):

Ինչպես նշվում է մեթոդական գրականության մեջ, ընթերցանության գործընթացի վրա ազդող գործոններից կարևոր նշանակություն ունեն երկուսը՝
 ա) *տեքստից ստացած տեղեկատվությունում կողմնորոշվելու կարողությունը*,
 բ) *ստացած տեղեկատվության ամբողջականության և ճշգրտության աստիճանի որոշումը* (Фоломкина С., 1982):

Հաշվի առնելով վերը նշված չափանիշները՝ օտար լեզուների դասավանդման մեթոդիկայում առանձնացվում են ընթերցանության հետևյալ հիմնական տեսակները՝

- թռուցիկ (orientierendes/sortierendes Lesen),
- ընդհանուր բովանդակությանը ծանոթացնող (kursorisches/globales Lesen),
- մանրակրկիտ (totales/detailliertes Lesen)
- որոնողական (selektives/suchendes Lesen) **(Buhlman R., A. Fearn, 2000) :**

Ընթերցանության վերը նշված տեսակները տարբերվում են տեքստի բովանդակության ըմբռնման արդյունքով: Անգլերենի և ֆրանսերենի ընթերցանության արագությունը կազմում է միջինում 180-190 բառ/րոպեում, իսկ գերմաներենի արագությունը 140-150 բառ՝ ի տարբերություն ծանոթացնող

ընթերցանության, որի ժամանակ ընթերցանության արագությունը ոչ պակաս է, քան 40-50 բառ/րոպեում:

Տվյալ դասակարգումն ունի որոշ առավելություններ, քանզի ստույգ արտացոլում է ընթերցողի նպատակները և անմիջականորեն կապված է հաղորդակցական մտադրության ճշգրտման հետ:

Անդրադառնանք ընթերցանության յուրաքանչյուր տեսակի վերլուծությանը՝ հիմնվելով ժամանակակից մեթոդական հետազոտություններում արված մեկնաբանությունների վրա:

Թռուցիկ ընթերցանություն (orientierendes/sortierendes Lesen)

Թռուցիկ ընթերցանության նպատակը տեքստի բովանդակությունից ընդհանուր տեղեկություններ ձեռք բերելն է: Այսինքն, կարդացողն ինքն է որոշում, թե արդյոք իրեն պետք է այդ հոդվածը կամ գիրքը, կամ հետաքրքրի՞ր է արդյոք տեքստում պարունակվող տեղեկատվությունը: Այս դեպքում բավական է կարդալ վերնագրերը կամ ենթավերնագրերը, առանձին նախադասություններ կամ պարբերություններ: Ընթերցանության այս տեսակը սովորողից պահանջում է հատուկ կարողություններ և հմտություններ և, անշուշտ, լեզվական նյութի որոշակի ծավալի տիրապետում:

Ելնելով նշված նպատակից կարող ենք եզրակացնել, որ տեղի է ունենում ընտրովի ընթերցանություն: Եվ չնայած դեռևս վերջնականորեն սահմանված չեն թռուցիկ ընթերցանության արագության չափանիշները, այնուամենայնիվ ընդունված է թույլտալ 500-600 բառ (Աստվածատրյան Մ., 1985):

Թռուցիկ ընթերցանության կարողությունների զարգացման համար օգտագործվում են տարբեր հնարներ, օրինակ՝ որոշել, թե ինչի մասին է տեքստը (նամակը, հոդվածը, հաղորդագրությունը), որոշել գրքի կամ ամսագրի հոդվածների թեմատիկան, եփնթաղրվող բովանդակությունը: Եվ այս առաջադրանքների կատարման համար, իհարկե, նախընտրելի է գտնել այնպիսի տեքստեր, որոնց վերնագրերը չեն հուշում բովանդակությունը:

Ընդհանուր բովանդակությանը ծանոթացնող ընթերցանություն (kursorisches/globales Lesen)

Ընդհանուր բովանդակությանը ծանոթացնող ընթերցանությունն իր բնույթով տարբերվում է ընթերցանության մյուս տեսակներից: Այն ամենասահուն տեսակն է, ընթանում է արագ տեմպով, քանի որ ընթերցողը պետք է կարդա ամբողջ տեքստը: Այս դեպքում նրա նպատակն է ծանոթանալ տեքստի բովանդակությանը, հասկանալ տեքստում ամփոփված տեղեկատվությունը, պարզել շոշափվող հարցերն ու դրանց լուծման եղանակները: Նման դեպքում ուշադրությունը կենտրոնանում է գործողությունների զարգացման և հիմնական տեղեկատվության վրա: Ընդհանուր բովանդակությանը ծանոթանացնող ընթերցանությունը, ինչպես նշում է Ժ. Վիտկովսկայան, ենթադրում է ընտրովի մոտեցում, այսինքն՝ սովորողը պետք է կարողանա առկա տեղեկատվության մեջ տարբերակել գլխավորը երկրորդականից, էականը՝ ոչ էականից (**Витковская Ж., 1975**):

Ընթերցանության այս տեսակն ամենատարածվածն է: Ուսանողների ընթերցանության արագությունը կազմում է մոտավորապես 250-300 բ/ր:

Մանրակրկիտ ընթերցանություն (totales/detailliertes Lesen)

Մանրակրկիտ ընթերցանությունը պահանջում է սկզբունքորեն այլ մոտեցում: Այստեղ ընթերցվող նյութի բովանդակության ընկալման աստիճանը պետք է կազմի 100%: Այսինքն, ընթերցանության այս տեսակը ենթադրում է բովանդակության ամբողջական, մանրակրկիտ ընկալում: Ուստի շատ կարևոր է, որպեսզի տեքստում հաղորդվող և ընթերցողի կողմից ընկալվող տեղեկատվությունը միմյանց համապատասխանեն: Եվ չնայած ընթերցանության այս տիպի համար ժամանակի գործոնը վճռորոշ չէ, այնուամենայնիվ, ըստ վիճակագրական տվյալների՝ վերջինիս նվազագույն ծավալը ժամանակային առումով կազմում է 1 րոպեում 50-60 բառ, իսկ առավելագույնը՝ 130-150 բառ:

Մանրակրկիտ ընթերցանության ժամանակ հնարավոր է նաև անդրադարձ կատարել տեքստի որոշ հատվածներին և լեզվական նյութին, հատկապես նախադասության կամ տեքստի այն հատվածներին, որոնք դժվարություն են ներկայացնում, սովորողի կողմից ճիշտ չեն ընկալվում: Այդպիսի հատվածները ենթարկվում են բառապաշարային կամ քերականական մանրագնին վերլուծության: Իհարկե, դժվարությունները հաղթահարելիս պետք է գնալ լեզվական ձևերի

վերլուծությունից դեպի տեքստի բովանդակության ընկալում: Ընթերցանության ընթացքում օգտագործվող լեզվական նյութի մտապահումն ապահովում է լեզվական դրական փորձի աստիճանական կուտակում, որը բանավոր և գրավոր խոսքի ընկալման անհրաժեշտ պայմանն է: Ընթերցանության ընթացքում տեքստերի վերլուծվող միավորները տարբեր համատեքստերում ենթարկվում են բազմակի անդրադարձ-կրկնության, հենց դրանով է պայմանավորված սովորողների կողմից համապատասխան միավորների իմաստային սահմանների և դրանց գործածության կանոնների գիտակցաբար ճշտորոշումը:

Քանի որ, ինչպես արդեն նշվել է, ընթերցանության այս տեսակի նպատակը հաղորդվող ամբողջ տեղեկատվությունը ճշգրիտ հասկանալն է, ուստի այն կարող է ընթանալ նյութի կամ անհրաժեշտ հատվածների վերընթերցմամբ:

Որոնողական ընթերցանություն (selectives/suchendes Lesen)

Որոնողական ընթերցանության նպատակն անձանոթ տեքստում ընթերցողի կողմից նախապես որոշված կոնկրետ տեղեկություններ, փաստեր որոնելն է: Այն տարբերվում է թռուցիկ ընթերցանությունից վերջնարդյունքով, քանի որ ընթերցանության այս տեսակն ուղղված է տեքստում կոնկրետ տեղեկատվության որոնմանը:

Մենք լիովին ընդունում ենք Ս.Կ. Ֆոլոմկինայի այն տեսակետը, որ գործնականում ընթերցանության տեսակների դասակարգման հարցում կիրառվում է երկու հիմնական չափանիշ՝ բովանդակությունը լիարժեք հասկանալու աստիճանը, որն ապահովում է գործունեության արդյունքը, և ընթերցանության արագությունը, որը չափվում է թույլտվող կարդացվող բառերի քանակով և հանդես է գալիս որպես տեխնիկական հմտությունների ավտոմատացման աստիճանի ցուցանիշ:

Ընթերցանությունը, որպես խոսքային գործունեության ռեցեպտիվ տեսակ, հաղորդակցման կարևորագույն միջոցներից մեկն է, որի *նպատակը տեքստի ընկալումն ու իմաստավորումն է*:

Մեթոդական գրականության մեջ առանձնացվում են տեքստի բովանդակության ընկալման և իմաստավորման հետևյալ կարգերը՝

ա) տեքստի պերցեպտիվ վերամշակումը,

բ) հմտություններ և կարողությունների ձևավորումը, որոնք ապահովում են տեղեկատվության իմաստավորումը (Աստվածատրյան Մ., 1985):

Ինչպես նշվում է օտար լեզուների դասավանդման մեթոդիկայում, առաջին խմբի հմտությունները և կարողությունները կազմում են *ընթերցանության տեխնիկան*, իսկ երկրորդը՝ *բովանդակության ընկալումը* (հղում՝ նույն տեղում):

Ընթերցանության տեխնիկան լեզվական տեղեկատվության ընկալման և վերամշակման (գրաֆիկական նշաններ, տառակապակցություններ, քերականական հատկանիշներ, տառահնչյունային կապերի ստեղծում, ընթերցանության դաշտի ընդլայնում և այլն) նախադրյալն է: Այստեղ կարևոր է նշել այն հանգամանքը, որ ընթերցանության տեխնիկայի ձևավորումը կարող է ընթանալ թե՛ բարձրաձայն, թե՛ լուռ ընթերցանությամբ, իսկ իմաստային տեղեկատվության ընկալումը՝ հիմնականում լուռ ընթերցանությամբ:

Ընթերցանության տեխնիկան պարունակում է՝

ա/ լեզվական նիշերի ընկալում և իմաստավորում /տառահնչյունային կապերի ստեղծում/ ,

բ/ լեզվական նիշերի շղթան ընդգրկելու հմտություն /ընթերցանության դաշտ/,

գ/ կարճ դադարներ կատարելու ունակություն:

Ընթերցանության գործընթացն անփոփոխ չէ: Այն պայմանավորված է ընթերցանության նպատակով, այսինքն՝ կարող է փոխվել ըստ նպատակի: Յուրաքանչյուր դեպքում գործընթացի պերցեպտիվ և իմաստային կողմերը գործում են փոխկապակցված:

Այսպիսով, կարող ենք նշել, որ ընթերցանությունը բարդ, վերլուծական, ընկալողամտածական գործունեություն է, որի ընթացքը պայմանավորված է ընթերցանության նպատակադրումով: Վերջինս կայանում է, եթե սովորողի մոտ ձևավորվում են իմաստի ընկալման համապատասխան կադապարներ, ինչպես նաև լեզվական նյութի տիրապետման մեխանիզմներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ընթերցանությունը բնորոշվում է որպես ընկալողամտածական գործունեություն, որի ընթացքն ունի վերլուծահամադրական բնույթ և պայմանավորվում է ուսուցման նպատակով:
2. Ընթերցանության նպատակը պայմանավորում է նրա ընթացքը: Ըստ նպատակի ընթերցողը տեքստն ընկալում է մեծ կամ փոքր հատվածներով, տեսողական պատկերների և ներքին խոսքի ընդլայնվածությամբ կամ սեղմությամբ:
3. Ընթերցանությունը ուսուցվում է որպես խոսքային գործունեություն: Այն անհրաժեշտ է դիտել որպես գործունեություն, որի ընթացքում սովորողները լուծում են հաղորդակցական տարբեր խնդիրներ:
4. Ուսումնական գործընթացում տեքստի ընթերցումը միշտ պետք է հանդես գա որպես հաղորդակցման կոնկրետ դրսևորում, որն ուղղված է ընթերցանական կարողությունները տվյալ աստիճանին համապատասխան մակարդակով զարգացնելուն:
5. Բովանդակությունը հասկանալու պրոցեսը ղեկավարվում է առաջադրանքի օգնությամբ, որը տրվում է սովորողներին տեքստն ընթերցելուց առաջ և կարդացածի բովանդակության հասկանալն ստուգելու ժամանակ: Այդ պատճառով շատ կարևոր է, որ և՛ առաջադրանքը, և՛ հասկանալ ստուգելու եղանակը համապատասխանեն միմյանց և ուսուցանվող ընթերցանության տեսակին:

Համառոտագրություններ

ԼԻԻՀՀ - Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ

GER - Gemeinsamer europäischer Referenzrahmen für Sprachen

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աստվածատրյան Մ. (1985), Օտար լեզուների դասավանդման մեթոդիկա, Երևան, «Լույս»:
2. Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ (2005), Ուսումնառություն, դասավանդում, գնահատում, Երևան, «Նորք գրատուն»:

3. *Витковская Ж. (1975), Методические требования к тестам для проверки уровня владения ознакомительным чтением на иностранном языке. Автореф. дисс. канд. пед. Наук, Москва.*
4. **Փոլոմկինա Ս. (2005),** Обучение чтению на иностранном языке в неязыковом вузе, Москва, “Высшая школа”.
5. **Փոլոմկինա Ս. (1982),** Методика обучения иностранным языкам в средней школе, Москва, “Высшая школа”.
6. **Buhlmann R., Fearn A. (2000),** Handbuch des Fremdsprachenunterrichts: Unter besonderer Berücksichtigung naturwissenschaftlich-technischer Fachsprachen. Narr Studienbücher.
7. **Gemeinsamer europäischer Referenzrahmen für Sprachen (2020),** lehren, lernen, beurteilen. Begleitband. Council of Europe, Straßburg, Ernst Klett Sprachen.

REFERENCES

1. **Astvatsatryan M. (1985),** O'tar lezowneri dasavandman met'odika /Methodology of Foreign Languages Teaching/, Yerevan, “Luys”.
2. **Lezowneri imacowt'yan/irazekowt'yan hamaevropakan hamakarg /[Common European Framework of Reference for Languages: Learning/, Teaching, Assessment](#) (2005),** Yerevan, “Nork”.
3. **Vitkovskaya Dsh. (1975),** Metodicheskiye trebovaniya k testam dlya proverki urovnya vladeniya oznakomitel'nym chteniyem na inostrannom yazyke /Methodological Requirements for Tests to Check the Level of Proficiency in Introductory Reading in a Foreign Language/. Author's abstract. diss. Ph.D., Москва.
4. **Folomkona S. (2005),** Obucheniye chteniyu na inostrannom yazyke v neyazykovom vuze /Teaching Reading in a Foreign Language at a non-language University/, Moskow, “Higher School”.
5. **Folomkona S. (1982),** Metodika obucheniya inostrannym yazykam v sredney shkole /Methodology of Foreign Language Teaching at Secondary Schools/, Moskow, “Higher School”.

6. Buhlmann R., Fearn A. (2000), Handbook of Foreign Language Teaching: With special Consideration of scientific and technical specialised Languages. Narr Study Books.
7. [Common European Framework of Reference for Languages \(2020\), Learning, Teaching, Assessment](#). Council of Europe, Strassburg, Ernst Klett Sprachen.

Амалия Петросян

Формирование навыка чтения студентов неязыковых вузов

Заключение

Ключевые слова и фразы: лингво-коммуникативная компетентность, информация, восприятие, чтение, просмотровое чтение, ознакомительное чтение, изучающее чтение, поисковое чтение, техника чтения.

1. Чтение является познавательно-мыслительной деятельностью аналитического характера и определяется целью обучения.
2. Цель чтения регулирует его процесс. В зависимости от цели читатель воспринимает текст большими или малыми дозами с расширением или свертыванием зрительных образов и внутренней речи.
3. Чтение обучается как устно-речевая деятельность. Процесс восприятия информации рассматривается как деятельность, в ходе которой учащиеся решают различные коммуникативные задачи.
4. В учебном процессе чтение текста всегда должно выступать как конкретное проявление опосредованного общения, направленное на развитие способностей учащихся на уровне, соответствующем на конкретном этапе, соответствующем данному уровню.
5. Процесс понимания содержания текста обусловлен заданием, которое дается обучающимся перед чтением текста и при понимании содержания прочитанного. По этой причине очень важно, чтобы и задание, и метод проверки понимания соответствовали друг другу и типу преподаваемого предмета.

Amalya Petrosyan

Formation Students' Reading Skills at the Non Linguistic Faculty

Conclusion

Key words and expressions: *linguistic communicative competence, information, perception, reading, skimming reading, reading for gist, exploring reading, exploratory reading, reading techniques*

1. Reading is a cognitive thinking activity of an analytical nature and is determined by the purpose of teaching.
2. Purpose of reading regulates its process. Depending on the purpose, the reader perceives the text in large or small doses with expansion or collapse of visual images and inner speech.
3. Reading is taught as an oral-speech activity. The process of comprehending information is seen as an activity in which learners solve various communicative tasks.
4. In the learning process, reading a text should always act as a concrete manifestation of mediated communication aimed at developing students' abilities at a specific stage appropriate to a given level.
5. The process of content comprehension is determined by the task given to the students before reading the text and when they understand the content of the text. For this reason, it is very important that both the task and the method of checking comprehension are appropriate to each other and to the type of subject being taught.

Ամալյա Պետրոսյան – Խ. Արուստյանի անվան ՀՊՄՀ Ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս, մանկ.գիտ. թեկնածու: Գիտական հետաքրքրությունները՝ օտար լեզուների դասավանդման մեթոդիկա: Հեղինակ է շուրջ 15 հոդվածի: petrosyanamalya47@aspu.am

Амалия Петросян – Преподаватель кафедры романо-германских языков и методики преподавания иностранных языков АГПУ им. Х. Абовяна, кандидат педагогических наук. Сфера научных интересов: методика преподавания иностранных языков. Автор около 15 статей. petrosyanamalya47@aspu.am

Amalya Petrosyan - Lecturer of the Chair of Romance and Germanic Languages and Teaching their Methodology at the Kh. Abovyan ASPU. Scientific interests: Methodology of Foreign Languages Teaching. About 15 scientific articles. petrosyanamalya47@aspu.am

ԱՐԳԱՐ ԴՊԻՐ ԹՈՒԱԹԵՑՈՒ ՏՊԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԿՐԹԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v2i65.111

ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն հոդվածում քննել ենք Արգար Դպիր Թոխաթեցու տպագրական գործն ու վերջինիս կրթական արժեքը: Անդրադառնալով նրա տպագրած գրքերին՝ դրանք դիտարկել ենք իբրև Հակոբ Մեղապարտի սկսած տպագրական գործի շարունակություն, և Արգար Դպիր Թոխաթեցու ծավալված գործունեությունը գնահատել մշակութաբանական, կրթական, սոցիալական, քաղաքական գործառնականության տեսանկյունից՝ նախևառաջ կարևորելով մեր հոդվածի բուն նպատակադրումը՝ կրթական արժեքի վերահանումը: Այն փաստը, որ Արգար Դպիր Թոխաթեցու տպագրած գրքերի մեծ մասը մեզ չի հասել կամ հասել է թերություններով ու պակասություններով, կամ դրանց մասին կարելի է գաղափար կազմել միայն ականատեսների նկարագրություններով ու տարբեր վկայություններով, փոքր-ինչ խոչընդոտում է որոշ հարցերի, մանավանդ՝ հայ գրականության ընդգրկումների ամբողջական վերլուծության հնարավորությունը: Մյուս կողմից՝ քանի որ Արգար Դպիր Թոխաթեցին Հակոբ Մեղապարտի սկսած տպագրական գործի շարունակողն էր ոչ միայն բուն առումով, այլև գործառնական ամենատարբեր հատույթների ընդգրկման, գաղափարական, կրթական տեսանկյունից, ապա հայ գրատպության արշալույսի այդ երկու նշանավոր գործիչների տպագրած գրքերի զուգադրմամբ՝ երբեմն հնարավոր է որոշակի ամբողջականություն ապահովել պատկերացումների ու սկզբունքների տեսանկյունից: Պետք է ընդգծել, որ այս ժամանակաշրջանում տպագրված կամ հրատարակված գրքերը նախևառաջ հատկանշվել են բարձր գործառնականությամբ, ոչ մի գիրք ինքնանպատակ կերպով լույս չի տեսել: Արգար Դպիր Թոխաթեցու տպագրական գործը, իր հերթին, ավելի ընդարձակեց հայ գրքի

գործառնականությունն ու բարձրացրեց վերջինիս կրթական, ուսումնական արժեքը: Ուստի, այս ժամանակահատվածի հայ գրատպության գրեթե յուրաքանչյուր փաստ, անկախ այն բանից՝ պահպանվել է, թե ընդամենը հիշատակված կամ նկարագրված է, դիտարկելի է մշակութային և կիրառական լայն համատեքստում:

Բանալի բառեր և արտահայտություններ. գրատպություն, գործառնականություն, կրթություն, ժանր, համատեքստ, հասցեականություն, միջնադարյան գրականություն, սկզբնավորում:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հակոբ Մեղապարտով սկսված հայ տպագրության պատմությունը, որը, ինչպես մեկ այլ առիթով նկատել ենք, իրավամբ կարելի է նաև *հայ գրականության տպագիր պատմության* սկիզբ համարել (Մելքումյան Բ., 2024), շարունակվեց Աբգար Դպիր Թոխաթեցու տպագրական ու հրատարակչական գործունեությամբ: Ժամանակին բանասիրության մեջ բազմիցս վիճարկվել է այս երկու նշանավոր գործիչների, այսպես ասած, առաջնահերթության ու ժամանակագրության, նույնն է՝ սկզբնավորողի հարցը (Իշխանյան Ռ., 2012), սակայն նորագույն հետազոտությունները այդ խնդիրը լուծել են վերջնականապես:

Ուստի, Աբգար Դպիր Թոխաթեցու տպագրական-հրատարակչական գործունեությունը, այլ հատույթներից զատ, պետք է գնահատել և արժևորել նաև Հակոբ Մեղապարտի սկսած գործի շարունակության, այլ խոսքով՝ ավանդույթի զարգացման տեսանկյունից: Մանավանդ որ այս պարագայում ևս հանգում ենք այն կարևոր եզրահանգմանը, որ թե՛ Հակոբ Մեղապարտի, թե՛ Աբգար Դպիր Թոխաթեցու, և ընդհանրապես հայ գրատպության արշալույսին գործունեություն ծավալած մյուս գործիչների տպագրած կամ հրատարակած գրքերը նախևառաջ հատկանշվել են գործառնականության ռեալ գիտակցությամբ ու բավական բարձր մակարդակով: Այլ խոսքով՝ դա կարելի է ձևակերպել այսպես, որ առաջին գրքերի տպագրությունը եղել է նպատակային:

Ահա այս հանգամանքն է մղում նաև հայ գրատպության գրեթե եղած

փաստերը, անկախ այն բանից, պահպանվել են դրանք, թե ընդամենը հիշատակված կամ նկարագրված են, դիտարկել մշակութային և գործառնական լայն համատեքստում: Մասնավորապես, սույն հոդվածի պարագծում կանդրադառնանք Արգար Դպիր Թոխաթեցու տպագրած գրքերի կիրառությանը ու հատկապես դրանց այն խնդիրներին, որոնք վերաբերում են ուսումնական, կրթական հարցերին, հայոց լեզվի և հայ գրականության ընդգրկումներին:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտությունը կատարվել է պատմական, համեմատական և վերլուծական, մեթոդների կիրառմամբ:

ՔՆՆԱԼԿՈՒՄ

Բավական ժամանակ հայ բանասիրության մեջ տիրապետած այն կարծիքը, թե Արգար Դպիր Թոխաթեցին է հայ առաջին տպագրիչը և նրա՝ 1565 թվականին տպագրած «Մաղմոսարանը» հայերեն առաջին տպագիր գիրքն է, որոշակիորեն այլ պատկերացում է ձևավորել հայերեն առաջին տպագիր գրքերում հայ գրականության նպատակադրման, դրանց ժանրային, թեմատիկ, բովանդակային առաջնահերթությունների մասին:

Ճիշտ է, մեծ հաշվով, Հակոբ Մեղապարտի ու Արգար Դպիր Թոխաթեցու տպագրած գրքերը հիմնական առումով նշված հատույթներում մեծ տարբերություններ երևան չեն բերում, այնուամենայնիվ, նշենք, որ *շարունակող* կամ *զարգացնող* լինելը բոլորովին այլ վերլուծելի երևույթներ է հանդես բերում, *սկզբնավորողը*՝ բոլորովին այլ:

Մանավանդ, որ Հակոբ Մեղապարտի տպագրած առաջին գրքի և Արգար Դպիր Թոխաթեցու տպագրած առաջին գրքի միջև մոտ կեսդարյա սահմանափաժան է, ինչը բավական մեծ ժամանակահատված է հասարակական ճաշակի, զարգացման, մտածողության փոփոխության, կիրառականությանն էլ ավելի հստակեցման առումով: Տրամաբանորեն պետք է արդեն որոշակի տարբերություններ արձանագրվեին, այսպես կոչված, հասցեականության, ինչպես նաև՝ հասցեատիրոջ

սպասելիքների ու պահանջարկի տեսանկյունից: Մյուս կողմից՝ չափազանց կարևոր են տվյալ ժամանակահատվածի հասարակական-քաղաքական իրավիճակը, տրամադրություններն ու սպասելիքները:

Ուստի, ժամանակին հանգամանորեն քննարկված այն հարցը, թե որն է առաջին հայատառ տպագրությունը, և ով է հայ առաջին տպագրիչը, այս համատեքստում մշակութային-պատմական և բանասիրական խնդիր լինելուց զատ կարևորվում է, այսպես կոչված՝ ժամանակագրության տեսանկյունից:

Գրականագետ Վարդան Դերիկյանը բավական փաստառատ վերլուծություններով խոր կապ ու նաև խորհրդանշականություն է տեսնում Հակոբ Մեղապարտի և Աբգար Դպիր Թոխաթեցու տպագրական գործունեության և դրանց՝ հենց Վենետիկ և Հռոմ քաղաքներում ծավալելու փաստի մեջ: Անդրադառնալով «Թուղթ սիրոյ եւ միաբանութեան» անվանվող «Դաշանց թղթին» և մանրամասն ներկայացնելով դրանց պատմական ակունքները, Վարդան Դերիկյանը գրում է. «Դաշնության այս թուղթը քանի որ կնքվել էր Հռոմում, հավերժական քաղաքի հետ էին կապվում և հայ ազատագրական մտքի ակնկալիքները, իսկ 16-րդ դարում Հռոմի զինական ուժն էլ արտահայտվում էր Վենետիկի միջոցով, ուստի այս դարի տպագրության երկու կենտրոններն են դառնում Հռոմը և Վենետիկը» (Դերիկյան Վ., 2012):

Այս հանգամանքն իսկ, նկատի առնելով նաև Սուրբ Էջմիածնի 1547 թվականի խորհրդածողովն ու Աբգար Դպիր Թոխաթեցու ըստ ամենայնի՝ քաղաքական գործունեությունը (Դերիկյան Վ., 2012, այդ մասին ավելի մանրամասն Իշխանյան Ռ., 2012, Լևոնյան Գ., 1958), վկայությունն է և՛ նրա, և՛ Հակոբ Մեղապարտի տպագրական գործի կոնկրետ նպատակադրման մասին:

Հայտնի է, որ Հակոբ Մեղապարտը տպագրել է 5 գիրք՝ «Ուրբաթագիրք» (1512), «Պատարագատետր» (1513), «Աղթարք» (1513), «Պարգատումար» (1513), «Տաղարան» (1513): Աբգար Դպիր Թոխաթեցու տպագրած գրքերն են՝ Հռոմում՝ «Խառնայփնթուր տումարի գեղեցիկ և պիտանի» օրացույցը (1565), «Սաղմոսարան» (1565), այնուհետև՝ Կոստանդնուպոլսում՝ «Փոքր քերականութիւն» (1567), «Ժամագիրք-Պատարագամատոյց» (1568), «Տօնացոյց» (1568), «Տաղարան» (1568), «Պարգատումար» (1568), «Մաշտոց» (1569):

Եթե միայն վերնագրային հատույթներով դատենք, ապա նույն կամ նմանատիպ վերնագրերը հուշում են շարունակում, մյուսները՝ զարգացնողի կոնկրետ տարածությունները: Մի բան աներկբա է, որ թե՛ Հակոբ Մեղապարտին, թե՛ Արգար Դպիր Թոխաթեցուն գործառնականության տեսանկյունից նույն խնդիրներն ու նպատակներն են հուզել:

Ցավալին այն է միայն, որ առավել խորքային վերլուծություն այդ առումով դժվար է կատարել և առավել կոնկրետ եզրակացությունների հանգել, որովհետև Արգար Դպիր Թոխաթեցու տպագրած գրքերի զգալի մասը չի պահպանվել, և դրանց բովանդակության մասին պատկերացումները հիմնված են նկարագրությունների վրա (**Ոսկանյան Ն., Կորկոտյան Ք., Սավալյան Ա., 1988**): Այդուհանդերձ, պահպանված տեղեկությունները ընձեռում են էական գնահատումների և ընդհանրացումների հնարավորություն:

Նախևառաջ նշենք, որ Արգար Դպիր Թոխաթեցու տպագրած «Խառնափնթոր տումարի» օրացույցի, «Ժամագիրք-Պատարագամատոյց»-ի, «Տօնացոյց»-ի և «Պարգատումար»-ի գործառնական արժեքը դրանց կիրառելիության և օգտակարության մեջ է: Նպատակ, որ ժամանակին հետապնդում էր նաև Հակոբ Մեղապարտը. կոնկրետ հասարակության որոշակի շերտերի համար ստեղծել գրքեր, որոնք կունենան գործնական կիրառություն և օգտակար կլինեն: Կրթական արժեքի տեսանկյունից այդ գրքերը կարևորվում են նրանով, որ հենց կիրառական և օգտակար լինելը ապահովում է կրթական գործով, որովհետև դրանցով փոխանցվել է գիտելիք: Սա մի հանգամանք է, որ 16-17-րդ դարերում կարելի էր կիրառել տարբեր գրքերի առումով՝ դրանց կրթական արժեքը որոշարկելու տեսանկյունից:

«Խառնափնթոր տումարի» օրացույցը (Օրացույցի նմանահանությունը տե՛ս **Զարդարյան Վ., 1933-39**), օրինակ, որ Գարեգին Լևոնյանի բնորոշմամբ՝ «խկապես որ մի խառնափնթոր գործ» է (**Լևոնյան, Գ., 1958**), լինելով փորձնական տպագրություն, լայն շրջանառություն չի ունեցել, այդուհանդերձ իր նպատակադրմամբ կրթական արժեք ունի, և ինչպես Վարդան Դերիկյանն է գրում՝ «ունեցել է գործնական, կիրառական մեծ նշանակություն» (**Դերիկյան Վ., 2012**): Հարցն այն է, որ հատկապես հայ գաղթավայրերում հայությունը, ինչպես հարկն է,

չէր կարողանում հետևել հայոց եկեղեցու տոների ընթացքին, որոնք ինչպես հայտնի է՝ շարժական են: Այդ պատճառով նման օրացույցի ստեղծումն ու տպագրությունը ժամանակի պահանջն էր նաև, մանավանդ որ Աբգար Դպիր Թոխաթեցին բավական հիմնավոր աշխատանք է կատարել օրացույցի վրա՝ կարևորելով բազմաթիվ հատույթներ (մանրամասն նկարագրությունն ու կառուցվածքային վերլուծությունը տե՛ս **Դևրիկյան Վ., 2012**) և հատկապես՝ ճշգրիտ տոմարական աշխատանքը: Եվ պատահական չէ, որ թերևս նույն նպատակադրումով նա հետագայում տպագրեց նաև «Պարզատումար», քանի որ, ըստ էության, «Խառնայփնթուր տումարի» օրացույցը «Պարզատումարի» աղյուսակային համառոտ տարատեսակն է՝ այդ կերպ ընդլայնելով նաև իր աշխատանքի գործառնականությանը՝ միևնույն ժամանակ շարունակելով Հակոբ Մեղապարտի ձևավորած ավանդույթը:

Իհարկե, Աբգար Դպիր Թոխաթեցու «Խառնայփնթուր տումարի» օրացույցի տպագրությունը իր գործառնականության մեջ նաև քաղաքական որոշակի հատույթ ունի: Դրանում, ինչպես նաև «Սաղմոսարանում» գետեղված երկու փորագրանկարները գրեթե բոլոր ուսումնասիրողները վերագրում են հենց այդ հատույթին: Վարդան Դևրիկյանը Աբգար Դպիր Թոխաթեցու տպագրական գործի գործառնականության քաղաքական հատույթը ընդհանրացնում է այսպես. «...այս երկու նկարների գետեղումը երեք նպատակ էին հետապնդում.

առաջին՝ անուղղակի՝ այլաբանորեն ստեղծել Հռոմի հետ դաշնադրության և Վենետիկի Հանրապետության միջոցով ազատագրվելու գաղափարը,

երկրորդ՝ Օսմանյան պետությանը ցույց տալ, որ ինքը Հռոմ և Վենետիկ է գնացել հայերեն գրքեր տպագրելու թույլտվություն խնդրելու և իրականացնելու նպատակով, երրորդ՝ Պապի և Վենետիկի դուքսի թույլտվությունը և համաձայնությունը պատկերող նկարներով առանձնակի կշիռ հաղորդել իր հրատարակություններին» (**Դևրիկյան Վ., 2012**):

Այլ է «Սաղմոսարանի» (**«Սաղմոսարան», 1565-1566**) տպագրության պարագան ու գործառնական արժեքը, թեպետ, ինչպես նշվեց, այստեղ էլ քաղաքական որոշակի հատույթ կա: Թերևս գրքի տպագրության բուն նպատակադրումը փաստարկում է «Սաղմոսարանի» հիշատակարանը, որը Վարդան Դևրիկյանի կարծիքով՝ գրված է

«Հայկական միջնադարյան ձեռագրերի դասական ավանդներով» (**Դերիկյան Վ., 2012**). «Փառք անբաժանելի և միասնական Սուրբ Երրորդության Հայր և Որդոյ և Հոգոյն Սրբոյ յաւիտեանս ամէն»¹:

Ըստ ամենայնի՝ «Սաղմոսարանը» ժամանակակից տերմինաբանությամբ՝ սաղմոսների գիտական, ճշգրտված հրատարակություն է՝ հենված 13-րդ դարի մատենագիր Հովհաննես Գառնեցու կատարած մայր ընդօրինակության վրա: Այս առումով՝ որքան էլ վրիպակաշատ, այնուամենայնիվ, «Սաղմոսարանի» այս տպագրությունը նյութականացնում ու պահպանում է սաղմոսների անխաթար բնագրի տեքստն ու սկզբունքները: Ընդ որում՝ սաղմոսների տպագրությունն իրականացնելիս Աբգար Դպիր Թոխաթեցին հավատարիմ է մնացել նաև հայ ձեռագրային ավանդույթին՝ իբրև տպագիր նյութ ամրագրելով «Սաղմոսարանի» կառուցվածքը իր բոլոր մտահղացումներով և յուրահատկություններով, որոնք ունեն իմաստատարբերակիչ հատկանիշ:

Աբգար Դպիր Թոխաթեցու տպագրած գրքերի շարքում կրթական առավել կոնկրետ նպատակադրում ունի արդեն Կ. Պոլսում նրա տպագրական գործի երախայրիքը՝ «Փոքր քերականութիւն»-ը, որը, վերնագրից դատելով, ուսումնական, կրթական ձեռնարկ է: Այս գրքի մասին տեղեկությունները ու պատկերացումները դեռևս լոկ նկարագրական, ինչ-որ առումով ենթադրական են, քանի որ «Փոքր քերականութիւն»-ը հիշատակվում է Մաղաթիա դպիր Ճևահիրճյանի ձեռագիր ժամանակագրության մեջ, որն իր աշխատությունում մեջբերել է Գարեգին Զարպիանայանը (**Զարպիանայան Գ., 1895**), և հետագա ուսումնասիրողները հենվել են բացառապես այս վկայագրության վրա²: Այդուհանդերձ վերնագիրը փաստարկում է գրքի բնույթը, որ անվերապահորեն կրթական է: Ինչպես գրում է Վարդան Դերիկյանը. ««Փոքր» բնորոշումն ինքնին հուշում է, որ այն միջնադարյան

¹ Տե՛ս «Սաղմոսարան» (1565-1566): Ի դեպ, բնագրում տվյալ մեջբերումը որոշ վրիպակներով է, և ընդհանրապես «Սաղմոսարանը», նաև Աբգար Դպիր Թոխաթեցու տպագրած մյուս գրքերը սխալաշատ և վրիպակաշատ են: Այդ հանգամանքը Ռաֆայել Իշխանյանը պայմանավորում է ինչպես ժամանակի լեզվի, այնպես էլ Աբգար Դպիր Թոխաթեցու գրագիտության մակարդակով (տե՛ս **Իշխանյան Ռ., 2012**):

² Ճիշտ է, կան տեղեկություններ, որ գրքից օրինակներ կան Սուրբ Ղազարի և Միլանի գրադարաններում (տե՛ս **Ոսկանյան Ն., Կորկոտյան Ք., Սավայան Ա., 1988**), սակայն դեռևս դրա ստույգ նկարագրություններ չկան: Մեր ձեռքի տակ ևս այն չի եղել - **Ք. Մելքումյան**:

քերականությունների համառոտ և պարզեցված տարբերակն է՝ նախատեսված աշակերտների և ընդհանրապես ընթերցող լայն շրջանակների համար» (**Դերիկյան Վ., 2012**): Բնական է, որ մատչելիությունը, պարզությունը ապահովել են «Փոքր քերականութիւն» գրքի կրթական, ուսումնական բավական լայն գործառնությունների:

Ամեն դեպքում, չմոռանալով արդեն պատմական գործառնության տեսանկյունից արձանագրելի և շեշտադրելի մի հանգամանք ևս, այն, որ, ինչպես Ռաֆայել Իշխանյանն է նշում՝ «*Փոքր քերականութիւն*» գիրքը պոլսահայ առաջին տպագրությունն է, որով հայերենը դառնում էր Օսմանյան կայսրության մեջ տպագրական երկրորդ լեզուն՝ եբրայերենից հետո» (**Իշխանյան Ռ., 2012**):

Աբգար Դպիր Թոխաթեցու տպագրած գրքերից «Տաղարանն» է, որ միաժամանակ ընդգրկում է մեր ուսումնասիրության տեսանկյունից երկու կարևոր հատույթ՝ գրական կամ գրականության ընդգրկման և ուսումնական-կրթական: «Տաղարանի» վերաբերյալ տեղեկությունները մեծ չափով նկարագրական են և վկայագրված են Հ. Գ. Գովրիկյանի «Հայ տպագրութեան նորագիտ երախայրիք» հոդվածում (**Հայր Գ. Գովրիկյան 1888**): Ընդ որում՝ բովանդակային նկարագրությունը աղքատիկ է: Սակայն այդ ժլատ տեղեկություններն էլ որոշ կարևոր ընդհանրացումների առիթ ստեղծում են³:

Նախ՝ Աբգար Դպիր Թոխաթեցու այս հրատարակությամբ *շարունակվում* և լիարժեք կյանք է ստանում *հայ տպագիր գրականության* պատմությունը, որի սկզբնավորողը Հակոբ Մեղապարտն էր: Ընդ որում՝ հետաքրքիրն այն է, որ կոնկրետ այս դեպքում առավել ակնառու է Հակոբ Մեղապարտի և Աբգար Դպիր Թոխաթեցու գործի հարազատությունը՝ վերջինիս դեպքում *շարունակողի* հստակ գիտակցությամբ: Պատահական չէ, որ բովանդակային մասից Հ. Գ. Գովրիկյանի հիշատակած միակ տաղը Հովհաննես Թլկուրանցու տաղերից մեկն է (**Հայր Գ. Գովրիկյան, 1888**), որը, ինչպես համեմատությունն է ցույց տալիս, առկա է նաև

³ Ի դեպ, եթե նախորդ հետազոտողները Հ. Գ. Գովրիկյանի հաղորդած տեղեկությունները ընդունել են որպես կարևոր ու անքննարկելի փաստարկ Աբգար Դպիր Թոխաթեցու կողմից տպագրված «Տաղարանի» գոյության, ապա Վարդան Դերիկյանը բավական համոզիչ փաստերով առնվազն վիճարկում է այդ հարցը (մանրամասն տե՛ս **Դերիկյան Վ., 2012**): Խնդիրը չափազանց հետաքրքիր է, բայց դուրս է մեր ուսումնասիրության շրջանակներից:

Հակոբ Մեղապարտի «Տաղարանում» (**«Տաղարան», 1513**):

Բոլորովին բացառված չէ, որ այդ համընկնումները բազմաթիվ են եղել, ինչը ևս մեկ վկայություն է Հակոբ Մեղապարտի գործի թողած մեծ ազդեցության, որի նշանավոր շարունակողն էլ Աբգար Դպիր Թոխաթեցին էր:

Այս առումով՝ կրթական, ուսումնական, գործառնական այն յուրահատկությունները, որ ունեին Հակոբ Մեղապարտի տպագրած գրքերը (**Մելքումյան Ք., 2024**), բնորոշ են նաև Աբգար Դպիր Թոխաթեցու հրատարակություններին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով կարող ենք ասել, որ Աբգար Դպիր Թոխաթեցու տպագրած գրքերը կրթական, ուսումնական, գործառնական առումով ոչ միայն շարունակում էին Հակոբ Մեղապարտի ձևավորած ավանդույթները, այլև յուրովի զարգացրին դրանք՝ հիմք դնելով ոչ միայն հայ գրատպության նոր մակարդակի ձևավորմանը, այլև գրքի առավել հասանելիությանն ու հետևաբար գրքով փոխանցվող գիտելիքի առավել լայն տարածմանը: Այլ խոսքով՝ Աբգար Դպիր Թոխաթեցու տպագրական գործը ավելի ընդարձակեց հայ գրքի գործառնականությունն ու բարձրացրեց կրթական, ուսումնական արժեքը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Դերիկյան Վ. (2012)**, Հայ գիրքը աշխարհի խաչմերուկներում, Մասն Ա. Վենետիկից Հռոմ (16-րդ դար), Երևան, «Զանգակ» հրատ:
2. **Զարդարյան, Վ. (1512-1933)**, Յիշատակարան, Գահիրե:
3. **Զարպհանալեան Գ. (1895)**, Պատմութիւն հայկական տպագրութեան սկզբնաւորութենէն մինչ առ մեզ, Վենետիկ, Մխիթարեան տպարան,:
4. **Իշխանյան Ռ. (2012)**, Հայ գրքի պատմություն, Երևան, «Անտարես» հրատ.:
5. **Հայր Գ. Գովրիկյան (1888)**, Հայ տպագրութեան նորագիտ երախայրիք, «Հանդես ամսօրեայ», Վիեննա, թիւ 8, օգոստոս, էջ 140:
6. **Լևոնյան Գ. (1958)**, Հայ գիրքը և տպագրության արվեստը, Երևան, «Հայպետհրատ» հրատ.:

7. Մելքումյան Ք. (2024), Հայ գրականությունը Հակոբ Մեղապարտի հրատարակած գրքերում, «Գրականագիտական հանդես», թիվ 1 (ԻԸ), էջ 213:
8. Ոսկանյան Ն., Կորկոտյան Ք., Սավալյան Ա. (1988), Հայ գիրքը 1512-1800 թվականներին, Երևան:
9. «Սաղմոսարան» (1565-1566), Վենետիկ, տպ. Աբգար Դպիր Թոխաթեցու, <https://www.kb.dk/e-mat/mas/201001402230.pdf>
10. Տաղարան (1513), Վենետիկ, Մխիթարեան տպարան:

REFERENCES

1. Devrikyan V. (2012), Hay girqy' ashxarhi xachmerowknerowm /The Armenian Book in the World Crossroads/, Part I, From Venice to Rome (16th century), Zangak ed.
2. Zardaryan V. (1512-1933), Yishatakarar /Memoirs/, Gahire.
3. Zarphanaliyan G. (1895), Patmowt'iwn haykakan tpagrowt'ean skzbnaworowt'ene'n minch ar' mez /History from the beginning of Armenian printing to us/, Venice, Mkhitarian ed.
4. Ishxanyan R. (2012), Hay grqi patmowt'yown /History of the Armenian book/, Yerevan, Antares ed.
5. Father G. Govrikyan (1888), Hay tpagrowt'ean noragiwt eraxayriq /The innovative value of Armenian printing/, Handes Amsorea, Vienna, № 8, August, p. 140.
6. Levonyan G. (1958), Hay girqy' & tpagrowt'yan arvesty' /The Armenian book and the art of printing/, Yerevan, Haypethrat ed.
7. Melkumyan K. (2024), Hay grakanowt'yowny' Hakob Meghaparti hratarakac' grqerowm /Armenian literature in the books published by Hakob Meghapart/, Literary journal, N 28, Gitutyun ed., p. 213.
8. Voskanyan N., Korkotyan K., Savalyan A. (1988), Hay girqy' 1512-1800 t'vakannerin /The Armenian Book in 1512-1800 years/, Yerevan.
9. «Saghmosaran» /Psalms/ (1565-1566), Venice, ed. by Abgar Dpit Tokhateci, <https://www.kb.dk/e-mat/mas/201001402230.pdf>

10. Tagharan /Hymnal/ (1513), Venice, Mxit'arean tparan.

Кристине Мелкумя

Образовательное значение печатной деятельности Дпира Абгара Тохатеци (писца)

Заключение

Ключевые слова и выражения: типография, функциональность, образование, жанр, контекст, адресность, средневековая литература, появление.

В данной статье мы рассмотрели печатную деятельность Писца Абгара Тохатеци и ее образовательное значение. Обращаясь к изданным им книгам, отметим, что они являются продолжением печатного дела, начатого Акопом Мегапартом. Мы оценили деятельность Писца Абгара Тохатеци с точки зрения культурной, образовательной, общественной и политической функциональности, в первую очередь подчеркнув главную цель нашей статьи — выделение образовательного значения. К сожалению, тот факт, что большинство из изданных Писцом Абгаром Тохатеци книг до нас не дошли или дошли с дефектами, изъянами и недостатками, или же мы можем составить о них представление только по описаниям очевидцев и различным свидетельствам, несколько затрудняет некоторые вопросы, особенно возможность полного анализа армянской литературы. С другой стороны, поскольку Абгар Тохатеци был не только в прямом смысле продолжателем типографского дела, начатого Акопом Мегапартом, но и печатал книги с точки зрения идеологической, образовательной функциональности, то сравнение книг, напечатанных этими двумя выдающимися деятелями зари армянского книгопечатания, позволяет нам заключить, что иногда определенные их идеи и принципы в полной мере соприкасались.

Следует подчеркнуть, что книги, напечатанные или изданные в этот период, прежде всего отличались высокой функциональностью, ни одна книга не издавалась просто так. В свою очередь, полиграфическая деятельность Дпира Абгара Тохатеци еще больше расширила функциональные возможности армянской книги и повысила ее просветительскую ценность. Поэтому почти каждый факт армянского книгопечатания в этот период, независимо от того, сохранились ли они или просто упоминаются или описываются, можно рассматривать в широком культурном и функциональном контексте.

Kristine Melkumyan

The educational value of the printing work of Abgar Dpir (Scribe) Tokhatetsi

Conclusion

Key words and expressions: *typography, functionality, education, genre, context, addressability, medieval literature, origins.*

In this article, we have examined the printing work of Abgar the Scribe Tokhatetsi and its educational value. Turning to his published books, we considered them a continuation of the printing work started by Hakob Meghapart. We have evaluated the activities of Abgar the Scribe Tokhatetsi from the point of cultural, educational, social, and political functionality, firstly emphasizing the main goal of our article, which is the highlighting of educational value. Unfortunately, the fact that most of the books published by Abgar the Scribe Tokhatetsi have not reached us or have done so with defects and shortcomings, or that we can form an idea about them only due to the descriptions of eyewitnesses and various testimonies, somewhat hinders some issues, especially the possibility of complete analysis of inclusions of Armenian literature. On the other hand, since Abgar the Scribe Tokhatetsi was the continuer of the printing work started by Hakob Meghapart, not only in terms of itself but also in the inclusion of various operational parts, from the ideological, educational point of view, by comparing the books printed by those two prominent figures of the dawn of Armenian printing, it is sometimes possible to ensure certain completeness of ideas from the point of insights and principles. It should be emphasized that the books printed or published in this period were first of all characterized by high functionality, no book was published just like that. In its turn, the printing work of Abgar Dpir Tokhatetsu further expanded the functionality of the Armenian book and increased its educational value. Therefore, almost every fact of Armenian printing during this period, regardless of whether they are preserved or just mentioned or described, can be observed in a broad cultural and operational context.

Քրիստինե Մելքումյան - ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայցորդ, ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի Հայ հին և միջնադարյան գրականության բաժնի կրտսեր գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ հայ հին և միջնադարյան գրականություն: Հեղինակ է 7 հոդվածի:

kristinemelqumyan@litinst.sci.am

Кристине Мелкумян - Соискатель Института литературы имени Манука Абегяна НАН РА. Младший научный сотрудник отдела древней и средневековой армянской литературы НАН РА Института литературы имени М.Абегяна. Научные интересы: Армянская древняя и средневековая литература. Автор 7 статей.

kristinemelqumyan@litinst.sci.am

Kristine Melkumyan - Ph.D researcher at the Institute of Literature after Manuk Abeghyan of NAS RA. Junior researcher of the department of Armenian ancient and medieval literature of NAS RA Institute of Literature after M. Abegyan. Scientific interests: Armenian ancient and medieval literature. Author of 7 articles.

kristinemelqumyan@litinst.sci.am